

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ



Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>



ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

**ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2008**

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՀՏԴ 23/28

ԳՄԴ 86.37

Ն – 631

Թարգմ. գրաբարից՝
Ս. Մտամբուլցյանի

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Ն–631 Մեկնություն ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ:
- Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին,
2008.- 300 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

.....

ISBN 978-99930-75-79-0

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գրքում առաջին անգամ հայ ընթերցողին ներկայացվում է սբ Ներսես Շնորհալու՝ հայոց ամենաաիրելի և համբավավոր կաթողիկոսներից մեկի «Մատթեոսի Ավետարանի մեկնության» արևելահայերեն թարգմանությունը:

Սբ Ներսես Շնորհալի կամ Կլայեցի հայրապետը ծնվել է 1098 թվականին Ծոփաց նահանգի Անձիտ գավառի Ծովք բերդում: Եղել է Պահլավունի տոհմից, որն իրեն համարում էր սբ Գրիգոր Լուսավորչի ցեղից սերած: Սբ Ներսեսը Գրիգոր Մազիստրոս Պահլավունու ծոռն է՝ իշխան Ապիրատի որդին, Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի քրոջ թոռն ու Գրիգոր Գ կաթողիկոսի հարազատ եղբայրը: Վաղ տարիքում կորցնելով հորը՝ նա և նրա ավագ եղբայրը՝ ապագա Գրիգոր Գ–ը, մեծանում են Գրիգոր Բ Վկայասեր, ապա Բարսեղ Անեցի հայրապետերի խնամքի ներքո, կրթություն ստանում Շուղրի Կարմիր վանքի դպրոցում՝ աշակերտելով հանրահայտ Ստեփանոս Մանուկ եպիսկոպոսին: Երբ վախճանվում է Բարսեղ հայրապետը, կաթողիկոսական գահին նրան փոխարինում է Ներսեսի 20–ամյա եղբայրը՝ Գրիգոր Գ–ը (1113–1166), իսկ Ներսեսն այդուհետ մինչև եղբոր մահը դառնում է նրա օգնականը: 16 կամ 18 տա-

րեկանում Ներսեսը Գրիգոր Գ-ի կողմից ձեռնադրվում է կուսակրոն քահանա, ապա՝ 30 տարեկանում՝ եպիսկոպոս: 1141 թ.-ին Գրիգոր Գ-ի հետ մասնակցում է Անտիոքի ժողովին՝ գումարված Անտիոքի Ռուդոլֆ պատրիարքի վարքը քննելու համար: Այս ժամանակից ի վեր սկսվում են հայ-կաթոլիկ եկեղեցական հարաբերությունները: 1150 թ.-ից կաթողիկոսական աթոռը Տլուք գավառի Ծովք դոյակից տեղափոխվում է Յոնմկլա, և այդուհետ Ներսեսը մինչև իր երկրային կյանքի վախճանն անցկացնում է այնտեղ, ինչ պատճառով և կոչվում է նաև Կլայեցի: Իսկ նրան տրված Շնորհալի անունն այդ ժամանակ հայոց եկեղեցական շրջանակներում գործածվող պատվանուն էր:

1166 թ.-ին՝ Գրիգոր Գ-ի վախճանից հետո, սբ Ներսեսը դառնում է կաթողիկոս՝ նախապես օծվելով հենց Գրիգոր Գ-ի կողմից: Պաշտոնավարում է 7-8 տարի: Կաթողիկոսանալուց հետո նրա առաջին գործերից է լինում «Թուղթ ընդհանրական»-ի ստեղծումը՝ փաստորեն նրա առաջին ընդարձակ կոնդակը՝ ուղղված հայ ժողովրդի տարբեր խավերին: Սբ Ներսեսը եղել է բեղուն մատենագիր և եկեղեցական մեծ բարեկարգիչ: Նրա սրբության համբավն այնքան մեծ է եղել, որ տարածվել է նաև օտար շրջանակներում: Նա ջատագովն էր

Հայ և այլ եկեղեցիների, մասնավորապես Բյուզանդական եկեղեցու միջև բարեկամական հարաբերությունների: Սբ Ներսես Շնորհալին է բարեկարգել հայոց ժամագիրքը՝ վերջնական տեսքի բերելով և համալրելով բազմաթիվ սքանչելի երգերով: Բարեկարգել է նաև այլ ծիսական մատյաններ: Գրել է շարականներ ու տաղեր, թղթեր, հանելուկներ, պոեմներ, որոնցից թերևս ամենասիրվածն ու հայտնին «Յիսուս Որդին» է, որը նաև երգվել է: Բացի Սատթեսոսի Ավետարանի մեկնությունից, հեղինակել է նաև կաթողիկե թղթերի մեկնություններ: Կատարել է նաև թարգմանություններ: Սբ Ներսեսը վախճանվել է 1173 թ.-ին Յոնմկլայում և թաղվել սբ Գրիգոր Գ Պահլավունի հայրապետի կողքին, ով մեր ամենաերկար պաշտոնավարած կաթողիկոսն է և նույնպես սրբակենցաղ մի անձնավորություն, ում հիշատակում ենք «Գրիգորիայանք» ընդհանուր անվան տակ սբ Պատարագի ընթացքում:

Հայոց հիրավի շնորհազարդ հայրապետ սուրբ Ներսես Շնորհալու հարուստ գրական ժառանգության մեջ Սատթեսոսի Ավետարանի մեկնությունը, չնայած իր անավարտությամբ, ունի կարևոր տեղ: Հեղինակն այն գրել է եպիսկոպոս եղած ժամանակ և, ինչպես ինքն է նշում գործի նախաբանում, Գրիգոր Գ-ի թելադրանքով:

Արդեն իսկ մեսրոպյան շրջանից Հայոց Եկեղեցին գործածում էր ընդհանրական հայրերի ավետարանական մեկնությունները, ինչպես օրինակ՝ սրբեր Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու, Կյուրեղ Ալեքսանդրացու: Սակայն Հայ Եկեղեցու հայրերից մի քանիսն էին միայն ձեռնամուխ եղել նման աշխատանքի, ինչպես օրինակ՝ Ստեփանոս Սյունեցին է դարում և Անանիա Սանահնեցին ԺԱ դարում: Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն չորից ավետարանչաց»-ը, որ ներկայացնում է գլխավորապես դարձյալ Մատթեոսի Ավետարանի մեկնությունը, թերի էր՝ այն առումով, որ չէր անդրադառնում բոլոր ավետարանական խոսքերին և չէր մեկնում հանգամանորեն: Անանիա Սանահնեցու Մատթեոսի Ավետարանի մեկնությունն էլ թեև առավել ամբողջական է, սակայն հավանաբար դարձյալ լիովին չի բավարարել ժամանակի պահանջներին: Ուստի Շնորհալու ձեռնարկած գործը՝ ստեղծել իրեն նախորդած հայրերի մեկնություններն ամփոփող և լրացնող մի նոր և հանգամանալից մեկնություն, խիստ կարևոր էր հայ իրականության մեջ:

Սբ Ներսես Շնորհալին ինքը նույնպես իր նախաբանում նշում է, որ երկը հիմնականում իրեն նախորդած հայրերի մեկնությունների վերաշարադրումն է: Շնորհալու հայրաբանական աղբ-

յուրներից գլխավորը, ինչպես ցույց է տալիս անգամ թեթևակի զննումը, սբ Հովհան Ոսկեբերանի հեղինակած համապատասխան մեկնողական երկն է: Որոշ հատվածներ վերաշարադրանքն են ընդհանրական հոր մտքերի՝ այսպիսով հարազատորեն փոխանցելով նրա մտքերը: Սակայն, ինչպես դարձյալ նշում է Շնորհալին, ինքը չի սահմանափակվել ուրիշների մտքերի լոկ վերաշարադրությամբ, այլ հարկ եղած դեպքում ներկայացնում է նաև իր սեփական բացատրությունները: Նա խիստ հանգամանորեն է մեկնում ավետարանական համարները՝ բաց չթողնելով ոչ մի կարևոր խոսք: Այս թեկուզ անավարտ գործով կարելի է հստակորեն գաղափար կազմել նաև Հայ Եկեղեցու որդեգրած դավանաբանական մի շարք առանձնահատկությունների մասին՝ կապված Տիրոջ մարդեղության խորհրդի հետ: Եվ այս ամենն էլ մեծ արժեք են հաղորդում սբ Ներսեսի մեկնողական սույն գործին:

Դժբախտաբար, հայտնի չէ, թե ինչն է պատճառը, որ այս մեկնությունը մնացել է անավարտ. հավանաբար, պատճառը եղել է 1166 թ.–ին հայոց հայրապետական գահին Շնորհալու բազմելն ու բազմազբաղությունը: Նա հասել է Մատթեոսի Ավետարանի Ե գլխի 17–րդ համարին, այն մեկնել և սրանով սահմանափակվել: Շուրջ մեկուկես դար

անց այս գործի շարունակությունն ու լրումը ստանձնել և դարձյալ հիանալիորեն իրականացրել է Հովհաննես Ծործորեցի հայոց վարդապետը 1316 թ.–ին՝ այսպիսով Հայոց Եկեղեցուն ընծայելով մի կարևոր և հանգամանորեն բացատրված մեկնություն, ուր ընթերցողը կարող է գտնել Մատթեոսի Ավետարանի բոլոր համարների բացատրությունը:

Ներկա թարգմանությունն իրականացվել է Կ. Պոլսի 1825 թ.–ի հրատարակությունից, որը, ըստ այն իրականացնողների հավաստման, կատարվել է մեկից ավելի ձեռագրերի հիման վրա:

Ս. Ստամբուլցյան

ՀԵՂԻՆԱԿԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Այստեղ Շնորհալին դիմում է իր եղբայր տեր Գրիգոր կաթողիկոսին, ում հրամանով է ստանձնել Մատթեոսի Ավետարանի մեկնությունը [գրել]: Ասում է.

Սիրո զորությունը գերազանցում է բնությանը, այնքան, որ մոռանալ է տալիս տկարությունը. որովհետև եթե [սերը] հեռացնում է մահվան երկյուղը, ինչպես գրված է¹, ի՞նչ ասել այն ցրել ցանկացող փոքր հակառակորդների մասին: Եվ եթե ոմանց համար [այն] պանծալի է ինչ—որ մարմնավոր պատճառով, ապա ինչպիսի՞ն կլինի ամենքի [հոգսը] կրողների համար՝ համաձայն քո՝ իմ հանդեպ ցուցաբերած գթության: Ո՛չ միայն բնական արյունակցության պատճառով, որ հատուկ է բոլորին, անգամ փոքրոգիներին, այլև իմ հանդեպ [քո] գործած և խոսք ու գիր գերազանցող բարիքների, որոնք չենք [կարող] արժանապես փոխհատուցել փոփոխական տեսանելի բաներով, բացի թերևս մեզ հրամայվածներն ի կատար ածելուց, և

որոնք, ըստ այսմ, հավիտենական բարու նախաշավիղ ու պատճառ են: Սրանցով իմ տկար միտքն էլ զորանալով՝ ձեռնարկեց այս հանձնարարության [իրագործմանը]՝ ըստ քո՝ [ինձ] պատվասիրելով [տված] հրամանի, ո՛վ պատվական գլուխ՝ Եկեղեցու Գլխից² հետո, հայոց Գրիգորիո՛ս կաթողիկոս, հավաքելու սրբերի [այստեղ—այնտեղ] ցրված խոսքերը և դնելու ավետարանական յուրաքանչյուր խոսքի դիմաց, որպեսզի մտքով դյուրընկալ³ լինեն ուսումնասեր երիտասարդներին կրթողների համար: Հանդգնությանս և սխալներիս համար նրանցից ներում եմ հայցում, իսկ օգուտ ստանալու դեպքում՝ շնորհ, որ արժանացնեն [ինձ] աղոթքի մեջ հիշատակություն:

Եվ արդ՝ երբեմն մեկնիչների խոսքերը նույն ձևով դրեցինք, երբեմն էլ նրանց միտքը, երբ խոսքերի մեկնություններն առավել ծավալուն էին, մեր բառերով [վերարտադրեցինք]: Տարբեր տեղերում ցրված [մեկնություններն] էլ մի տեղում հավաքեցինք՝ կցելով համապատասխան խոսքին: Փոքր—ինչ էլ մեզնից ավելացրինք, երբ [որևէ] խոսք անտեսվել էր նրանց կողմից. ինչ—որ բաներ

գտանք այլևայլ հեղինակների գրվածքներում, ուրիշներ էլ՝ մեր ներածություններում: [Այսպես վարվեցինք], որպեսզի փառքի անկարող Աստված փառավորվի ամենքի միջոցով:

Իմանալի և զգալի⁴ արարածների բնություններն աստվածային բնությունից անմասն են՝ ոչ միայն ըստ միավորություն, այլև ըստ ամբողջական գիտություն: Միայն մարդկային բնությունը կերտվելիս սկզբում ընդունեց այս փառքն ու պատիվը՝ նրանով, որ [Աստված] Իր պատկերով ստեղծեց մարդուն, իսկ «օրերի վախճանին» (Եբր. Ա 2) հայտնապես միավորվեց մեր բնության հետ⁵ և [այս պատիվը] կատարելապես [կընծայի] հանդերձյալում, երբ անդամներին սիրով միավորի Գլխի հետ: Եվ թեև Քրիստոսի մարդանալու խորհուրդն իրագործվեց [ժամանակների] վախճանին, սակայն Աստծո մոտ անժամանակաբար էր՝ ըստ առաքյալի. «Այն խորհուրդը, որ ծածկված էր հավիտյաններից և սերունդներից, այժմ հայտնվեց» (Կող. Ա 26): Որովհետև թեպետ հին Ադամն իր անձնիշխան կամքով կորցրեց սկզբնական պատիվը, սակայն Աստծո գիտությունը

հայտնի էր լինելիքը՝ այն, որ Ինքը Նո՛ր Ա-
դամ էր դառնալու և անվանվելու և հին [Ա-
դամին] վերստին կյանք տալու: Իր տնօրենու-
թյան խորհուրդը Նա առաջին դարերի ար-
դարներին ևս հայտնում էր խոսքով ու գոր-
ծով, ինչպես գրում է Պողոսը. «Բազմաթիվ
ձևերով և շատ օրինակներով Աստված կան-
խապես խոսեց մեր հայրերի հետ» (Եբր. Ա 1):
Ինչպես որ Աբրահամի հետ [խոսեց նրա]
որդու՝ [Իսահակի ծննդյան] ավետիսը տա-
լով⁶, Հակոբի հետ՝ տեսիլքով, որ մարդիկ դա-
սակից էին դառնալու հրեշտակներին⁷, և
Մովսեսի հետ՝ մորենու միջոցով և ասելով.
«Իջա փրկելու Իմ ժողովրդին» (Ելք Գ 8), այլև
[Վկայության] խորանի ու զոհերի միջոցով
և Օրենքում եղած ամեն ինչով: Իսկ մարգա-
րենների հետ հայտնապես [խոսեց] բազմա-
թիվ խոսքերով ու օրինակներով՝ ըստ ձայնե-
րի բնության. որովհետև որքան հեռու է ձայն
տվողը, այնքան վատ է լսվում [նրա խոս-
քը], և որքան մոտենում է, այնքան ավելի
լավ է լսողներին հայտնի դարձնում խոսքը:
Տերը սա նմանեցնում է հողի [մեջ
գցվող] սերմերի⁸ [ասելով], որ հողը նախ
խոտ է աճեցնում, որը Օրենքին նախորդած

[աստվածային վարդապետութունն] է, ա-
պա հասկ՝ ստվերական Օրենքը⁹, և [այնու-
հետև]՝ հասկում հասունացած ցորեն՝ մար-
գարենների բազմարդյուն խոսքերը, ովքեր
անգամ զոհերն արհամարհեցին իբրև ման-
կական օրենք: Եվ մարդկանց սակավ առ
սակավ հասու դարձրին [աստվածային]
խորհուրդներին, մինչև կատարյալ օրենքը
տվող Քրիստոսի [գալուստը]: Վերջինս, աշ-
խարհ գալով և մարգարեններից հետո առաք-
յալների դասն ընտրելով, հրամայեց նրանց
լինել մարդկանց որսորդներ¹⁰ տալով նրանց
զորութուն և Հոգու իմաստութունը, որ-
պեսզի մարգարենների արդյունավորած հաս-
կերը ժողովեն երկնքի արքայության շտե-
մարանների մեջ, ինչպես Տերն [ասաց]. «Ու-
րիշներն աշխատեցին, իսկ դուք նրանց վաս-
տակի մեջ մտաք» (Հովհ. Գ 38): Եվ նրանք,
սփռվելով աշխարհով մեկ, քարոզում էին
Աստծո Որդու գալստյան ավետիսի, Նրա
հրաշագործութունների, ուսմունքի և այն
փրկության մասին, որ տրվեց աշխարհին
Նրա մահվամբ ու հարությամբ:

[Առաքյալները], սրանք [բանավոր] խոս-
քով պատմելով, չէին կամենում գրի առնել,

ինչպես Մովսեսի միջոցով Աստված՝ քարե տախտակների վրա¹¹, որովհետև կամենում էին, որ իրենց խոսքը լսողները իրենց օրինակով այն գրեն սրտի տախտակների վրա՝ [Սուրբ] Հոգով և ո՛չ թե մրով: Բայց քանի որ ոչ ոք չմաքրվեց [առաքյալների] չափ, ուստի Հոգու շնորհն էլ կատարելապես չընդունեց: Այս պատճառով էլ քարոզված խոսքերը մոռացվում էին, և հավատացյալներն [առաքյալներին] խնդրեցին գրով ավանդել իրենց այն, ինչ բանավոր խոսքով նրանք սովորեցնում էին: Եվ նրանք գրի առան, սակայն ո՛չ ամենքը, այլ ովքեր Տիրոջից հրաման ստացան ավետարանիչ լինելու՝ ըստ Պողոսի. «Նա ոմանց առաքյալներ կարգեց, ոմանց՝ ավետարանիչներ» (Եփես. Գ 11):

Առաջինը Մատթեոսը գրեց՝ հրեաների համար, Տիրոջ համբարձումից յոթ տարի հետո: Այնուհետև [գրեց] Մարկոսը՝ ալեքսանդրացիների համար, տասնհինգ տարի հետո, խոնարհ ու համառոտ շարադրանքով, իր ուսուցիչ Պետրոսի նման: Ղուկասը [գրեց] հռոմեացիների համար՝ քսաներկու տարի հետո, ծավալուն շարադրանքով, ինչպես իր ուսուցիչ Պողոսը, ով նման էր գետի հորդ

հոսանքի: Իսկ Հովհաննեսը [գրեց] յոթանասուն տարի հետո ասիական նահանգների համար՝ Պատմոս կղզուց հեռանալուց հետո:

Որ սրանք միայն չորսն են և ո՛չ ավել կամ պակաս, պետք է իմանանք, որ այս մասին նույնպես Հոգին [նախապես] հայտնել էր օրինակներով: Նախ՝ Եղեմից ելնող չորս վտակներով. որովհետև ինչպես նրանք են ուռուցում ու զովացնում աշխարհը տապի ջերմությունից, այդպես էլ [ավետարանիչներն] աշխարհի չորս կողմում [Սուրբ] Հոգու բխմամբ և Ավագանի ջրով հանգրթին մեղքերի բոցը, որ վառվեց Եփայից, և գետերի հորձանքներով ուրախացրին Աստծո քաղաք Եկեղեցին¹², որը տրվեց մեզ դրախտի փոխարեն: Նրանում նաև տնկվեց Կյանքի ծառը՝ Քրիստոսը՝ բերելով անմահության պտուղը՝ Ինքը լինելով նաև անսպառ աղբյուրը, որ ծարավյալներին կանչում է խմելու: Սրանց խորհրդով են նաև գետերի ու նրանց տարածքների անունները:

Առաջինը կոչվում է Փիսոն, որը թարգմանվում է կրակի բերան, ինչպես որ Մատթեոսն էլ իր ընդունած հրեղեն լեզվով լուսավորեց արևելյան [երկրները]: Այդպես

նաև հոգու մասերից¹³ բանականը, լինելով առաջինը, կոչվում է արևելք, քանի որ լուսավորում է մեր մեջ եղած ամեն զորություն:

Երկրորդը [կոչվում է] Գեհոն, որը թարգմանվում է լանջք¹⁴, և Մարկոսը բխեցրեց Ավետարանը Եգիպտոսի Ալեքսանդրիա [քաղաքում], դեպի ուր և հոսում է այս գետը, և մաքրեց ամբողջ հարավային շրջանը մինչև Գաղիրոն: Մեր մեջ էլ ցասմնական [մասն] արիություն [առաքինություն] մաքրում է նվաստություն ախտը¹⁵:

Երրորդը Տիգրիսն է, որը բխում է Միջագետքում՝ նման [հոգու] ցանկական մասին, որը տեղակայված է գոտկատեղի և որովայնի շրջանում: Այդպես էլ Ղուկասն ավետարանը բխեցրեց Հռոմում, Իտալիայում և ամբողջ Արևմուտքում և սովորեցնում է [Սուրբ] Հոգու ջրերով մաքրել [հոգևոր] ախտերի ախրալի նսեմությունը:

Չորրորդը Եփրատն է, որը նույնպես հոսում է Միջագետքով: Այդպես և Հովհաննեսն [ավետարանի] խոսքը բխեցրեց Ասիայում և [Սուրբ] Հոգու վտակներով ոռոգեց աշխարհի ծայրերը: Եվ արդարությունն էլ,

երբ մնում է [հոգու բոլոր մասերում], մեր մեջ ամեն ինչ ուղղում է դեպի աստվածային կամքը:

Եզեկիելի տեսած քառադեմ կառքը¹⁶ նույնպես խորհրդանշում է չորս ավետարանիչներին և մեր հոգու մասերը: Մարդու դեմքը, որը [խորհրդանշում] է մեր [հոգու] բանական [մասը], խորհրդանշում է [նաև] Մատթեոսին: Որովհետև [վերջինս] Խոսքի մարդեղությունից սկսեց և ներկայացրեց Նրան իբրև Դավթի և Աբրահամի որդի: Եվ ինչպես որ մարդու դեմքն առաջինն էր կառքի կենդանիների մեջ, այդպես էլ ավետարանիչների մեջ [Մատթեոսն] առաջինը կարգվեց: Առյուծի դեմքը, որը [խորհրդանշում] է մեր ցասմնական [մասը], խորհրդանշում է [նաև] Մարկոսին, ով արագորեն է շարադրում ավետարանական պատմությունը և անմիջապես ներկայացնում Հիսուսի՝ Հորդանանից ելնելը, որից մենք թող խրատվենք առաքինությունը արիանալ չարի դեմ: Զվարակը¹⁷, որ [խորհրդանշում է] մեր ցանկական [մասը], խորհրդանշում է [նաև] Ղուկասին, որովհետև [վերջինս Աստծո] Որդու սպանությունը նմանեցնում է պարարտ եզի

[մորթվելուն]: Սրանից խրատվում ենք, որ մենք ևս, Տիրոջ նմանությունում, «սպանենք մեր երկրավոր անդամները» (Կող. Գ. 5), որոնք այս աշխարհի ցանկություններն են: Եվ արծիվը [խորհրդանշում] է ճշմարիտ գիտությունը, որով թեթևանալով մարմնի ծանրությունից՝ [Սուրբ] Հոգու թևերով բարձրացվում ենք դեպի երկնայինը: Այդպես էլ Հովհաննեսը, [Տիրոջ] սարսափելի պարանոցին փարվելուց հետո երկնային դառնալով, արծիվի նման սլացավ դեպի բարձունքներ և [Սուրբ] Հոգու խոսքով որոտաց Որդու՝ անսկիզբ Հորից անսկիզբ ծննդյան մասին:

Ավետարանիչները չորսն են նաև մեկ այլ խորհուրդով: Օրենքը մեկ մարդու համար հրամայում է երեք վկա կարգել¹⁸, իսկ քանի որ Քրիստոսը և մարդ էր, և Աստված՝ [լինելով] մեկ անձ, [Նրա] վկաները չորսը պիտի լինեին. երեքը՝ Նրա մարդեղություն համար, և չորրորդը՝ աստվածություն հետ [Նրա մարդկություն] միավորման: Այս խորհուրդով էլ [ավետարանիչներից] երեքը սկսում են Նրա մարդկությունը [ներկայացնելուց], իսկ չորրորդը՝ Նրա անժամանակ աստվածությունը: Իսկ որ Ավետարանների

դասավորության մեջ սկզբում Մատթեոսին է և վերջում Հովհաննեսինը, իսկ [մյուս] երկուսը՝ մեջտեղում, և [այս Ավետարանները] միմյանց միացած են իբրև ոսկե շղթայի շարք, [այս մասին] սովորում ենք Հակոբի [տեսիլքի] սանդղաքից¹⁹: [Հակոբի գլխատակի] վեմի օձումն [ուղղված էր] ներքև, և Մատթեոսը սկսում է [Տիրոջ] օձման անունից²⁰: [Սանդղաքի] գլխին Տերն էր հաստատված, և Հովհաննեսն էլ սկսում է [Քրիստոսի] աստվածությունից: Իսկ երկուսի միջև եղած սանդղամասը Մարկոսն ու Ղուկասն են: [Ահա] սրանցով մարդիկ հրեշտակների հետ բարձրացան երկինք:

Նաև քանի որ [Քրիստոսի] աստվածությունը հայտնի դարձավ Նրա մարդանալով, այդ պատճառով էլ սկզբում զրվեցին այն Ավետարանները, որոնք սկսում են պատմել Նրա տնօրենություն²¹ մասին: Այլև, ինչպես արդեն ցույց ենք տվել, [Ավետարաններն] այսպես դասավորվել են սկզբում և հետո գրվելու, [այսինքն՝ գրություն] ժամանակի պատճառով:

Իսկ այժմ անցնենք Մատթեոսի սուրբ Ավետարանի խոսքերի մեկնությանը՝ իմաստ

տուլթյան օգնութիւն խնդրելով նույն Հոգուց, Որով նա է խոստում: Որովհետև այժմ մենք նույնպէս, ինչպէս այնժամ՝ առաքյալները, նշանագրերով գրելու օգնութիւն կարիքը պիտի չունենայինք, այլ այնպիսի սուրբ կյանքով պիտի ապրեինք, որ գրերի փոխարեն Հոգու շնորհը մեր մտքին սատարեր²²: Բայց քանի որ այդ առատ շնորհից զրկված ենք, անշուշտ այս երկրորդ [միջոցին] պիտի դիմենք:

Նախ քննենք, թե արդյոք ինչպէս տրվեց Հին Օրենքը կամ երբ և որտեղ: Հայտնի է, որ [այն տրվել է] եգիպտացիների սատակումից հետո, անապատում՝ Սինա լեռան վրա՝ կրակով, ծխով, մրրիկով և մեզով²³: Իսկ Նոր Կտակարանը [չտրվեց] ծխով կամ խավարով, այլ երևաց իբրև ցերեկային փայլարձակութիւն և լույս ծագեցրեց խավարում նստածների վրա²⁴: Որովհետև խստապարանոց [ժողովրդին] ահարկու տեսարանն էր վայել, իսկ հոգևոր ու բարձրագույն [անձինք] նման բաների [կարիք չունեն]: Հին [ուխտում] Աստված իջավ, երբ Մովսեսը լեռը բարձրացավ, իսկ Նորում մեր բնութիւնը՝ երկինք բարձրանալուց հետո²⁵ ի-

ջավ [Սուրբ] Հոգին, Որից իմաստութեամբ լցվելով [առաքյալները] գրեցին Նոր Կտակարանը:

Իսկ ինչո՞ւ այն կոչվեց «Ավետարան»: Այդ անունը ստացավ ըստ գործերի նմանութեան, որովհետև աշխարհին ավետիս է տալիս, որ Աստված երկրում է, և մարդիկ՝ երկնքում, հրեշտակները մարդկանց բնակակից են, և մարդիկ՝ հրեշտակներին հաղորդակից, երկարատև պատերազմին վերջ տալով ու թշնամուն ամաչեցնելով՝ եկել-հասել է ճշմարտութիւնը և խոսքով ու գործով սերմանել ամենուրեք աստվածաշտուտութեան քարոզութիւնը: Այս ամենի պատճառով է այս պատմութիւնն «Ավետարան» կոչվում:

Ինչո՞ւ տասներկու աշակերտներից միայն երկուսը գրեցին, իսկ մյուս երկու [Ավետարանները գրվեցին] առաքյալների օգնականների կողմից՝ մեկը՝ Պետրոսի [աշակերտի], մյուսը՝ Պողոսի [աշակերտի]: Որովհետև ինչ որ գրեցին, իրենց պատվի համար չգրեցին, այլ ուրիշների օգտի համար: Նաև թեև [Մարկոսն ու Ղուկասը յոթանասուններկու] աշակերտների թվից էին, սակայն քանի որ Հոգու իմաստութեամբ ընտիր էին, [Աստված] կամեցավ, որ որոշ ժամանակ անց

նրանք երևելի դառնան, ինչպես և Պողոսը գրում է Ղուկասի մասին. «Նրա գովեստը [տարածված է] բոլոր Եկեղեցիներում ավետարանի [գործում]» (Բ Կոր. Ը 18), իսկ Պետրոսն էլ Մարկոսին «որդի» և «ընտրելակից» է կոչում²⁶:

Զարմանալի է նաև այն, որ թեև [ավետարանիչները] ո՛չ նույն ժամանակ և ո՛չ նույն տեղում գրեցին, սակայն ամեն ինչ ներկայացնում են ասես միևնույն բերանից, ինչով ճշմարտությունն առավել է երևում: Սակայն ասվում է, թե շատ տեղերում նրանք չեն համաձայնում: Պատասխանենք, որ դա նույնպես ճշմարտության մեծ ապացույց է, որովհետև եթե ամեն ինչ նույն կերպ գրած լինեին, թշնամիներից ոչ ոք չէր հավատա, թե տարբեր վայրերում ու ժամանակներում են գրել: Այլ կասեին, թե մի վայրում հավաքվելով և համաձայնության գալով գրեցին ինչ որ կամեցան: Իսկ կարծեցյալ սակավաթիվ անհամաձայնություններն այսպիսի կասկածից ազատում են նրանց, ովքեր համաձայնությունն անխախտ են պահում գլխավոր բաներում, այսինքն՝ որ [Քրիստոսն] Աստված էր և մարդ դարձավ, հրաշքներ գործեց,

խաչվեց, թաղվեց, հարուժյուն առավ, երկինք համբարձվեց և երկրորդ անգամ ևս գալու է՝ դատելու երկիրը: Իսկ որ մեկը [Նրա] հրաշքներից կամ խոսքերից սա է ներկայացնում, մյուսը՝ նա, բնավ մի՛ շփոթվիր, որովհետև եթե [ավետարանիչներից միայն] մեկն ասեր ամեն ինչ, մնացածի շարադրանքն ավելորդ կլիներ: Այդ պատճառով էլ մեծավ մասամբ նույնը ներկայացրին, իսկ սակավաթիվ բաներով էլ տարբերվեցին, որպեսզի ավելորդ ու իզուր չհամարվեին չորսի գրածները:

Պետք է քննության առնել նաև այն, թե ինչու Ավետարանը սկսելիս [Մատթեոսը] մարգարեների պես չի գրում. «Այն տեսիլքը, որը տեսավ Եսային» (Ռմմտ. Ես. Ա 1) կամ «Այն խոսքը, որն ասվեց Երեմիային» (Ռմմտ. Երեմ. Ա 1), այլ ասում է. «Հիսուս Քրիստոսի ծննդյան գիրքը»: Պատճառն այն է, որ նա գրել է իր [քարոզած] վարդապետությանը հավատացողներին, ովքեր նաև [Սուրբ] Հոգուց էին իմաստնացել ու նախակրթվել և հրաշքներով համոզվել, ուստի չունեին նման խոսքերի կարիք: Իսկ մարգարեները խոսում էին ստամբակ ու վայրենաբարո

մարդկանց հետ, և հարկ էր Աստծո ղեմքից խոսել, որպեսզի Նրա երկյուղով թերևս վերջ գտնեին չարերի գազանությունները: Ուստի մեզ, որ արժանի եղանք բարձրագույն պատվին, սրանից հետո վայել է մեծ զգուշությամբ ականջ դնել ասվող խոսքերին: Որովհետև եթե հրեաները, որ հեռու պիտի կանգնեին և աստվածային խոսքն այն միգապատ լեռից լսեին²⁷, հրաման ստացան երեքօրյա սրբություն ու մարմնի լվացում կատարել, որքան առավել մե՛նք պետք է պարկեշտություն ցուցաբերենք աստվածային այս խոսքերը լսելու համար, որոնք մեզ ոչ թե լեռից հեռու կանգնել, այլ երկինք մտնել են հրավիրում: Արթնանա՛նք այսուհետ և մեր հոգու պատմուճանը մաքրե՛նք՝ լվանալով չար գործերի [պատճառած] խղճմտանքից, քանզի ահավասիկ տեսնում եմ մեր առաջ դռները բացված: Իսկ ո՞րն է առաջին դուռը:



ԳԼՈՒԽ Ա

Հիսուս Քրիստոսի՝ Դավթի որդու, Աբրահամի որդու, ծննդյան գիրքը (Ա 1):

Ի՞նչ է ասում ավետարանիչը: Պատրաստվում է խոսել Աստծո Միածին Որդու մասին և հիշատակում է Դավթին՝ մի մարդու, ով [Միածնից] շատ ժամանակներ հետո եղավ: Սակայն դու հանդա՛րտ եղիր և ամեն ինչ այժմ մի՛ կամեցիր [իմանալ]:

Ոչ թե [աստվածային] անպատմելի առաջին ծննդյան մասին է պատմում մեզ, որովհետև դրա մասին Նսային ասում է. «Նրա ազգատոհմի մասին ո՞վ կպատմի» (Յս. ԾԳ 8), այլ այն [ծննդյան], որն այս երկրի վրա տեղի ունեցավ, թեև սրա մասին ևս հնարավոր չէ լիովին պատմել, քանզի խոսքը [դրա] կարողությունը չունի: Այլ [ավետարանիչը կամենում է] միայն այնքանը ցույց տալ, որ Աստծո Որդին ճշմարտապես հանձն առավ մարդու որդի դառնալ, որպեսզի Աստծո որդի դարձնի հողեղենիդ: Երբ լսում ես, որ Աստծո Որդին մարմնով դարձավ Դավթի և

Աբրահամի որդի, մի՛ կասկածիր, թե դու՝ Ա-
դամի որդիդ, շնորհով չես դառնա Աստծո
որդի, որովհետև իզուր կլինես Նրա գալուս-
տը, եթե մեծ գործ անելու չլինես: Մարմնով
ծնվեց, որպեսզի դու հոգով ծնվես: Կույսից
ծնվեց, որպեսզի դու Ավագանից ծնվես: Այս
պատճառով էլ Նրա ծնունդը և՛ նման է մեր
[ծննդյանը], և՛ գերազանցում է դրան. կնո-
ջից ծնվելը մեզ է հատուկ, իսկ կույսից և ա-
ռանց տղամարդու [ծնվելը]՝ մեր բնությունը
Ստեղծողին: Ինչպես որ Նա՛ հոգևորպես
ծնվեց մարմնավոր ծննդյամբ, այդպես էլ
մենք ենք հոգով վերստին ծնվում:

Որպեսզի ավետարանչի՝ «Հիսուս» անու-
նը տալու պատճառով [Աստծո Որդուն]
չչփոթես Նրա անվանակցի՝ [Հեսուի] հետ²⁸,
ավելացնում է «Դավթի որդու» [բառերը],
որովհետև Նավեի որդի Հեսուն Հուդայի ցե-
ղից չէր, որից Դավթին ու Քրիստոսն էին,
այլ մի ուրիշ ցեղից:

Ինչո՞ւ է [ավետարանիչն] ասում. «Հիսուս Քրիստո-
սի ծննդյան գիրքը», եթե պատրաստվում է Արամում
ամե՛ն ինչ պատմել: Ինչպես Մովսեսը «երկնքի
և երկրի արարչության գիրք» (ԾԱՌ. Բ 4) ասե-
լով՝ ոչ միայն երկինքն ու երկիրը նկատի ու-

նի, այլև սրանց մեջ գտնվող ամեն ինչ, այդ-
պես էլ [ավետարանիչը] սրանով նկատի
չունի [Քրիստոսի] միայն ծնունդը, այլ Նրա
ամբողջ տնօրենությունը:

Եվ ինչո՞ւ է Ասիս հիշատակում Դավթին և հետո՛
Աբրահամին: Որովհետև [այդ ժամանակ Դավթի-
թը] բոլորի բերանում էր և ժամանակի մեր-
ձավորությամբ առավել հայտնի էր: Քանզի
թեպետ երկուսին էլ տրվեց Աստծո ավետի-
սը, Աբրահամին թե՛ «Քո Զավակով կօրհն-
վեն երկրի բոլոր ազգերը» (ԾԱՌ. ԻԲ 18), և
Դավթին՝ «Քո որովայնի պտղից կնստեցնեմ
քո աթոռին» (Սաղմ. ԾԼԱ, 11), սակայն [Աբրա-
համը]՝ իբրև ավելի վաղնջական [նախնի],
մոռացվել էր, իսկ [Դավթիթը]՝ իբրև ավելի
նոր մեկը, հայտնի էր: Այդպես օրենսդե-
սներն²⁹ էլ [Քրիստոսի մասին] Հերովդեսին
վկայություն տալիս Աբրահամին չհիշեցին,
այլ [ասացին], որ Քրիստոսը պիտի գար
Դավթի զավակից և Բեթղեհեմ գյուղից, որից
Դավթին էր³⁰: Հրեշտակը նույնպես Կույսին
ավետեց, թե Տեր Աստված [ծնվելիք Մանկա-
նը] տալու էր Նրա հայր Դավթի աթոռը³¹,
ինչպես որ մարգարեն [էր ասում], թե Նա
«կնստի Դավթի աթոռին» (Ես. Թ 7, Երեմ. ԻԹ 16):

Այլև Նրան չէին կոչում «Աբրահամի որդի», այլ «Դավթի», ինչպես աղաղակում էին կույրերը³², և ինչպես հարցրեց Տերը փարիսեցիներին. «Ո՞ւմ որդին եք համարում Քրիստոսին», և պատասխանեցին. «Դավթի»³³, քանի որ մարգարեներից էին [այդպես] սովորել, ովքեր ասում էին, թե Դավթի զալու էր կամ հայտնվելու³⁴: [Նկատի ունեին] ոչ թե վախճանված [Դավթին], այլ որ նրա սերնդից էր լինելու աշխարհի Փրկիչը:

Բայց որտեղի՞ց է հայտնի, ասում են, թե [Փրկիչը] Դավթի [սերնդից] էր, եթե տղամարդուց չի ծնվել, այլ [միայն] կնոջից, և կույսն էլ ազգահամարի մեջ չի մտնում: Լսիր հենց Աստծուն, Ով ասաց Գաբրիելին. «Գնա այն կույսի մոտ, ով նշանածն է Հովսեփ անունով մարդու՝ Դավթի ցեղից ու տնից» (հմտ. Ղուկ. Ա 26-27): Ուրեմն եթե Հովսեփը Դավթի ցեղից էր, նշանակում է՝ Կույսը ցեղակից էր նրան, որովհետև Օրենքը հրամայում էր ամուսնանալ նույն և ոչ թե մի ուրիշ ցեղի պատկանող կնոջ հետ: Իսկ որ [ավետարանիչը] Կույսին ազգահամարի մեջ չի հիշատակում, այլ միայն Հովսեփին, սրա պատճառով մի՞ երկմտիր, որովհետև [հրեաների] օրենքով կանայք չէին

թվարկվում ազգահամարի մեջ, այլ միայն տղամարդիկ: Եվ որպեսզի հենց սկզբից Օրենքի սովորությունը չխախտի, Կույսի նախնիների մասին լռում է և Հովսեփինը հիշատակում: Նաև իսկույն չէր կամենում հրեաներին հայտնել, թե Քրիստոսը կույսից է ծնված, որպեսզի այդ խոսքին չհավատալու պատճառով Կույսին չքարկոծեն մեղքի բարուրանքով նրանք, որոնց չարությունը նաև անցած ժամանակներն էին նպաստում, քանի որ ի սկզբանե ոչ ոք չէր լսել, թե կինը [կարող] է առանց տղամարդու ծնել: Եթե Հովսեփը, ով արդար էր և [աստվածային տնօրենություն] խորհրդի սպասավոր, կարիքն ունեցավ հրեշտակի երեման և մարգարեի վկայություն, որպեսզի հավատար կուսական ծննդյանը, հրեաներն ինչպե՞ս կարող էին ազատվել չար կասկածներից, երբ [այսպիսի ծննդյան] իրողությունը նոր ու զարմանալի էր, և դրա մասին նույնիսկ չէին լսել երբեք:

[Ավետարանիչը] Դավթից հետո բարձրանում է դեպի օրհնություն աղբյուրը՝ Աբրահամը, որովհետև սրանք երկուսն էլ զարմանալի էին հնում՝ մեկը՝ իբրև մարգարե և

Թագավոր, մյուսը՝ իբրև նահապետների հայր, ում՝ ամուլ Սառայից ավետիսով ծնված զավակը նախանշում էր [Աստծո] Խոսքի ծնունդը սուրբ Կույսից: Այս պատճառով էլ [ավետարանիչն] ասում է.

Աբրահամը ծնեց Իսահակին, — իբրև Քրիստոսի նախօրինակի, — Իսահակը ծնեց Հակոբին (Ա. 2):

Ինչո՞ւ [Հակոբի] եղբոր մասին չի հիշատակում: Որովհետև [Հակոբի եղբայրը] կապ չունի Իսրայելի³⁵ ցեղի հետ, որի [սերունդները], ըստ մարմնի, Քրիստոսի նախնիներն էին: Նաև սրանով այն բարձրագույն խորհուրդն է ցույց տալիս, որ ինչպես Ռեբեկան, ով հեթանոսներից էր, իր ազգատոհմին թողնելով, եկավ միացավ Իսահակին, այդպես էլ հեթանոսների Եկեղեցին՝ մեր Տիրոջը՝ ըստ այսմ. «Լսի՛ր, Դուստր, և տե՛ս... մոռացի՛ր քո ժողովրդին» (Սաղմ. ԽԳ. 11): Եվ ամուլ լինելով³⁶ [Ռեբեկան] երկու որդիով հղիացավ, ինչը կանխագուշակում էր երկու ժողովուրդներին: Որովհետև ասվում է, որ նախ Հակոբը սաղմնավորվեց որովայնում, բայց Եսավը ուժ գործադրելով առաջինը ծնվեց՝

մի կարճ ժամանակի համար ստանալով անդրանկուլթյունը, իսկ հետո Հակոբը [ծնվեց]՝ բռնելով նրա գարշապարից, ուստի թեև անմիջապես չհաղթեց, սակայն հոր վախճանից հետո անդրանկուլթյունն առավ եղբորից³⁷, ինչպես հեթանոսները՝ [հրեաներից]: Որովհետև Օրենքի սպառումից հետո [հեթանոսներն] անդրանկուլթյունը վերցրին հրեաներից՝ ըստ գրված [հետևյալ խոսքի]. «Հակոբին սիրեցի և Եսավին ատեցի» (Սաղ. Ա. 2):

Հակոբը ծնեց Հուդային և նրա եղբայրներին:

[Ավետարանիչն] ինչո՞ւ նախ չի հիշատակում [Հակոբի] անդրանկի որդիներին՝ Ռուբենին, Ծմավոնին և Ղևիին: Որովհետև նրանք զրկվեցին իրենց հոր օրհնուլթյունից իրենց չարուլթյան պատճառով. Ռուբենը՝ հարձին պղծելու, և Ծմավոնն ու Ղևին՝ սպանուլթյան անօրինուլթյան³⁸, ինչպես բոլոր հրեաները՝ կռապաշտուլթյամբ պոռնկանալու պատճառով, և օրենսգետներն ու փարիսեցիները³⁹ Տիրոջը սպանելու: Իսկ երջանիկ Հուդան՝ իբրև Քրիստոսի նախօրինակ, անդրանկուլթյունը ստացավ Թամարի հանդեպ արդարացիորեն վարվելու պատճառով, նաև որովհետև իր խոր-

հուրդով փրկեց Հովսեփին մահվանից⁴⁰: Այս պատճառով էլ Հակոբն իր օրհնության մեջ ասաց. «Շառավղից ելար, որդեյա՛կ իմ» (ԾԱՃԹ. ԽԹ 9). որովհետև Հովսեփի մահվան մեղքի տակ չընկար: Ուստի հենց [Հուդան] ընդունեց անվերջանալի թագավորության աթոռը:

Հուդան ծնեց, – ասում է [ավետարանիչը], – Փարեսին ու Ջարային Թամարից (Ա. 3):

Ինչո՞ւ է հիշում այն պատմությունը, որում այնպիսի անատակություն գործվեց⁴¹: Սրանով մեզ խրատում է նախնիների չարագործությունների պատճառով չամաչել: Եվ ցածրացնում է Աբրահամով պարծեցող հրեաների հպարտությունը, թե օգուտ չկա ուրիշների առաքինությունը պարծենալուց, սակայն նաև այն ցույց տալիս, որ ամենքն էլ՝ թե՛ նրանք, թե՛ նրանց նախնիները, մեղքի տակ էին: Հետևաբար անհրաժեշտ էր, որ Քրիստոսը գար, որպեսզի ամենքին ազատեր մեղքից: Նույն պատճառով [ավետարանիչը] նաև տասներկու նահապետներին չի հիշատակում, որովհետև նրանցից շատերը հարձեռից էին ծնվել, և նույնիսկ Դավիթը Սողոմոնին պոռնիկ կնոջից ունեցավ⁴²:

Սակայն ինչո՞ւ է Փարեսի հետ նաև Ջարային հիշատակում: [Սրանց հետ] կատարվածը խորհուրդ ունեւ: Երբ Թամարն արդեն ծնում էր, նախ Ջարան ձեռքը հանեց: Երբ մանկաբարձը սա տեսավ, կարմիր [թեղ] կապեց [Ջարայի] ձեռքին՝ անդրանիկ [ծնվածին] ճանաչելու համար, որովհետև հասկացավ, որ երկուսն էին [ծնվում]: Սակայն մանուկը ձեռքը հետ քաշեց, Փարեսը ելավ, և հետո՛ Ջարան: Եվ մանկաբարձն ասաց. «Ինչպե՛ս ճեղքվեց քեզ համար ցանկապատը» (ԾԱՃԹ. ԼԸ 29): Ուստի քննեք պատահածը և մանկան անունը, թե ի՛նչ են խորհրդանշում: Ովքեր Հոգով հասու եղան, ասում են, որ երկու մանուկները խորհրդանշում են երկու ժողովուրդներ: Ինչպես որ անդրանիկ մանուկը, նախ միայն ձեռքը ցույց տալով, հետ քաշվեց՝ տեղ տալով կրտսերին, որ կատարյալ անդամներով դուրս գա, ապա ինքն էլ ելավ, այդպես էլ Եկեղեցու առաքինությունը, արահամյան ժամանակներում աղոտաբար երևալով, հետ քաշվեց, հրեա ժողովուրդը Օրենքի առաքինությամբ հայտնվեց, և դրանից հետո պայծառապես երևաց Նոր [ուխտի առաքինությունը]: Այս պատճառով էլ

«Փարեա» անունը «ճեղքվածք» է թարգմանվում՝ համաձայն մանկաբարձի խոսքի՝ «Ճեղքվեց քեզ համար ցանկապատը», այսինքն՝ Հին օրենքը՝ Նորի միջոցով: Որովհետև Սուրբ Գրքին հատուկ է «ցանկապատ» կոչել օրենքը՝ ըստ այսմ. «Քանդեցիր նրա ցանկապատը» (Սաղմ. ՀԹ 13), կամ՝ «Ցանկապատով փակեցի այն» (Ես. Ե 2), կամ՝ «Ցանկապատի միջնորմը քանդեց» (Եփես. Բ 14): Իսկ մանկան ձեռքին [կապված] կարմիր [թելը] խորհրդանշում է [մարդկություն] մեղքերն իր վրա Վերցնողի արյունը:

Փարեաը ծնեց Եզրոնին: Եզրոնը ծնեց Արամին: Արամը ծնեց Ասիմադաբին: Ասիմադաբը ծնեց Նասաոնին (Ս. 4):

Քանի որ Ահարոնը [Նասաոնի] քրոջ հետ ամուսնացավ⁴³, քահանայությունն ու թագավորությունը միացան մի ցեղի մեջ⁴⁴, որպեսզի երբ Քրիստոսը ծնվեր, թագավորական և քահանայական իշխանությունները միասին վերցնեք:

Նասաոնը ծնեց Սաղմոնին: Սաղմոնը ծնեց Բոոսին Հոաքաբից⁴⁵ (Ս. 5):

[Ավետարանիչը] հիշատակում է Ռախաբ պոռնիկին իբրև Եկեղեցու նախօրինակի: Որովհետև երբ [Ռախաբը] տեսավ կույս Հեսուին, իր ազգն ուրացավ, պոռնիկությունից մաքրվեց և դավանեց Հեսուի Աստծուն⁴⁶, ինչպես որ Եկեղեցին էլ, երբ լսեց Փրկչի ճշմարիտ անունը, թողեց իր [հեթանոսական] հայրենի կրոնը, մաքրվեց [մկրտություն] Ավագանով և հավատաց երկնքի և երկրի Աստծուն: Եվ ինչպես Ռախաբն իր ամբողջ տնով փրկվեց կարմիր նշանի միջոցով⁴⁷, այդպես էլ հեթանոսների Եկեղեցին՝ խաչի վրա Միածնի թափած արյամբ:

Բոոսը ծնեց Ուրեդին Հոութից:

Այս Հոութը մովաբացի էր, Ղովտի ցեղից⁴⁸: Թողնելով իր հայրենիքը՝ ցանկացավ Հուդայի օրհնյալ զավակին, ուստի Աստված, տեսնելով նրա հավատը, Բոոսի սրտի մեջ գուլթ դրեց՝ կնություն առնելու Հոութին, ումից ծնվեց Հեսսեն: Հոութը նույնպես խորհրդանշում է Եկեղեցին. ինչպես որ Բոոսը չգարչեց նրա այլազգի լինելուց և անպատասպարան աղքատությունից, այդպես էլ Քրիստոսը չարհամարհեց հեթանոսների

Եկեղեցիին՝ սրա այլազգի և առաքինություններին անհրաժեշտ լինելու պատճառով, այլ ընդունեց և գերագույն բարձրությունը հասցրեց: Եվ ինչպես որ [Հռոմեացի] նախ թողեց իր տունն ու ազգատոհմին և հետո՝ այն ամուսնությունն արժանացավ, այդպես էլ Եկեղեցին նախ հրաժարվեց վնասակարից և հետո՝ արժանացավ Փեսային, ինչպես և ասվում է [սաղմոսում]. «Մոռացի՛ր քո ժողովրդին և քո հոր տունը, քանզի Թագավորը ցանկացավ քո գեղեցկությունը» (Սաղմ. ԽԴ 11-12):

Հեսսեն ծնեց Դավիթ արքային: Դավիթը ծնեց Սողոմոնին Ուրիայի կնոջից (Ա 6):

Ուրիան հեթանոսներից եղած նորահավատ էր⁴⁹, և [նրա կին] Բերսաբեեն գիտեր Հակոբի այն օրհնության մասին, որ Հուդայից հաստատվել էր Դավիթի վրա⁵⁰, ուստի փափագում էր գողանալ օրհնյալ ծնունդին Դավիթից, ինչպես Թամարը՝ Հուդայից: Եվ թեև Դավիթն այս նպատակով չէր մերձենում նրան, և սա երևում է նրանից, որ պատժվեց [Բերսաբեերի հետ շնանալու համար]⁵¹, սակայն Բերսաբեեն ընդունեց Աստծուց ինչ որ ցանկանում էր:

Սողոմոնը ծնեց Ռոբովամին: Ռոբովամը ծնեց Աբիային: Աբիան ծնեց Ասափին (Ա 7):

Ասափը ծնեց Հովսափատին: Հովսափատը ծնեց Հովրամին (Ա 8):

Այստեղ [ավետարանիչը] ազգաբանություն մեջ հիշատակելու արժանի չի համարում Հովրամից հետո եղած երեք թագավորներին՝ Ոքոզիային, Հովասին և Ամասիային: Եվ իրավացիորեն՝ որովհետև Հովրամը, կին առնելով պիղծ Հեզաբելի դուստր Գոթոզիային, ունեցավ Ոքոզիային, Ոքոզիան նմանապես չար եղավ և մեկ տարի թագավորելուց հետո սատակվեց⁵²: Հովասը [վերջում] կռապաշտ դարձավ և իրեն թագավորեցրած Հովիդայե քահանայից հանդիմանվելու պատճառով սպանեց նրան ու անիծվեց Աստծուց⁵³: Այս քահանան ամուսնացած էր Հովրամ արքայի դստեր հետ⁵⁴, ինչի հետևանքով քահանայությունն ու թագավորությունը դարձյալ միախառնվեցին: Իսկ Ամասիան ազգաբանություն մեջ չհիշատակվեց, որովհետև չվերացրեց [կուռքերին ընծայված] բարձունքները⁵⁵:

Ոգիան ծնեց Հովաթամին: Հովաթամը ծնեց Ա-
բազին: Աբազը ծնեց Եգեկիային (Ա, 9):

Եգեկիան ծնեց Մանասեին: Մանասեն ծնեց Ա-
մովսին: Ամովսը ծնեց Հովսիային (Ա, 10):

Հովսիան ծնեց Հեքոնիային և նրա եղբայրնե-
րին Բաբելոնյան գերության ժամանակ (Ա, 11):

Բաբելոնյան գերությունից հետո Հեքոնիան
ծնեց Սաղաթիելին: Սաղաթիելը ծնեց Զորոբաբե-
լին (Ա, 12):

*Այս Զորոբաբելն⁵⁶ իբրև փրկիչ ծնվեց
[հրեա] ժողովրդի համար [Բաբելոնյան] գե-
րության ժամանակ, ինչպես Մովսեսը՝ Ե-
գիպտոսում, և Քրիստոսը՝ հոգիների գերու-
թյան ժամանակ: Զորոբաբելն Իսրայելի [ժո-
ղովրդին] Բաբելոնից վերադարձրեց Երու-
սաղեմ, իսկ Քրիստոսը նոր Իսրայելին
[բարձրացրեց] վերին Երուսաղեմ: Զորոբա-
բելը վերստին կառուցեց [Երուսաղեմի] տա-
ճարը՝ առավել մեծ փառքով, քան նախկինը,
իսկ Քրիստոսն իր Եկեղեցին առավել բարձ-
րացրեց, քան հրեաների ժողովարանը:*

Զորոբաբելը ծնեց Աբիուդին: Աբիուդը ծնեց Ե-
դիակիսին: Եդիակիսը ծնեց Ազովրին (Ա, 13):

Ազովրը ծնեց Սադովկին: Սադովկը ծնեց Աքի-
նին: Աքինը ծնեց Եդիուդին (Ա, 14):

Եդիուդը ծնեց Եդիագարին: Եդիագարը ծնեց
Մատթանին: Մատթանը ծնեց Հակոբին (Ա, 15):

Հակոբը ծնեց Հովսեփին՝ Մարիամի ամուսնուն,
որի հետ էր նշանված Մարիամ կույսը, ումից ծնվեց
Հիսուսը, Ով անվանվեց Քրիստոս (Ա, 16):

*Հովսեփին «ամուսին» է կոչում, սակայն
որպեսզի ոչ ոք անվայել բան մտքով չանց-
կացնի, ավելացնում է, որ [Կույսը նրա հետ]
միայն «նշանված» էր, որպեսզի սրանով
Կույսի վերաբերյալ որևէ կասկած բացառի
և նրան մաքուր ցույց տա:*

*Բայց անհրաժեշտ է պարզել նաև, թե ինչու Մատ-
թեսոսը ազգաբանությունը ներկայացնում է վերևից
ներքև, իսկ Ղուկասը՝ ներքևից վերև բարձրացնում:
Պատճառը նախ այն է, որ Մատթեսոսը հրեա-
ների համար է գրել, ուստի հիշատակում է
միայն նրանց, ովքեր, Աբրահամից սկսած,
նահապետներ էին նրա՛նց ազգում: Իսկ
Ղուկասը գրել է ամբողջ աշխարհի համար,
ուստի պետք էր ամբողջ մարդկություն
ընդ որ նախնիներին հիշատակել: [Սա բացատր-
վում է] այլ կերպ ևս. Մատթեսոսը գրում է
Քրիստոսի միայն իջնելը մեզ մոտ, իսկ Ղու-
կասը՝ բարձրանալն այնտեղ, որտեղից իջավ:
Հետևաբար, Մատթեսոսը, [Աստծո] խոսքին*

բարձրությունից ներքև իջեցնելով, ցույց է տալիս Խոսքի դեպի մեզ խոնարհվելը, իսկ Ղուկասը, [Նրան] բարձրացնելով դեպի Աստված, ցույց է տալիս մեր բնության հաղորդությունն աստվածային բնությանը, որով Գլխի հետ բարձրացանք ու նստեցինք բարձունքներում՝ Մեծության աջ կողմում:

Իսկ որ նահապետների անունների առնչությամբ տարբեր են թվում Մատթեոսի և Ղուկասի [ներկայացրած] ազգաբանությունները, ապա եթե մեկն իմաստությամբ քննի, երկուսի [ներկայացրած] կարգերն էլ վայելուչ ու ճիշտ կգտնի: Որովհետև Մովսեսը հրեաների համար օրենք էր սահմանել⁵⁷, որ երբ մեկն անորդի մեռներ, նրա եղբայրը պիտի առներ նրա կնոջը և երեխա ունենար մեռածի անունով, որպեսզի, ասվում էր, մեռածի հիշատակը չկորչեր սերունդներից, որովհետև դեռևս հարություն հույսը հայտնի չէր նրանց: Այս պատճառով էլ Իսրայելում մի որդուն երկու հոր անուն էին տալիս. մի [անունը]՝ ըստ բնության՝ նրա, ումից ծնվում էր, իսկ մյուսը՝ ըստ օրենքի՝ հոր մեռած եղբոր: Սրանով երկու եղբայր միևնույն որդին էին ունենում՝ ողջ [եղբայրը]՝ ծնունդով, իսկ

մեռածը՝ անվամբ: Այսպիսով՝ Մատթեոսը ազգաբանության մեջ դնում է ըստ բնության որդիներին, ինչ պատճառով և յուրաքանչյուրի համար «ծնվել» բառն է գործածում, իսկ Ղուկասը՝ [ըստ բնության՝ միայն] մի քանիսին, և [այնուհետև] թվում է մեռած հայրերի՝ ըստ օրենքի որդիներին, ուստի և հիրավի Մատթեոսի պես չի գրում «ծնեց», այլ միայն անուններն է հերթով դնում: Ինձ թվում է՝ թեև Ղուկասն ինքն էլ էր Հոգով լի, սակայն սրանցում հմտացել էր իր ուսուցիչ Պողոսի շնորհիվ, ով քաջատեղյակ էր նախնիների գիտությունը: Ուրեմն սրանք են Մատթեոսի և Ղուկասի [ներկայացրած ազգաբանությունների] միջև տարբերությունների և նույնությունների պատճառները:

Սողոմոնն ու Նաթանը Դավթի որդիներն էին, և Մատթեոսը ծնունդները Սողոմոնից է թվում, իսկ Ղուկասը հասցնում է մինչև Նաթան և Դավթ: Այսպիսին է երկուսի միջև տարբերությունը: Սողոմոնի թոռներից քսանչորսերորդը՝ Մատթան անունով, նույն ցեղից իրեն կին է առնում Ասթան անունով մեկին, ումից ըստ բնության ծնում է Հակոբ որդուն: Մատթանը մեռնում է, և

նրա կնոջն առնում է Նաթանի թոռներից ոմն Մելքի՝ երեսունյոթերորդը՝ Նաթանից հաշված: Սա ծնում է Հեղին, որով Հակոբն ու Հեղին դառնում են տարբեր հայրերից համամայր եղբայրներ, որովհետև Հակոբը Սողոմոնի [որդի] Մատթանի ծնունդն է, իսկ Հեղին՝ Նաթանի որդի Մելքիին: Հեղին կին է առնում և անորդի մեռնում: Հակոբը, առնելով [այդ կնոջը], իր եղբայր Հեղիի համար զավակ է ունենում՝ ծնում է Հովսեփին՝ սուրբ Կույս Մարիամի խոսնայրին: Ուստի Հովսեփը բնությամբ որդին է Սողոմոնից սերած Հակոբի, ում և հիշատակում է Մատթեոսը, և ըստ օրենքի՝ համարվում է Նաթանից սերած Հեղիի որդին, ինչը ներկայացնում է Ղուկասը: Սրանք են երկու [ազգաբանությունների միջև եղած] կարծեցյալ անմիաբանության պատճառները:

Արդ՝ Աբրահամից մինչև Դավիթ բոլոր սերունդները տասնչորսն են, Դավթից մինչև Բաբելոնյան գերությունը՝ տասնչորս սերունդ, և Բաբելոնյան գերությունից մինչև Քրիստոս՝ տասնչորս սերունդ (Ա. 17):

[Մատթեոսը] բաժանում է ազգահամարը նույնաթիվ երեք կարգի: [Առաջինն է] Աբ-

րահամից մինչև Դավիթ, որոնց տրվեց ավետիսն օրհնության Զավակի, Ով Քրիստոսն է: [Սրանով Մատթեոսը] ցույց է տալիս, թե Քրիստոսը որտեղից էր և որ ցեղից: [Այնուհետև] հիշատակում է Բաբելոնյան գերությունը, որպեսզի ցույց տա, որ [հրեաներն] իրենց ամբարշտության պատճառով կրեցին այդ բոլոր չարիքները: Սակայն Աստծո խնամքը նրանց չլքեց գերություն ժամանակ, այլ միշտ խրատում էր մարգարեների միջոցով և զորացնում հրաչքներով՝ մխիթարելով նրանց վերադարձի հույսով, և վերադարձրեց ողորմությամբ՝ չնայած նրան, որ մարդկանց համար Նրա թափած այնքան ջանքն ի դերև ելավ: Որովհետև ավելի շատացրին չար գործերը, մինչև հարկ եղավ, որ Նա Ինքը գար, որով իրագործվեց ամենքի փրկությունը:

Իսկ ինչո՞ւ [ավետարանիչը] Եգիպտոսում եղած պանդխտությունը չի հիշում և [հիշում է] միայն Բաբելոնում եղածը: Որովհետև Եգիպտոսինը վաղուց էր եղել, իսկ սա՝ նոր. առաջինից վախճունեին, իսկ երկրորդի հանդեպ մտավախություն կար: Այլև՝ Եգիպտոս գնացին ոչ թե մեղքերի պատճառով, այլ հացի կարոտու-

թյան, իսկ Բաբելոն տարվեցին [իրենց] անօրինուլթյունների պատճառով:

Ինչո՞ւ է [ազգաբանություն մեջ] միջին մասի երեք թագավորներին բաց թողնում, իսկ վերջում տասներկու անհապետներին տասնչորս դարձնում: Նախ՝ ինչպես կանխավ ասել ենք, [այդ երեք թագավորներն] իրենց չարիքների պատճառով արժանի չէին Տիրոջ նախնիների մեջ թվարկվելու: Երկրորդ՝ ինչպես երևում է, [ավետարանիչը] գերուլթյան ժամանակը որպես սերունդ է դիտում և Քրիստոսին ևս ներառում [ազգաբանուլթյան մեջ], այսինքն՝ վերջին տասնչորսի սկիզբը պետք է համարել Հեքոնիային, ով գերուլթյունից հետո ծնեց Սաղաթիելին, իսկ վերջը՝ Քրիստոսին, որով ամբողջանում է տասնչորս թիվը:

Հիսուս Քրիստոսի ծնունդն այսպես եղավ (Ա. 18):

Քանի որ [ավետարանիչը] նախապես ասել էր, որ Հակոբը ծնել է Մարիամի այր Հովսեփին, ուստի որպեսզի չկարծես, թե [Հիսուսը] բնուլթյան օրենքով է ծնվել Հովսեփից, կամենում է այժմ պատմել Նրա ծննդյան կերպը: Ուշադրուլթյո՛ւն դարձրու այս պատ-

մուլթյան գեղեցիկ կարգին, որ [Մատթեոսը] Նրա ծննդյան մասին չի պատմում հենց սկզբից, այլ նախ ցույց է տալիս, թե Նա քանիերորդն էր Աբրահամից, Դավթից և Բաբելոնյան գերուլթյունից հետո, որպեսզի սրանով ցույց տա, որ Նա է այն Օծյալը, Ով քարոզվեց մարգարեների միջոցով, և Նրա մասին էր, որ ասաց նահապետ Հակոբը, թե գալու էր, երբ Հուդայի իշխանները սպառվեին⁵⁸: Նրա գալստյան մասին նաև Դանիել մարգարեն էր գուշակել [յոթանասուն] յոթնյակով⁵⁹. Եթե մեկը [Գաբրիել] հրեշտակի կողմից Դանիելին ասված յոթնյակների տարիների թիվը հաշվի, [Երուսաղեմ] քաղաքի կառուցումից մինչև Քրիստոսի ծնունդը [եղած տարիների թիվը] ճիշտ և ճիշտ դրան համապատասխան կգտնի:

Այս բաները հայտնելուց հետո [ավետարանիչը] սկսում է [Հիսուս Քրիստոսի] ծննդյան պատմուլթյունը: Ասում է.

Նրա մայր Մարիամին գշանել էին Հովսեփի հետ:

Չի ասում «Կույսին», այլ միայն՝ «մորը», որպեսզի խոսքը դյուրընկալելի կերպով մա-

տուցի: Բայց հետո զարմացնում է այն
չքնաղ իրողությամբ, որի մասին ասում է.

Նախքան նրանց՝ միմյանց մոտ գալը՝ պարզ-
վեց, որ [Մարիամը] հղիացել է Սուրբ Հոգուց:

Չի ասում. «Նախքան կույսին փեսայի
տուն բերելը», որովհետև արդեն [ներա]
տանն էր. հնում սովորությունն ունեին նշա-
նածին արդեն [փեսայի կամ հարսի] տանը
պահելու, ինչպես որ Ղովտի փեսաներն էլ
ներա տանն էին⁶⁰:

Իսկ ինչո՞ւ հղիանալու ավետիսը չեղավ նախքան
նշանվելը: Որպեսզի Կույսն ամեն տեսակ չար
կասկածից զերծ մնա. որովհետև Իսրայել-
ում նախատինք էր կնոջ՝ առանց ամուսնու
մնալը, ինչպես հայտնում է Եսային. «Յոթ
կին կբռնեն մի տղամարդուց և կասեն.
«...Վերացրո՛ւ մեր նախատինքը»» (Ես. Գ 1):
Որովհետև երբ անամուսին կնոջն ինչ-որ
վնասի պատճառ էին համարում, անողորմա-
բար սպանում էին, իսկ տեր ունեցողի գոր-
ծերն ուրիշ ոչ ոք իրավունք չունեին քննելու,
ներա ամուսնուց բացի:

Այլև՝ անհրաժեշտ էր, որ իրականանային
մարգարեների խոսքերն այն մասին, որ

[Քրիստոսը] ծնվելու էր Բեթղեհեմում, գա-
լու էր Տաճար, գնալու Եգիպտոս⁶¹: Այս բո-
լոր վայրերում ինչպե՞ս կարող էր Կույսն
անտեր չըջել:

Կա նաև մեկ այլ պատճառ. Հովսեփը
Կույս Մարիամի ամուսինը կոչվեց չարին
խոչընդոտելու համար. որովհետև այն ժա-
մանակից ի վեր, որ չարը լսեց մարգարեից.
«Ահա կույսը հղիանալու և ծնելու է» (Ես. Է
14), բոլոր կույսերին որսում էր՝ մեղքի մեջ
գցելու համար: Սրանով չարը կուրացավ և
չհասկացավ, որ Մարիամը կուսությամբ է
հղիացել՝ ըստ Հոբի. «Անգղի աչքը չի տես-
նի նրան» (Հոբ ԻԸ 7), և ըստ Սողոմոնի. «Չի ի-
մացվի օձի հետքը քարի վրա» (Առակ. Լ 19):

Այլև՝ [սա կատարվեց հոգևոր] խորհր-
դով: Ինչպես որ դրախտում Ադամն ու Ե-
վան մերկ էին և չէին ամաչում, քանի որ
անմեղ էին, այդպես էլ Հովսեփն ու Մարիա-
մը Եկեղեցու դրախտում մեղքերից մերկ էին
և խղճմտանքից ծնված ամոթ չունեին:

Իսկ որ [ավետարանիչն] ասում է. «Պարզ-
վեց, որ հղիացել է Սուրբ Հոգուց», թող ոչ
ոք չկարծի, թե [Սուրբ] Հոգին նախ ստեղծել
է [Աստծո] Խոսքի (Բառի) մարմինը, և ապա

Խոսքը եկել և բնակվել է այդ մարմնի մեջ՝ ըստ որոշ չարափառների, այլ [Սուրբ] Հոգին մաքրեց Կույսին բոլոր մարմնական կրքերից և նրան մաքուր տաճար դարձրեց իր էակցի բնակության համար, և Խոսք Աստված, մտնելով այնտեղ և վերցնելով Կույսի արյունից, միացրեց իր աննյութ բնությանը՝ անշփոթ խառնմամբ և անբաժանելի միավորմամբ: Եվ ապականացուն անապական դարձրեց՝ խառնելով Աստծո անապական բնությանը, և այս խառնման և միավորման կերպն անհասանելի է արարածներին: Նաև քանի որ ոմանք հանդգնեցին ասել, թե [Խոսք Աստված] մարմին չառավ սուրբ Կույսի բնությունից, այլ ասես խողովակի միջով անցավ նրանով՝ միայն [մարդկային] նմանությունն առնելով, այսպիսիներին կշտամբում է ավետարանիչը «հղիանալ» բառով, որովհետև եթե [Քրիստոսի] մարմինն ուրիշ տեղից էր և ոչ թե Մարիամից, ապա ի՞նչ հաղորդություն կունենար մեր բնության հետ, և ինչպե՞ս կիրականանար մարգարեությունը «գավազանի՝ Հեսսեի արմատից բխելու»⁶² վերաբերյալ: Կամ [ինչպե՞ս կբացատրվեր] Պողոսի [խոսքը

Քրիստոսի]՝ «կնոջից լինելու» մասին, Հովհաննեսինը՝ «Խոսքի մարմնանալու»⁶³, կամ էլ հենց ի՛ր՝ [Քրիստոսի] անվանելն իրեն «Աստծո Որդի» և «Դավթի զավակից»⁶⁴ և սրանց նման շատ [ուրիշ] խոսքեր [Սուրբ] Գրքում, որոնցով ապացուցվում է, որ [Աստծո Խոսքը] ճշմարտապես՝ դարձավ մարդ և ո՛չ թե երևութապես: Հետևաբար, որ Կույսից մարմին առավ և ծնվեց, սա շատ բաներից է հայտնի, բայց ծննդյան եղանակը բնավ հայտնի չէ. ընդունիր դու հայտնին, իսկ ինչի մասին լուել են՝ մի՛ քննիր:

Նրա ամուսին Հովսեփը, քանի որ արդար էր և չէր կամեցում նրան խալտառակել (Ս. 19):

[Ավետարանիչը] նախ ասաց, որ [Քրիստոսի ծնունդը Սուրբ] Հոգուց է և առանց ամուսնության, ուստի որպեսզի ոչ ոք չասի, թե սա որտեղի՛ց է հայտնի, վկայաբերում է Հովսեփին. թե ինձ չես հավատում, ասում է, գոնե այս մարդո՛ւն հավատա, որովհետև ոչ թե մի աննշան մարդ էր, այլ հույժ արդար: Ըստ աշխարհիկ մտածողների՝ «արդար»-ը նա է, ով անիրավություն չի գործում և ոչ ոքի զրկանք չի պատճառում: Իսկ Սուրբ

Գրքում «արդար» է կոչվում նա, ով իր մեջ բովանդակում է առաքինության բոլոր տեսակները, ինչպես որ Հոբի մասին է [Սուրբ Գիրքը] վկայում, թե «ճշմարիտ ու արդար» մարդ էր (Հոբ Ա 1), կամ Զաքարիայի և Եղիսաբեթի՝ թե «երկուսն էլ արդար էին» (Ղուկ Ա 6): Այսպես էլ ավետարանիչը սրա մասին է ասում, թե արդար էր, այսինքն՝ հեզ և քաղցրաբարո:

Ձեր կամե՞նում նրան խայտառակել, ուստի մտածեց լուելյաց նրձակել [նրան]:

[Լուելյայն արձակել նրան], ով ոչ միայն ենթակա էր խայտառակման՝ ըստ [եղած] կասկածների, այլև տանջանքի և մահվան՝ ըստ [Մովսիսական] օրենքի⁶⁵: Իսկ Հովսեփը ոչ միայն մեծ, այլև փոքր խայտառակությունից ազատել կամեցավ [Մարիամին]. սրանով տե՛ս նրա ճշմարիտ արդարությունը: Գիտե՛ք, թե այսպիսի հարցում ինչպիսին է տղամարդու խանդը. սա Սողոմոնն է հայտնում, ով քաջատեղյակ էր, որ «խանդով լի է տղամարդու բարկությունը և չի խնայում դատաստանի օրը» (Առակ. 2 34): Նաև այլուր [ասում է]. «Դժոխքի պես խիստ է

խանդը» (Երգ Ը 6): Սրա փորձը հայտնի է ամենքին. որովհետև ավելի լավ են համարում իրենց անձը մահվան մատնել, քան կնոջից [դավաճանվելու] կասկածի տակ ընկնել: Իսկ [Հովսեփի] դեպքում ոչ թե կասկած կար, այլ ճշմարիտ իրողություն, որովհետև դեպքերի հետագա ծավալումը պիտի հանդիմաններ նրան: Սակայն այնքան ազատ էր խանդից, որ նույնիսկ մի փո՛քր չկամեցավ տրտմեցնել Կուլյսին. իր տանը [նրան] պահելն օրինազանցություն էր համարում, սակայն [կատարվածը] հայտնի դարձնելու դեպքում հարկ կլիներ [Կուլյսին] ատյան տանելու և մահվան մատնելու: Բայց սրանցից ոչ մեկն էլ չարեց, և սրանից պարզ է դառնում, որ [Սուրբ] Հոգի՛ն ընտրեց այդպիսի մարդուն՝ լինելու [աստվածային] մեծ խորհրդի սպասավոր: Այլև՝ Շնորհի մերձեցման ժամանակ առաքինություններն Օրենքի [պահանջածից] ավելի բարձր դրսևորում պիտի գտնեին, ինչպես որ նախքան ճառագայթները տարածելը արևն առավոտյան լույսով է լուսավորում ամբողջ աշխարհը: Այդ պատճառով էլ նախ մարգարեները ցնծալով կարապետեցին, Հովհաննես [Մկրտիչը] նախքան [մոր]

որովայնից դուրս գալը խաղաց Կուսորդու առաջ⁶⁶, և ըստ այդմ էլ Հովսեփն Օրենքի [պահանջածից] ավելի բարձր արդարություն ցուցաբերեց: Որովհետև Օրենքը հրամայում էր, որ նախ ամուսնու ձեռքը պիտի բարձրանա՝ քարկոծելու [չնացածին], իսկ Հովսեփը կամեցավ գաղտնի արձակել [Մարիամին], քանզի երբեք լիտի բան մտքով չանցկացրեց նրա մասին, այլ իր հոգում հասկացավ, որ կատարվածն աստվածային բան է:

Եվ մինչև նա մտածում էր այս մասին, ահա Տիրոջ հրեշտակը տեսիլքում հայտնվեց նրան և ասաց (Ա, 20):

Ինչո՞ւ [հրեշտակը չհայտնվեց Հովսեփին] հայտնապես, ինչպես Կույսի, Չաքարիայի և հովիվների առաջ, այլ երազի տեսիլքով երևաց նրան: Որովհետև այս մարդը մեծ հավատ ուներ և կարիք չուներ մարմնապես տեսնելու: Նաև պետք է պարզել, թե ինչո՞ւ [տեսիլքը] եղավ մտածմունքի մեջ նրա ընկնելուց հետո և ոչ թե առաջ: Որպեսզի նրան հավատալ տար, որ տեսիլքն Աստծուց է, Ով գիտի սրտի խորհուրդները:

Իսկ ինչո՞ւ Կույսը, նրան թախծած տեսնելով, նրան չէր հայտնում հրեշտակի ավետիսի և հրաշալի հղիու-

թյան մասին: Որովհետև սրանից [Հովսեփն] ավելի՛ կայրանար՝ կարծելով, թե հանցանքը ծածկելու համար [Մարիամը] բարուրանքներ է կցկցում, քանի որ կատարվածն անհավատալի և աննախադեպ բան էր: Այլև՝ Կույսի լուռ մնալը նշան էր մեծ հավատի և համեստության, որովհետև գիտեր, որ ով տվել է իրեն այդ անարատ հղիության ավետիսը, նույնը կարող է նաև փարատել Հովսեփի կասկածները: Այս պատճառով էլ պատշաճ էր, որ հրեշտակը Կույսին երևար նախքան հղիությանը, որպեսզի [Կույսը], իմանալով հղիության պատճառը, անտեղի բաներ չմտածեր և տրտմությունից իրեն վնաս չհասցներ: Իսկ Հովսեփին [հրեշտակը հայտնվեց երազում], երբ փորձով երևաց նրա արդարությունը՝ Կույսի հանդեպ նրա ներողամիտ գտնվելով: Եվ ի՞նչ ասաց հրեշտակը.

Հովսեփ, Գավթի՛ որդի:

Նախ հիշեցնում է նրան Դավթին, ումից Քրիստոսն էր լինելու, և նախնու անվամբ [Հովսեփի] մտքից հանում է խռովքը: Սրանով հիշեցնում է նաև ամբողջ ազգին տրված ավետիսի կատարումը:

Մի՛ վախեցիր, – ասում է:

Սա ասելով՝ ցույց է տալիս, որ [Հովսեփը] կասկածների մեջ էր, թե գուցե Աստծուն հակառակ բան է անում, որ հանցավորին պահում է իր տանը: Ուստի [հրեշտակը] նաև Կույսի անունն է տալիս:

Քեզ մոտ վերցնելու Մարիամին, – և ավելացնում է. – քո կնոջը:

Այստեղ «կին» է կոչում նշանածին, ինչպես որ [Սուրբ] Գրքին հատուկ է նաև նշանված տղամարդկանց «փեսա» կոչել նախքան ամուսնությունը, ինչպես Ղովտի փեսաների դեպքում՝ ըստ նախապես [մեր] ասածի: Իսկ հրամայում է «վերցնել իր կնոջը»՝ ոչ թե ամուսնության համար, այլ նույն տեղում՝ [Հովսեփի] տանը, պահելու. որովհետև Հովսեփը մտքում [Մարիամին] իբրև արձակված [կին] էր համարում: Քո կողմից արձակվածին, ասում է, Աստված քեզ է հանձնել, որ լինես տեսուչ ու խնամակալ: Ինչպես որ հետո Քրիստոսն [Իր մորը] հանձնեց իր աշակերտին՝ [Հովհաննեսին]⁶⁷, այդպես էլ այժմ Աստված հրեշտակի միջոցով [Մարիամին] հանձնում է Հովսեփին: Իմացի՛ր, ասում է [հրեշտակը], որ նրա հղիությունը

ոչ միայն մաքուր է անօրեն խառնակությունից, այլև գերազանցում է [մարդկային] բնություն օրենքները: Ուստի ոչ միայն պիտի հեռացնես վախը մտքիցդ, այլև ուրախանաս մեծապես:

Որովհետև նրա մեջ ծնվածը Սուրբ Հոգուց է:

Նորահրաշ է այս խոսքը և գերազանցում է մարդկային բնությունը. ինչո՞ւ [հրեշտակը] «ծնված» ասաց և ոչ թե «հղացված»: Սրանով հայտնեց, որ [Աստծո] Խոսքը Մարիամի մեջ իջնելիս կատարյալ անդամներով է գոյացել և ո՛չ թե, ինչպես մենք, որովայնում գոյացել է քառասուն օրում:

Իսկ ինչո՞ւ [հրեշտակն ասաց]. «Սուրբ Հոգուց է»: Որպեսզի իմանաս, որ Աստծո Որդու տնօրենությունը ինչպես Հոր կամքով, այդպես էլ Հոգո՛ւ հաճությունը եղավ՝ ըստ Գաբրիելի՝ Կույսին ասածի. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը հովանի կլինի, – ասաց, – քեզ վրա» (Ղուկ. Ա, 35), որպեսզի սրանով հայտնի դառնար, որ Սուրբ Երրորդությունը մեկ կամք ունի, և ցույց տրվեք, որ ոչ միայն Որդիով, այլև Հորով և Հոգով եղավ աշխարհի փրկությունը:

ԿՃԱՎԻ ՈՐՊԻ (Ա, 21):

Ինչո՞ւ չասաց. «Քե՛զ հասմար կճնվի որդի»: Որպես-
զի «որդի» բառի ընդհանուր գործածու-
թյամբ բացառի Հովսեփի՝ [Քրիստոսի]
ծննդյան պատճառը լինելը և որպեսզի հայտ-
նի, որ ոչ միայն նրա, այլև ամբողջ աշխար-
հի համար է Փրկիչ ծնվել՝ ըստ Եսայու, [ով
ասում է]. «Մանուկ ծնվեց մեզ համար» (Ես.
թ. 6):

Եվ Նրա անունը «Հիսուս» կոչեն:

Ասում է. «Այն պատճառով, որ ասացի,
թե Սուրբ Հոգուց է հղիությունը, մի՛ կար-
ծիր, թե քո սպասավորության կարիքը չու-
նի, որովհետև թեև Նրա հղացմանը ոչնչով
չօգնեցիր, սակայն ինչ որ պատշաճում է հո-
րը՝ խնամք տանել, սա քեզ եմ հանձնելու,
որ նաև մանկան անունը դու դնես»: Եվ սա
մեծ պատվի նշան է. որովհետև թեպետ
հրեշտակն ինքը բերեց «Հիսուս» անունը
երկնքից՝ Հորից, սակայն Հովսեփին է հրա-
մայում դնել ծնունդից հետո: Ինչպես Ադա-
մին Աստված մասնակից դարձրեց Իր արար-
չությունը կենդանիներին անուններ դնե-
լու⁶⁸ համար, այն դեպքում, որ [Ադամն]
Աստծո մոտ չէր [վեցօրյա արարչության

ժամանակ], այդպես էլ [Իր] Որդու անվա-
նադրությունը մասնակից դարձրեց Հովսե-
փին, ով մասնակից չէր հղացման [գործին]:
Եվ [մասնակից դարձրեց] անուն դնելուն ո՛չ
սովորական կերպով, ինչպես [այլ] մարդիկ,
այլ ըստ պատահած դեպքի՝ հույժ խորհրդա-
բար: Որովհետև «Հիսուս»-ը փրկիչ է
թարգմանվում, որը հենց հրեշտակն է բա-
ցատրում և կանխապես քարոզում այն բա-
րիքների մասին, որոնք լինելու էին Նրանով,
և թե ինչպե՛ս

Մեղքերից կիրկի Նա Իր ժողովրդին:

Այս խոսքով [հրեշտակը] զարմանալի ի-
րողություն է հայտնում. որովհետև ոչ թե
մարմնի փրկություն է ավետարանում, այլ
այն, որն առավել մեծ է՝ [փրկություն] հո-
գուն Վնասողից, ով մեղքի ծածուկ պատե-
րազմով գերեց մարդկանց հոգիները՝ իրեն
ծառայելու:

Իսկ ինչո՞ւ է [հրեշտակը] միայն «ժողովրդին»
փրկել ասում և չի ավելացնում «հեթանոսներին», ու-
քե՛ր հատկապես ազատություն ստացան [Քրիստո-
սով]: Որպեսզի լսողներին հենց սկզբից
չխրտնեցնի. այլև հայտնի, որ [հրեաները]

նույնպես ունեն Քրիստոսի փրկութեան կարիքը, որովհետև թեև Օրենքով արդարանում էին, սակայն ամենքն էլ մեղքի տակ էին: «Ժողովուրդ» ասելով՝ [հրեշտակը] նաև հեթանոսներին է ակնարկում, որովհետև երկուսից կազմվելու էր մեկ ժողովարան՝ Նրա կողմից, Ով «քանդելու էր ցանկապատի միջնորմը» (Եփեա. Բ 14):

Այս փրկական անունը նախապես նաև Մովսեսն էր ցույց տվել, երբ Նավեի որդի Օսեի⁶⁹ անունը փոխել էր՝ Հիսուս⁷⁰ դնելով: Վերջինս փրկեց իր ժողովրդին հեթանոսների պատերազմներից և [Աստծուց] խոստացված երկիրը ժառանգել տվեց, ինչպես որ աշխարհի ճշմարիտ Փրկիչը, պատերազմելով ծածուկ թշնամու հետ, նրան վանեց և նրան հաղթողներին իբրև ժառանգություն տվեց երկնքի արքայությունը: Հեսուն [սա արեց] Մովսեսի վախճանից հետո, իսկ Քրիստոսը՝ Մովսեսական օրենքի դադարումից հետո, Հեսուն Իսրայելին մկրտեց Հորդանանում, իսկ Քրիստոսը՝ հավատացյալներին՝ Սուրբ Հոգով:

Երբ [հրեշտակը «Հիսուս»] անվան խորհրդով հայտնեց այս ամենը [Հովսեփի]

իմաստուն մտքին, իր խոսքը կնքեց մարգարեի վկայությունը:

Այս ամենը եղավ, — ասում է, — որպեսզի իրականանար Եսայի մարգարեի սիջոցով Տիրոջ ասածը (Ա. 22).

«Ահա կույսը կհղիանա և որդի կծնի, և Նրա անունը կդնեն Էմմանուել»⁷¹, որը թարգմանվում է «Աստված մեզ հետ» (Ա. 23):

Այս մեկ խոսքով [հրեշտակը] ցույց է տալիս [Աստծո] անբավ շնորհը: Որովհետև երբ նայեց Աստծո մարդասիրության անքնին խորությունը, քանի որ երբեք չէր կարծել, թե Աստված կմարդանար և բնություն օրենքները կխափաներ, պատահածի վրա զարմացած՝ ասում է. «Այս ամենը եղավ»: Իսկ որպեսզի չկարծես, թե հենց հիմա եղավ, ցույց եմ տալիս, որ նախապես ծրագրվել էր, [ասում է հրեշտակը]: Ուստի Հովսեփի միտքն ուղղում է դեպի Եսային, որպեսզի եթե [Հովսեփը], քնից արթնանալով, [հրեշտակի] խոսքերը մոռանա, Եսայունը հիշի, որի [գիրքը] հաճախ ընթերցում էր:

Իսկ ինչո՞ւ այսպիսի բան չասաց [հրեշտակը] Մարիամին: Որովհետև նա երեսնա էր և [Սուրբ]

Գրքին քաջատեղյակ չէր: Իսկ [Հովսեփը], քանի որ իմաստուն էր և շարունակ ընթերցում էր մարգարեների [գրքերը], որոնք վաղ ժամանակներից էին ընդունել, դրանցից է [հրեշտակը] վկայություն բերում, որ համոզի կուսական հղիություն մեջ: Եվ չի ասում. «Որպեսզի կատարվի Եսայու խոսքը», այլ՝ «[որպեսզի կատարվի] Տիրոջ ասածը», որովհետև թեև խոսքը Եսայունն էր, սակայն Աստծո՛ խոսքն էր նրան ներշնչել: Իսկ ի՞նչ էր ասում այդ խոսքը. «Ահա կույսը կհղիանա և որդի կծնի» [Ես. Է 14]: «Հղիություն» բառով հաստատում է [Քրիստոսի]՝ մեր բնությունից մարմին առնելը, իսկ կույսի՝ որդի ծնելը վեր է բնական երևույթներից:

Բայց եթե մեկն ասի, թե ուրիշ թարգմանիչներ ոչ թե «կույս» են թարգմանել, այլ «աղջիկ», նախ այն կասենք, որ բոլորից ավելի արժանահավատ են յոթանասուն [թարգմանիչները], ովքեր, միասին հավաքվելով, թարգմանեցին Քրիստոսի ծննդից շատ տարիներ առաջ: Նրանք ամեն կասկածից զերծ են. նախ՝ ժամանակով, ապա՝ բազմաթիվ լինելով, նաև՝ որ ամենքը նույն բանը թարգմանեցին: Բայց եթե կամենում են

հավաստի համարել ուրիշների [թարգմանությունները], միևնույն է, հաղթանակը մեր կողմն է, որովհետև [Սուրբ] Գրքին հատուկ է [երբեմն] երեխային «կույս» բառով ներկայացնել, ինչպես որ օրհնություններում ասվում է. «Երիտասարդներ և կուսաններ» (Սաղմ. ԾԽԸ 12), և ինչպես Մովսեսը գրում է Օրենքում, որ եթե [բռնաբարություն ենթարկվող] «աղջիկը», այսինքն՝ կույսը, ճշա, անմեղ է⁷², որտեղից հասկանում ենք, որ «երեխա», «աղջիկ» և «կույս» [բառերը] նոյն իմաստով են գործածվում: Նաև պետք է քննել այն, որ եթե [Մարիամը] կույս չէր, ի՞նչ կարիք կար ասելու. «Խնդրիր քեզ համար նշան [Տիրոջից]» (Ես. Է 11). նշանը պիտի գերազանցի բնության ընդհանուր [օրենքները]:

«Եվ Նրա անունը կզնեն, – ասում է [Եսային], – էմմանուել»: [Ոմանք] հարցնում են, թե ինչո՞ւ [Աստծո Որդու] անունը ոչ թե էմմանուել դրվեց, այլ Հիսուս Քրիստոս: Որովհետև [հրեշտակը] չասաց [Հովսեփին], թե՛ դո՛ւ կկոչես [էմմանուել], այլ՝ թե ուրիշներից կկոչվի, այսինքն՝ դեպքերի իրականացմամբ կոչվեց էմմանուել: [Սուրբ] Գրքին հատուկ է ա-

նուն ղնել ըստ պատահող ղեպքի, ինչպես որ այս խոսքից հետո նույն մարգարեն ասում է. «Նրա⁷³ անունը ղիր Արագապես ավար առնել» (Ես. Ը 3), բայց սա՛ չէր մանկան անունը. այլ քանի որ, երբ նա ծնվեց, ավարառուլթյուն եղավ, [Եսային] անունը ղրեց ըստ այդ իրողարձուլթյան: Երուսաղեմի մասին էլ մարգարեն ասում է, թե կկոչվի «Արդարուլթյան քաղաք» (Ես. Ա 26), բայց այն երբեք այդպես չկոչվեց, այլ քանի որ վատից ղեպի լավն էր փոխվելու, [մարգարեն] այդ ճշմարիտ իրողուլթյունն է իբրև անուն ղնում [քաղաքի] վրա: Նաև որպեսզի [Հովսեփն ու Մարիամը] չամբաստանվեին հրեաներից, թե մարդկանցից փառք ընդունելու համար [Մանկանը] տվել են մարգարենների կողմից ընտրված մի անուն, որը Նրան վայել չէ, [այս անվան մասին] լռեցին, մինչև որ [ղրա էուլթյունը] պատահող ղեպքերից հայտնի դարձավ:

Հովսեփը, քնից արթնանալով, արեց՝ ինչպես հրամայել էր Արան Տիրոջ հրեշտակը, և իր սոտ առավ իր կնոջը (Ա. 24):

Ավետարանիչը Հովսեփի մասին ավելի առաջ ասաց, որ արդար էր, և նրա ճշմարիտ

արդարուլթյունը նաև նրանից է ճանաչվում, որ չքննեց հրեշտակի խոսքերը, այլ հավատաց ասածներին իբրև Աստծո խոսքի: Սա հայտնի է նրանից, որ անմիջապես կատարեց հրամայվածը՝ «իր մոտ առավ իր կնոջը», – ասում է [ավետարանիչը]:

Իսկ ինչո՞ւ է [ավետարանիչը Կույս Մարիամի համար] «կին» բառը հաճախ գործածում: Որովհետև այդ ժամանակ պետք չէր հայտնել [կատարվող] իրողուլթյունների խորհուրդը:

Եվ Արան չէր մերձեցնում, մինչև ծնեց իր անդրանիկ Որդուն (Ա. 25):

[Թեև] «մինչև»-ը ժամանակավորուլթյուն [ցույց տվող բառ] է, որովհետև նշանակված [ժամանակամիջոցն] է ցույց տալիս և ղրանից հետոյի վրա չի տարածվում, ինչպես այս [խոսքում], [սակայն այն] պետք է հասկանաս [հետևյալ կերպ]: Ո՛չ թե [Հովսեփը] մինչև այդ ժամանակը [Մարիամին չէր մերձեցնում], իսկ ղրանից հետո մերձեցավ նրան, քա՛վ լիցի, այլ [այսպես է ասվում], որպեսզի իմանաս, որ թե՛ նախքան [Մանկան] ծնունդը և թե՛ ղրանից հետո ազատ էր [մերձավորուլթյան] ամեն կասկածից: [Այս-

տեղ] «մինչև»-ը իրողություններին [ժամանակային] սահման չի դնում, այլ [բառի այսպիսի] կիրառությունը հատուկ է [Սուրբ] Գրքին, ինչպես որ տապանի դեպքում էլ ասվում է. «Ազուավը ելավ և այլևս չվերադարձավ, մինչև երկիրը ցամաքեց» (ԾԱՆԴ. Ը 7). պարզ է, որ ցամաքելուց հետո ևս [չվերադարձավ]: Նաև՝ «Հավիտյաններից մինչև հավիտյաններն են Դու» (Սաղմ. 2), կամ՝ «Նրա օրերում արդարություն կլինի, մինչև լուսինը վերանա» (Սաղմ. ԷԱ 7). «Ե՛ս եմ, Ե՛ս եմ, և մինչև խոր ծերության էլ հասնես, Ե՛ս եմ» (Ես. ԽԶ 4). «Եվ ահա Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վախճանը» (Մատթ. ԻԸ 20). «Նստի՛ր Իմ աջ կողմում, մինչև Քո թշնամիներին [պատվանդան] դնեմ [Քո ոտքերի համար]» (Սաղմ. ԾԹ 1). և շատ ուրիշ նման [խոսքեր Սուրբ] Գրքում: Եվ ինչպես որ սրանցում «մինչև» [բառի] գործածության պատճառով անպատշաճ է հասկանալ, թե Աստծո էությունը փոփոխվում է կամ մարդկանց ծերանալուց հետո սպառվում, կամ խաղաղությունը դադարելու է հանդերձյալում՝ լուսնի վերանալուց հետո, երբ հատկապես է հաստատվելու, կամ [Տեր Հիսուսը] չի լի-

նելու առաքյալների հետ [աշխարհի] վախճանից հետո, երբ հատկապես է լինելու, կամ էլ [Հայրը] Որդուն [Իր աջ կողմից] ելնել է տալու թշնամիներին [Նրա] ոտքերի տակ դնելուց հետո, այդպես էլ այստեղ «մինչև» ասելով՝ [ավետարանիչը] ցույց չի տալիս, թե դրանից հետո [Հովսեփը Մարիամին մերձենալու էր]: Այլ քանի որ նախքան [Մանկան] ծնունդը կարող էր կասկած լինել, այն ի՛նքը վերացրեց «նրան չէր մերձենում» հստակ խոսքով, իսկ ծննդից հետոյի համար էլ հասկանալ ու ճանաչել տվեց քեզ՝ միտք ունեցող մարդուդ, ով երբեք նման կասկածներ չի ունենում: Եվ ինչպես՞ որևէ մարդ նման բան կմտածի Կույսի մասին, թե այդպիսի անճառելի ծննդից հետո աշխարհին հատուկ [ամուսնական] կյանքը կարող էր մտքով անցկացնել: Արդար Հովսեփը նույնպես, այդքան սքանչելի ծնունդը տեսնելուց հետո, չէր համաձայնի նման բանի:

Սակայն [ոմանք] ասում են. «Իսկ ինչպե՞ս է, որ [Ավետարանում] Քրիստոսի եղբայրներ են հիշատակվում»⁷⁴: Պատասխանենք, որ ինչպես որ Հովսեփը Մարիամի ամուսինը կոչվեց, բայց չէր, այդպես էլ, ոմանց կարծիքով, ուրիշ կնոջից

եղած նրա որդիները կոչվեցին Քրիստոսի եղբայրներ, սակայն հարագատ եղբայրները չէին: Որովհետև շատ վարագույրներ քաշվեցին՝ ծածկելու համար [Քրիստոսի] այդպիսի ծնունդը: Եթե Հովսեփը Մարիամի ամուսինն էր, և սրանք էլ՝ Մարիամի որդիները, ինչո՞ւ էր [Քրիստոսը] խաչի վրայից Իր մորը հանձնում Հովհաննես [առաքյալին]⁷⁵ և ոչ թե Մարիամի որդիներին: Պարզ է ուրեմն, որ բնությամբ ոչ նրանք Մարիամի որդիներն են, ոչ էլ [Հովսեփը] [նրա] ամուսինը: Որովհետև եթե [Մարիամն] իսկապես [նրանց] մայրն էր, ինչո՞ւ էր [Քրիստոսը] նրան բաժանում որդիներից և հանձնում Հովհաննեսին, նա, Ով հորն ու մորը պատվելու պատվիրան էր տվել որդիներին:

Իսկ մենք, որ ճշմարտությանն ենք [հետևում], պետք է հավատանք, որ այն բանից հետո, որ Կույսը դարձավ Հոգու և Խոսքի բնակարանը, բոլոր մարդկային [մեղանչական] կրքերը վերցվեցին նրանից: Եթե Հովհաննես [առաքյալը կանանց հետ] նույնիսկ մի փոքր մերձավորությունից այնքան մաքուր գտնվեց⁷⁶, ապա ի՞նչ ասել նրա մասին, ով, իննամսյա ժամանակով, Աստծո բու-

վանդակ բնությունը մարմնով կրեց որովայնում: Պետք է հավատալ, որ դրանից հետո ոչ միայն ախտավոր ցանկություններից ազատվեց, այլև բոլոր հարկադիր⁷⁷ կրքերից: Իսկ այն կարծիքը, [թե Մարիամը նաև այլ զավակներ է ունեցել], նրանցն է, ովքեր չեն խոստովանում, որ ծնվածն Աստված է, և ծնողը՝ Աստվածածին: Այսպիսիներին՝ իբրև հոգով մեռածների, մի կողմ թողնենք և մենք հաջորդ խոսքին անդրադառնանք:

Ծնեց, – ասում է [ավետարանիչը], – իր անդրանիկ Որդուն, և [Հովսեփը] Նրա անունը դրեց Հիսուս:

Իբրև արդար և [Աստծո] հրամանները կատարող մարդ՝ [Հովսեփն] անվրեպ կատարեց հրեշտակի միջոցով Տիրոջից հրամայվածը, որովհետև այդ նույն փրկական անունը դրեցին [Մանկան] վրա ութօրական հասակում [Մովսիսական] օրենքով [պահանջված] թլփատություն ժամանակ, ինչպես ասվեց [Մարիամին] հրեշտակի կողմից՝ ըստ Ղուկասի պատմության⁷⁸:

Իսկ ի՞նչ է Աշանակում «անդրանիկ»-ը: Ո՛չ թե առաջինը հաջորդաբար ծնվողների մեջ՝ ըստ

մարդկանց ընդհանուր սովորության (որովհետև սա բացառվում է «Միածին» անվան պատճառով), այլ Սուրբ Հոգուց լինելու և անապական ծննդյան պատճառով: Որովհետև ուրիշ ոչ ոք այսպես չծնվեց, որով, ըստ Պողոսի, Նա եղավ «անդրանիկը բազում եղբայրների մեջ» (Հռոմ. Ը 29), ովքեր «ո՛չ արյունից և ո՛չ էլ մարդու կամքից, այլ Աստուծուց ծնվեցին» (Հովհ. Ա 13)՝ Ավագանով, որպեսզի, ինչպես որ Նա մարմնով ծնվեց [Սուրբ] Հոգուց ու Կույսից, մենք էլ հոգևոր ծնունդ առնենք [Սուրբ] Հոգուց ու ջրից, որով կրտսեր եղբայրներ ենք դառնում «բոլոր արարածների Անդրանիկին» (Կոր. Ա 15): Ինչպես ծնունդով, այդպես նաև հարությամբ պատշաճ համարեց լինել մեր անդրանիկը, որովհետև «ամեն ինչով նմանվեց եղբայրներին» (Եբր. Բ 17)՝ մարմին առնելով և բոլորի փոխարեն այդ մարմնով հաղթանակ տանելով. քանզի եթե Աստված առանց մարմնի հաղթեր, Ամենազորն ի՞նչ գովեստի պիտի արժանանար:

Նաև [այս խոսքն ասվեց]՝ հայտնի դարձնելու համար, որ [Տերը], Ով նախ Աստված էր մարդու համար, [մարդկանց մեջ անդրա-

նիկ դառնալուց] վատ չզգաց, որովհետև այն, որ [Նա] ա՛յժմ խոնարհվեց դեպի մեր անարգ բնությունը, ավելի մեծ բան է, քան եթե բնակվեր մարդու մեջ, երբ վերջինս դրախտի փառքի մեջ էր: Այլ ինչպես որ ընկածին բարձրացնողն ինքն էլ պիտի խոնարհվի, այդպես մեր Տերը խոնարհվեց դեպի մեր ընկած բնությունը և կանգնեցրեց հարություն, որն անկում ապրել չի կարող, և հին Ադամի համար դարձավ նոր մարմին՝ անապականությունը Նորոգողի⁷⁹ հետ միավորություն:



ԳԼՈՒԽ Բ

Հերովդես արքայի օրոք, Հրեաստանի Բեթղեմում [քաղաքում] Հիսուսի ծնվելու ժամանակ (Բ 1):

Ավետարանիչը նախ խոսեց [Հիսուսի] ծննդյան կերպի և այն մասին, որ Նրանով էր փրկված թյուն լինելու, որ դա կանխագուշակվել էր մարգարեների և հրեշտակների միջոցով, և որ այդ խորհուրդն իրագործվեց Սուրբ Հոգու և անարատ Կույսի կողմից, ապա գրում է [ծննդյան] տեղի ու ժամանակի մասին: Եվ ո՛չ աննպատակ, այլ որպեսզի հիշեցնի հին մարգարեությունները, որոնք խոսքով պարզորոշաբար հայտնեցին [այս մասին]: Որովհետև Միքիան, այլաբանորեն [ղիմելով] ասես բանական արարածի, ասում է. «Եվ դո՛ւ, Բեթղեհե՛մ, Հուդայի՛ երկիր, բնավ կրտսեր չես Հուդայի իշխանների մեջ. քեզնից կելնի Ինձ համար մի իշխան, ով կհովվի Իմ Իսրայել ժողովրդին» (Միք. Ե 2): Դավիթն էլ [ասում է]. «Ահա լսեցինք նրա մասին Եփրաթայում և գտանք նրան մայրիների դաշտում» (Սաղմ. ԾԼԱ, 6): Որովհետև ինչ

որ եբրայերեն «Բեթղեհեմ» է, ըստ հունարենի «Եփրաթայի տուն» է⁸⁰, իսկ մեր [լեզվով] թարգմանվում է «Հացի տուն», որտեղից և երկնքից իջած Հացը տրվեց աշխարհին՝ [նրան] կյանք պարգևելու համար: Սրա հետ առնչվող մի ուրիշ խորհուրդ էլ կա. ասվում է, թե Եվայի գերեզմանը Բեթղեհեմում է, ինչպես որ Ադամինը՝ Գողգոթայում, և ինչպես որ [Բեթղեհեմը] Եվայի հանցանքները վերացրեց մահվամբ, այդպես էլ [Տիրամորը] ծնելով վերացրեց նախամորը [տրված] երկունքի անեծքը⁸¹:

Իսկ [Քրիստոսի] գալստյան ժամանակը նահապետ Հակոբն է մարգարեացել. «Հուդայից իշխան չի պակասի և ոչ պետ՝ նրա երանքից, մինչև գա Նա, Ով կա և մնում է, և Նա է հեթանոսների հույսը» (ԾԱՁԳ. ԽԹ 10): Այս մարգարեություն իրականացման ժամանակ, երբ ծնվում էր Քրիստոսը, Իսրայելում իշխում էր Հերովդեսը, ում ավետարանիչը «Թագավոր» է կոչում. նրա թագավորության երեսունչորսերորդ տարում Քրիստոսը ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ [քաղաքում]: Այս ժամանակն անթերիորեն բովանդակում է այն տարիների թիվը, որի մասին հրեշտա-

կապետն ասաց Դանիելին, թե յոթ յոթնյակ և վաթսուներկու յոթնյակ է սահմանվել ժողովրդի համար մինչև Օծյալի [գալուստը], ապա կվերանան օծումները, և կգան հավիտենական սրբությունները⁸²: Այս ամենը միասին կազմում է չորս հարյուր ութսուներեք տարի՝ հրեշտակի խոսքի [արտաբերումից] մինչև Քրիստոսի ծնունդը, երբ ճշմարիտ Օծյալի գալստյամբ Իսրայելում վերացան քահանայական և թագավորական օծումները և տրվեցին բոլոր հեթանոսներին, որոնց մուտքի մասին զեղեցկապես պատմում է այս ավետարանիչը:

Ահա, – ասում է, – Արևելքից մոգեր եկան Երուսաղեմ և ասացին. «Որտե՞ղ է հրեաների արքան, որ ծնվեց, որովհետև արևելքում տեսանք նրա աստղը և եկանք՝ երկրպագելու նրան» (Բ 2):

Մանրագնին քննության կարիք ունենք՝ [իմանալու], թե որտեղից էին մոգերը, ո՞ր երկրից, ո՞վ դրոշմը նրանց ու բերեց [Երուսաղեմ] և ի՞նչ պատճառով: Նրանք ազգությամբ պարսիկ էին և արևելյան երկրից, ինչպես ցույց է տալիս ավետարանիչը: Իսկ նրանց գալու պատճառը ոչ հատուկ իրեն-

ցից էր, ոչ էլ միայն Աստծուց, այլ նրանք կամեցան, իսկ Աստված դրդեց, ինչպես Պողոսին, որովհետև իմացավ նրա մեջ եղած բարին, ուստի ի վերուստ կանչեց նրան, և ինչպես որ դեպի նույնը դրդում է բոլոր այն մարդկանց, որոնց ճանաչում է իբրև բարին սիրողներին:

Խոսենք նաև աստղի մասին, թե ինչ պատճառով երևաց և իսկապես աստղ էր, թե միայն նրա տեսքն ունեւր: Սրա ճշմարիտ բացատրութիւնը հենց այդ դեպքերն են տալիս: Այն այս բնական աստղերից չէր, այլ նոր և զարմանալի: Իսկ ինչի՞ց է սա հայտնի: Նախ՝ նրա ընթացքից, որովհետև աստղերին հատուկ չէ ճանապարհն այդպիսի ընթացքով ցույց տալ, այնպես, որ մարդկանց ընթացքով շարժվեն, կանգ առնեն, երևան ու անհայտանան, ինչպես այդ աստղը, որը շարժվում էր, երբ շարժվում էին մոգերը, և կանգնում էր, երբ նրանք էին կանգնում, ինչպես այն ամպի սյունը, որն ըստ Իսրայելի որդիների կարիքի նստում ու բարձրանում էր⁸³: Որովհետև [մոգերի] երկրից մինչև Պաղեստին [աստղը] երևաց ու առաջնորդեց, իսկ երբ Երուսաղեմ հասան, անհայ-

տացավ: Դարձյալ հայտնվեց, երբ ելան այնտեղից, մինչև որ ցույց տվեց տեղն ու Մանկանը: Սա ոչ թե աստղի ընթացքին է հատուկ, այլ խոսուն ու իմաստուն ինչ—որ զորութեան: Որովհետև ոչ թե երկնքում մնալով էր ցույց տալիս տեղը, ինչը հնարավոր էլ չէր, այլ իջնելով՝ կանգնեց այն վայրի վրա, ուր Մանուկն էր՝ ըստ ավետարանչի⁸⁴: Իսկ այդ քարանձավը միայն մի փոքր խուղի չափն ունի. աստղն այդքան բարձրութիւնից ինչպե՞ս կարող էր ցույց տալ այն, եթե վերևից չիջներ, քանի որ ոչ թե գամված էր երկնքին, այլ մի իշխանական աստղ էր, որն իր կամքով իջնում էր և բարձրանում օդով: Այլև՝ բոլոր լուսատուներն արևելքից արևմուտք են շարժվում, իսկ սա զնում էր հյուսիսից հարավ, որովհետև Պաղեստինի երկիրը Պարսից երկրի հարավ—արևմուտքում է: Բայց ավելի զարմանալին այն է, որ արևի լույսը՝ գիշերը, և լուսնինն ու աստղերինը ցերեկը ծածկվում են, իսկ սրանը ամբողջ [ժամանակ] պայծառ էր, այն էլ այնքան, որ աղոտացնում էր արևի ճառագայթները: Այլապես ինչպե՞ս կերևար ցերեկն ու կառաջնորդեր [մոգերին], երբ նույնիսկ այս

լուսատուները չեն կարող երկրի վրա մնալ սահմանված ժամանակից ավելի և երկրի տակ չթաքնվել:

Բայց ընդհանրապես ինչո՞ւ աստղ երևաց նրանց. սրա պատճառով ճշմարտության թշնամիները խոսքով ընդդիմադրում են՝ [ասելով], թե Քրիստոսի ծննդյան ժամանակ [ասող] երևաց, որովհետև աստղաբաշխության արվեստն Աստծով է: Նրանց կասենք, որ եթե աստղագիտության խորհրդով էր [Քրիստոսը] ծնվել, ինչպե՞ս է, որ Նա խափանեց աստղագիտությունը, դեներին ըմբերանեց, նրանց մոլորությունը հալածեց և այսպիսի մեքենայությունները վերացրեց: Իսկ մոգերը Նրա աստղից իմացան միայն այն, որ Նա բոլոր արարածների թագավորն է: Սա երևում է նրանց մատուցած խորհրդանշական ընծաներից: Բայց աստղի՝ նրանց երևալու իրական պատճառը սա է. որպեսզի մղվեին երկրպագելու [Քրիստոսին]՝ [հետևյալ] մարգարեության իրականացման համար. «Նրա առաջ [նախ] հնդիկները⁸⁵ կերկրպագեն» (Սաղմ. ՀԱ. 9): Նաև քանի որ այդ ժամանակ սպառվել էին Իսրայելի մարգարեները, աստղը երևաց մարգարեների փոխարեն՝ ի հանդիմանու-

թյուն հրեաների, որպեսզի այն, ինչ մարգարեներից չէին կամենում սովորել, պարսից լեզվով լսեին, և որպեսզի մոգերի միջոցով [Աստված] բացեր հեթանոսների դուռը: Ուրեմն քանի որ այս բոլոր պատճառներով անհրաժեշտ էր, որ [մոգերը] գային, իսկ ուրիշ միջոց չկար՝ [հնարավոր չէր սա անել] ոչ մարգարեի, ոչ հրեշտակի միջոցով, ուստի [Աստված] նրանց կանչեց այն եղանակով, որին սովոր էին, ինչպես որ Պողոսն էլ ավթենացիներին՝ բագինի⁸⁶ և հրեաներին Օրենքի միջոցով էր սովորեցնում, որովհետև ամենուր էլ ընդունելի է թվում այն, ինչին սովոր են: Այդպես էլ Աստված մոգերին աստղի պատկերով հրավիրեց, որպեսզի ինչով որ դեներին էին ծառայում աստղահամայնության աղանդով, դրանով էլ սակավ առ սակավ նրանց բերի դեպի աստվածաշատության բարձրագույն կրոնը: Որովհետև աստղագիտությունն առաջ է եկել [այդ աղանդից], [որը համայնության համար գործածում է] ամպերի խոնավությունից օդի պարզվելը, ուստիև [Աստված] այդ նույն արվեստի միջոցով [մոգերին] ընդունել տվեց [ճշմարիտ աստվածաշատությունը]:

[Մոզերը] գիտեին նաև Բաղաամի մարգարեությունը, որ ասաց. «Կծագի Հակոբի աստղը, Իսրայելից մի մարդ կհայտնվի» (Թվեր ԻԴ, 17), և Նրանով կփրկվեն երկրի բոլոր ազգերը: Նրանով նախ արևելյան [ժողովուրդները] փրկվելով լուսավորվեցին և եկան երկրպագելու [ճշմարիտ Աստծուն], ինչպես որ ասվում է. «Արևելքը բարձունքներից լույս կտեսնի»⁸⁷:

Աստղն ուղիղ չեկավ Բեթղեհեմ, այլ [միառժամանակ] թաքցրեց իրեն մոզերից, որպեսզի Երուսաղեմ գալով՝ նրանք օրենսգետներից լսեն Մանկան մասին կանխասաց մարգարեությունը, Հերովդեսն ու հրեաները նախանձից տանջվեն՝ Նրա ծննդյան լուրն առնելով, և հայտնապես երևա, որ նրանց կամքը հակառակ է ճշմարտությանը: Այս բաների մասին է պատմում ավետարանիչը՝ [ասելով].

Երբ Հերովդեսը լսեց, խռովեց, և ամբողջ Երուսաղեմը՝ նրա հետ (Բ 3):

Հերովդեսն իրավունք ուներ խռովվելու. քանի որ թագավոր էր, վախենում էր իր անձի և իր ժառանգորդ որդիների համար: Իսկ

երուսաղեմացիներն ինչու էին խռովվում, երբ մարգարեները նրանց հայտնել էին, որ [Բեթղեհեմում Մնավածը] նրանց փրկիչն է լինելու: [Հրեաները] սովոր էին միշտ հակառակելու Աստծուն, ինչպես որ անապատում էլ, [Աստծուց] բարիքներ ընդունելով, եգիպտացիների դարչությունն էին ցանկանում: Այժմ ևս նրանք, դեռ բարիքը չտեսած, դրա լուրն առնելով, խռովվեցին: Եվ ոչ միայն խռովվեցին, այլև ավելի լավ էին համարում իրենց անձերին չարիք պատճառել, քան աշխարհի փրկության մասին լսել՝ ըստ Եսայու. «Նրանք կամենում էին հրո ճարակ դառնալ. քանզի մեզ համար Մանուկ ծնվեց, [մեզ] Որդի տրվեց» (Ես. Թ 5-6): Եվ սրտի խռովքից ուշադրություն չդարձրին նրան, թե ինչ էր իրենց լսածը, և չգնացին մոզերի հետևից ու չուրախացան՝ տեսնելով, որ իրենց գերեվարողների ազգից⁸⁸ եկել են նորածին թագավորին երկրպագելու: Պետք է հասկանալին, որ եթե այնքան սարսում են Նրանից, Ով դեռ մանուկ է, ապա որքան ավելի կհնազանդվեն [Նրան], երբ արբունքի հասնի, բայց նրանք բոլոր ազգերից ավելի ծույլ ու հակառակասեր էին:

Եվ ժողովելով, — ասու՞մ է [ավետարանի-
չք], — բոլոր քահանայապետերին ու օրենսգե-
տերին՝ հարցրեց նրանց, թե որտեղ էր ծնվելու
Քրիստոսը (Բ 4):

Ինչո՞ւ է այստեղ ցույց տրվում, որ [հրեաները] շատ
քահանայապետեր ունեին, այն դեպքում, որ Մովսեսը
հրամայել էր, որ [քահանայապետը] մեկը լիցի⁸⁹: Ո-
րովհետև եղծվել էին Օրենքի կարգերը՝ ոչ
միայն մեծերը, այլև փոքրերը: Այս պատճա-
ռով էլ [Օրենքը] Տվողի գալստյան կարիքը
եղավ, որպեսզի [Հին օրենքը] փոխեր Նո-
րին, որը հավիտենական է և մինչև [այն]
Նորոգողի հաջորդ անգամ հայտնվելը՝ ան-
քակտելի:

Իսկ ինչո՞ւ Հերովդեսը շտապեց ժողովել [քահա-
նայապետերին] և կեղծավորությամբ հարցաքննել
[Քրիստոսի ծննդյան մասին]: [Սա արեց] մոզերի
համար, որպեսզի իմանային այն տեղը, որի
մասին հարցրել էին, այլև Մանկանը ծածուկ
չարուժյամբ վնասելու համար, ինչպես և
հայտնի դարձավ դեպքերի ելքից: Եվ քա-
հանայապետերը, քանի որ նախանձից դեռ
չէին բորբոքվել, ինչը տեղի էր ունենալու
հետո՝ [Քրիստոսի] հրաշագործությունների
պատճառով, ճշմարիտ վկայություն տվեցին

[Հերովդեսին]: Ջարմանալի բաներ կատար-
վեցին երկու կողմից էլ. հրեաները մոզերից
իմացան, որ Պարսից երկրում աստղ է քարո-
զել [Քրիստոսի] մասին, իսկ մոզերը՝ հրեա-
ներից, որ Նրա մասին կանխապես խոսքով
քարոզել են մարգարեները: Այս մասին քա-
հանայապետերը, Հերովդեսին պատասխա-
նելով, ասացին.

Հրեաստանի Բեթղեհեմում: Որովհետև մարգա-
րեի միջոցով այսպես է գրված. «Եվ դու, Բեթղե-
հեմ, Հուդայի՝ երկիր, [բնավ փոքր չես Հուդայի իշ-
խանների մեջ]. քեզնից Ինձ համար կելնի մի իշ-
խան, ով կհովվի Իմ Իսրայել ժողովրդին»⁹⁰ (Բ 5-6):

Այսքանը վկայաբերեցին և չկամեցան շա-
րունակել՝ «Նրա ելքը աշխարհի օրերի
սկզբից է» (Միք. Ե 2), որպեսզի դրանով ավե-
լի չտրամեցնեն Հերովդեսին:

[Ոմանք] ասում են. «Եթե մարգարեն ասել էր, որ
Բեթղեհեմում է Նա լինելու, ինչո՞ւ էր Նազարեթում
բնակվում և իր մարդեղությունը թաքցնում»: Նա չի
թաքցրել սա, այլ հստակորեն հայտնել է, ո-
րովհետև ծնվելուց հետո քառասուն օր
մնացել է Բեթղեհեմում՝ մինչև ըստ Օրենքի
ընծայվելը Տաճարին, իսկ Նազարեթում, որը
Նրա մոր բնակություն վայրն էր, բնակվել է

Եգիպտոսից վերադարձից հետո: Այլև մարգարեն չի ասում, թե Բեթղեհեմում «բնակվելու է», այլ՝ որ այնտեղից «ելնելու է»:

Իսկ ոմանք էլ հանդգնելով ասում են, թե մարգարեն սա ասում է Զորոբաբելի մասին: [Այսպես ասողները] հրեաներից էլ անհավատ են, որովհետև վերջիններս Հերովդեսի առաջ վկայեցին, որ [այս խոսքը] Քրիստոսի մասին է: Նաև հենց մարգարեի խոսքերից են հանդիմանվում, որովհետև Զորոբաբելը ոչ թե Բեթղեհեմից է, այլ Բաբելոնից, ինչ պատճառով և Զորոբաբել կոչվեց⁹¹: Նաև ինչպե՞ս կարող էր Զորոբաբելի մասին ասվել [մարգարեի] հաջորդ [խոսքը]՝ «Նրա ելքը աշխարհի օրերի սկզբից է»:

Իսկ ի՞նչ է նշանակում. «Բնավ փոքր չես Հուդայի իշխանների մեջ» [խոսքը]: [Մարգարեն «Հուդայի իշխաններ»] կոչում է ցեղապետերին, ինչով նկատի ունի նաև Երուսաղեմը, որից բնավ փոքր չէ Բեթղեհեմը: Որովհետև Քրիստոսի ծնունդից հետո բոլոր ազգերից գալիս են տեսնելու [Նրա ծննդյան] քարայրն ու մսուրը և երկրպագելու դրանց, որոնք թեև փոքր էին սկզբում, սակայն նրանցում մեծ խորհրդի կատարման պատճառով մեծ դարձան:

«Քեզնից ինձ համար կելնի մի իշխան, ով կհովվի իմ Իսրայել ժողովրդին»: Ամեն տեղ [Սուրբ Գիրքը] ցույց է տալիս, որ Քրիստոսից լինելիք բարիքները [նախևառաջ] հրեաների համար էին: Որովհետև Նրա ծննդյան ժամանակ հրեշտակն ասաց, որ Նա փրկելու էր Ի՛ր ժողովրդին մեղքերից, մոգերն էլ ասացին. «Ո՞ւր է հրեաների՛ արքան», իսկ այստեղ ասվում է. «Քեզնի՛ց ինձ համար կելնի իշխան», որպեսզի [հրեաները] չասեին, թե՛ «Մեզ զանց առնելով՝ [Աստված] հեթանոսներին ընտրեց»:

Այդ ժամանակ Հերովդեսը գաղտնի կանչեց մոգերին և նրանցից ճշտեց աստղի երևման ժամանակը (Բ 7): Ապա ուղարկեց նրանց՝ ասելով. «Գնացեք ստուգե՛ք Մանկան մասին և երբ գտնեք, լո՛ւր տվեք ինձ, որ ես էլ գամ երկրպագեմ Նրան» (Բ 8):

Այն պատճառով գաղտնի կանչեց, որ կարծում էր, թե հրեաները կխնայեն Մանկանը և մոգերին կհայտնեն Նրա վերաբերյալ իր նենգ [մտադրության] մասին, և չգիտեք, որ իրենց ժողովրդի Փրկչին և Ազատչին [հրեաները] մատնելու էին թշնամիների ձեռքը: Մոգերից ճշտեց, ասում է [ավետարանիչը], ոչ թե Մանկան ծնվելու ժամանա-

կը, որպեսզի չկարծեին, թե [Հերովդեսը] վնասել է կամենում, այլ աստղի երևման, որպեսզի առանց կասկածի պատասխանեին, որովհետև [Հերովդեսը] մեծ հնարներով որսացանց էր գցում՝ Մանկանը բռնելու համար, ինչը մեծ անմտություն գործ էր: Որովհետև եթե հավատում էր, որ մարգարեությունն անշրջելի է, ինչը նաև իրականանալիս էր տեսնում աստղով և երկրպագության համար այլազգիների գալստյամբ, ապա պիտի հասկանար, որ անհնարին գործ է հանդգնում կատարել և [իզուր] ընդդիմանում: Իսկ եթե չէր հավատում ու սպասում ասվածների իրականություն դառնալուն, էլ ինչո՞ւ էր ընդհանրապես վախենում: Բայց երևում է՝ [մոգերն] անմեղությունը հայտնեցին խորամանկին աստղի երևման ժամանակը, ինչպես [ասում է] ավետարանիչը, թե՝ «ճշտեց նրանցից»: Եվ ըստ [ժամանակի] այդ չափի էլ կոտորեց երկու տարեկան և ավելի փոքր մանուկներին, որովհետև [աստղը] վաղուց էր երևացել մոգերին⁹², քանի որ կարողացել էին այդքան վայրեր կտրել-անցնել և գալ ու Մանկանը երկրպագել, երբ դեռևս խանձարուրների մեջ էր:

Եվ նրանց ուղարկեց Բեթղեհեմ (Բ 8):

Երբ օրենսդեպքերից լսեց մարգարեի այն խոսքը, որ [Քրիստոսը] Բեթղեհեմում էր ծնվելու, մոգերին այնտեղ ուղարկեց՝ ջանալով մոլորեցնել նրանց ազնիվ միտքն իր այս խոսքով. «Երբ գտնեք, լո՛ւր տվեք ինձ, որ ես էլ գամ երկրպագեմ Նրան»: Տե՛ս նրա անմտությունը. եթե ասածը ճիշտ է, ինչո՞ւ ես գաղտնի կանչում, իսկ եթե նենգել ես կամենում, ինչպե՞ս չես հասկանում, որ գաղտնի հարցնելուցդ կհասկանան քո նենգությունն ու չեն մատնի Մանկանը [Նրան] տեսնելուց և [Նրա Փրկիչ լինելու մեջ] մարգարեությունամբ համոզվելուց հետո: Սակայն չարով բռնված հոգիները միտքն էլ են կորցնում, այլապես ինչպե՞ս կվստահեր մոգերին, թե [Մանկան տեղը] կհայտնեն իրեն, և [նրանց] հետևից չէր ուղարկի իր մարդկանցից մեկին՝ տեսնելու, թե արդյոք մանո՞ւկ է նա, ում երկրպագելու են, որպեսզի իմանալով՝ հեշտությունամբ որսար Նրան՝ կորստյան մատնելու համար: Բայց այս ամենն Աստծո գործն էր, Ով ապուշացրեց [Հերովդեսի] միտքը, որպեսզի նա իր չար ցանկությունը չիրագործի:

Եվ [Հերովդեսը] չասաց. «Ստուգեք այն, ինչ ասացիք թագավորի մասին», այլ՝ «մանկա՛ն մասին», որովհետև «թագավոր» բառով չէր կամենում կոչել Նրան: Իսկ մոգերը, Հերովդեսի այդպիսի կեղծավորությունն անտեղյակ, չմտածեցին, թե նա նման նենգ մտադրույթյուն ունի, և գնացին՝ միայն իրենց նպատակին ուշադրություն դարձնելով:

Թագավորին լսելուց հետո, — ասում է ավետարանիչը, — նրանք գնացին, և ահա այն աստղը, որը տեսել էին արևելքում, առաջնորդեց նրանց, մինչև եկավ կանգնեց այն [տեղի] վրա, ուր Մանուկն էր (Բ 9): Երբ աստղը տեսան, մեծ ուրախություն ապրեցին (Բ 10):

Ինչպես որ «ձայն» կոչված Հովհաննես [Մկրտիչը]⁹³, երբ լսողներին մոտեցրեց ինքին, ինքը լռեց՝ ասելով. «Նա պիտի աճի, իսկ ես նվազեմ» (Հովհ. Գ. 30), այդպես էլ աստղը, երբ մոգերին հասցրեց Արեգակի մոտ և նրանց ցույց տվեց Նրա գեղեցկությունը, ավարտեց իր ընթացքը: Դրանից առաջ այն պատճառով էր ծածկվել, որ մոգերը ստիպված լինեին գնալու և հարցնելու հրեաներին, որոնցից և լսեցին մարգարեի խոսքը: Իսկ երբ մոգերը Երուսաղեմից

դուրս եկան, [աստղը] դարձյալ հայտնվեց ու առաջնորդեց նրանց, մինչև տարավ հասցրեց մսուրին, իսկ ինքը, կանգնելով Մանկան գլխավերևում և ցույց տալով, նրանց երկրպագել տվեց:

Իսկ «մեծ ուրախություն ապրեցին» խոսքը [նշանակում է], որ թեպետ [մոգերը] լսեցին հրեաներից [Մանկան մասին] մարգարեությունը, սակայն իրենց առաջնորդող [աստղը] կորցրած լինելու պատճառով լցվել էին երկբայական մտքերով. կասկածում էին՝ չլինի թե դեպքերը խաբեական ընթացք են ստացել: Բայց երբ [դարձյալ] տեսան [աստղը], դարձյալ հաստատվեցին այն մտքի մեջ, որ ճշմարտությունն են հետևել և ոչ թե առասպելական կարծիքների: Այս պատճառով էլ [ավետարանիչը] նրանց մասին գրում է, որ ոչ թե պարզապես ուրախացան, այլ անչա՛փ, ոչ թե փոքր, այլ մե՛ծ ուրախություն ապրեցին, որովհետև խոսքի այս հավելմամբ ցույց է տալիս այս զգացումի ուժգնությունը:

Երբ տուն մտան, տեսան Մանկանը՝ Իր մայր Մարիամի հետ (Բ 11):

Որտե՞ղ էր նրանց տունը. չէ՞ որ շատերն էին հավաքվել [Բեթղեհեմում] աշխարհագրի համար, և ոչ ոք չէր կարողանում տուն գտնել. ինչպես պատմում է Ղուկասը, «Իջևանատանը նրանց համար տեղ չկար» (Ղուկ. Բ 7): Նաև անկարելի է կարծել, թե ծննդյան վայրից տեղափոխվել էին մի ուրիշ տուն, քանի որ մոգերը Մանկանը տեսան մսուրի մեջ⁹⁴: [Սրանից] երևում է, որ [ավետարանիչը] քարայրն է «տուն» կոչում, ինչպես որ սովոր են մարդիկ օթևանի հարկը «տուն» կոչել:

Իսկ ինչո՞ւ է Ղուկասն ասում, որ Մանուկը մտորի մեջ էր դրված, իսկ Մատթեոսը՝ մոր մոտ: Երկուսն էլ ճիշտ են: Որովհետև երբ [Մանուկը] ծնվեց, խանձարուրներով փաթաթվելով՝ մսուրի մեջ դրվեց, իսկ երբ մոգերը մտան ու տեսան Նրան, Մարիամը Նրան իր գիրկն առավ: Այդ պատճառով էլ [ավետարանիչն] ասում է.

Ընկնելով Նրա առաջ՝ երկրպագեցին՝

ո՛չ իբրև սոսկ մարդու, այլ իբրև ճշմարիտ Աստծո, ինչը երևում է [Նրան մատուցված] խորհրդակիր ընծաներից:

Իսկ ի՞նչը [մոգերին] մղեց սա անելու: Նախ՝ աստղի երևումն ու Մանկան գլխավերևում կանգնելը, և ապա՝ այն, որ Աստվածության հուրը ճառագեց Մանկան դեմքից, որպեսզի սա տեսնելով [մոգերը] չգայթակղվեին Նրա գծուծ կերպարանքից:

Եվ բացելով իրենց զանձերը, — ասում է ավետարանիչը, — Նրան մատուցեցին ընծաներ:

Ո՛չ արջառ ու ոչխար՝ ըստ հրեական թանձրամտություն: Հապա ի՞նչ:

Ոսկի, կնդրուկ և զմուռ:

[Սրանով] կանխապես ցույց տվեցին եկեղեցական պաշտամունքը: Ոսկին ընծայեցին իբրև երկրավոր թագավորի, կնդրուկը՝ իբրև Աստծո, իսկ զմուռը՝ իբրև մեկի, ով պատրաստվում է մեռնել: Նաև քանի որ մարդիկ, դեւերին ոսկյա պատկերների միջոցով երկրպագելով, ինչպես քաղդեացիները, ոսկին օտարացրին Աստծուց, ապա [մոգերը], հեթանոսների կողմից ոսկին երկրպագություն մը հանդերձ Նրան նվիրելով, այդ նյութի պատվականությունը վերադարձրին նրա Արարչին: Եվ կնդրուկով, որն անուշահոտ է, ցույց տվեցին, որ [Քրիստոսից] բխած ա-

նուչ հոտով խափանվելու էր մահվան հոտը, որն արձակվեց օձից⁹⁵: Իսկ զմուռսով, որը բուժիչ է, հայտնեցին, որ [Քրիստոսը] բժշկելու էր Ադամի վնասվածքը:

Եվ երազում հրաման ստանալով Հերովդեսի մոտ չվերադառնալ՝ ուրիշ ճանապարհով գնացին իրենց երկիր (Բ 12):

Ջարմանալի բան կատարվեց. Հերովդեսի նենգ մտադրությունը, որով խաբել էր մոգերին արթուն ժամանակ, նրանց հայտնի դարձավ քնած ժամանակ՝ երազում: Եվ որքան գովեցին Հերովդեսին արթուն ժամանակ, որ չնախանձեց Մանկանը, այդքան դարձվեցին նրան քնած ժամանակ, երբ իմացան, որ կամենում է սպանել Մանկանը:

Եվ դու տե՛ս մոգերի հավատը, որ չմտածեցին, թե եթե այս Մանուկը մեծ ու զորավոր է, ինչո՞ւ է գաղտագողի փախչելու հրաման տրվում: այնտեղից համարձակորեն եկանք, իսկ այստեղից գաղտնի ենք ուղարկվում: Առանց այսպիսի քննություն հնազանդվեցին երազի հրամանին և հրեշտակի մատնանշած ճանապարհով ուրախությունը գնացին իրենց երկիր:

Երբ նրանք այնտեղից գնացին, ահա Տիրոջ հրեշտակը երազում երևաց Հովսեփին և ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ Մանկանն ու Նրա մորը և փախիր Եգիպտոս. այնտեղ կմնաս, մինչև ասեմ քեզ, որովհետև Հերովդեսը կամենում է սպանել Մանկանը» (Բ 13): [Հովսեփն] արթնացավ, գիշերով վերցրեց Մանկանն ու Նրա մորը, գնաց Եգիպտոս և այնտեղ մնաց մինչև Հերովդեսի վախճանը (Բ 14), որպեսզի կատարվեր Տիրոջ ասածը մարգարեի միջոցով. «Եգիպտոսից եմ կանչելու Իմ Որդուն»⁹⁶ (Բ 15):

Ինչո՞ւ հրեշտակը երևաց ոչ թե Մարիամին, այլ Հովսեփին: Որովհետև վերջինի՛ս հանձնարարվեց Կույսի և Մանկան սպասավորությունը. [նրանք] չէին կարող առանց խնամատարի մնալ, մանավանդ այսպիսի օտարություն մեջ:

Իսկ ինչո՞ւ չասվեց «քո կնոջը», ինչպես ավելի առաջ, այլ «Մանկանն ու Նրա մորը»: Որովհետև ծնունդը տեղի ունեցավ, կասկածները փարատվեցին, և մարդը հավատաց, որ տեղի ունեցածն աստվածային բան էր, ուստի [այլևս] կարիք չկար խորհուրդը քողարկելու:

Բայց այստեղ պատշաճ էր, որ Հովսեփի միտքն այսուհանդերձ տարուբերվեր՝ ասելով. «Ինչո՞ւ հրամայվեց մոգերին գաղտնի

հեռանալ և Մանկանն իր մոր հետ Եգիպտոս փախչել. ուրեմն ծաղրա^օնք է սա, չէ^օ որ սրանից առաջ [հրեշտակն] ասաց, որ [ծնվող Մանուկը] փրկելու է իր ժողովրդին, իսկ Նա ահա իրեն էլ չի կարողանում փրկել. եթե այսպես է, ապա [տրված] ավետիսն ավետիս չէ»: Բայց [Հովսեփը] մեծ հավատ ունեւր, ուստի նման բան չմտածեց, ոչ էլ հարցաքննեց [Եգիպտոսից] վերադարձի ժամանակի վերաբերյալ: Հրեշտակն էլ չհայտնեց այն նրան, այլ միայն ասաց. «Այնտեղ կմնաս, մինչև ասեմ քեզ», նաև չասաց. «Ես ձեզ հետ կգամ», որով ցույց տվեց, որ իրենց հետ իբրև մեծ ուղեկից ունեն Մանկանը:

Բայց ինչո՞ւ էր [Աստված] այսպիսի փորձանքի մեջ գցում արդարի՞ն: Աստված սովոր է այսպես վարվել բոլոր ժամանակներում, ինչպես Աբրահամի, Հակոբի և բոլոր արդարների հետ, որպեսզի հայտնի դառնա արդարների պատվականութունը: Այդպես էլ Հովսեփին ոչ թե մեկ, այլ զանազան ձևերով էր տարուբերում՝ երբեմն տրտմեցնում էր, երբեմն մխիթարում, ինչպես, երբ [Հովսեփը] խռովվեց Կոլոսի հղիության պատճառով, [Աստված] հրեշտակի տեսիլքով փարատեց նրա կաս-

կածները, և մինչ [Հովսեփն] ուրախ էր Մանկան, տեսիլքի, աստղի երևման, մոզերի, հովիվների ընծայաբերության ու երկրպագության համար, [Աստված] նրան տրտմեցրեց Հերովդեսի հանդեպ երկյուղով ու Եգիպտոս փախուստով:

Ասում են՝ բայց ինչո՞ւ էր Աստված թույլ տալիս, որ այսպես լիներ: Քանի որ [աստվածային] տնօրենության [իրականացման] ժամանակն էր և չէր կարելի, որ [Քրիստոսի] մանուկ հասկում ամեն ինչ հրաշքներով գործվեր, որպեսզի չկարծվեր, թե Նա [ճշմարտապես] չի մարդացել, ուստիև Նա հանձն առավ իննամսյա հղացումը, ծնունդը, կաթով սնվելն ու մարմնով աճելն ըստ մեր բոլորի բնության: Որովհետև եթե այս ամենը եղավ, և դեռևս հանդգնում են ասել, թե Նրա մարդեղութունը ճշմարիտ չէր, ապա ինչե՞ր կմտածեին, եթե այս ամենը եղած չլիներ: Սակայն Աստծո զորութունը միայն հրաշքներով չէ՛, որ հայտնի է դառնում, այլև իմաստության գործերով, ինչը կարելի է տեսնել նաև Հին [Ուխտում]. որովհետև [Աստված] կարող էր եգիպտացիների հարստութունը հայտնապես տալ երբայեցիների ձեռքը, սա-

կայն հրամայեց խորամանկությամբ վերցնել⁹⁷: Այդպես էլ այս դեպքում [Աստված] իմաստությամբ ու խոնարհ ընթացքով էր նվաճում ամենքին:

Իսկ ինչո՞ւ հրամայեց փախչել Եգիպտոս և ոչ թե մի այլ տեղ: Նախ՝ որպեսզի Տիրոջ խոսքը կատարվեր. «Եգիպտոսից եմ կանչելու Իմ Որդուն» (Օվսեե ԺԱ, 1): Այլև՝ որպեսզի աշխարհին հենց սկզբից մեծ հույս տար: Քանի որ Եգիպտոսն ու Բաբելոնը բոլոր երկրներից ավելի էին խրված ամբարշտության մեջ, շտապեց ուղղության բերել նախ նրանց՝ մեկին՝ [Իր այնտեղ] գնալով, մյուսին՝ աստղի միջոցով, և ապա՝ նրանց հանդեպ նախանձով լցնելով [ուղղության բերել] ամբողջ աշխարհը: Նաև՝ Իսրայելը չարչարվեց այդ երկու [տերություններից]՝ Եգիպտոսում՝ ծառայությամբ, իսկ Բաբելոնում՝ գերությամբ, և ժողովրդի Փրկիչն Իր ծնունդով նրանց Իրեն ենթակա դարձրեց: Այլև՝ Եվայի ծնունդները գերվեցին երկու ախտից՝ հպարտությունից ու պոռնկությունից, որոնց առավել տրվեցին Բաբելոնն ու Եգիպտոսը, որովհետև Բաբելոնը հպարտացած Բելի երկրպագուներին ազատություն չնորհում, իսկ ճշմարիտ Աստ-

ծո երկրպագուներին հրկիզում էր⁹⁸, իսկ Եգիպտոսը տղամարդկային խորհուրդներն ընկղմում էր ջրերի հոսանքների տակ և էգերին [նրանց հանդեպ] հեշտալի ցանկության պատճառով փրկում⁹⁹: Ուստիև [Աստված] Բաբելոնին աստղով է հրավիրում՝ երկնային մեկ Աստծուն երկրպագության գալու, իսկ Եգիպտոս Ի՛նքը գնաց Կուլսի հետ, որպեսզի նրանց սովորեցներ կուսությամբ պատերազմել պոռնկության դեմ¹⁰⁰, և կատարվեր Եսայու այս մարգարեությունը. «Ահա Տերը, նստած թեթև ամպի վրա, կգա Եգիպտոս, և կչարժվեն եգիպտացիների ձեռքի գործերը» (Ես. ԺԹ 1): Խոնավ ջրերից գերծ թեթև ամպի նմանեցնում է Կուլսի գիրկը, որը մաքուր էր գաղջ ցանկություններից: Նաև քանի որ [Աստված] Իսրայելին՝ իբրև Իր անդրանկի¹⁰¹, կանչեց Եգիպտոսից, ինչպես Աստծո անունից ասաց Օվսեեն. «Մանուկ էր Իսրայելը, և սիրեցի նրան և Եգիպտոսից կանչեցի» (Օվսեե ԺԱ, 1), և քանի որ [Իսրայելացիները] կուռքերին երկրպագելու պատճառով իրենց վրայից ջնջեցին որդեգրության գիրը, Աստծո ճշմարիտ Որդին իջավ Եգիպտոս, որպեսզի արդարացներ մարգա-

րեի այդ խոսքը, որում Հայրը Եգիպտոսից է կանչում [Իր Որդուն]:

Իսկ եթե հրեաները հանդգնում են ասել, թե այս [խոսքը] մարգարեի կողմից ասվել է Եգիպտոսից իրե՛նց կանչվելու վերաբերյալ, ապա ասենք, որ մարգարեները շատ անգամ են ոմանց մասին ասել բաներ, որոնք իրականացել են [ոչ թե այդ մարգարանց], այլ ուրիշների միջոցով: Օրինակ՝ Շմավոնի և Ղևիի մասին ասված է. «Կբաժանեմ նրանց Հակոբի մեջ և կցրեմ նրանց Իսրայելի մեջ» (ՄԱՌ. ԽԹ՝ 7), բայց սա իրականացել է նրանց թոռների միջոցով: Եվ Իսահակի՝ Հակոբին տված օրհնությունը՝ «Կերկրպագեն քեզ քո հոր որդիները» (ՄԱՌ. ԻԷ՝ 29), [նույնպես] իրականացել է նրա թոռների միջոցով: Այդպես էլ այս մեկն է պետք դիտել. որովհետև ինչպե՞ս կարող է [Իսրայելն] Աստծո որդի լինել, եթե [ոսկե] հորթին էր երկրպագում¹⁰² և [իր] դուստրերին զոհում դեռերին¹⁰³: Իսկ Նա, Ով Աստծո ճշմարիտ Որդին է, Իր Ծնողին փառավորում է, Ինքն էլ Նրանից փառավորվում¹⁰⁴, և պարզ է, որ եթե չգար, չէր իրականանա այն մարգարեությունը, թե՛ «Եգիպտոսից եմ կանչելու Իմ Որդուն» (Օվսեե ժԱ, 1):

Այլև՝ նահապետների՝ [Եգիպտոս] իջնելն ու [հրեա] ժողովրդի՝ այնտեղից ելնելը խորհրդանշում էր Քրիստոսի իջնելն ու ելնելը¹⁰⁵: Եվ ոչ միայն նախնիները, այլև ժամանակակիցները՝ ամե՛նքը սպասավորեցին Քրիստոսի ծննդյան խորհրդին. Օգոստոս կայսրը՝ աշխարհագրով, Բաբելոնը՝ մոգերի միջոցով, և Եգիպտոսը՝ Հերովդեսից Փախածին ասպնջական դառնալով: Իսկ Նրա չնորհը, այնտեղ հասնելով, Եգիպտոսի անապատը դրախտից էլ պտղալից դարձրեց, որովհետև այնտեղ երևան եկան մարդկային կերպարանքով բազմաբյուր հրեշտակներ՝ կրոնավորների միաբանություններ, ճգնավորների ու մարտիրոսների դասեր, որոնց միջից [նրանցում] բնակվող թշնամին հալածվեց, և Քրիստոսի թագավորությունը բարձրացավ:

Քրիստոսի պանդխտությունը Եգիպտոս նաև մե՛զ համար խորհուրդ ունի. եթե մեկը, ով արժանացել է որևէ հոգևոր շնորհի, նեղություն մեջ ընկնի, հիշելով իր Տիրոջ՝ Կույսի հետ փախչելով պանդխտանալը՝ թող մխիթարի իրեն և հուսա, որ փորձություն հետ նաև [դրանից] ելքն է տրվելու:

Այդ ժամանակ, երբ Հերովդեսը տեսավ, որ խաբվել է մոգերից, հույժ բարկացավ (Բ 16):

Թեպետ պետք էր ոչ թե բարկանալ, այլ երկյուղել, խոնարհվել և պատահածը վերագրել աստվածային ազդմանը, որը, նրա սրտի՝ Մանկան հետ կապված չար դիտավորությունն իմանալով, այս մասին հայտնել էր մոգերին, սակայն Հերովդեսը չէր հանդարտվում: Որովհետև անմիտ հոգիները, երբ ընկնում են անբուժելի ցավերի մեջ, չեն ախորժում Աստծո շնորհած դեղն ընդունել, ինչպես սա, ով, ինքն իր հետ կռիվ տալով և ասես վայրագ դեկից քշված, բարկությունից կատաղեց ընտելյան դեմ և իրեն խաբած մոգերի վրեժն անմեղ մանուկներից հանեց: Ձիեր արձակեց՝ արշավելու Պաղեստինի երկիրը:

Եվ ուղարկեց կոտորեց Բեթղեհեմում և նրա բոլոր սահմաններում գտնվող երկու տարեկան և ավելի փոքր բոլոր մանուկներին՝ ըստ այն ժամանակի, որը ճշտել էր մոգերից:

Հերովդեսը նմանվեց Սավուղին, ով կարծում էր, թե իր ձեռքին է Դավթին սպանելը՝ չգիտենալով, որ նա իրենից բարձր է

դառնալու¹⁰⁶: Նմանվեց նաև փարավոնին, ով կարծում էր, թե եբրայեցի բազմաթիվ մանուկների հետ [ջրում] խեղդել է նաև Մովսեսին՝ չիմանալով, որ նրա ձեռքով էր ինքը ծովի մեջ ընկղմվելու¹⁰⁷: Այդպես էլ սա. քանի որ, հետապնդելով անորսալի Մանկանը, անզավակեցրեց Բեթղեհեմի որդիների մայրերին, նրանից վրեժ խնդրվեց նրա երեք որդիներով ու կնոջով հանդերձ¹⁰⁸: Քանի որ ձեռնարկեց նորագյուտ սպանության, այսինքն՝ անչափահաս մանուկների, իր [որդիներին] էլ [չխնայեց], ինչից ավելի նորագյուտ չարիք ուրիշ մեկի չպատահեց: Սրանք ամենքը սատանայի որդիներն են՝ թե՛ նա, ով կարծեց, թե ոչնչացրել է Մովսեսին, թե՛ ով մտածեց սպանել Դավթին և թե՛ ով ջանաց խողխողել Դավթի Որդուն: Դավթը հալածվեց Սավուղից, ինչպես [նրա] Որդին՝ Հերովդեսից: Քահանաները կոտորվեցին Դավթի համար¹⁰⁹, և մանուկները՝ մեր Տիրոջ: Այդ քահանաներից փրկվեց Աբիաթարը¹¹⁰, իսկ մանուկներից՝ Հովհաննես [Մկրտիչը]¹¹¹: Մեր Տերն արդեն իր ծննդյան ժամանակվանից, այն այգուց¹¹², որը պտուղ չտվեց իր Տիրոջը, իբրև պտուղների երա-

խայրիք՝ Հորն ուղարկեց ողկույզների կողովներ՝ այդ մանուկներին:

Սակայն մարդկանց բազմաքնին միտքը մանուկների վախճանի վերաբերյալ քննություն է կատարում, և ոմանք՝ ավելի մեղմ, ուրիշներ էլ ավելի հանդուգն բաներ են մուկեկանորեն խոսում: Ասում են. «[Աստված] ինչո՞ւ թույլ տվեց, որ մանուկներն իր պատճառով կոտորվեն»: Այսպիսիներին կարճ խոսքով ճշմարիտ պատասխան տանք: Մանուկների կոտորածի պատճառը ոչ թե Քրիստոսը եղավ, այլ թագավորի դիվային ցասումը, ինչպես որ [պահապան] զինվորների [սպանության պատճառը] ոչ թե Պետրոսն էր, այլ մյուս Հերովդեսի¹³ չար անմտությունը: Որովհետև եթե [Պետրոսը բանտից] ազատված լիներ մարդկային հնարներով, [նման սպանության համար] թերևս լիներ պատճառ: Սակայն [Հերովդեսը] տեսավ, որ բանտի դռները փակ են և պահապանները՝ իրենց տեղում, ուստի պետք է սքանչանար և երկրպագեր Աստծուն՝ թողություն խնդրելով [իր] հանդուգնության համար, և ոչ թե սպաներ պահապաններին¹⁴: Այդպես էլ այս [Հերովդեսը], երբ տեսավ, որ հեթանոսները եկել են երկրպա-

գելու, պատմվում է աստղի երևման մասին, և լսեց մարգարեությունը, պիտի հավատար և շտապեր [ինքն էլ] երկրպագություն մատուցելու և ոչ թե նենգեր և մեկին ոչնչացնելու նպատակով սպաներ շատերին:

[Նաև] ասում են. «Մանուկները, եթե երկար ապրեին, թերևս բազմաթիվ արգար գործեր կատարեին»: Սակայն սրանով և՛ս ոչ սակավ գանձեր հավաքվեցին երկնքում նրանց համար, ովքեր Քրիստոսի փոխարեն հեռացան աշխարհից: Եթե ամենատեսաԲնությունն իմանար, որ [այդ մանուկները] մեծամեծ գործեր էին կատարելու [հետագայում], սպանողների ձեռքը չէր մատնի նրանց, որովհետև ինքն է ամեն ինչ տնօրինում: Նաև թեև մեղք չէին գործել, որ չարչարանքով արդարանային, սակայն անմեղությամբ խողխողվելը նրանց համար մեծ վարձատրության առիթ դարձավ: Եվ ի՞նչ վնաս ունեցան անչափահաս տարիքում կոտորվելուց. վաղաժամ հասան խաղաղ նավահանգիստ: Մինչդեռ հետո նույնպես մեռնելու էին անշուշտ, բայց թերևս ո՛չ այդպիսի բարի պատճառով:

Այդ ժամանակ կատարվեց Երեմիա մարգարեի միջոցով ասվածը. «Ձայն գուժեց Ռամայից, ողբ, լաց և մեծ կոծ (Բ 17):

Ռաքելը լալիս էր իր որդիների վրա և չէր կամենում մխիթարվել, քանզի չկային»¹¹⁵ (Բ 18):

Քանի որ [մանուկներին] կոտորածի լուրը շատերին տրտմեցրեց, այժմ [ավետարանիչը] կամենում է մխիթարել՝ [ասելով], որ Աստված Հերովդեսի սրին արգելք չդրեց ոչ թե այն պատճառով, որ չկարողացավ, այլ որ նախապես գիտեր [այս մասին], ինչը նաև մարգարեի միջոցով էր կանխագուշակել, որպեսզի Նրա անճառելի նախախնամությունը նայելով՝ այսպիսի բաներից բնավ չխռովվես: Ինչպես առակավոր խոսքով [Քրիստոսն] ասաց Իր աշակերտներին, «Երկու ճնճղուկը մեկ դանկով է վաճառվում, և նրանցից ոչ մեկը չի կորչում առանց ձեր Հոր [կամքի]: Բայց ձեր գլխի [բոլոր] մազերն իսկ հաշվված են» (Մատթ. Ժ 29-30), այսինքն՝ մի՛ կարծեք, թե անիրավներից ձեզ հասած չարչարանքը Նա չի տեսնում, որովհետև տեսնում է նույնիսկ մանրուքները և կարող է խափանել, բայց թույլ է տալիս՝ գիտենալով, որ [դրանք] օգտակար են ձեզ:

Սակայն քննություն կարիք կա, թե ինչ պատճառով է այստեղ Ռաքելը հիշատակվում: Ռաքելը [Հովսեփի և] Բենիամինի մայրն էր և երբ մեռավ, թաղվեց Բեթղեհեմում¹¹⁶, և քանի որ Բեթղեհեմը Բենիամինին էր բաժին ընկել¹¹⁷, և [Ռաքելի] գերեզմանն էլ մոտ էր [քաղաքին], [այնտեղ կոտորված] մանուկներն իրավամբ են կոչվում Ռաքելի որդիներ՝ իբրև Բենիամինից սերվածներ: Նաև քանի որ Լիան¹¹⁸ բազմորդուծյամբ խորհրդանշում է [Աստծո] առաջին ժողովրդին, իսկ Ռաքելը գեղեցկուծյամբ՝ Եկեղեցուն, ապա օտարները չէ՛, որ կոտորեցին, այլ Լիայի որդիները, [այսինքն]՝ հրեաների ժողովարանը, Ռաքելի՝ Նոր Սիոնի¹¹⁹ որդիներին՝ գցելով փողոցներում: Նրանց վրա էր լալիս Ռաքելը, ով [խորհրդանշում է] Եկեղեցին, և չէր կամենում մխիթարվել, որովհետև Դավթի Որդու հետ ծնված մանուկները չապրեցին և չդարձան Նրա ավետարանիչները: Բայց [Դավթի Որդին] կտրեց Ռաքելի լացի ձայնը, որովհետև Իր «այցելուծյան ժամանակ» (Ղուկ. ԺԹ 44) լինելով էին Իր համար քարոզիչներ, ովքեր և ստանալու են մեր մայր Վերին Երուսաղեմի գլխավոր

սահմանները: Նաև այժմ ևս մխիթարելու է [Ռաքելին] նրա որդի Սավուղով, այսինքն՝ Պողոսով¹²⁰, ով իբրև նրա արտասուքի վարձ տրվեց, լրացրեց նրա սպանված որդիների բացը՝ աշխարհով մեկ քարոզելով Աստծո Որդու գալստյան ավետիսը, և մեռավ Աստծո Որդու մահվան համար¹²¹, իր այն եղբայրների փոխարեն, ովքեր մեռան Նրա ծննդյան համար:

Երբ Հերովդեսը վախճանվեց, ահա Տիրոջ հրեշտակը Եգիպտոսում երևաց Հովսեփին երազում (Բ 19)

և ասաց. «Վե՛ր կաց, Մանկանն ու Նրա Մորը վերցրո՛ւ և գնա Իսրայելի երկիրը, որովհետև Մանկանը փնտրողները մեռան» (Բ 20):

Տե՛ս ավետարանչի հեզությունը, մանավանդ այն Հոգու, Ով նրա միջոցով խոսում էր, որ չի պատմում Հերովդեսի պատուհասական սատակման մասին՝ մանուկներին կոտորելու պատճառով եղած: Ասվում է, թե նա այնքան երկար տառապեց ծանր ու որդնալից հիվանդությունից, որ սրտի կատաղությունից սպանեց իր որդուն, իսկ դրանից առաջ սպանել էր իր որդիներից երկուսին ու կնոջը և իր սիրելիներից շատերին: Այ-

նուհետև ինքն էլ դաժան [ցավերով] արձակեց իր դաժանացած հոգին: Սակայն [ավետարանիչը], ասես բարի մարդու մասին պատմելով, ասում է. «Երբ Հերովդեսը վախճանվեց» և «Մանկանը փնտրողները մեռան»՝ փոխարեն ասելու՝ մեջտեղից վերցվեցին, ոչնչացվեցին՝ ըստ Աստծո արդար հատուցման: Սրանով [ավետարանիչը] մեզ խրատում է թշնամիների հանդեպ այնպիսի կամք ունենալ, որ ոչ միայն վրեժ չխնդրենք մեր անձի համար, այլև եթե նույնիսկ Աստծուց վրեժխնդրություն լինի [նրանց], ոտնհար չլինենք¹²² և անարգական խոսքեր չարտաբերենք:

Բայց դու տե՛ս, որ փորձությունից հետո դարձյալ հանգստություն [է պարգևավում]. որովհետև հրեշտակը չասաց, ինչպես առաջ, թե՛ դեպի օտարություն փախիր, այլ թե՛ գնա քո հայրենի երկիր:

Եվ Ըս վեր կացավ, վերցրեց Մանկանն ու Նրա Մորը և եկավ Իսրայելի երկիր (Բ 21):

Երբ եկավ, տեսավ, որ մանուկներին կոտորողը մեռել է, և երկրի վրա թագավորում է այդ վայրագի որդի Արքեղայոսը, ինչի մասին [ավետարանիչն] ասում է.

Երբ լսեց, որ Հրեաստանում թագավորում է Արքեդայոսը՝ իր հայր Հերովդեսի փոխարեն, վախեցավ գնալ այնտեղ և երազում հրաման ստանալով՝ գնաց Գալիլեայի կողմերը (Բ 22):

Եկավ բնակվեց Նազարեթ կոչվող քաղաքում, որպեսզի իրականացնար մարգարեի այն խոսքը, թե [Հիսուսը] Նազովրեցի է կոչվելու (Բ 23):

Սրա վրա կարելի է զարմանալ. եթե Հրեաստան վախենում էր մտնել, ապա Գալիլեա գնալ նույնպես պիտի վախենար, քանի որ այն ևս նույն [մարդու] իշխանության տակ էր: Բայց ինչո՞ւ հրեշտակը հրամայեց գնալ այնտեղ: Հավանաբար՝ տեղի առավել հեռավոր և չարախոհների աչքից հեռու լինելու պատճառով: Նաև որովհետև Արքեդայոսն այլևս չէր փնտրում [Մանկանը], քանի որ կարծում էր, թե շատերի հետ նաև սպանվել է այն մեկը, ում փնտրում էին: Այլև՝ ամենագլխավորը՝ որպեսզի իրականանար այն մարգարեությունը, թե Նազովրեցի էր կոչվելու Նա, Ով եկավ ամեն ինչ իրականացնելու: Իսկ թե ո՞ր մարգարեն սա ասաց, մի՛ քննիր: Որովհետև ինչպես իմանում ենք «Մնացորդաց» [գրքերից]¹²³, հրեաները մարգարեների շատ գրքեր կորցրել են իրենց

ծուլում/թյան ու ամբարշտություն պատճառով: Սա պատմում է Երեմիան, ով գրել է «Թագավորությունների» չորրորդ գիրքը¹²⁴, թե շատ ժամանակներ հետո են գտել «Երկրորդ Օրենքի» [գիրքը]՝ մի անարգ տեղում թաղված ու աղտոտված¹²⁵: Եթե գերությունից¹²⁶ առաջ անփուլթ էին [սրբազան] գրքերի հանդեպ, որքա՛ն առավել գերությունից հետո: Եվ քանի որ մարգարեներն ավելի շուտ էին այս մասին ասել, այդ պատճառով էլ «Նազովրեցի» էին Նրան կոչում: Թեպետ Նաթանայելն անգիտանալով ասաց. «Նազարեթից կարո՞ղ է մի բարի բան լինել» (Հովհ. Ա 46), [ինչպես փարիսեցիները՝ Նիկողեմոսին]. «Քննիր և տե՛ս, որ Գալիլեայից մարգարե դուրս չի գալիս» (Հովհ. Է 52), սակայն հետո, հասկանալով [Քրիստոսի մասին] գրված խոսքերը, հավատաց: [Այս տարակույսների պատճառն այն է], որ [Նազարեթը] նշանավոր բնակավայր չէր, ոչ էլ [Գալիլեայի] երկրամասը: Սակայն [Հիսուսը] չգարչեց այնտեղ բնակվելու, այլ աշակերտներին էլ այնտեղ ընտրեց և նրանց հետ միասին «տեղ չունենր, ուր գլուխը դներ» (Մատթ. Ը 20), որովհետև մտուրի մեջ դրվեց և

Հերովդեսից փախալ, որպեսզի մեզ սովորեցնի օտար լինել աշխարհի համար և փութալ երկնային հանգստարանը, ուր և Ինքն է նստած Հոր աջ կողմում:

Իսկ թե ինչո՞ւ Ղուկասը չի ասում, որ հրեշտակի հրամանով գնացին Նազարեթ, պատճառն այն է, որ նա պատմում է ոչ թե Եգիպտոսից վերադառնալուց հետո [Նազարեթ] գնալու մասին, ինչի մասին [ընդհանրապես] չի գրում, այլ այն մասին, որ Օրենքի [պահանջած] սրբությունը կատարելուց հետո վերադարձան Նազարեթ, քանի որ քառասուն օր Բեթղեհեմում մնալուց հետո Մանկանը բերեցին Երուսաղեմ՝ Տաճար, և այնտեղից գնացին Նազարեթ¹²⁷, որտեղից էլ՝ Եգիպտոս: Եվ [Եգիպտոսից] վերադարձից հետո է, որ հրեշտակի հրամանով բնակվեցին Նազարեթում: Ավետարանիչները գրել են ոչ թե իրենց [մտքի արդյունքը], այլ այն, ինչը հրաման են ստացել [Սուրբ] Հոգուց:



ԳԼՈՒԽ Գ

Այդ օրերին Հովհաննես Մկրտիչը գալիս է քարոզելու Հրեաստանի անապատում (Գ 1) և ասում է. «Ապաշխարե՛ք, քանզի մոտեցել է երկնքի արքայությունը» (Գ 2):

«Այդ օրերին» խոսքը չի նշանակում, որ Հովհաննեսն անապատից¹²⁸ եկավ ու [Քրիստոսին] մկրտեց [այն ժամանակ], երբ Քրիստոսը մանուկ էր և մեծանում էր Նազարեթում: Որովհետև Նրա ծննդից հետո երեսուն տարի է անցել՝ ըստ Ղուկասի վկայություն¹²⁹, և հետո՛ է եկել մկրտվելու: Սակայն [Սուրբ] Գիրքը սովորություն ունի որոշ դեպքերում միայն իրողությունները շարադրել՝ առանց դրանց ժամանակը ցույց տալու, ինչպես որ Տերն էլ Ձիթենյաց լեռան վրա [ուսուցանելիս] Երուսաղեմի ավերմանն առընթեր դրեց Իր երկրորդ գալուստը¹³⁰, բայց սրանք [ժամանակով] խիստ հեռու են միմյանցից:

Պետք է քննել նաև, թե Հովհաննեսն ինչո՞ւ որոշում կայացրեց մկրտություն կա-

տարելու: [Սա արեց] ո՛չ իր կամքով, այլ նախկին մարգարեների պես՝ Աստծուց շարժված, ինչպես ասում է Ղուկասը. «Անապատում Աստծո խոսքը եղավ Հովհաննեսի վրա» (Ղուկ. Գ 2), այսինքն՝ քարոզելու հրամանը: Եվ Հովհաննեսն ինքն էլ ասաց. «Ով ուղարկեց ինձ ջրով մկրտելու, Նա՛ ինձ ասաց. «Ում վրա տեսնես, որ իջնում է Հոգին աղավնու տեսքով, Նա՛ է մկրտելու Սուրբ Հոգով»» (Հովհ. Ա 33): Իսկ թե ի՞նչ նպատակով ուղարկվեց Աստծուց, նույն ինքը Մկրտիչը հայտնապես ցույց տվեց, երբ մատնանշեց Քրիստոսին՝ [ասելով]. «Սա՛ է Նա, Ում մասին ես ասում էի, թե գալու էր իմ հետևից... Ես չգիտեի Նրան, բայց որպեսզի Նա հայտնի դառնա Իսրայելին, դրա համա՛ր եկա ջրով մկրտելու» (Հովհ. Ա 30-31) և քարոզելու և խոսելու Հրեաստանի անապատում: Ինչպես թռչունն է խոսում գիշերվա լուռության մեջ, այդպես Հովհաննեսը՝ անապատի լուռության մեջ, երբ լուել էին նախկին մարգարեները, սկիզբ էր առել Օրենքի լուռությունը, որովհետև Իսրայելի տունն անապատացել էր բարիքներից: Նաև որովհետև քարոզության սկզբում [Հովհաննես Մկրտիչը] բազմա-

խուռն մարդկանց մեջ չհայտնվեց, որպեսզի չկարծվեր, թե այդպիսի ճգնավորական կերպարանքով փառք է որսում, այլ քարոզության խոսքը սկսեց հնչեցնել նախ երկրի ծայրում՝ Հորդանանին մոտ (ուր սակավաթիվ էին բնակիչները, և որն էլ ավետարանիչը կոչում է «Հրեաստանի անապատ»), որպեսզի [քարոզության] լուրն առնելով՝ ամենքն այնտեղ ժողովվեին և առավել հոժարություն ականջ դնեին խոսքին:

Իսկ ի՞նչ էր այդ քարոզության խոսքը. «Ապաշխարե՛ք, քանզի մոտեցել է երկնքի արքայությունը»: Այս խոսքը [նախկին] մարգարեների [քարոզածից] բարձր է, քանի որ ոչ թե երկրային հարստություններ է ավետարանում, այլ երկնքի արքայությունը՝ ցույց տալով Տիրոջ արքայության մոտենալը, ինչպես Տերը մաքուր հոգիների մեջ բնակվող «արքայություն» կոչեց հենց Իրեն՝ ասելով. «Երկնքի արքայությունը ձեր ներսում է» (Ղուկ. ԺԷ 21): Ուստի [Հովհաննեսի խոսքը] նշանակում է, որ Նա, Ով կարողություն ունի արքայություն տալու Իրեն սիրողներին, մոտ է և հասել է դռներին: Եվ «արքայություն» ասելով՝ ոչ միայն [Տիրոջ]

առաջին գալուստի մասին էր խոսում, այլև երկրորդը ցույց տալիս:

Բայց Մարկոսն ու Ղուկասն ասում են, որ Հովհաննեսը ոչ միայն ապաշխարությունն և արքայությունն էր քարոզում, այլև մեղքերի թողությունն¹³¹: Սակայն ինչպե՞ս էր հնարավոր, որ անաքան Չոհի մորթվելն ու մատուցվելը, անաքան մեղքի մեղքն ու անեծքի վերացումը, անս անաքան Սուրբ Հոգու իջնելը մեղքերի թողություն լինեն: Եվ եթե Հովհաննեսի մկրտությանը դա լինեն, ապա ի՞նչ հարկ կլինեն, որ Քրիստոսն այն ամենը կրեր: Եվ ինչպե՞ս Հովհաննեսից մկրտվածներին առաքյալները վերստին կմկրտեին: Արդ՝ այս խոսքը բացատրում ենք այսպես: Հովհաննեսը ոչ թե ասում էր, թե իր մկրտությամբ են մեղքերի թողություն ստանալու, այլ [Սուրբ] Հոգո՛ւ մկրտությամբ՝ նրանից հետո Եկողի միջոցով, ինչպես կարելի է հասկանալ հետևյալ խոսքից. «Ես մկրտում եմ ձեզ, – ասում է, – ջրով՝ ապաշխարության համար, բայց գալիս է ինձնից Հոգորը, ...Նա կմկրտի ձեզ Սբ Հոգով ու կրակով» (Գ 11): [Սրանով] ցույց է տալիս, թե՛ «Այս մկրտությամբ չէ՛, որ թողությունն է լինելու, այլ մեղքերի թողությունն կստանանա, ով իմ այս քարոզությամբ կհավատա

ինձնից հետո Եկողին»: Որովհետև Հովհաննեսի մկրտությունը, որն առավել էր, քան Մովսեսինը, միայն ապաշխարությունն էր, իսկ Քրիստոսինը ապաշխարությունը չէ, այլ ձրի թողությունն ու շնորհով որդեգրությունը: Նաև քանի որ հրեաները հպարտ էին և իրենց արդար էին համարում, ինչպես փարիսեցիները, որոնց Պողոսն ամբաստանում է, թե «չգիտեն Աստծո օրենքը և կամենում են իրենցը հաստատել» (Հռոմ. Ժ 3), սա նկատի ունենալով՝ Հովհաննեսը նրանց հուշում է, որ սուրբ չեն, ինչպես կարծում են, այլ բազմաթիվ մեղքերով լի և ապաշխարության կարոտ: Ուստի ասում է նրանց. «Ապաշխարության արժանավայել պտո՛ւղ տվեք» (Մատթ. Գ 8):

Սրան առընթեր դնում է նաև թողությունը, որպեսզի թողության հույսով ավելի հեշտությամբ խոստովանեն ու ապաշխարեն, և դրանով [նրանց] բերի առ Քրիստոս, միայն Ո՛վ ունի երկրի վրա մեղքեր ներելու իշխանություն: Եվ այնքան ախորժելի խոսքով էր հորդորում նրանց մկրտության գալու, որ նույնիսկ մաքսավորներն ու զինվորներն էին հարցնում, թե ինչ է հարկավոր ա-

նել, և նրա խոսքերն ու գործերն ավելի էին նպաստում նրանց հավատալուն: Որովհետև տեսնում էին երեսուն տարի հետո անապատից եկած մի մարդու՝ հարուստ քահանայապետի որդու, ով երբեք չձգտեց մարդկային պատվի: Նա նաև Եսայուն ուներ իբրև վկա, ինչպես գրում է ավետարանիչը:

Որովհետև սա է նա, ում մասին ասվեց Եսայի մարգարեի միջոցով. «Անապատում բարբառի¹³² ձայնն [ասում է]. «Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհը և ուղի՛ղ դարձրեք Նրա շավիղները»¹³³ (Գ. 3):

[Եսային] այնքան նախանձախնդիր եղավ մարգարեներին, մանավանդ՝ [նրանց միջոցով խոսող] Հոգուն, որ ոչ միայն Տիրոջ մասին խոսեց, այլև նրա, ով Նրա գալստյան նախակարապետն էր լինելու, նաև անապատի, որտեղից [Կարապետը] գալու էր, և նրա քարոզության կերպի, որով սովորեցնելու էր: Եվ տես, թե ինչպե՛ս է, որ թեև մարգարեն ու Մկրտիչը խոսքով տարբերվում են, սակայն իմաստով նույն բանն են ասում: Որովհետև մարգարեն հրամայում է Տիրոջ ճանապարհները պատրաստել, իսկ Մկրտիչը՝ «Այսուհետև ապաշխարության արժա-

նավայել պտո՛ւղ տվեք», որով, ճշմարիտ ապաշխարության միջոցով, ապաշխարողների հոգում Աստծո համար ճանապարհ է պատրաստվում: Իսկ Ղուկասը [Մկրտչի] մասին Եսայու ոչ միայն այս, այլև ամբողջ մարգարեությունն է մեջբերում իր շարադրանքում. «Բոլոր ձորերը կլցվեն, և բոլոր լեռներն ու բլուրները կխոնարհվեն, դժվարինը դյուրին կդառնա, առապարները՝ հարթ ճանապարհներ, և ամեն մարմին կտեսնի մեր Աստծո փրկությունը» (Ես. Խ 4-5, Ղուկ. Գ 5-6):

Արդ՝ Հոգին «անապատում բարբառի ձայն» է կոչում նրան, որովհետև ինչպես ձայնն ու խոսքը նախքան արտաբերվելը ծածկված են մտքում և երբ արտաբերվում են, նախ ձայնն է դուրս գալիս, ապա խոսքը՝ հետևում, այդպես էլ Հովհաննեսն ու Տերը Հոր գիտություն մեջ՝ ասես մտքում, երեսուն տարի ծածկված մնացին աշխարհի համար: Եվ երբ Հայրը կամեցավ Որդուն հայտնի դարձնել, նախ անապատից ուղարկեց Հովհաննեսին՝ իբրև ձայն, որպեսզի արթնացնի լսողներին: Իսկ երբ ձայնը լսվեց, այնուհետև եկավ Խոսքը, որպեսզի նոր օրենք սահմանի լսողների համար: Այս պատճառով էլ

[մարգարեն] չի կոչում [Հովհաննեսին] լուկ «ձայն», այլ՝ «բարբառի՛ [ձայն]», որով նկատի ունի հոգավոր խոսքը. որովհետև ձայնը Հովհաննեսն է, իսկ բարբառը՝ Քրիստոսը: Իսկ ի՞նչ է անապատից [եկած] Ձայնն ասում:

Պատրաստե՛ք Տիրոջ ճանապարհները:

Ինչպես որ երկրավոր թագավորների առաջ են անհարթություններից մաքրում ճանապարհները, այդպես մաքրեք դուք էլ, ասում է, ձեր հոգու ճանապարհը մացառուտ մեղքերից, որպեսզի երկնավոր Թագավորը, որ գալու է, ձեր միջով խաղաղություն մեծանա, որովհետև աշխարհային զբաղմունքներից անապատացած [մարդու] հոգում, թեկուզ նա լուռ նստի էլ, թնդում է աստվածային խոսքի ձայնը: Իսկ անճանապարհ անապատ հոգում Աստծո խոսքը չի ընթանում, և նա, ում հոգու շավիղն ուղիղ չէ, չի կարող տանել Քրիստոսին:

[Մարգարեն] «ճանապարհ» է կոչում նաև մարմնավոր առաքիլությունները՝ աղոթքը, պահքը և մնացածները, իսկ «շավիղ»՝ հոգևոր հայեցողությունը, որը [ձեռք է բերվում] մաքրությունը ու իմաստությունը, ո-

րոնցով դառնում ենք Աստծո Հոգու օթևան:

Մարգարեաբար ցույց է տալիս նաև ճանապարհի պատրաստման եղանակը: «Բոլոր ձորերը կլցվեն», – ասում է: «Ձոր» է կոչում բարի գործերից աղքատ անձանց և նրանց, որ գլորվել են ներքև՝ մեղքերի մեջ, և դրանք լցնել է հրամայում արդարությունը, որպեսզի Աստված կարողանա ընթանալ: Իսկ «լեռ» և «բլուր» է կոչում Հպարտացածի¹³⁴ իշխանությունը, որը [Տերը] խոնարհեցրեց ու կոխտեց ոչ միայն Իր, այլև Իրեն հավատացողների համար: «Լեռ» է կոչում նաև կռապաշտությունը, և «բլուր»՝ զանազան մեղքերը:

«Դժվարինը դյուրին [կդառնա]», այսինքն՝ [Տերն] այն առաքիլությունները, որոնք նախկինում դժվար էին թվում մարմնասերներին, քաղցր ու դյուրին դարձրեց գալիք [բարիքների] հույսով: Նաև՝ Օրենքի դժվարությունը փոխվեց մեր հավատքի դյուրությունը. որովհետև մեղքերի թողությունը եղավ ոչ թե քրտինքով ու ջանքով, այլ շնորհով ու ողորմությամբ: Այլև՝ խառնակեցիկ¹³⁵ դժվարին կյանքը [Տերը] վերածեց արդարություն դյուրին կյանքի, ինչպես և եղավ, որովհետև մաքսավորներն ու պող-

նիկները հրաժարվեցին ապականված վարքից և եկան դեպի ուղիղ ճանապարհները:

«Առապարները¹³⁶ հարթ ճանապարհներ»: Կոստոլթյունը, արյամբ նահատակությունը և ամեն տեսակ ժուժկալություն, որ նախապես անկոխ էին մարդկանց ընթացքում, այժմ, որպես հարթ ճանապարհ, դյուրագնալի դարձան, և նրանցով շատերն են ընթանում:

«Եվ ամեն մարմին կտեսնի մեր Աստծո փրկությունը»: Ոչ միայն հրեաները, այլև մարդկային բոլոր ցեղերը կտեսնեն աշխարհի փրկությունը՝ այն, որ Որդին ուղարկվեց Հորից: «Մարմին» է կոչում [Սուրբ] Հոգու շնորհի [տվչությունից] առաջ եղած [մարդկանց] ըստ այս խոսքի. «Իմ Հոգին չի բնակվի այդ մարդկանց մեջ, քանի որ մարմին են դրանք» (ԾԱՆԳ. Զ 3): Իսկ երբ տեսան Աստծո փրկությունն ու հավատացին [դրան], [Սուրբ] Հոգով հոգիացան:

Հովհաննեսը կրում էր ուղտի մազից հագուստ և մեջքին՝ կաշվե գոտի (Գ 4):

Որոշ բաներ մարգարեներն ասացին, որոշ բաներ էլ թողեցին ավետարանիչներին:

Ուստի Մատթեոսը նախ մարգարեի խոսքն է ներկայացնում, ապա իրենը: Եվ այդ արդարի հագուստի նկարագրությունը հենց այնպես չի անում, որովհետև հույժ զարմանալի էր մարդկային մարմնի մեջ այդպիսի ժուժկալություն տեսնելը: Այնուհետև հրեաների մեջ արթնացնում է մեծ Եղիայի հիշատակը և սրան՝ [Հովհաննեսին], ավելի մեծ ու զարմանալի ցույց տալիս. որովհետև առաջինը քաղաքներ ու տներ էր մտնում ու սնվում, իսկ սա խանձարուրից իսկ բնակվում էր անապատում, որովհետև պետք էր, որ երկրի անեծքն ու մարդկանց քրտինքը¹³⁷ խափանել Պատրաստվողի կարապետը այդպիսի ձևով հանդես գար: Ուստի ոչ հող էր մշակում, ոչ ակոս բացում, ոչ երեսի քրտինքով ուտում հացը, այլ [նրա] սեղանը կազմվում էր հեշտությամբ և ինչպես պատահեր: Կրում էր ուղտի մազից հագուստ, որպեսզի խրատի մեզ ընթանալ դեպի Ադամի առաջին ազնվականությունը, որում նա հագուստի և վերարկուի կարիք չուներ: [Հովհաննեսի] այս կերպարանքը խորհրդանշում էր ապաշխարությունն ու արքայությունը. ապաշխարությունը՝ սգավորի զգեստի պատճառով,

իսկ արքայությունը՝ անկարիք լինելու:

[Հովհաննեսն] այդ զգեստը կրում էր նաև Մեծ Կուսորդու խոնարհության նմանությամբ, Ով ծառայի կերպարանք հագավ¹³⁸ և դրանով սպասում էր Ոչխարի՝ խաչով մորթվելուն, որպեսզի անմաքուր կենդանու բուրդը վերածեր իմանալի և լուսակեզ մաքրափայլ գեղմի:

Կիսամաքուր կենդանու բուրդը խորհրդանշում էր նաև փարիսեցիների կեղծավորությունը. [Հովհաննեսը] սուգ էր հագել նրանց կուրուկության պատճառով՝ ըստ մանուկների մասին այն առակի, որը Տերը [պատմեց] Հովհաննեսի վերաբերյալ, թե՛ «Ողբացինք, և չկոծեցիք» (Մատթ. ԺԱ, 16-17):

Մի՛ գարմացիր, թե որտեղից էր նա գտնում այդ հագուստն ու գոտին, այլպես պիտի քննես նաև մնացածը, թե ինչպես էր ձմեռը կամ ամառը փափուկ մարմնով շրջում անապատում: Ամեն ինչ Աստծո տեսչությա՛նը վերագրիր, որ ամեն ինչում խնամք է տանում արդարների մասին, որոնց ոչ միայն կյանքը, այլև ոսկրերն է անկուրուստ պահում՝ ըստ զրվածի¹³⁹: Այդպես էլ սրան էր անապատում պահում ասես երկն-

քում և աշխարհում նրան ցույց տալիս իբրև երկնքից իջած հրեշտակ:

Իսկ ինչո՞ւ էր մեքքին գոտի կապում՝ հարցնում են: Առաջին սրբերի սովորության համաձայն, ինչպես որ Եղիան, Պետրոսն ու Պողոսն էլ էին գոտեկորված՝ ասես կազմուկատրաստ թե՛ մարմնավոր և թե՛ հոգևոր գործերին ու ճանապարհի ընթացքին: Գոտու միջոցով խրատվում ենք նաև անբան կենդանիների պես առանց կապանքների չպահել մեր մեջքը՝ [մարմնական] ցանկության համար, այլ աշխարհիկ սիրո տարփանքը վերափոխել աստվածայինի [հանդեպ սիրուն]: Իսկ [գոտու] կաշվից լինելը խորհրդանշում էր այն կրողի ախտերի մեռելությունը:

Նրա կերակուրը մորեխն ու վալրի մեղրն էին:

Մորեխը, ըստ Օրենքի, ուտելի էր¹⁴⁰, նմանապես և մեղրը, թեև չէր ընծայվում Սեղանին¹⁴¹: Ուստի նա, ով [իր վարած] կյանքով վեր էր Օրենքից, մոտենում էր երկուսին էլ ո՛չ անխորհրդապես՝ միայն իբրև կյանքի պահպանմանն անհրաժեշտ կերակուրների, այլ իբրև Օրենքից բխող խորհուրդների: Ուրովհետև ինչպես որ մորեխն է անարյուն ու

երկնաթռիչ, այդպես էլ նա էր ախտերից մաքուր և երկնային առաքինութեամբ, և իր կերած մեղրի քաղցրութեամբ էլ ճաշակում էր [Սուրբ] Հոգու իմաստութեանը, որը Դավիթը շատ ավելի քաղցր է համարում, քան մեղրախորիսխը¹⁴²: Նաև՝ «Քաղցր են իմ քիմքում Քո խոսքերը՝ ավելի, քան մեղրը՝ բերանիս համար» (Սաղմ. ԾԺԸ 103): Եվ [սա] դեռ Օրենքի մանուկների [կաթի] քաղցրութեանն էր և ո՛չ թե կատարյալների ավետարանական կատարյալ կերակուրը:

Այդ ժամանակ նրա մոտ էին գնում բոլոր երուսաղեմացիները, ամբողջ Հրեաստանն ու Հորդանանի բոլոր կողմերի [բնակիչները] (Գ 5):

Հորդանան գետում մկրտվում էին նրանից և խոստովանում իրենց մեղքերը (Գ 6):

Երբ [Հովհաննեսի] մարգարեութեան ու սքանչելի վարքի համբավը տարածվեց, սկսեցին նրա մոտ գնալ համարյա ամբողջ երկրի բնակիչները, որոնց հիմնական մասին [ավետարանիչը] հանվանե է հիշատակում: Արդարև զարմանքի արժանի բան էր մարդկային կերպարանքով հրեշտակ և երկար տարիներ մարգարեացող մեկին տեսնելը,

ու՛մ քարոզութեան կերպն էլ էր նոր ու չնաշխարհիկ¹⁴³. որովհետև ոչ թե պատերազմական հաղթանակների, այլ երկնքի, երկնային առաքինութեանների և գեհեմի տանջանքների մասին էր պատմում: [Հովհաննեսի կատարած] մկրտութեան պարագաներն ու մկրտվածներին խոստովանել տալը հայտնապես Նոր Օրենքի խորհրդանիշներ էին. մկրտութեան ջուրը՝ [Սուրբ] Հոգով մկրտութեան, և խոստովանութեանը՝ այն խոստովանութեան, որը [կատարվում է], երբ մեկը մկրտութեանից հետո է մեղանչում: Այդ պատճառով էլ [ավետարանիչը] գրում է, որ ոչ թե նախքան մկրտութեանն էին խոստովանում, այլ մկրտութեանից հետո:

Տեսնելով, որ սաղուկեցիներից ու փարիսեցիներից շատերը եկել են իրենից մկրտվելու՝ ասաց նրանց. «Իժերի՛ ծնունդներ, ո՞վ ձեզ ցույց տվեց փախչել գալիք բարկությունից» (Գ 7):

Իր մեջ եղած աստվածային Հոգու իմաստութեամբ՝ ընտրողապես է խոսում իր մոտ եկածներից յուրաքանչյուրի հետ: Խառնի-ճաղանջ ժողովրդին, որ պարզամիտ ու անմեղ էր, ասում է. «Ապաշխարե՛ք, որովհետև

մոտեցել է երկնքի արքայությունը» (Գ 2), իսկ փարիսեցիների ու սադուկեցիների հասցեին սաստող խոսքեր է ասում: Եվ հիրավի՝ որովհետև հոգու աչքով տեսավ, որ նրանք ոչ թե հավատով, այլ նենգավոր կեղծավորությամբ են եկել մկրտության, ինչպես Սիմոն մոզը՝ առաքյալների մոտ¹⁴⁴: Սա հայտնապես ցույց է տալիս Հովհաննես ավետարանիչը, որովհետև [գրում է, որ] Երուսաղեմում գտնվող քահանայապետերը [Մկրտչի] մոտ մարդ են ուղարկում և հարցնում. «Քրիստոսն ասում է, որ, Եղիա՞ն, թե մարգարե՞ն» (Հովհ. Ա, 19-21): Ուղարկվածները փարիսեցիներից էին, և նրանց հարցուփորձի նպատակը ոչ թե այն էր, որ կամենում էին ստուգել [Մկրտչին] պատվելու համար, այլ քանի որ տեսան, որ նա իբրև մարգարե պատվովում է ժողովրդից, նախանձից վառված՝ մտածեցին խոսքով նենգել նրան: Եթե ասեր. «Քրիստոսն եմ», նրա այդ խոսքով կդատեին նրան, թե ստախոս է, որովհետև գիտեին, որ նա ղևտացիների ցեղից է, մինչդեռ Քրիստոսը [պիտի լիներ] Դավթի ցեղից: Իսկ երբ պատասխանեց. «[Քրիստոսը] չեմ», ասացին. «Իսկ ինչո՞ւ ես մկրտում, ե-

թե Քրիստոսը չեմ» (Հովհ. Ա, 25): Նույն մտքով նաև Տերն էր հայտնապես ասում նրանց մասին. «Ժողովուրդն ու մաքսավորներն արդարացրին Աստծուն Հովհաննեսի մկրտությամբ մկրտվելով, իսկ փարիսեցիներն ու օրենսգետները, նրանից չմկրտվելով, Աստծո խորհուրդն անարգեցին իրենց մեջ» (Ղուկ. Է 29-30): Նաև երբ Քրիստոսը հարցրեց նրանց. «Հովհաննեսի մկրտությունը որտեղի՞ց էր՝ երկնքի՞ց, թե մարդկանցից» (Մատթ. ԻԱ 25), պատասխանեցին, թե չգիտեն: Թեպետ գիտեին, որ երկնքից էր, սակայն [այդպես ասացին], որովհետև [Քրիստոսը] կարող էր ասել. «[Այդ դեպքում] դուք ինչո՞ւ չեք հավատում Իմ մասին նրա վկայածներին»: Իսկ եթե [ասեին, որ Հովհաննեսի մկրտությունը] մարդկանցից էր, ժողովուրդը կքարկոծեր նրանց, քանի որ Հովհաննեսին մարգարե էր համարում¹⁴⁵:

Ուրեմն՝ քանի որ [փարիսեցիներն ու սադուկեցիներն] այսպիսի մտադրությամբ էին գալիս Հովհաննեսի մոտ, և քանի որ նա մարգարե էր, հասկացավ նրանց սրտի չարությունը և ժողովրդին թողնելով՝ ահագուրու խոսքով դիմեց նրանց. «Իժերի՛ ծնունդ-

ներ»։ Նրանց պատշաճորե՛ն համեմատեց
չարաթուլն կենդանու հետ. որովհետև ինչ-
պես որ այդ կենդանին է սպանում իր մորը՝
ուտելով նրա որովայնը, և ապա դուրս գա-
լիս [նրա միջից], այդպես էլ սրանք սպանե-
ցին իրենց ծնողներին՝ մարգարեններին, և
դուրս եկան Աստծո օրենքից՝ իբրև մորից։
Եվ ինչպե՞ս իժերի նման չէին նրանց հայրե-
րը, որ անապատում բյուրավոր երախտիք-
ներ ընդունելով [Աստծուց]՝ հորթին երկր-
պագեցին և ցանկանում էին Եգիպտոս վե-
րադառնալ¹⁴⁶, ուստի Մովսեսը նրանց կո-
չում է «Սողոմի այգիներ» ու «Գոմորի որ-
թատունկեր»¹⁴⁷։ [Փարիսեցիներին ու սա-
ղուկեցիներին] Տերը [նույնպես] «օձ» է կո-
չում¹⁴⁸ նրանց անդարձ չարության և թա-
քուն պահված թուլնի պատճառով, որ միշտ
ծարավ էին արդարների արյանը։ Դավիթն
էլ է [իր ցեղին] կոչում «չար ու դառնա-
սիրտ» (Սաղմ. չԷ 8), իսկ Եսային՝ «Սողոմի իշ-
խաններ» (Ես. Ա, 10)։

Իժ է նաև հակառակասեր Վիշապը, և իժե-
րի ծնունդներ՝ նրա կամքին հետևողները։
[Հովհաննեսը] մարգարենների պես չասաց
այն, ինչ սովոր էին նրանք լսել՝ փախուստ

մարմնավոր պատերազմներից ու գերու-
թյուններից, այլ [խոսեց] գալիք բարկությու-
նից ու գեհենի կրակից [փախուստի] մասին։

Իսկ ի՞նչ է [Աշանակում] «ո՞վ ձեզ ցույց տվեց փախ-
չել»-ը։ Ինչպես եթե մի դետ, ավելի հարմար
դիտանոցից տեսնելով թշնամիների գալուս-
տը, աղաղակի երկրի [բնակիչներին], որ
զգուշանան, սակայն նրանք անհոգ գտնվե-
լով՝ արհամարհեն դետի աղաղակը, իսկ երբ
տեսնեն, որ թշնամիները հարձակվում են
սպանելու, փախչեն ու ապավինեն դիտանո-
ցին, պատշաճ կլինի, որ դետն ասի նրանց.
«Երբ ազդարարում էի փախչել, ինչո՞ւ չէիք
լսում. այժմ ո՞վ ձեզ ցույց տվեց փախչել ու
այստեղ գալ», ահա սա՛ նկատի ունի նաև
Հովհաննեսի այս խոսքը։ Աստված ավելի ա-
ռաջ ասես բարձր դիտանոցից ձեզ կանչեց
Օրենքի և մարգարենների միջոցով՝ զգուշա-
նալու մեր բնությանը թշնամու [բերած] զա-
նազան մահերից և առաքիհի վարքով գնա-
լու դեպի Իրեն։ Այժմ, երբ խրատիչները լուե-
ցին, և Դատավորը մոտեցել է, դատաստանի
ժամանակը՝ հասել, ո՞վ ձեզ ցույց տվեց
փախչել ներում չիմացող Նրա բարկությու-
նից և ապաշխարության դիմել։ [Հովհաննե-

սը] չի խոսում տանջանքներից ու կրակից փախուստի մասին, այլ բարկությունից, որն ավելի սաստիկ է՝ ըստ աստվածային Պողոսի. «Աստծո բարկությունը հասնելու է մարդկանց ամեն ամբարշտության ու անիրավության վրա» (Հոմ. Ա 18): Նաև՝ «...կփրկվենք, – ասում է, – գալիք բարկությունից» (Հոմ. Ե 9): Սրանցից սովորում ենք, որ մեղավորների համար գեհենի կրակից էլ ծանր է Արարչին իրենց վրա բարկացած տեսնելը: Այն այստեղ [Նրա ցուցաբերած] բարկության նման չէ, որը [մեր] խրատի և դարձի համար է, այլ ներում չունեցող է ու հավիտենական, այնպես որ [մեղավորները] տեսնելու են, որ ումանք կանչվելու են առաջ և պսակվելու են, իսկ իրենք բարկությամբ մերժվելու են Աստծո երեսից:

Սակայն [Հովհաննեսը] շարունակ ահագու գու խոսքեր չի ասում, այլ դառնում ու ավելի մեղմ խոսքերով է խրատում, ինչպես հայրերը՝ որդիներին:

Այսուհետև ապաշխարության արժանավայել պտո՛ղ տվեք (Գ 8):

Բավական չէ, ասում է, միայն փախչել

չարիքներից, պետք է նաև բարի գործեր կատարել: Այն սովորությունը չեմ պահանջում, որն ունեիք մարգարեների միջոցով, որ սպառնալիքների երեսից հեռանում էիք մեղքերից, բայց վերադառնում դրանց: Այս [պահանջը] նոր է և առավել բարձր: Որովհետև ոչ թե ինչ–որ մարգարե է եկել, այլ մարգարեների Տերը. ոչ թե երկիր է կանչում ամենքին, այլ երկինք, և Նրա պարգևներն ու պատիվներն անմահական են: Թեև նախկին դարերում ծառաների կանչով չդարձաք, սրանից հետո, երբ Տերը եկել–հասել է, և Նրա բարկությունը՝ իջել անապաշխարների վրա, ցույց տվեք ո՛չ լուկ ապաշխարություն, ասում է, այլ նաև պտուղներ:

Իսկ ի՞նչ է ապաշխարությունը, կամ ո՞րն է նրա պտուղը: Ապաշխարությունը միայն ապաշավելն է անցած վատ գործերի համար, իսկ նրա պտուղը չարիքների հակառակը գործելն է, [այսինքն]՝ արդարություն: Օրինակ՝ անմաքուր վարքի փոխարեն սրբություն [ունենալ], որկրամոլության ու հարբեցողության փոխարեն քաղցել ու ծարավել, ծիծաղելու փոխարեն արտասովել, ազահուլթյան մեղքը գործողը պիտի սփռի ու տա աղքատ–

ներին և այլն: Եվ միայն պտուղ չի ասում, այլ «արժանավայել» պտուղ, այսինքն՝ պակաս պտուղներ չտալ, այլ [գործված] վատի չափով կշռել նաև լավը: Նաև փառասիրության ախտից զերծ մնալով գործել առաքինությունները, որով Աստծուն վայել պտուղներ կընծայվեն: Որովհետև ապաշխարության պտուղը բարիքն անկեղծորե՛ն գործելն է, իսկ առերևույթ [բարին] առանց պտղի տերևն է միայն՝ Քրիստոսի անիծած թզենու նման¹⁴⁹:

Եվ մի՛ համարեք, թե [կարող] եք ասել ձեր մեջ. «Մենք իբրև հայր ունենք Աբրահամին»: Ասո՛ւմ եմ ձեզ, Աստված կարող է այս քարերից էլ ստեղծել Աբրահամի համար որդիներ (Գ 9):

Սա ասում էր ո՛չ թե արգելելով նրանց լինել Աբրահամի որդիներ, այլ որպեսզի մարմնական սնապարծությամբ չծուլանային հոգևոր առաքինության մեջ: Որովհետև եթե վարքով չնմանվեք ձեր նախնիներին, ասում է, սրբերին ձեր ազգակցությունը տանջանքի՛ պատճառ է ձեզ համար և ո՛չ թե փրկություն, քանի որ բարի արմատից իբրև չար ճյուղեր ընձյուղվեցիք: Առակավոր այս

խոսքով ցույց է տալիս նրանց մտքի հպարտությունը, ինչպես և ասում էին. «Մենք իբրև հայր ունենք Աբրահամին»: [Հովհաննեսը] չասաց միայն, թե նահապետը չի կարող ձեզ օգնել, երբ դուք անպիտան եք, այլ թե Աստված կարող է մերժել ձեզ և այս քարերից ստեղծել Աբրահամի համար որդիներ, երբ կամենա: Այսինքն՝ մի՛ կարծեք, թե եթե դուք կորչեք, Աբրահամն անորդի կմնա. Աստծո համար դյուրին է քարերից [իսկ] որդիներ ստեղծել ու տալ նրան, ինչպես որ նախկինում էր արել՝ Սառայի քարացած ամուսնուհույց տալով նրան Իսահակին, ինչպես [ասում է] մարգարեն. «Նայե՛ք այն վեմին, որից կոփվեցիք» (Ես. ԾԱ, 1): Ինչպես որ այն ժամանակ նրան այդ հրաշքով դարձրեց այսքան որդիների հայր, նույնը կարող է և այժմ անել է՛լ ավելի շատ [որդիներ տալով], եթե կամենա, այսինքն՝ քարերին երկրպագող հեթանոսներին դարձնելով Աբրահամի հավատի որդիներ: Այսպիսով [Հովհաննեսը] մերժում է այսպիսի մարմնավոր ազնվականությունն ու հպարտությունը և պատվում միայն հոգու առաքինությունը: Այնուհետև է՛լ ավելի խիստ օրինակով է զարհուրեցնում:

Որովհետև անա տապարը ծառերի արմատի մոտ է դրված (Գ 10):

Նախ աստվածային բարկության հիշատակով զարհուրեցրեց և ապա տապարի օրինակով, որով հայտնում էր, որ շատ վաղուց էին [հրեաներն] անպտուղ ու խոպանացած: Նրանց սպառնում էր, որ ոչ միայն նահապետից [Ժառանգած] ազնվականությունն էին կորցնելու և նրանց փոխարեն ուրիշներն էին [Աբրահամի] որդիներ դառնալու, այլև որ տապարով հատվելու էին կյանքից և իբրև հատված [մասեր]՝ կրակը գցվելու, ինչն ահավոր է ու սարսուլի: Որովհետև ոչ թե գերանդի է թուշում¹⁵⁰, կամ ցանկապատ՝ քանդվում¹⁵¹, կամ էլ այգի՝ կոխոտվում¹⁵², այլ տապար սրվում՝ զրվելով ծառի մոտ և ո՛չ թե [նրանից] հեռու, մոտ արմատի՛ն և ո՛չ թե ճյուղերին կամ սաղարթին, որպեսզի եթե դարձի չգան, արմատախիլ արվեն՝ առանց վերստին ընձյուղվելու: Որովհետև դատողը ոչ թե ինչ—որ ծառա է, ինչպես նախնիների դեպքում, այլ ամենքի Տերը:

Իսկ [տապարը ծառի] մոտ դնելը և ոչ թե [նրանով] իսկույն հատելը ներելու նշան է:

Եթե Տնկողին պիտանի պտուղներ տաք, ասում է [Հովհաննեսը], տապարը ձեզ ոչ մի վնաս չի հասցնի, իսկ եթե բարիք պտղաբերելու փոխարեն հոգով անբուժելի մնաք ախտերի մեջ, կհատվեք կյանքից, այսինքն՝ նախնիների փառքից և Օրենքի լույսից, ինչն էլ [Հովհաննեսը] հայտնում է հաջորդ խոսքով:

Բարի պտուղ չտվող ամեն ծառ հատվում ու կրակն է գցվում:

Սովորական բաներից օրինակ բերելով՝ ասես դատաստան անելով է խոսում և նրանց ներկայացնում է դատավճռի իրագործումը: Ինչպես որ մարդիկ, ասում է, պտղաբեր ծառերը չեն հատում, այլ դրանք ավելի մաքրում ու խնամում են, իսկ կրակով այրելու համար, ինչ—որ կարիքից ելնելով, սովոր են անպտուղ ծառերը հատել, այդպես էլ մեր բնությունը տնկած Աստված ում որ բարի գործերում պտղաբեր է տեսնում, խնամում է, որպեսզի առավել պտղաբերեն՝ ըստ Տիրոջ [պատմած] որթատունկի առակի¹⁵³: Իսկ ովքեր ոչ թե բարի, այլ չար պտուղներ են տալիս և դրանցում մինչև վերջ անգեղջ մնում, հատվում են կյանքից՝ ոչ միայն ներկա

կյանքից, ինչը [պատահում] է հավասարապես թե՛ արդարներին, թե՛ մեղավորներին, այլև հավիտենականից: Եվ հատվելով նաև կրակն են զցվում՝ ո՛չ թե մարող կրակը, այլ բնությամբ անշիջանելի:

«Ամեն ծառ» ասելով [Հովհաննեսը հրեաներին] էլ է հեթանոսների շարքը դասում, որով մերժում է նախնիներով հպարտացողների պարծանքը: Եթե Աբրահամի որդի ես և համարում ես, որ բյուրավոր նահապետներ ունես, կրկնակի պատիժ կկրես, եթե այդ հայրերի օրինակով չպտղաբերես:

Եթե անհնար է, որ ծառերը լավից վատը կամ վատից լավը փոխվեն, քանի որ բնությամբ են այդպիսին, ապա մարդկանց համար երկուսն էլ հնարավոր է, քանի որ անձնիշխան են և [իրենք են իրենց] կամքի տերը: Նրանք անբան ծառերի պես ոչ ժամանակի կարիքն ունեն, ոչ էլ օդի փոփոխություն: Միայն կամքի կարիքն ունեն, և իսկույն ծաղկելով կգարդարվեն և կպտղաբերեն:

Իսկ որպեսզի չասեին. «Եթե դու սպառնում ես, որ բարկությունն արագորեն է վրահասնելու, մենք ինչպե՞ս կարող ենք պատժի

ժամանակ արագորեն պտղաբերել», սպառնալիքին առընթեր դնում է անճառ բարիքների հույսի ավետիսը: Ասում է.

Ես ձեզ մկրտում եմ ջրով՝ ապաշխարության համար, բայց Ով գալիս է իմ հետևից, ինձնից հզոր է, և ես արժանի չեմ Նրա կոշիկները տանելու (Գ 11):

Նախ դատաստանի կրակով զարհուրեցրեց նրանց և նրանով, որ նրանց փոխարեն ուրիշներն էին [Աբրահամի որդիների շարքն] անցնելու, ապա խոսում է Քրիստոսի մասին և ո՛չ թե սաստով, այլ քաղցրությամբ, որպեսզի դյուրավ ընդունեին: Նախ իր մկրտության անկատարությունն է ցույց տալիս՝ ասելով. «Ես ձեզ մկրտում եմ ջրով՝ ապաշխարության համար», որով հայտնում է, որ իր մկրտությունն ուրիշ գորություն չունի, քան նրանց ապաշխարության կանչելը, որպեսզի այդ ավելի փոքրով մաքրվելով՝ պատրաստ լինեին ընդունելու [ավելի մեծը], այնուհետև ավելացնում է. «Բայց Ով գալիս է իմ հետևից, ինձնից հզոր է, և ես արժանի չեմ Նրա կոշիկները տանելու»: Մարկոսն է՛լ ավելի խոնարհ խոսք է ներկայացնում. «Արժանի չեմ խոնարհվելու, որ

արձակեմ Նրա կոշիկների խրացները¹⁵⁴» (Մարկ. Ա, 7): [Հովհաննեսը սրանով] ասում է. «Լսելով, որ Նա գալու է ինձնից հետո՝ մի՛ կարծիր, թե ինձնից հետո է եղել: Կամ երբ ասում եմ, որ ինձնից հզոր է, սա մի՛ համարիր իբրև մեծ ու փոքրի միջև համեմատություն: Որովհետև ո՛չ միայն համեմատվել չեմ կարող [Նրա հետ], այլև Նրա վերջին ծառաների հետ արժանի չեմ մի չնչին սպասավորություն մատուցելու [Նրան]»: Այդ պատճառով էլ [Հովհաննեսը] չի ասում՝ «կոշիկները», այլ՝ «կոշիկների խրացները»:

Իսկ ի՞նչ եմ «կոշիկի խրացները»: Կոշիկներն ու դրանց փոկերն ամրացնելու կապեր են կամ էլ այն, ինչ ոմանք հագնում են դրսից՝ կոշիկի տակից. հավանաբար այն ժամանակ էլ կար այդ սովորությունը: Իսկ խորհրդանշաբար՝ խրացը նշանակում է այն, որ հնարավոր չէ դյուրավ խափանել Քրիստոսի խորհուրդներից փոքրագույնն իսկ. [նկատի ունեմ] ո՛չ Նրա աստվածություն հետ կապված [խորհուրդները], այլ տնօրինականները: [Ձեռն կարող խափանել] ո՛չ միայն մտքով մանուկները, այլև ոչ իսկ [Սուրբ] Հոգին ունեցողները և Հովհաննեսին հոգով նմանները:

Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով և կրակով:

Տե՛ս Մկրտչի իմաստությունը: Երբ իր կողմից էր քարոզում, ահ ներշնչող բաներ էր ասում, իսկ երբ Տիրոջ գալուստը հիշեց, քաղցր ու հաճելի [բաների մասին խոսեց]: Ոչ գալիք բարկությունը հիշեց, ոչ էլ անպտղաբեր ծառերի՝ տապարով հատվելն ու կրակի մատնվելը, այլ մեղավորների թողությունն ու պարտքերից ազատությունը, [Աստծուն] որդեգրությունն ու հաղորդակից լինելը և [Սուրբ] Հոգու պարգևների առատությունը: Այս ամենը նկատի ունենալով ասաց. «Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով ու կրակով»: Մարգարեներից ավելի մեծի¹⁵⁵ այս մարգարեությունն արդարև իրականություն դարձավ, երբ, ըստ Ղուկասի պատմածի¹⁵⁶, [Սուրբ] Հոգին Երուսաղեմում՝ վերնատանը, շառաչյունով [հայտնվեց], առաքյալներին հայտնապես երևացին ասես կրակից բաժանված լեզուներ և նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Ըստ ասածներիս՝ հենց նրանք էլ տեսանելի կերպով մկրտվեցին Սուրբ Հոգով ու կրակով: Եվ նրանց կողմից [մկրտված] ու նրանց հաջորդած հավատացյալները, թեպետ ո՛չ այդպես բա-

ցահայտորեն, սակայն աներևութաբար՝ ըստ հավատի, մկրտվում են նույն ձևով՝ [Սուրբ] Հոգով ու կրակով:

[Հովհաննես Մկրտիչը] կրակի հիշատակմամբ ցույց է տալիս նաև շնորհների առատությունը: Ինչպես որ կրակն է փոքր կայծից անսահման տարածվում՝ թե՛ նյութով, թե՛ ուժգնությամբ, այդպես էլ [Սուրբ] Հոգու շնորհն Ավագանի միջոցով սփռվում է այն բոլոր մարդկանց մեջ, ովքեր ճշմարիտ հավատքով ու մաքուր կյանքով նյութ են դառնում իրենց մեջ արծարծված [շնորհի] համար: [Կրակի հիշատակմամբ Հովհաննեսը] լսողների միտքը բարձրացնում է նաև դեպի Նրա հիշատակը, Ով կրակով երևաց մարգարեներին, ինչպես Քորեբում՝ Մովսեսին, Սինայում՝ ժողովրդին, քերովբեների վրա՝ Եզեկիելին¹⁵⁷, և ուրիշների ևս՝ տարբեր վայրերում ու ժամանակներում: Դրանով Աստված ցույց է տալիս նաև [Սուրբ] Հոգին՝ հայտնելով, որ [Հին Ուխտում հայտնված Աստված] և Սա տարբեր չեն, այլ միևնույն Աստվածը, քանի որ մեկն է Սուրբ Երրորդություն պատիվը:

Քանի որ Քրիստոսի՝ մարդկանց տված

պարգևների մեջ [Սուրբ] Հոգու շնորհն ըստ հերթականության վերջինն էր, [Հովհաննեսը] նախ դրա մասին խոսեց, որպեսզի հաճելի բաների հիշատակով արթնացնի լսողների միտքը: Որովհետև նախ պետք էր, որ Գառը մորթվեր, մեռներ, թաղվեր ու հարույթյուն առներ, և ապա՝ գար Հոգին: Սրանց մասին [Հովհաննեսը] ոչինչ չասաց, այլ [խոսեց] դրանցից հետո լինելիքի մասին, որպեսզի [Սուրբ Հոգու շնորհի] պատիվը քարոզվեր, և հետո՝ [լսողներին] մատուցեր խաչի քարոզությունը՝ չգայթակղեցնելու համար: Այդ պատճառով էլ հետո՝ ասաց. «Ահավասիկ Աստծո Գառը, որն [Իր վրա] վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհ. Ա, 29): Չասաց՝ «նեռում է», այլ «վերցնում է», որովհետև առաջինը կատարվում է առանց ճիգ թափելու՝ միայն կամենալով, իսկ երկրորդը՝ մահուչափ [չարչարանքով]:

Քրիստոսի բոլոր տնօրինական գործերից ոչ մեկից այնպես լավ չէր երևում Նրա Աստծո Որդի լինելը, ինչպես [Սուրբ] Հոգին տալուց: Ուստի Հայրը ևս, երբ ուղարկում էր Հովհաննես [Մկրտչին], Իր Որդու պատվի հետևյալ նշանն էր տվել. «Ում վրա տես-

նես, որ Հոգին իջնում է, Նա՛ է, որ մկրտում է Սուրբ Հոգով» (Հովհ. Ա. 33):

Հաճելի բաների մասին խոսելուց և լսող-ներին [Քրիստոսի] առաջին գալստյամբ ու նրա բարիքներով ուրախացնելուց հետո [Հովհաննեսը] ներկայացնում է ահաշունչ [իրողությունը]՝ Նրա երկրորդ գալստյան խորհուրդը, որպեսզի չլինի թե նրանք, ովքեր Հոգուց ձրի շնորհ են ստանում, դրա վրա հույսը դնելով՝ ծուլության մատնվեն: Այլ որպեսզի իրենց հոգին մաքուր և ազատ պահեն, [Հովհաննեսն] ասում է.

Նրա քամհարը Նրա ձեռքին է. Իր կալը կմաքրի, ցորենն իր շտեմարանների մեջ կթողովի, իսկ հարդն անշեջ կրակով կայրի (Գ. 12):

Սրանից առաջ միայն տանջանքների մասին խոսեց, իսկ այստեղ անձամբ Դատավորին է ցույց տալիս: Եվ ասում է, որ Նրա ձեռքին է Նրա քամհարը, այսինքն՝ ճշմարիտ դատաստանը, որով անաչառ ու անվրեպ ընտրություն է կատարվելու: Տեսնո՞ւմ ես, որ նույն Մեկն է իր նախախնամական գործությունները և իրողությունների Տերը, և մշակ: Այստեղ [Հովհաննեսը] Նրան ներկայացնում է իբրև ձեռքին քամհար ունեցող մշա-

կի և չի ասում, թե միայն այն ժամանակ [քամհարը] ձեռքը կառնի: Հապա ի՞նչ [է ասում]. «Նրա քամհարը Նրա ձեռքին է», այսինքն՝ միշտ է կրում իր հետ: Սրանից հասկանում ենք, որ ամեն ժամ աստվածային դատաստան է կատարվում արարածների վրա, թեև ո՛չ ընդհանուր ու բացահայտ, այլ մասնավոր ու ծածուկ:

Ասվում է նաև, որ քամհարը նշանակում է խաչը, որով հավատացյալներին ու անհավատներին [Տերը] բաժանում է միմյանցից և խաչի երկրպագուներին իբրև ցորեն հավաքում Արքայության շտեմարաններում, իսկ ուրացողներին՝ իբրև հարդ, բարկությունամբ լցնում անշեջ բոցի մեջ:

«Իր կալը կմաքրի», – ասում է [Հովհաննեսը]: Կալի է նմանեցնում այս բովանդակ աշխարհը. կամ որովհետև այս օրինակը պատշաճում էր [ներկայացվող] իրողություն խորհրդին, կամ էլ փրկվելու պատճառով երկիրը երկնքի հետ համեմատելով: Իսկ «մաքրելը»՝ աշխարհը մեղավորներից [ազատելն է]՝ ըստ այս խոսքի. «Մեղավորները կպակասեն երկրից» (Սաղմ. ԾԳ. 35): Իսկ «Իր» ասելն այն է, որ «Տիրոջն է երկիրն իր ամբողջու-

թյամբ» (Սաղմ. ԻԳ 1): Թեպետ այժմ շատերն ապստամբում են հավատքով ու գործերով՝ իրենց անձնիշխան կամքի պատճառով, սակայն ինչպես որ մշակիինն են արտերը՝ սերմանելու պատճառով, բայց մինչև կալսումը բույսերից շատերը ոչնչանում են, և [մշակն] իբրև իր սեփականութուն է համարում միայն որոնք քամհարով մաքրում ու շտեմարանների մեջ է հավաքում, այդպես էլ Աստված [է վարվում]: Թեև արարչությամբ իրենն են բոլորը, բայց քանի որ շատերն անհնազանդ են Նրա ներողամտության պատճառով, երբ ամենքին ժողովի դատաստանի կալի մեջ, հարդանման մարդկանցից կմաքրի բարիներին իբրև ցորեն, և դրանք կկոչվեն իսկապես իրենը: Եվ ինչպես որ ցորենի հատիկը ոչ մի վնաս չի կրում կամնասայլերից, իսկ հարդը, քամուց քշվելով, հրոճարակ է դառնում, այդպես էլ արդարները ոչ մի վնաս չեն կրի դատաստանի բարկությունից, այլ [Տիրոջ] քաղցր ձայնով կկանչվեն դեպի հավիտենական կյանք: Իսկ մեղավորները ցողունի պես ասես քամուց կհալածվեն Թագավորի ձայնից, Ով կհրամայի նրանց գնալ դեպի անշեջ կրակը:

Այս օրինակը նաև այս կյանքին է պատշաճում: Ինչպես որ ցորենն ու ցողունը միակերպ են սփռվում կալում, և կամնասայլը նույն կերպ է դրանք կալսում, այդպես էլ բարիներն ու չարերը նույն ձևով մնում են նույն աշխարհում, փորձությունն ու մահն ամենքին հավասարապես են հասնում, բայց արդարներին ոչ մի վնաս չեն հասցնում, ինչպես կամնասայլը՝ ցորենին, քանի որ ավելի են մաքրում, ինչպես ոսկին՝ կրակի մեջ: Եվ ինչպես որ սերմանողը մինչև կալը հանդուրժում է ցողունին, քանի որ [վերջինս] ցորենի սնուցիչն է, [այդպես էլ Աստված] ամբարիշտներին այժմ հանդուրժում է արդարների համար, երբ [վերջիններիս] որևէ առաքինության պատճառ են դառնում: Ոմանց [հանդուրժում է] աշխարհում խաղաղություն հաստատելու համար, ինչպես աշխարհակալների դեպքում, որոնց համար առաքյալը նաև աղոթել է հրամայում¹⁵⁸, ոմանց էլ՝ որովհետև չարչարելու միջոցով փորձիչ են դառնում Աստծո ընտրյալների համար, ինչով շատերն են համբերությամբ հաճելի դառնում [Աստծուն]: Նաև հանդուրժում է մինչև վերջ, երբ [գիտի, որ]

նրանց փոխվելու հույս կա, որ մոլախոտի փոխարեն ցորեն կգառնան՝ ըստ Տիրոջ հրամանի. «Թողե՛ք մոլախոտն ու մի՛ քաղեք մինչև հունձ» (Ռմմտ. Մատթ. ԺԳ. 30):

Այսպիսով՝ [Անապատի] Զայնը, [Սուրբ] Հոգու միջոցով խոսելով, գեղեցկապես և հստակորեն ներկայացրեց Տիրոջ երկու գալուստների խորհուրդը: Առաջինի մասին [ասաց]. «Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով», իսկ երկրորդի մասին՝ «Ցորենը կժողովի, իսկ հարզն անշեջ կրակով կայրի»: Նրանք, ովքեր կասկածում են գեհենի վերաբերյալ, թող տեսնեն՝ եթե առաջին [խոսքը] տեղի չի ունեցել, ուրեմն երկրորդն էլ է տարակուսելի: Իսկ եթե առաջինը [Տերն] իսկապես իրականացրեց, ինչը հայտնի է նրանից, որ առաքյալները վերնատանը մկրտվեցին [Սուրբ] Հոգուց, իսկ հավատացյալները՝ Ավագանի միջոցով, ապա անտարակույս կիրագործի նաև երկրորդը, քանի որ այստեղ չմկրտված ամբարիշտների դասերը կմկրտվեն գեհենի անսպառ ու տաժանելի կրակով:

Այդ ժամանակ Հիսուսը Գալիլեայից գալիս է Հորդանան՝ Հովհաննեսի մոտ՝ մկրտվելու նրանից (Գ. 13):

Աստվածային գործերը չեն կատարվում մարդկայինի նման ակամա շարժմամբ և պատահաբար, այլ կամավորաբար և նախատեսությունով, ուստի [Հիսուսի] մկրտության խորհուրդն էլ [կատարվեց], ինչպես [աստվածային] բոլոր [գործերը]: Նա երեսուն տարի ապրեց առանց նշաններ ցույց տալու և ուսուցանելու, մինչև մարմնի հասակի կատարյալ դառնալը¹⁵⁹, երբ նաև մեր [մարդկային] ընդհանուր բնությունն առաքինությունն ու ուսուցանումն են վստահելի: Քանի որ հնարավոր չէր, որ Հովհաննեսը Հիսուսի ձեռքից բռնելով և տնից տուն շրջել տալով վկայեր Նրա մասին, ուստի [Աստված] նախ ուղարկեց Հովհաննեսին որպես կարապետի, որպեսզի փողահարեր՝ պատրաստելու համար Նրա մուտքի ճանապարհը: Եվ երբ փողի փոխարեն Զայնը հնչեց և Թագավորի հրամանով միահամուռ հավաքեց ժողովրդին, այդ ժամանակ Թագավորն ինքն էլ եկավ, սակայն ոչ թե հայրական չքեղ փառքով, որին դիմանալ չէին կարողանա, այլ հասարակ կերպարանքով՝ իբրև շատերից մեկը, որպեսզի դյուրավ մոտենային [Նրան]:

Իսկ որտեղի՞ց եկավ Հորդանան: Գալիլեայից, այսինքն՝ Նազարեթ քաղաքից, որտեղ Եզրիպտոսից վերադարձից հետո բնակվում էր Իր ծնողի հետ մինչև այդ պահը: Եվ [Հովհաննեսի]՝ անապատում հայտնվելու հենց սկզբից չեկավ, որպեսզի չասեին, թե միմյանց միացել և դաշինք են կնքել, այդ պատճառով է [Հովհաննեսը] վկայում Նրա մասին:

Այլ մնաց, մինչև հավաքվեցին բոլոր նրանք, ովքեր լսեցին [Հովհաննեսի] քարոզության խոսքը, և ապա՝ եկավ: Նաև որպեսզի, լսելով [Հովհաննեսի] նախապես արված մեծ վկայությունը Նրա մասին՝ «Ով գալիս է իմ հետևից, ինձնից հզոր է, և ես արժանի չեմ Նրա կոչիկները տանելու», և՛ «Նա կմկրտի ձեզ Սուրբ Հոգով ու կրակով», Նրան Հովհաննեսի մոտ եկած տեսնելիս չկարծեին, թե մկրտության է գալիս իբրև [ղրան] կարոտ մեկը:

Նաև՝ երեսնամյա [տարիքում] մկրտության գալով՝ ամաչեցրեց մարկիոնականներին¹⁶⁰, ովքեր ասում են, թե Նա երևութապես է մարմնացել:

Որովհետև եթե մարմինը ճշմարտապես չի առել, մկրտությանն ինչո՞վ էր մոտենում՝

աստվածային բնությամբ անշոշափելի լինելով: Եվ «երեսնամյա» ասելով՝ [Ղուկաս ավետարանիչը] ցույց է տալիս Նրա երիտասարդ տարիքը և ոչ թե մշտնջենավորությունը:

Իսկ խորհրդապես՝ քանի որ առաջին Ադամը երեսնամյա ստեղծվելով՝ ընդունեց Հոգու փչումը, բայց չպահեց, այս երկրորդ Ադամը՝ Տերը, [նույն տարիքում] Հորդանանում [Սուրբ] Հոգու իջմամբ յոթնյակ շնորհներն¹⁶¹ առնելով [առաջին Ադամի] նույն բնությամբ, [ղրանք] տվեց նրա բոլոր ծնունդներին՝ Ավազանից երկրորդ ծննդյան միջոցով: Ահա այս պատճառով [Տերը] եկավ Հորդանան՝ մկրտվելու Հովհաննեսից:

Բայց Հովհաննեսն արգելում էր Նրան՝ ասելով. «Ե՛ս պետք է Քեզից մկրտվեմ, և Դո՞ւ ես ինձ մոտ գալիս» (Գ 14):

Թեպետ Հովհաննեսը գիտեր, որ [Հիսուսը] տնօրինաբար է մկրտության գալիս, սակայն Նրա հանդեպ ցույց տվեց պատշաճ խոնարհություն, ինչպիսին վայել է, որ ծառան տիրոջ հանդեպ [ցուցաբերի], և արարածը՝ Արարչի: Սա կարելի է տեսնել Մովսես-

սի, Երեմիայի և բոլոր սրբերի պարագայում, ովքեր, թեև կանչվում էին առաջնորդության, սակայն հրաժարվում էին [իրենց անձին վերագրել] աստվածայինը, քանի որ միևնույն Հոգին կար ամենքի մեջ:

«Ե՛ս կարիքն ունեմ Քեզնից մկրտվելու. ճրագս՝ Արեգակիցդ, ձայնս՝ Խոսքիցդ, փեսավերս¹⁶²՝ Փեսայիցդ, կանանցից ծնվածների մեջ մեծս¹⁶³՝ բոլոր արարածների Անդրանկիցդ¹⁶⁴: Ե՛ս կարիքն ունեմ. և ո՛չ սոսկ մկրտվելու Քեզնից, այլ արյա՛մբ՝ Քո օրենքի համար, որպեսզի Քո կենդանարար դալուստը քարոզեմ ինչպես ողջերին երկրի վրա, այդպես էլ մեռյալներին դժոխքում: Եվ Դո՞ւ ես ինձ մոտ գալիս: Այսինքն՝ սրբերի Սուրբդ գալիս ես տառապյալիս մոտ մաքրությո՞ւն ընդունելու: Բայց ինչպե՞ս կարող է խոտը մոտենալ կրակի բնությանն ու չայրվել»:

[Հովհաննեսը] չասաց. «Գալիս ես ինձ մոտ մկրտվելու», քանի որ ամաչում էր այդպես ասել, այլ միայն՝ «գալիս ես ինձ մոտ», այսինքն՝ մահվամբ [գալիս ես] դժոխք¹⁶⁵:

Հիսուսը պատասխանեց նրան. «Թո՛ւյլ տուր

այժմ. որովհետև այդպես է վաչել, որ կատարենք ամբողջ արդարությունը» (Գ 15):

[Երկրի վրա] Տիրոջ մարդեղության շրջանում Սիմեոնն¹⁶⁶ ու Հովհաննես [Մկրտիչն] էին, որ [Սուրբ] Հոգով իմացան, որ Նա Աստված է, ինչը երևում է նրանից, որ թեև Նրան մարդու կերպարանքով տեսան, սակայն [Նրա հետ] խոսում էին իբրև Աստծո հետ: Նաև [երևում է նրանից], որ չկարողացան երկար ժամանակ անցկացնել Նրա հետ, ինչպես ուրիշները, այլ [տվյալ տնօրինական] խորհրդի իրականացումից հետո իսկույն հրաժեշտ տվեցին [Նրան], ինչը պարզ է դառնում նաև Հովհաննեսի խոսքերից և Տիրոջ այս պատասխանից: Որովհետև ոչ թե որպես իրենց համապատիվ մարդու հետ էին խոսում, այլ որպես Աստծո: Նմանապես էլ Տերը պատասխանեց [Հովհաննեսին] ոչ թե իբրև իրեն չճանաչողի, այլ ճանաչողի: Չասաց, ինչպես Պետրոսին, երբ [վերջինս] թույլ չէր [տալիս Տիրոջն] իր ոտքերը լվանալ. «Ինչ որ անում եմ ես՝ դու այժմ չգիտես» (Հովհ. ԺԳ 7), այլ ի՞նչ: «Թո՛ւյլ տուր այժմ, որովհետև այսպես է պետք կատարել ամբողջ արդարությունը»: Ասես ասում է. «Սա խո-

նարհուլթյան և ցածրանալու ժամանակ է, Իմ բնությունը պատվելով՝ թո՛ւյլ տուր և մի՛ արգելիր, որ այս տնօրինական խորհուրդը կատարեմ, որի համար եմ ուղարկվել»։ Իսկ «այժմ» ասելն այն խորհուրդն ունի թե՛ «Միշտ չէ, որ խոնարհություն եմ ցուցաբերելու, այլ այժմ միայն: Բայց հետո կտեսնես Իմ անզուգական փառքը»:

«Որովհետև այսպես է պետք կատարել ամբողջ արդարությունը»: Ասում է. «Ինչպես այժմ հանձն եմ առնում մկրտվել ծառայից, այդպես էլ Իմ տնօրենության ամբողջ գործը խոնարհությամբ եմ գլուխ բերելու, որպեսզի Իմ անձով ցույց տամ ամբողջ արդարությունը¹⁶⁷, որը նախահայրը կորցրեց հպարտությամբ»: Ո՛չ լուկ Օրենքի [արդարությունը], որը թերի էր, ինչպես և [Ինքը Տերն] ասաց. «Չեկա [Օրենքը] խափանելու, այլ լրացնելու» (Մատթ. Ե 17), այլ կատարյալ [արդարությունը], որը նմանվել է տալիս երկնավոր Հորը: Այն նախ [Հոր]՝ բնությամբ Որդին կատարեց մարմնով և ապա սովորեցրեց մեզ՝ շնորհով որդիներին, ովքեր կամենում են նմանվել [Աստծուն]։ Ինչպես գրված է. «Հիսուսը սկսեց կատարել

և սովորեցնել» (Գործք Ա, 1): «Օրենքի արդարությունը, – ասում է, – ոչ միայն կատարեցի, այլև թերին լրացրի: Միայն մնացել է, որ մկրտվեմ քեզնից, և Իմ այս մկրտությամբ է վայել, որ լրացնեմ անկատարությունը՝ տալով [Սուրբ] Հոգին»:

Նաև՝ «Քանի որ Օրենքն անեծքի տակ դրեց [Օրենքի պատվերները] չկատարողներին և քանի որ չգտնվեց ոչ մի մարդ, որ բոլոր [օրենքները] կատարեր, ապա ամենքն ընկան անեծքի տակ: Ես եկա, որ նախ կատարեմ այդ բոլորը և ապա խափանեմ ձեր դեմ գրված անեծքը»:

Երբ Մկրտիչը [Տիրոջ] այս կարճ խոսքով հասկացավ այդ մեծագույն խորհուրդը, թույլ տվեց Նրան [մկրտվել]:

Եվ երբ Հիսուսը մկրտվեց, իսկույն դուրս ելավ ջրից (Գ 16):

Ավետարանիչը նախ ասաց, որ մկրտվածները մեղքերը խոստովանում էին մկրտվելուց հետո և նախքան ջրից դուրս գալը, ինչպես գրված է, բայց Տերը, քանի որ «մեղք չգործեց, և նենգություն չգտնվեց Նրա բերանում» (Ա, Պետ. Բ 22) և նաև վկայվեց

իբրև Աստծո Գառ, որն [իր վրա] է վերցնում աշխարհի մեղքը¹⁶⁸, այդ պատճառով էլ [ավետարանիչը] միայն չի [գրում] Հորդանանից Նրա դուրս գալու մասին, այլև ավելացնում է «Իսկույն»-ը, որն ավելորդ կլիներ գործածել, եթե ոչ՝ նշածս պատճառով:

Եվ ահա երկինքը բացվեց Նրա համար:

Նորանշան դեպք պատահեց. որովհետև այն ժամանակից ի վեր, որ [երկինքը] փակվեց առաջին Ադամի պատճառով, [այլևս] չբացվեց, մինչև նրա մեղքը չվերացվեց այս երկրորդ Ադամի մկրտությամբ: Այս պարզևն այն պատժից ավելի մեծ էր. որովհետև այնտեղ փակվեց դրախտի դուռը, իսկ այստեղ բացվեց երկնքի արքայությունը: Այդ պատճառով էլ [ավետարանիչը] չի ասում լուկ «բացվեց», այլ՝ «Նրա համար»՝ ո՛չ ըստ Նրա աստվածություն, որը միշտ Հոր հետ էր, այլ ըստ մեր բնություն: Սա նշանակում է, որ Հայրը հանուն Նրա՝ հաշտվեց մարդկություն հետ և բացեց երկինքը՝ հրավիրելով ամենքին մտնել այնտեղ ու [երկնքի արքայություն] ժառանգորդ դառնալ իր Որդու մկրտությամբ, որն [այստեղ] սկսեց:

Եվ [Հովհաննեսը] տեսավ, – ասում է [ավետարանիչը], – որ Աստծո Հոգին աղավաղու տեսքով իջնում ու գալիս էր Նրա վրա:

Ինչ նշան որ Հայրը տվել էր Հովհաննեսին անապատում, այն էլ տեսնում է այժմ, քանզի [Հայրն] ասել էր. «Ում վրա տեսնես, որ իջնում է Հոգին, Նա՛ է մկրտում Սուրբ Հոգով ու կրակով» (Հովհ. Ա 33):

Բայց ի՞նչ կարիք կար, որ [Սուրբ] Հոգին տեսանելի կերպարանքով իջներ, երբ Հոգին միշտ Նրա հետ էր և Նրանն էր, ինչպես Հորը: Պատճառն այն է, որ հրեաները Հովհաննեսին մեծ [անձնավորություն] էին կարծում անապատում բնակվելու, քահանայապետի որդի լինելու, ամուլ արգանդից ծնված լինելու, կոպիտ զգեստ կրելու և այն պատճառով, որ ամենքը մկրտվում էին նրանից, իսկ Քրիստոսին համարում էին մի սովորական աղջկանից ծնված (որ Նա կույսից էր [ծնվել], այդ ժամանակ հայտնի չէր), հատկապես որ տանն էր մեծացել և բոլորի պես էր հագնվում, այլև որ նաև մկրտվեց Հովհաննեսից, ինչն առավել էր հաստատում նրանց կարծիքը [Հիսուսի] վերաբերյալ: Որովհետև ասում էին. «Եթե բազմությունից մեկը չլիներ,

բազմության հետ չէր գա մկրտվելու»: Ուստի, որպեսզի այսպիսի բաներ չմտածեին, Հիսուսի մկրտության ժամանակ երկինքը բացվեց, Հոգին իջավ, և Հայրը Հոգու հետ հայտնեց [Հիսուսի] մասին. «Դա է Իմ սիրելի Որդին», որպեսզի նաև դո՛ւ հավատաս, որ քո մկրտության ժամանակ նույնպես իջնում է Հոգին, ինչպես Նրա, միայն թե ո՛չ այդպես բացահայտորեն: Սրա պատճառով մի՛ տարակուսիր, որովհետև Աստված սովորաբար բոլոր աստվածային պարգևները սկզբում հրաշքի միջոցով է ցույց տալիս (ինչպես երբ առաջին Օրենքը տվեց տարբեր զարմանալի [իրադարձություններով], առաքյալներին՝ [Սուրբ] Հոգով մկրտությունը [կատարեց] սաստիկ քամու միջոցով ու հրեղեն լեզվակներով), բայց հետո նույն կերպ [չի վարվում], թեև Հոգին նույնն է:

Իսկ ինչո՞ւ աղավա՞տ տեսքով [իջավ Հոգին]: Որովհետև այդ թռչունը զգոն¹⁶⁹ է և հանդարտ, իսկ [Սուրբ] Հոգին «հեղուկյան Հոգի» է կոչվում: Նաև որպեսզի հիշեցնի այն վաղնջական օրինակը, որ երբ ամբողջ աշխարհի վրա ջրհեղեղ եղավ, այդ ժամանակ այդ նույն թռչունը ջրհեղեղի ավարտի ավե-

տիսը բերեց՝ բերանում պահելով ձիթենու տերև¹⁷⁰՝ իբրև կյանքի առհավատչյա: [Այդ աղավնին] նման էր այս աստվածային Աղավնուն, Որը ձիթենու տերևի փոխարեն մարդկային ցեղին բերեց ազատություն և որդեգրություն՝ Հորից սուրբ յուղով¹⁷¹ օծման միջոցով, ինչպես և պատմում է ավետարանիչը:

Եվ ահա երկնքից ձայն հնչեց, որն ասաց. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Ում հաճեցի» (Գ 17):

Մեր մարդկային բնության հույսն ու ցանկությունը գերազանցող բարիքներ տեսնվեցին այդ ժամանակ: Որովհետև Երրորդություն՝ հավիտյաններից¹⁷² ու սերունդներից ծածկված խորհուրդը հայտնվեց Հորդանանում: Հայրն ի վերուստ [ձայնելով] վկայեց, Որդին՝ մկրտությամբ, իսկ Հոգին՝ աղավնակերպ իջմամբ: Եվ ուրիշ ի՞նչ էր սա, եթե ոչ՝ նոր արարչագործության սկիզբ, ո՛չ թե տեսանելի [արարածների], այլ մարդկանց աներևույթ հոգիների: Ո՛չ թե անգոյությունից գոյություն բերելով, այլ գոյացածներին ու մեղքի ապականությամբ եղծվածներին նորոգելով: Ինչպես որ առաջին արարչության ժամանակ արարածները

Երրորդության կողմից ստեղծվեցին (Հոր խոսքով [եղավ] լույսը, երբ ասաց. «Թող լույս լինի» (ՄԱՌ. Ա, 3), լույսից հետո «Տիրոջ խոսքով երկինքը հաստատվեց» (Սաղմ. ԼԲ 6), իսկ Հոգով՝ որովհետև «չըջում էր ջրերի վրա» (ՄԱՌ. Ա, 2)), և մեկ Աստվածությամբ բոլոր էակները ստեղծվեցին ոչնչից, մանավանդ մարդը, ով Երեքի խորհրդակցությամբ ստեղծվեց միասնական [Աստվածության] պատկերով, այդպես էլ այժմ, քանի որ հին Ադամը եղծվել էր, Հոր հնչեցրած խոսքը, իմանալի լույսի ծագմամբ, իրեն լսողների հոգիները դարձյալ կերտեց իր աստվածության պատկերով: Բայց ո՛չ բոլորինը, այլ նրանցը, ովքեր, Հոր խոսքի վկայության համաձայն, Քրիստոսին Աստծո Որդի են դավանում: Իսկ ովքեր լսեցին Հոր հնչեցրած խոսքը, բայց ո՛չ ներքին ականջներով, և տեսան Հոգին, բայց ո՛չ մտքի աչքերով, քանի որ հավատացին Հոր և Հոգու կողմից վկայված Աստծո Որդուն, մնացին [մարդու] ապականված ու եղծված հին պատկերով:

Հայրական այս խոսքն ամաչեցնում է նաև նրանց, ովքեր [Քրիստոսի] մարդկու-

թյունը բաժանում են աստվածությունից՝ [Նրան] երկու որդիների բաժանելով. ասում են՝ մեկը Հայր Աստծուց է ծնվել, մյուսը՝ Մարիամից: Բայց չէ՞ որ [Հայրը] չասաց. «Դրա մեջ եղածն իմ Որդին է», այլ՝ «Դա՛ է իմ Որդին», այսինքն՝ Ինձնից անժամանակաբար [Ծնվածը] նույնն է ժամանակի մեջ մորից [Ծնվածի] հետ, ո՛չ թե տարբեր [էակներ], այլ միևնույնն ու անբաժանելի:

Նաև՝ «որդի» կոչելով [Հայրն] իր բնության հետ միավորությունն է ցույց տալիս [Քրիստոսի մեջ], որովհետև [Քրիստոսը] Հոր ծնունդն է և ստեղծված չէ՝ ըստ Արիոսի¹⁷³: Իսկ «սիրելի» ասելով՝ ցույց է տալիս [Իր և Որդու] համակամությունը, որովհետև ուր կա սեր, տարբեր կամքեր չեն լինում: Այլև՝ որպեսզի «սիրելի» բառով տարբերազատի իր բնությամբ Որդուն [միայն] անունով [այդպես] կոչվողներից, ովքեր Նրա սիրո դիմաց ատեցին Նրան, և որոնց ամբաստանում է [Հայրը] Եսայու միջոցով. «Որդիներ ծնեցի և աճեցրի, և նրանք անարգեցին Ինձ» (Ես. Ա, 2), և Օրենքի միջոցով. «Իզուր ատեցին Ինձ»¹⁷⁴:

«Ում հաճեցի»՝ ո՛չ ըստ աստվածության,

որով Որդին միշտ է Հորը հաճելի, և Հայրը՝ Որդուն՝ համապատիվ լինելով, այլ ըստ մարդկության, որը հետո եղավ, քանի որ «հաճեցի» ասելը ժամանակ է ցույց տալիս: Այսինքն՝ Որդու մարդ դառնալը Հոր հաճությամբ ու կամքով եղավ, և մարդ դառնալով՝ Հոր կամքին հաճելի դարձրեց մեր մարդկային բնությունը: Այս պատճառով էլ Նրա ծննդյան ժամանակ հրեշտակները փառաբանելիս կոչեցին Նրան «մարդկանց հանդեպ հաճություն» (Ղուկ. Բ 14):

Արդ՝ եթե Հոր հնչեցրած խոսքը բավական էր վկայելու, որ Քրիստոսը ճշմարտապես Աստծո Որդին է, ապա ինչո՞ւ Հոգին երևաց, ինչպես անարագրեցիմք վերևում: Պատճառը սա է: Եթե միայն [Հոր] խոսքը հնչեր, մարդիկ կկարծեին, թե դա Հովհաննեսի մասին է, քանի որ նրան էին հայտնի ու մեծ համարում և խոսքն էլ հնչեց ո՛չ հատուկ Քրիստոսի համար, այլ անորոշաբար: Ուստի նախ Հոգին իջավ Քրիստոսի վրա՝ ասես մատնացույց անելով [Նրան], և ապա Հոր ձայնը հնչեց վերևից, որպեսզի մի բանի տեղ մի ուրիշ բան չհասկանային, այլ թե՛ «Սա՛ է Նա, Ում մասին Հայրը վկայում է, թե Դա Իմ սիրելի Որդին է»:

[Հոգին երևաց], նաև որպեսզի, Երեք առանձին Անձերի [գոյությունը ցույց տալով], Եկեղեցու հավատքը մաքրի հրեաբար խորհող Սաբելի¹⁷⁵ աղանդից, ով Երրորդությունը մեկ դեմք էր համարում: Բայց որ որոշ հոգեմարտներ¹⁷⁶ ընդդիմաբանում են ուղղափառ հավատքին՝ ասելով, թե Հոգին Որդուց փոքր է՝ ըստ այն փոքրություն, որն ունի աղավնին մարդու համեմատ, նրանց կասենք, որ Որդին մարդու բնությունը վերցրեց, իսկ Հոգին ոչ թե աղավնու բնությունը վերցրեց, այլ միայն կերպարանքը: Եթե այսպես հիմարաբար են մտածում, ապա թող ասեն, որ [Սուրբ] Հոգուց ավելի բարձր են [նաև] քերովբեները, որ արծվի նմանությունը են երևացել¹⁷⁷, և հրեշտակները, ովքեր մարդու կերպարանքով [են հայտնվում]: Սակայն անշնորհք մի՛ գտնվիր Բարեգործի հանդեպ, Ով շնորհեց քեզ որդեգրություն, չարիքների կորուստ և բարիքների ձեռքբերում, ինչը կարելի է տեսնել նաև այստեղ¹⁷⁸: Որովհետև հրեական մկրտությունը լուսեցրեց և մեր՝ [քրիստոնեական մկրտություն] սկիզբը դրեց և ինչ որ Քրիստոսը Ջատկին կատարեց, նույնն այստեղ

[արեց] Հոգով. որովհետև սովերական [օրենքը] լրացրեց և հաստատեց ճշմարիտը, որն ունեւր [Սուրբ] Հոգու շնորհը: Ուստի ուրիշ մկրտվածների վրա չերևաց այսպիսի բան, այլ Նրա, Ով տալու էր [Սուրբ] Հոգին: Որովհետև երկինքը բացվեց, և Հոգին իջավ՝ մեծ պատվով մեզ կանչելու բնակության այն վայրը, որտեղից ինքն էր իջել: Եվ մկրտությամբ պատրաստում է մեզ լինելու ոչ թե հրեշտակներ կամ հրեշտակապետեր, այլ Աստծո սիրելի որդիներ:



ԳԼՈՒԽ Դ

Այդ ժամանակ Հիսուսը Հոգուց տարվեց անպատ՝ փորձվելու սատանայից (Գ 1):

Ինչո՞ւ [Հիսուսի] ծննդից միջև երեսուն տարեկան դատնայր [սատանան] չփորձեց Նրան: Որովհետև Նրա աստվածութունը ցույց տվող նշան երկնքից չէր տեսել, և [Հիսուսը] ժողովրդի մեջ չէր վկայվել իբրև մեծ մեկը, այլ ապրում էր իբրև մի աննշան մարդ: Նաև ինչպես որ [Հիսուսն] ամեն ինչով մեզ նմանվեց, մեղք [գործելուց] բացի՝ Իրեն իբրև օրինակ ծառայեցնելով մեզ համար, կամեցավ նաև սրանո՞վ նմանվել: Ինչպես որ մեր մեջ էլ այդ տարիքում են սաստկանում կրքերի պատերազմները, այդպես Նա էլ, կրքերից վեր լինելով, նույն տարիքում կամավորապես հանձնեց Իրեն պատերազմի, որպեսզի մեզ սովորեցնի այդ տարիքում առավել զգուշ լինել թշնամու դեմ կռվում: Քանի որ [սատանան] արդեն որովայնից է սկսում մարդկանց առաջ գայթակղութուն դնել և պատերազմել, թեև ավելի շատ՝ չափահաս տա-

րիքում, այդ պատճառով մեր Տերն էլ իջավ այն վայրը, որտեղ [սատանան] սովոր էր պատերազմը սկսել, որպեսզի իր հետ էլ համարձակվի մարտի բռնվել: Ինչպես որ զորեղ մեկն իր գանձի գողին հետապնդում է այնքան, մինչև բռնում սպանում է և գողացվածը հետ առնում, այդպես էլ Ամենազորը [վարվեց], որովհետև կամեցավ կյանքի Գողին մահ հասցնել: Դարձավ սաղմ, և [սատանան] Նրան չկարողացավ սպանել որովայնում, ինչպես շատերին: Դարձավ մանուկ, և Նրա աճման ընթացքում փորձիչը չկարողացավ Նրան հողդողդել: Երեխա դարձավ, և Նրա այրանալու ջանքերում [սատանան] չկարողացավ Նրան ծուլություն մատնել: [Դարձավ] երիտասարդ, և [սատանան] Նրա մեջ չկարողացավ [անմաքուր] ցանկություն գտնել: [Դարձավ] գիտուն, և [սատանան] իր խորամանկությամբ չկարողացավ Նրան հասկանալ: [Դարձավ] ուսուցիչ, և [սատանան] չկարողացավ Նրան հանդիմանել Նրա ճշմարիտ վարդապետության մեջ: Քանի որ պահում էր պատվիրանները, ուստի [սատանան] չկարողացավ Նրան խտորեցնել: Ամուր էր, ուստի [սատանան]

Նրան] սպանելիս չկարողացավ զարհուրեցնել Նրան: Մեռավ, և չնայած գերեզմանի պահպանությունը [սատանան] չկարողացավ պահել Նրան [գերեզմանում]: Չհիվանդացավ, քանի որ բժիշկ էր: Չմոլորվեց, քանի որ հովիվ էր: Հանցանք չգործեց, քանի որ ուսուցիչ էր: Չսայթաքեց, քանի որ լույս էր:

Սակայն այս պահին [սատանան] առանց պատրվակի [Նրա հետ] պատերազմի մտավ՝ բացահայտորեն փորձելու Նրան, որովհետև երբ տեսավ, որ մկրտության է եկել, և Հովհաննեսից լսեց. «Ահա՛ Աստծո Գառը, որն [իր վրա] վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհ. Ա. 29), նայեց՝ տեսնի, թե իբրև մաքրության կարո՞տ մեկն է գալիս մկրտվելու, թե՞ անկարոտ մեկը: Երբ տեսավ, որ փայլուն լույս է ծագել Նրանից ջրերի վրա, [լսեց] Հոր՝ վերևից հնչած ձայնը և [տեսավ] Հոգու աղավնակերպ երևումը, հասկացավ, որ [Հիսուսն] իբրև կարիքների բավարարող է իջել այդ ջրի մեջ, ուստի մտքում դրեց և ասաց. «Եթե մարտի մեջ մտնելով չփորձեմ Նրան, չեմ կարող [վստահորեն] իմանալ՝ Նա ով է»: Բայց չէր համարձակվում մոտենալ Նրան, մինչև Փորձվողն ինքը թույլ չտվեց,

որ [Իրեն] փորձեն: Իսկ սա ե՞րբ եղավ: Երբ Հոգու զորությունն առավ և ելավ պատերազմելու ախոյանի հետ, ինչի մասին էլ ավետարանիչն ասում է. «Այդ ժամանակ Հիսուսը Հոգուց տարվեց անապատ՝ փորձվելու սատանայից»:

Ի՞նչ է նշանակում ասելը՝ «Հոգուց տարվեց»: Նշանակում է, որ դա Սուրբ Հոգու կամքն էր, և նա էր հորդորում Հիսուսին զնալու անապատ և կռվելու ախոյանի հետ, որպեսզի մեզ Հաղթածին հաղթի ոչ թե Աստվածության զորությամբ, որը հնարքների կարիք չունի, այլ մեր բնությամբ: Նաև որպեսզի սրանով ցույց տա [Սուրբ Երրորդության Անձերի] համապատվությունը: Որովհետև ինչպես որ Հոր կամքով իջավ երկիր, Հոգու կամքով էլ տարվեց անապատ, ինչպես որ Հոգին էլ ուղարկվում է ինչպես Հոր կողմից, նմանապես էլ Որդու: Սրանք ցույց են տալիս Սուրբ Երրորդության մեկ իշխանությունն ու համագո պատիվը:

[Հիսուսը սրանով] նաև մեզ խրատ է տալիս. եթե Ինքը, որ ամենակարող է, ասվում է, որ անձամբ չի գնացել փորձվելու, այլ տարվել է Հոգուց, որքան առավել մե՛նք պիտի

զգույշ լինենք և ինքնահաճ կամքով ինքներս մեզ փորձության չմատնենք: Այլ երբ մի ուրիշից տարվենք [փորձվելու], ամուր ու առաքինի մնանք, հատկապես երբ հոգևոր շնորհի ընդունումից հետո ենք պատերազմում՝ մկրտությունից կամ էլ որևէ ուրիշ աստվածային պարգև [ընդունելուց] հետո, քանի որ թշնամին սովորություն ունի այդ ժամանակ [մեր դեմ] ավելի մեծ ջանքեր թափելու:

Պատահում է, որ Աստված թույլ է տալիս, որ փորձություն դա [մեզ] վրա՝ առաջին՝ այն պատճառով, որ երբ հաղթանակ տանենք, հասկանանք, թե որքան զորավոր ենք դարձել շնորհն ընդունելուց հետո: Երկրորդ՝ որպեսզի ավելի մեծ պարգևներով չհպարտանանք: Երրորդ՝ որպեսզի քո ընդդիմությամբ չար դևը հասկանա, որ ամբողջապես հրաժարվել ես նրանից: Չորրորդ՝ որպեսզի հասկանաս, որ երկաթից էլ ամուր ես դարձել: Հինգերորդ՝ քեզ տրված մեծ գանձերի պատճառով է [սատանան] պատերազմում, որովհետև կռվելու այդքան ջանք չէր թափի, եթե չտեսներ մեզ այդպիսի պարգևներ վայելելիս: Ուստի Ադամի վրա էլ այն պատ-

ճառով հարձակվեց, որ նրան Աստծո պատկերով ստեղծված տեսավ: Հորի հետ այն պատճառով մենամարտեց, որ [Հորն] ամեն ինչում Աստծուց գովեստի արժանացավ:

Սակայն ինչո՞ւ Հոգին փորձության համար տարավ [Հիսուսին] անապատ և ոչ թե բնակավայր: Որովհետև [Տերը] ոչ միայն կամեցավ թշնամուն նեղը գցել քաղցով, որով ցույց տվեց, որ [Ինքը] մարդ է, այլև որպեսզի անապատը ևս հարձակվելու համարձակութուն տար [հակառակորդին], քանի որ վերջինս այն ժամանակ է [առավելապես] ջանք թափում, երբ ընկերներից մեկուսացած է մեզ տեսնում: Այդպես կնոջն էլ¹⁷⁹ մոտեցավ խաբելու, երբ նրան ամուսնուց հեռու գտավ: Հետևաբար, մենք նույնպես պետք է միմյանց հետ բնակվենք, որպեսզի դյուրավ չընկնենք սատանայի ձեռքը: Իսկ այն անապատը հասարակ չէր, այլ հույժ խորին, ինչ պատճառով Մարկոսը գրում է, որ [Հիսուսն այնտեղ] գազանների հետ էր¹⁸⁰:

Եվ քառասուն օր ու քառասուն գիշեր պահք պահելուց հետո քաղցեց (Գ 2):

Պահքով ժուժկալութուն ցուցաբերեց

մինչև Մովսես և Եղիա մարգարեների սահմանը և ո՛չ ավելի, Նա, Ով կարող էր առանց բնավ ճաշակելու էլ ապրել: Սակայն որպեսզի չկարծեին, թե Նրա մարդկութունն առաջոք է¹⁸¹, մարմնի բնությանը թույլ է տալիս կրել իրեն պատշաճը, հատկապես, որ [Մովսեսի և Եղիայի] մասին չի գրված, թե քաղցեցին, թեև պահքի սկզբում քաղց զգում էին՝ մարդ լինելով, իսկ Քրիստոսի մասին ավետարանիչը գրում է, թե քաղցեց: Ո՛չ ակամա, ինչպես մենք, այլ երբ կամեցա՛վ, ինչպես վայել է Աստծո՛ւն՝ չմտնելով [մարդկային] բնության հարկադրանքի տակ: Սա՛ է նշանակում ասելը՝ «հետո քաղցեց», այսինքն՝ քառասուն [օրվա] լրումից հետո: Ուրեմն՝ քաղցելը հաստատում է Նրա մարդկութունը, իսկ այն, որ [քաղցեց] կամովին և ոչ թե հարկադրաբար, հավաստում է [մարդկությանը] միացած Նրա Աստվածությունը:

Եվ փորձիչը մոտեցավ և ասաց Նրան. «Եթե Աստծո Որդի ես, ասա՛, որ այս քարերը հաց դառնան» (Գ 3):

Տես, թե ինչպիսի խորամանկութուն բանեցրեց, որ մոտեցավ ոչ թե երբ [Հիսուսը] պահքի մեջ էր, այլ երբ քաղցեց:

Իսկ Ինչպե՞ս հասկացավ [Հիսուսի] քաղցելը: [Նրանից հասկացավ, որ Հիսուսը] կա՛մ նշանով, կա՛մ խոսքով ցույց տվեց, որ կերակրի կարիք ունի, որպեսզի դրանով չարին համարձակուլթյուն տա, որովհետև առանց այսպիսի բաների [սատանան] չի կարող իմանալ մարդու խորհուրդները: Նաև քանի որ գիտեր, որ մարգարեները մինչև քառասուն օր էին պահք պահում, համբերեց, մինչև մարգարեների [պահեցողության] չափը լրացավ, և ապա՛ սկսեց փորձել: Որովհետև նա յուր էր՝ տեսնի, [թե Հիսուսն Իրեն ինչպես կպահի]. ասում էր. եթե Աստծո որդի է, ինչպես Հոր հնչեցրած խոսքը վկայեց, կանցնի պահեցողների սահմանը, իսկ եթե սոսկ մարդ է, նույն չափով կժողովալի: Իսկ Տերը քաղցի մասին հայտնեց նրան քառասնյակի ավարտին՝ ասես կարթին կերակուր հագցնելով, որպեսզի [սատանան] փորձելով կուլ տա Նրան իբրև մարդու, [այդ կերակուրը] նրա քիմքում մնա, և նա հաղթվի ու կործանվի [Տիրոջ կողմից]՝ իբրև Աստծուց:

Ուստի մոտենալով ասաց. «Եթե Աստծո Որդի ես, ասա՛, որ այս քարերը հաց դառնան»: Քանի որ լսեց ի վերուստ «Դա է Իմ

սիրելի Որդին» և Հովհաննեսի այդքան վկայությունները, իսկ հետո տեսավ, որ [Հիսուսը] քաղցեց, ուստի վարանման մեջ ընկավ: Այդ մեծ վկայությունների պատճառով Նրան սովորական մարդ չէր համարում, բայց և Աստծո Որդի էլ չէր համարձակվում [խոստովանել] քաղցած տեսնելու պատճառով: Եվ այսպես մեծ տարակուսանքի մեջ ընկնելով՝ սկսեց խոսել: Ինչպես որ նախկինում Եվայի հետ խորամանկորեն խոսեց, որպեսզի նրանից ճշտեր պատահած բաները, այդպես էլ այստեղ կամեցավ ասես վարմով խոսք քաշել, որպեսզի կարողանար հասկանալ այն իրողությունը, որը նրան հայտնի չէր, քանի որ տեղյակ չէր Տնօրենության անձառ խորհրդին, թե ո՛վ է Նա, որ եկել է:

Եվ ի՞նչ ասաց. «Եթե Աստծո Որդի ես»: Չասաց. «Եթե քաղցած ես», որպեսզի կարծել չտար, թե նախատում է: Այլ կեղծավորությամբ՝ պատիվ ընծայող խոսքով է դիմում՝ «Եթե Աստծո Որդի ես», որպեսզի կամ դրանով [Հիսուսը] հանձն առներ նրա խնդրանքը կատարել, և նա հասկանար, որ [Հիսուսն] իսկապես Աստված է, ինչպես և վկայվել էր, և այդպիսով ինքը զգուշանար

իր անձի համար, կամ էլ, եթե [Հիսուսը] չկարողանար [խնդրանքը] կատարել, հանդիմանվեր, թե մարդ է, նրա մասին վկայությունները սուտ դուրս գային, իսկ ինքն անհոգանալով ազատվեր տարակույսներից:

Իսկ ի՞նչ էր խնդրում: «Ասա՛, որ այս քարերը հաց դառնան»: Ինչպիսի՛ հիմարություն: Եթե Աստծո Որդի է, ինչպես և կա, կարիք չունի գոյություններից մեկը մի ուրիշին փոխելու, այլ ոչնչից է արարչագործում, ինչպես այն ամենն, ինչ կա: Եվ այդ դյուրին բանը, որ խնդրում ես՝ այդ քարերը հացի վերածել, մի՞թե այժմ չի կարող անել. պատրաստվում է ավելի դժվարին բաներ գործել, այսինքն՝ բարու հանդեպ քարացած մարդկային հոգիներն առաքինություն մաքուր հաց դարձնել՝ Իր աստվածության կամքին իբրև կերակուր:

Եվ ի՞նչ [պատասխանեց] Քրիստոսը:

«Միայն հացով չէ՛, որ կապրի մարդ, – ասաց, – այլև Աստծո բերանից ելած ամեն խոսքով» (Դ. 4):

Այս կարճ խոսքով հարված հասցրեց նրա հպարտությունը. այն, ինչ նա կեղծավորություն մեծելու էր, մեջտեղ բերելով հայտ-

նեց: Ուստի ուշադրություն դարձրու չարի խարդախությունը. ինչով առաջին մարդուն հանեց դրախտից և ուրիշ շատերի գցեց չարիքների մեջ, նույնով նաև այստեղ է իր նենգությունը նյութում՝ մղելով դեպի կերակուրների ցանկությունը: Բայց Քրիստոսը, որպեսզի ցույց տա, որ առաքինի անձին ոչինչ չի կարող համոզել անպատշաճը գործելու, չհամաձայնեց թշնամու կամքը կատարել, թեև կարող էր, որպեսզի մեզ խրատի չանսալ դեերին, անգամ եթե բարին ասեն, ինչպես որ ինքն էր հետո ըմբերանում նրանց՝ չնայած նրան, որ Իրեն Աստծո Որդի էին խոստովանում¹⁸²: Պողոսը նույնպես հարցուկ ոգուն, որը նրան «բարձրյալ Աստծո ծառա» էր կոչում, խոսքով սաստեց¹⁸³:

[Տերը սրանով] սովորեցնում է նաև այն, որ եթե մեկը պահանջի մեզնից հրաշք ցույց տալ, չպետք է իզուր և անտեղի [այն կատարել], այլ պատշաճ տեղում և [պատշաճ] ժամանակի, ինչպես Տերը: Որովհետև այստեղ չկատարեց Մեղավորի ցանկությունը, ով փորձելով էր խնդրում, բայց մյուս անապատում շատ ավելի զարմանալի բան գործեց Իր կամքով, երբ սակավաթիվ հացերով կե-

րակրեց հազարավորների, իսկ այլուր ջուրը գինու փոխարկեց¹⁸⁴ ցույց տալով իրեն իբրև այս գոյությունների արարիչ: Եվ «Միայն հացով չէ՛, որ կապրի մարդ» ասելուց հետո չլուեց, որովհետև ուրիշ կերակուրներ էլ կան, որոնցով մարդիկ ապրում են, այլ ավելացրեց. «այլև Աստծո բերանից ելած ամեն խոսքով»: Որովհետև մարդը երկու բանից է [կազմված]՝ հոգուց ու մարմնից. ինչպես որ մարդիկ [մարմնով] ապրում են նյութական հացով, այդպես էլ հոգին ապրում է աննյութական խոսքով: Բայց ո՛չ մարդկանցից ծնվող դատարկ խոսքով, այլ Աստծո բերանի՛ց ելնող [խոսքերով], որոնք մարդկանց կյանք են տալիս: Իսկ որո՞նք են դրանք: Ո՛չ միայն նրանք են, որոնք Աստված ասաց Մովսեսին և մյուս մարգարեներին, կամ [որոնք ասաց] Աստծո Խոսքն աշխարհում. Աստծո խոսքեր են նաև այն բոլոր գրվածքները, որոնք սովորեցնում են Աստծո պատվիրանները մարդկանց: Իսկ եթե դրանք [Աստծո խոսքեր են], որքա՛ն առավել Ավետարանում Նրա իսկ կողմից ասված խոսքերը:

Նաև ա՛յլ իմաստով [Տերն ասաց այս խոսքը]: Ո՛չ միայն նյութական հացով կապ-

րի իմ այս տեսանելի մարդը, ասում է, այլև ինձնով, որ դրան միացած Աստծո Խոսքն են, որ կարողություն ունեմ ոչ միայն ինքս ինձ կյանք տալու, այլև ինձ հավատով ու սրբությամբ մոտեցող բոլոր մարդկանց:

Դարձյալ՝ [ասես ասում է]. «Եթե գիտես, ո՛վ փորձիչ, որ Աստծո Որդին հնարավորություն ունի քարերը հաց դարձնելու, ապա կարող է նաև առանց հացի՝ միայն խոսքով կերակրվել և իր քաղցը հագեցածովթյան վերածել»:

Բայց դու տե՛ս պիղծին ու գարչելուն: Երբ սրանով չկարողացավ վնաս տալ և իրեն պարտված տեսավ, այլ եղանակով փորձեց, ինչի մասին էլ պատմում է ավետարանիչը:

Այդ ժամանակ սատանան Նրան առավ տարավ Սուրբ Քաղաք, կանգնեցրեց Տաճարի աշտարակի վրա (Դ 5)

և ասաց Նրան. «Եթե Աստծո Որդի ես, Քեզ այստեղից վա՛յր գցիր. որովհետև գրված է. «Իր հրեշտակներին պատվիրել է քեզ համար, և իրենց ձեռքերին կառնեն քեզ, որպեսզի ոտքդ քարին երբեք չզարնես» (Դ 6):

Տե՛ս մեր Տիրոջ հեզությունը: Հասնում էր այնտեղ, ուր փորձողն էր կամենում, և

սա անուժ էր, որպեսզի չարիմաստին նրա խորագիտության մեջ պարտության մատնի:

Իսկ ինչո՞ւ [փորձիչը] նույն անապատում¹⁸⁵ չփորձեց, ինչպես առաջին [դեպքում], [այնտեղ] կային թերևս ավելի՛ բարձրադիր վայրեր, քան Տաճարի աշտարակը: Սակայն այնտեղ տեսնող չկար, իսկ այստեղ՝ բովանդակ քաղաքը, ուստի [փորձիչը] կարծում էր, որ [Հիսուսը] խնդրանքը կկատարի տեսնողներից գովեստ ու փառք ձեռք բերելու համար: Եվ թեև այդ Տաճարն ավերվեց՝ ըստ Տիրոջ խոսքի¹⁸⁶, բայց այն աշտարակը, որը Տերը բարձրացավ, մնաց ի հիշատակ Նրա:

Եվ ի՞նչ ասաց [փորձիչը]. «Եթե Աստծո Որդի ես, Քեզ այստեղից վա՛յր գցիր»: Սրանով երկու փորձության սկիզբ է դնում: [Ասում է]. «Եթե Աստծո Որդի ես»: Ինչպես որ առաջին մարդու առաջ չարախոսեց Աստծուց, թե՛ «Խաբել է քեզ՝ ասելով, որ չուտես պտղից, որովհետև երբ ուտեք, ձեր աչքերը կբացվեն, և աստվածների պես կլինեք»¹⁸⁷, [այդպես էլ] նույնն այստեղ է ակնարկում: «Եթե Աստծո Որդի ես, ցո՛ւյց տուր, – ասում է, – Նրա գործությունը՝ կամ քարերը հաց դարձնելով, ինչպես վայել է Արարչին,

կամ էլ ներքև գցվելով և անվնաս մնալով, որպեսզի բոլորը տեսնեն ու հավատան Քեզ: Ապա թե ոչ՝ անտեղի՛ կոչեց Քեզ «Որդի», խաբե՛ց [աստվածային] պարզեցումների անուժով»:

Իսկ ինչո՞ւ Քրիստոսը չբարկացավ, այլ մեծ հանդարտությամբ [պատասխանեց]: Ինչպես որ [փորձիչը] մարգարեից վկայություն բերեց, այդպես էլ [Քրիստոսը Սուրբ] Գրքի [վկայությամբ] պատասխանեց.

Գրված է, – ասաց. – «Չփորձե՛ս քո Տեր Աստծուն» (Գ 7):

Որպեսզի մեզ հասկացնի, որ սատանային պետք է հաղթել ոչ թե հրաշագործություններով, այլ խոնարհությամբ ու համբերատարությամբ և հաղթանակն Աստծուն վերագրել:

Նկատի՛ ունեցիր, որ [չարի] բերած վկայությունն անմտություն էր և իրավիճակին անհամապատասխան: Որովհետև գրված այդ [խոսքը]. «Իր հրեշտակներին պատվիրել է պահել քեզ», չի ենթադրում, թե [մեկն] իրեն վայր պիտի գցի ու քարավեժ լինի, ոչ էլ թե իրեն վայր պիտի գցի, եթե Աստծո որդի է: [Դա] սատանային ու նրա

դևերին է հատուկ, որ [երկնքից] վայր գցվեցին սկզբում: Իսկ Աստծուն հատուկ է ընկածներին բարձրացնել:

Եվ Քրիստոսը շատ դիպուկ պատասխան տվեց. «Գրված է. «Չփորձե՛ս քո Տեր Աստծուն»: Այս խոսքի իմաստն էլ էր բավական ըմբերանելու [չարին]: Որովհետև [Տերը սրանով] խրատում է մարդկանց, որ թեկուզ առաքիլն էլ մեկը լինի, իրեն կամավորապես չպիտի մատնի չարի փորձությանը՝ ասես փորձելով Աստծուն, թե արդյոք կօգնի՞, թե ոչ: Եվ ինքը [Տերն] էլ հրամայում է ազոթել, որ փորձության չենթարկվենք¹⁸⁸:

Թեև [սատանայի բերած] վկայությունն անհամապատասխան էր իրավիճակին, սակայն [կատարվել էր] մեծ խորամանկությամբ: Որովհետև մարգարեից վկայաբերեց մինչև այն խոսքը, որն իր մասին չէր, իսկ ինչ որ գիտեր, որ իր մասին էր ասված՝ «Իժի և քարբի վրայով կքայլես» (Սաղմ. Գ 13), չասաց: Տերն էլ նրան այդ ժամանակ չհանդիմանեց, բայց հետո իր աշակերտներին իշխանություն տվեց կոխտելու նրան՝ նմանեցնելով նրան օձի և կարիճի¹⁸⁹, որոնց մասին մարգարեն, պարզ է, իբրև [սատանայի

և դևերի] մասին է ասել և ոչ թե Տիրոջ: Եվ թեպետ [Տերն] այստեղ չկատարեց խորամանկի խնդրանքը, որպեսզի [վերջինս] չպարծենա, թե [կարողացել է] խաբել, սակայն երբ [Տիրոջ] վրա կատաղածները [կամենում էին Նրան] գահավեժ անել, գրված է, որ, նրանց միջով անցնելով, օդի միջով գնաց ուր ինքը կամեցավ¹⁹⁰: Նույն այդ մարմնով էլ հետո երկինք բարձրացավ, որպեսզի թշնամուն, ով իր վայր ընկնելն էր պահանջում, ցույց տա, որ դա՛ է Աստծուն վայել և ո՛չ թե անկումը, որ պատշաճ է [սատանային]:

Երբ [չարը] սրանում էլ պարտություն մատնվեց, խաբեություն մի ուրիշ հնար մտածեց:

Սատանան, – ասում է [ավետարանիչը], – դարձյալ առավ տարավ Նրան մի հույժ բարձր լեռ և Նրան ցույց տվեց աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառքը (Գ 8):

Եվ ասաց Նրան. «Այս ամենը Քեզ կտամ, եթե [առջևս] ընկնես, երկրպագես ինձ» (Գ 9):

Որ ասում է, թե «առավ տարավ», թող ոչ ոք չկարծի, թե բռնությամբ և [Տիրոջ] կամքին հակառակ տարավ, որովհետև [սատա-

նան] այսպես չի կարող վարվել նույնիսկ մարդկանց հետ: Այլ ինչպես առաջ էլ ենք ասել, [Տերն] էր թույլ տալիս, որ նա մտքում դներ լեռ ելնելու ցանկուլթյունը, ինչպես և աշտարակ [բարձրանալու դեպքում]: Իսկ ինքը չէր ընդգիծանում, այլ կամավորաբար շարժվում էր նրա ցանկուլթյան համաձայն, որպեսզի փորձվի դրանով և հաղթի, ինչպես նախորդ դեպքերում: Ուրեմն սա՛ է ասելը. «Սատանան առավ տարավ Նրան»:

Իսկ ո՞ր մեկը պիտի հասկանանք որպես այնպիսի բարձր լեռ, որտեղից տեսանելի են բոլոր թագավորությունները: Նյութական լեռներից և ո՛չ մեկը: Կամ էլ հայտնի չէ, թե կա այդպիսի [լեռ]: Որովհետև թեպետ ոմանք ասացին, թե դա դրախտն է՝ երկրից ավելի բարձր լինելու պատճառով, և քանի որ առաջին Ադամն այնտեղ էր փորձվել, ապա վայել էր, որ երկրորդ Ադամն էլ այնտեղ հաղթեր մեզ հաղթողին, սակայն անպատշաճ է կարծել, թե այնտեղից երևում են աշխարհի բոլոր թագավորութունները: Որովհետև եթե այն չի երևում այս աշխարհից, մենք ինչպե՞ս [կերևանք] այնտեղից: Եվ եթե տեսնելու հնարավորութուն չկան լինել կա՛մ այնտեղից, կա՛մ

մի ուրիշ տեղից, լեռների գլուխներն ու աննշմարելի վայրեր [հնարավոր կլինել] տեսնել մարմնավոր աչքերով և ո՛չ թե թագավորութուններն ու նրանց փառքը: Իսկ եթե մեկն ասի, թե որտեղ էլ որ [Քրիստոսը] լինել, մարմնավոր աչքերով տեսնելու կարիք չէր ունենա, քանի որ ամեն ինչ ամենատես Բնության աչքերի առաջ է, այս բացատրութունն էլ է թերի: Որովհետև թեպետ իրո՞ք այդպես է, սակայն եթե փորձիչն իմանար, որ [Հիսուսն] ամենատես է, չէր համարձակվի Նրա առաջ կանգնել և այդպիսի բաներ խոսել:

Հավանաբար սա՛ է հավաստի, որ [սատանան] իսկապես Նրան լեռ է բարձրացրել՝ ըստ ավետարանիչների պատմածի, որևիցե վայրում, և Նրա առաջ զանազան եղանակներով ներկայացրել աշխարհի թագավորների փառքն ու վայելչութունը, ոչ թե նյութական աչքերին տեսանելի կերպով, այլ միայն խոսքով. կամ հայտնապես խոսելով, ինչպես սրբերից ոմանց հետ, կամ էլ [մտքի] խորհուրդների միջոցով, ինչպես ամեն մարդու հետ: Եվ սա հավաստում է Ղուկասը՝ ասելով, որ [սատանան] Նրան ամեն ինչ «ցույց

տվեց ժամանակի մի վայրկյանում»¹⁹¹: Ոչ թե մարմնի աչքերի, այլ մտքի առաջ ցանկալի ցույց տվեց բոլոր վայելչությունները: Ապա ասաց. «Այս ամենը Քեզ կտամ, եթե [առջևս] ընկնես, երկրպագես ինձ»:

Տե՛ս լրբի չարությունը: Ասում էր, որ իրեն երկրպագի Նա, Ում առաջ խոնարհվում է ամեն ծունր:

Իսկ ինչո՞ւ այսպիսի հանդուրժում ցուցաբերեց: Որովհետև նախորդ փորձություններով չկարողացավ իմանալ, թե [Հիսուսն] ով է, կամեցավ զայրացնել ժպիրհ խոսքերով, որպեսզի լրբությունը չհանդուրժելով՝ [Հիսուսը] հայտնի իր գորությունը, թե Նա՛ է:

Բայց ինչո՞ւ մյուս [փորձություններում սատանան] ասում էր. «Եթե Աստծո Որդի ես», իսկ այստեղ՝ ոչ: Որովհետև այն ժամանակ կամենում էր պատվելով խաբել, իսկ այժմ խոնարհեցնելով կսկծեցնել, որպեսզի ասեր. «Հիմա իմացա, որ քո մասին վկայությունը սուտ էր, որովհետև Աստծո Որդու գորությունը ցույց չտվիր, ինչպես խնդրեցի: Եվ ուրեմն, քանի որ հողեղեն մարդ ես, տո՛ւր ինձ այն, ինչ պահանջում եմ, որպեսզի ես էլ տամ քեզ այս աշխարհի վայելքները»: Սովորակա՛ն

երկրպագություն չի պահանջում, այլ երեսնիվայր, ինչպես միայն Աստծուն է վայել: Եվ սրանով ճանաչվում է [սատանայի] հպարտությունը, որով նաև սկզբում հակառակեց Աստծուն:

Ղուկասը հակառակորդի այս խոսքերին նաև ուրիշն է ավելացնում. «Որովհետև ինձ է [տրված¹⁹² այս ամենը], – ասում է [սատանան], – և ում կամենում եմ, նրան եմ տալիս սա» (Ղուկ. Գ 6): [Վերջին խոսքից ելնելով]՝ ոմանք սխալմամբ [այդ ամենը] համարում են [սատանայի] ստեղծագործությունը, բայց հանդիմանվում են մյուս խոսքով՝ «ինձ է տրված», որով ցույց է տրվում, որ այս գոյությունների արարիչն ուրիշն է, իսկ [սատանային] թուլյտվությամբ է տրված: Եվ այն, որ ասում է. «Իշխանություն ունեմ ամեն ինչի վրա և ում կամենում եմ, նրան եմ տալիս», այդ իշխանությունը ոչ թե բռնատիրությամբ ունի, այլ իշխվողներն են կամեցել, [որ նա իշխի իրենց վրա]: Ինչպես ասում է Պողոսը. «Ում ծառայության համար որ պատրաստում եք ձեզ, նրա էլ ծառան եք՝ լինի մեղքի, թե արդարության» (Ռմմտ. Հոմմ. 9 16):

Բայց նաև զարմանալ կարելի է չարի հիմարուլթյան վրա, թե ինչպե՞ս չմտածեց. «Նթե ասեմ, որ ամեն ինչ իմն է և ում կամենում եմ, նրան եմ տալիս, [Հիսուսը] կասի. «Հապա ինչո՞ւ քեզ կուռքերի միջոցով միշտ երկրպագուլթյուն մատուցող հեթանոսներից մեկին չտվեցիր տիրել ամեն ինչի վրա և ինձ ես խոստանում տալ: Ահա՛ դրանով սուտ ես դուրս գալիս. որովհետև ոչ թե քոնն է տալու [իրավունքը], այլ դրանց Արարչի, Նրա, Ով ասաց. «Իմն է ոսկին և իմն է արծաթը (Անգե Բ 8), և տալիս եմ դրանք՝ ում կամենում եմ»:

Բայց Տերը [սատանային] որևէ այսպիսի պատասխանի արժանի չհամարեց, այլ տիրաբար սաստելով նրան՝ ասաց.

Հետև'ս գնա, սատանա՛ (Դ 10):

«Սատանա» բառը, եբրայերենից մեր [լեզվին] թարգմանվելով, նշանակում է «հակառակորդ», ով և հենց սկզբից հակառակ գտնվեց Աստծուն և մարդկանց:

Բայց ինչո՞ւ է [Տերն] այժմ սաստում նրան և ո՛չ նախորդ [դեպքերում]: Որովհետև [սատանան այս անգամ] մեղանչեց Հո՛ր հանդեպ՝ Նրա արարածներին իրենը համարելով: Սրանով

[Տերը] սովորեցնում է մեզ մեր անձի հանդեպ թշնամանքի դեպքում ներող լինել, իսկ ընկերների [հանդեպ թշնամանքի դեպքում]՝ վրեժխնդիր, ինչն ինքը գործեց հրեաների առնչուլթյամբ: Երբ [Իրեն] դիվահար էին կոչում, չէր զայրանում, բայց երբ թշնամանք էին ցուցաբերում Հոր հանդեպ, նրանց կոչում էր սատանա հորից եղածներ¹⁹³: Այդպես էլ ասաց, որ Հոգու հանդեպ հայհոյուլթյունն աններելի է, բայց Իր հանդեպ եղածն արժանի է ներման¹⁹⁴:

Սակայն [Տերը] ոչ թե ըստ արժանվույն սաստում է [սատանային], այլ միայն հրամայում է: Որովհետև «Հետևս գնա» ասելը հրամայական [նախադասուլթյուն] է, որով հրամայում է [չարին] Իրենից հեռանալ, այն էլ՝ ժամանակավորապես՝ ըստ Ղուկասի գրածի¹⁹⁵, քանի որ թեպետ դրանից հետո [սատանան] անձամբ չէր պատերազմում, ինչպես այժմ, սակայն, մտնելով օրենսդատների և փարիսեցիների մեջ, վիճում էր Նրա հետ, մինչև որ Նրան նաև խաչել տվեց:

Այս սաստը նաև այն է ցույց տալիս, որ նա, ով երկրպագուլթյուն էր պահանջում, [Հիսուսի] մի փոքր սաստից (երբ կամեցավ

[սաստել]) չկարողացավ մնալ տեղում, ինչից հասկացվում է, որ [Հիսուսը] կամովին էր իրեն փորձուլթյան հանձնել և ո՛չ թե ա-կամա մատնվել, ինչպես մենք: Եվ երբ սաստելով հայտնեց իր աստված լինելը, Օրենքից վկայություն բերելով դարձյալ իջավ մեր մարդկության խոնարհուլթյանը:

Գրված է, – *ասաց*, – Քո Տեր Աստուծոն կերկրպագես և միայն Նրա՛ն կպաշտես:

Պետք է Աստուծուն երկրպագել իբրև Արարչի և Տիրոջ, իսկ պաշտել՝ պատվիրանների կատարմամբ, որովհետև դրանցով է Աստված պաշտվում մեր կողմից: Այս [խոսքով Հիսուսը] ցույց տվեց, որ ըստ իր մարդկության ինքն էլ է մեկ Աստվածության երկրպագող ու ծառա, որովհետև Նույնն է թե՛ մարմնով երկրպագողը, թե՛ իր այդ մարմնին, ըստ իր աստվածության, երկրպագուլթյուն ընդունողը բոլոր արարածներից: [Եվ Նույնը] ծառա դարձավ, ինչպես ինքն ասաց. «Չեկա ծառայուլթյուն ընդունելու, այլ ծառայելու» (Մատթ. Ի 28):

Այս երեք փորձուլթյուններն են հանվանե հիշատակվում, սակայն հավանաբար ուրիշ-

ներն էլ են եղել՝ ըստ Ղուկասի, ով ասում է. «Երբ սատանան վերջացրեց բոլոր փորձուլթյունները...» (Ղուկ. Դ 13): Որովհետև «բոլոր» ասելը բազմաթիվ լինելն է ցույց տալիս, բայց [միայն] գլխավորների մասին գրելով՝ մնացածը սրանց ներքո ամփոփեցին՝ հուշե-լով, որ ով հաղթում է այս երեքին՝ որևի-մուլթյանը, փառասիրուլթյանն ու ազահու-լթյանը, հաղթում է նաև [մնացած] բոլոր ախտերին: Իսկ ով հաղթվում է սրանցից, ընկ-նում է սրանց ստորագասվող մնացած [ախտերի] ծառայուլթյան տակ ևս: Ինքը փոր-ձիչն էլ, սկսելով փոքրից՝ որևիմուլթյու-նից, հասավ մեծին՝ ազահուլթյանը (քանի որ [վերջինս] բոլոր ախտերից առավել զոր-վոր է, երբ տիրում է), ինչպես որ Հոբի վրա էլ ամենասաստիկ հարվածը վերջում բերեց: Սա նաև պատերազմողներն են անում. ավե-լի սաստիկ մարտը հետո են վարում:

Ուստի, ինչպես որ նախահորը [սատա-նան] այս երեքով փորձեց ու պատրեց՝ որև-րամուլթյամբ, քանի որ պտուղը ցանկալի ցույց տվեց, փառասիրուլթյամբ, քանի որ ու-տելուց հետո աստվածանալու հույս ներ-չնչեց, և ազահուլթյամբ, քանի որ մղեց նրան

բոլոր ծառերից վայելուժը բավական չհամարելու և ստիպեց ուտել նաև այն մեկից, որի վրա Աստված արգելք դրեց: Եվ ինչպես որ հին Ադամի հետ մարտնչեց սրանցով, այդպես էլ՝ Նոր Ադամի հետ. որկրամոլությամբ, թե՛ «Ասա՛, որ այս քարերը հաց դառնան», փառասիրությամբ՝ «Քեզ այստեղից վա՛յր գցիր՝ աստվածությունդ ցույց տալու համար», և ազահուցությամբ՝ «Քեզ կտամ, – ասաց, – այս աշխարհի փառքը, եթե երկրպագես ինձ»: Եվ [Հիսուսը] նրա հետ պատերազմեց մեր այս բնությամբ և հաղթեց աստվածային զորությամբ՝ սովորեցնելով մարդկանց [սատանայի դեմ] պատերազմելու կերպը: Որովհետև մեր մեջ էլ նույնն է [սատանայի] մարտի սկիզբը. որկրամոլությամբ պահանջում է նաև մեզնից, ինչպես Տիրոջից, որ քարերը հաց դառնան, այսինքն՝ ստիպում է մոտենալ ավելորդ կերակուրներին ու շատ ըմպելիքների, որոնք ժուժկալների համար անուտելի են, ինչպես քարերը: Երբ [մարդը] դրանք ընդունում է, [չարը] սրանով չի սահմանափակվում, այլ նաև գրգռում է դեպի անասնական ցանկությունը, ինչպես Ադամին՝ պտղի [ճաշակումից] հետո: Բայց երբ

ընդդիմանում ենք [Աստծո] կենդանարար խոսքով, որն աշխարհին կյանք է տալիս, նրանով բարձրանում ենք տաճարի շտաբակը: Այստեղից էլ [չարը] ստիպում է մեզ¹⁹⁶ վայր գցվել, [այսինքն]՝ կամ հպարտությամբ կործանվել, կամ էլ փառքի կամ ինչքի համար, խոսքի վաճառական դառնալով, գործերը մարդկանց հաճոյանալու համար կատարել: Բայց եթե սրան էլ ենք ընդդիմանում՝ խոսքն ըստ Տվողի կամքի ունենալով կամ խոսելով և Աստծուն հաճոյանալու համար գործելով, այնուհետև [սատանան] առաքինության բարձր լեռից նայել է տալիս նյութական բաների հանդեպ սիրուն և ազահուցության ախտի միջոցով, որով խոստանում է [նյութականը պարգևել], պահանջում է երկրպագել իրեն: Եթե արհամարհում ենք սա ևս՝ կա՛մ ինչք չընդունելով, կա՛մ էլ անհրաժեշտն ու ընդունածը Աստծուն տալով, [սատանան] ամաչելով փախչում է մեզնից, և մեզ սպասավորում են հրեշտակները, ինչպես Տիրոջը՝ հաղթանակից հետո՝ ըստ ավետարանչի, ով ասում է.

Ապա սատանան Նրան թողեց, և ահա հրեշտակները մոտեցան և ծառայում էին Նրան (Գ 11):

Հրեշտակները հեռու չէին Նրանից, մոտ էին: Որովհետև եթե Հրեշտակների բանակը շրջապատում է Տիրոջից երկյուղածներին¹⁹⁷, որքա՛ն առավել Հրեշտակների և սրբերի Տիրոջը: Սակայն քանի դեռ [Տերը] պատերազմում էր, թույլ չէր տալիս, որ նրանք երևան, որպեսզի թշնամին չկարծեր, թե հաղթանակը նրանց օգնություն էր հղել: Այլ նախ հալածեց նրան և ապա հայտնեց Հրեշտակներին, որպեսզի դու սովորես, որ քո փորձություն ժամանակ էլ Հրեշտակները մոտ են և հաղթանակիցդ հետո քեզ երկինք են ընդունելու, ինչպես որ Ղազարոսին էլ ցավերից ու սովամահ լինելուց հետո Հրեշտակները հանգստացրին Աբրահամի գոգում¹⁹⁸:

Սակայն ի՞նչ է պետք հասկանալ այդ ժամանակ հրեշտակների ծառայություն մատուցելը: Երևում է, ինչպես ասում են ոմանք, դա կերակուր մատուցելն էր [Հիսուսին] մարմնի բնություն կարիքների համար, բայց ոչ թե այստեղ եղած [կերակուրները], այլ որոնք հենց այդ ժամին [Տերը] ստեղծում էր արարչագործություն: [Ստեղծում էր] ոչ թե կարիքից հարկադրված, Նա, Ով մեզ պես չէր հարկադրվում [անելու] այն, ինչ չէր կամենում, այլ որ-

պեսզի ամաչեցներ փորձին, ով պահանջում էր քարերը հաց դարձնել: Յուլյոս տվեց, թե «Ոչ միայն քարերից, այլև ոչնչից կարող եմ կերակուր ստեղծել, երբ կամենամ, որով արդարացվում է Հայրը, որ Ինձ Որդի կոչեց»:

Հարկավոր է քննել, թե ավետարանիչներն ինչպե՛ս են գրել այն փորձությունների մասին, որոնք իրենց աչքով չէին տեսել, քանի որ [Տերը] միայնակ էր անապատում, պատերազմն անմարմնական էր, և Տիրոջից էլ չէին լսել [այս մասին], որովհետև վայել չէ մտածել այսպիսի բան. չի երևում, թե որևէ սուրբ պատմել է իր փորձությունների ու հաղթանակների մասին: Այլ այս մասին թող հավաստի [համարվի] հետևյալը: Ինչպես որ Հոբին փորձության ենթարկելու համար [սատանայի]՝ Աստծուն խնդրելու մասին¹⁹⁹ հնարավոր չէր, որ մարդը գրեր [այլ կերպ], եթե ոչ՝ աստվածային հայտնություն, քանի որ խոսակցությունն անմարմինների միջև էր տեղի ունեցել, և ինչպես որ Մովսեսը, թեպետ արարչագործությունը ներկա չէր, սակայն Հոգով գրեց Աստծո խոսելու և գործելու մասին, այդպես նույն Հոգով էլ [ավետարանիչները] գրեցին, թեև չէին տես-

սել ու լսել: Սրանից էլ պարզ է դառնում, որ ոչինչ չեն խոսել մարդկային իմաստությամբ, այլ Սուրբ Հոգուց շարժված, ո՛չ միայն սա, այլ Ավետարանի բոլո՛ր խոսքերը:

Սակայն փորձությունների հերթագայությունը Մատթեոսն ա՛յլ կերպ է ներկայացնում, Ղուկասը՝ այլ: Երկուսն էլ հույժ խորհրդաբար են [այդպես վարվում]: Մատթեոսը պահեցողության [փորձությունից] հետո Տաճարի աշտարակի [փորձությունն] է ներկայացնում և ապա՛ լեռան, ինչը ցույց է տալիս հաղթողների օրինակը: Երբ մեկը պահքով է ճգնում, փորձիչը [նրա հետ] փառասիրությամբ է պատերազմում, և եթե դրանից [մարդը] չի ընկճվում, [փորձիչը] ջանում է [ընկճել] ազահոլթյան ախտով: Եթե սրան էլ է [մարդն] ընդդիմանում, հաղթում է չարի խորհուրդին: Իսկ Ղուկասը պահեցողության [փորձությունից] հետո նախ լեռան [փորձությունն] է ներկայացնում և ապա՛ աշտարակին: Սա ցույց է տալիս պարտվողների կարգը: Երբ մեկը հաղթվում է որևէ րամոլությունից, հարկադրված հանձնվում է ազահոլթյանը՝ որովայնի պես—պես ցանկությունները բավարարելու համար: Եվ մինչ

սրանց մեջ ուզածի պես ուռճանում է, մտածում է փառքի բարձունքի մասին՝ ո՛չ աստվածային բաների, այլ աշխարհի հարստության: Սրանից էլ հաղթվելով՝ չարի ծառայության տակ է ընկնում:

Ի՞նչ պետք է հասկանալ Աստուծոյի այն խոսքը, թե [Տերը] գազանների հետ էր²⁰⁰: Հասկանում ենք, որ սա ասվում է ոչ միայն խոր անապատի պատճառով տեսանելի գազանների հետ լինելու մասին, այլև աներևույթ գազանների, ոչ թե մեկ կամ սակավաթիվ, այլ բոլոր: Թեպետ տեսնում ենք, որ փորձությունների հարցումներն ուղղվում են մեկի կողմից, այսինքն՝ դեերի իշխանի, սակայն նրա հետ էր նաև նրա բովանդակ գունդը, որը նրա հետ ընկավ երկնքից, և նրանց է [Մարկոսը] «գազաններ» կոչում հոգնակի թվով: Որովհետև երբ տեսան ու լսեցին Հորդանանում [Հիսուսի] հետ տեղի ունեցած նորահրաշ բաները, ահով լցվեցին, և երբ Նա այն անապատը ելավ, հավաքվեցին այդ պատճառով տարբեր փորձություններով տեսնելու Նրա զորությունը:

Պետք է քննել նաև այն, թե ինչո՛ւ երեք ավետարանիչները գրեցին փորձություններ

րի մասին, իսկ Հովհաննեսը՝ ոչ: Պատճառն այն է, որ այդ փորձություններն ըստ մարդկային բնույթյան էին, և [առաջին երեք ավետարանիչները Տիրոջ] մարդեղուկությունից սկսեցին պատմել, ուստի իրավացիորեն գրեցին նաև փորձությունների մասին: Իսկ Հովհաննեսը, քանի որ սկսեց [գրել] Նրա աստվածությունից, չէր կարող [փորձությունների] մասին գրել, որովհետև Աստված չի փորձվում որևէ կերպ՝ ըստ Հակոբոս առաքյալի²⁰¹:

Երբ Հիսուսը լսեց, որ Հովհաննեսը մատնվել է, հեռացավ գնաց Գալիլեա (Գ. 12):

Բազմաթիվ են Տիրոջ այն գործերն ու խոսքերը, որոնք ավետարանիչները չեն գրառել: Դա նաև այստեղ է երևում. որովհետև փորձությունից հետո Նրա հրաչքների և ուսուցանածների մեծ մասը Մատթեոսը թողնում է և սկսում Հովհաննես [Մկրտչի] մատնությունից: Այս բացը լրացնում է Հովհաննես [ավետարանիչն] ըստ Հոգու հայտնություն, այսինքն՝ [ներկայացնում է Կանայի] հարսանիքի ժամանակ գինին ջրի վերածելը, որը [Հիսուսի] հրաչափորձությունների

սկիզբն է համարում, հրեաների Զատիկի ժամանակ Երուսաղեմ գնալը և վաճառողներին ու գնողներին Տաճարից վտարելը, Նիկոդեմոսի՝ [Հիսուսի] մոտ գալը գիշերով ու հավատալը, [Տիրոջ]՝ նրան ուղղած խոսքերը, աշակերտներով հանդերձ շրջելը Հրեաստանում և մկրտելը: Եվ այս ամենից հետո է, որ Հովհաննես [Մկրտչի] մասին գրում է, թե «մկրտում էր Հայենոսում՝ Սաղիմի մոտ... քանի որ Հովհաննեսին դեռ չէին բանտարկել» (Հովհ. Գ. 23, 24):

Իսկ Ղուկասը գեղեցիկ կերպով է շարադրում պատմությունը փորձությունից հետո: Ասում է. «Եվ Հիսուսը Հոգու զորությունով վերադարձավ Գալիլեա» (Ղուկ. Գ. 14), այսինքն՝ նույն Հոգով, Ով Նրան տարավ անապատ՝ փորձվելու: Երբ [Հիսուսը] ծածուկ պատերազմում հաղթեց, [Հոգին] զորությունով վերադարձրեց [Նրան Գալիլեա], որպեսզի Նա նաև հայտնապես վանի դևերին՝ վտարելով մարդկանցից:

Իսկ թե ինչու [ավետարանիչներն] ամեն ինչ չեն գրել, որպեսզի չկարծես, թե միայն այն հրաչքներն են գործվել Նրա կողմից, որոնց մասին գրվել է, [արդեն] նշված պատ-

ճառներինց բացի, կա նաև հետևյալը: Ամեն ինչ չգրելու պատճառը հայտնում է Հովհաննես [ավետարանիչը]. որովհետև [այդ ամենը] չէր կարող, ասում է, տանել աշխարհային միտքը²⁰²:

Սակայն Մատթեոսն ու Մարկոսն անխորհրդաբար չէ, որ սկսում են Հովհաննեսի մատնությունից: [Սրանով] ցույց են տալիս նրա լռելն ու նոր քարոզության սկիզբը:

Իսկ ինչո՞ւ [Հովհաննեսի] մատնության պատճառը [ավետարանիչն] այժմ չի գրում: Թողնում է, որ գրի նրա սպանվելուց հետո, երբ [դրա հետ կապված] բոլոր իրողությունները կատարված լինեն: Ուստի ասում է. «Երբ Հիսուսը լսեց, [որ Հովհաննեսը մատնվել է], հեռացավ գնաց Գալիլեա»:

Իսկ ինչո՞ւ են ասում, որ հեռացել է: [Տերը հեռանում է], որպեսզի սովորեցնի մեզ խրոխտանալով ինքներս մեզ չմատնել փորձության, այլ երբ մեր կամքից անկախ վշտեր պատահեն, համբերությամբ տանել:

Եվ թողնելով Նազարեթը, — ասում է [ավետարանիչը], — եկավ բնակվեց Կափառնալուսում՝ ծովեզրին՝ Ջաբուղոնի և Նեփթաղիմի սահմաններում (Գ 13):

Որքան պետք էր, որ մարգարեությունն իրականանար, [Հիսուսն այնքան] բնակվեց Նազարեթում, իսկ մկրտությունից հետո տեղափոխվեց այնտեղից, որպեսզի ուրիշ կողմերում էլ քարոզի: Նաև հեռացավ նազովրեցիներից այն չար նախանձի պատճառով, որն ունեին Նրա հանդեպ, ինչպես և հանդիմանեց նրանց՝ [ասելով]. «Մարգարեն ընդունելի չէ՛ իր գավառում» (Ղուկ. Գ 24), երբ, [Նրան] փորձելով, Եսայու գիրքը տվեցին Նրան և ընթերցեց [մի հատված]: [Սա ասաց]՝ հիշատակելով Եղիայի և Եղիսեի ժամանակ կատարված հրաշքների մասին, և Նրան հասցրին մինչև լեռան ծայրը՝ կամենալով գահավեժ անել, սակայն Նա անցավ գնաց նրանց միջից²⁰³: Իջավ Կափառնալուսում, որպեսզի մարգարեությունն իրականացնի և բոլոր երկրների ուսուցիչներին որսա, քանի որ այնտեղ էին շրջում: Թեև Նա ինքն էր կամենում հեթանոսների սահմանները գնալ, սակայն կամենում էր նաև, որ հրեաների կողմից էլ պատճառ ստեղծվեր, ինչը եղավ, երբ նենգություն գործեցին Կարապետի հանդեպ: Ուստի արդարացիորեն թողեց նրանց և գնաց հեթանոսների Գալիլեան:

Որպեսզի իրականանա Եսայի մարգարեի մի-
ջոցով ասված խոսքը (Դ 14).

«Երկիր Զաբուդոնի և երկիր Նեփթաղիմի, ծովի
ճանապարհ՝ Հորդանանից այն կողմ, Ռեթանոսնե-
րի Գալիլեա (Դ 15):

Խավարում նստած ժողովուրդը մեծ լույս տե-
սավ, և երկրում ու մահվան սովերներում նստած-
ների համար լույս ծագեց»²⁰⁴ (Դ 16):

«Զաբուդոն»-ը թարգմանվում է «բնակու-
թյան զորութուն»²⁰⁵, քանի որ այնտեղ
բնակվեց Հայր Աստծո զորութուն Որդին:
Իսկ «Նեփթաղիմ»-ը [թարգմանվում է] «բն-
դարձակութուն»²⁰⁶, քանի որ այնտեղից
սկսեց տարածվել Քրիստոսի վարդապետու-
թյունը: «Ծովի ճանապարհ» ասելով՝ փրկու-
թյան ավետիսն է տալիս ծովեզերքում ու
կղզիներում գտնվողներին, իսկ խորհրդան-
շաբար՝ աշխարհի ծովում կյանքով ճանա-
պարհորդողներին [հրավիրում է] բարձրա-
նալ վերին աշխարհը: «Հորդանանից այն
կողմ՝ հեթանոսների Գալիլեա». այս մեկ
վայրով ցույց է տալիս բոլոր հեթանոսնե-
րին: Իսկ «ժողովուրդ» բառով նկատի է առ-
նում այս ամբողջ աշխարհը: Ասում է. «Խա-
վարում և մահվան սովերներում նստած ժո-
ղովրդի համար լույս ծագեց»: Այստեղ տե-

սանելի խավարը նկատի չունի, այլ մոլորու-
թյունն ու անգիտութունը, որոնք նաև
«մահվան սովեր» է կոչում, այսինքն՝ հավի-
տենական մահվան պատճառ: «Լույս» էլ
[կոչում է] ոչ թե այս [նյութական լույսը],
որը միշտ տեսնում էին մարմնավոր աչքե-
րով, այլ ճշմարիտ գիտութունը, որը միայն
մտքին է տեսանելի: Այն կոչում է «մեծ
լույս», և դա Հոր Իմաստութունն է, ինչպես
և Ինքն է Իրեն «աշխարհի լույս» կոչում²⁰⁷:

Նաև անպատշաճ չի լինի, եթե մեկը [հա-
մարի], որ մարգարեի խոսքի մի մասը վերա-
բերում է հրեաներին, մյուսը՝ հեթանոսներին:
Որովհետև «խավարում նստած ժողովուրդը
մեծ լույս տեսավ» խոսքը հրեաներին է պատ-
շաճում. թեպետ ունեին Օրենքի ճրագը, սա-
կայն միշտ չէին լուսավորվում՝ օրինազանց
լինելով: Իսկ նրանով, որ ասում է «երկրում
ու մահվան սովերներում նստածներ», նկա-
տի ունի հեթանոսներին, ովքեր այս աշխար-
հի տարերքների ծառայության ներքո էին
գտնվում և նստած էին կռապաշտության
մեջ՝ ասես մահվան սովերների տակ: Ուստի
հրեաների համար [մարգարեն] մահվան
սովերի մասին չի խոսում, քանի որ ճանա-

չում էին [ճշմարիտ] Աստծուն, և նրանք էլ, ասում է, «մեծ լույսը տեսան», այսինքն՝ մարմնավոր աչքերով [տեսան] Քրիստոսին, իսկ հեթանոսների համար չի ասում, թե «տեսան», այլ թե՝ «նրանց համար լույս ծագեց», այսինքն՝ [ծագեց] խոսքը՝ առաքյալների միջոցով, որոնց նույնպես [Տերն] «աշխարհի լույս» անվանեց²⁰⁸: Բայց խավարում նստելը [մարգարեն] ասում է երկուսի համար էլ, որովհետև բոլորն էլ մեծ չարիքների մեջ էին գտնվում՝ ասես բանտում շղթայված, ինչ պատճառով ասես գիշերվա աղջամուղջում նաև քայլել չէին կարողանում, որ խավարի միջից դուրս գային, այլ դրա մեջ նստած էին [մնում], ինչն անհուսուլթյան նշան է:

Այնուհետև Հիսուսը սկսեց քարոզել և ասել. «Ապաշխարե՛ք, քանզի մոտեցել է երկնքի արքայությունը» (Դ 17):

«Այնուհետև»: Ե՞րբ: Հովհաննեսին բանտ նետելուց հետո: Իսկ ինչո՞ւ Հովհաննեսից առաջ չքարոզեց: Որովհետև պետք էր, որ Հովհաննեսը գար ու Նրա մասին վկայեր, և ապա՝ Նա հայտնվեր ու քարոզեր: Սակայն, ասում են, ինչո՞ւ Նա Հովհաննեսի վկայության կարիքն ուներ, երբ

Նրա գորավոր գործերը բավական էին վկայելու համար: Սրանով իմացիր Հորը Նրա պատվակից լինելը: Որովհետև ինչպես Հայրը, Նա նույնպես Իր մարգարեներն ուներ՝ չնայած նրան, որ դրանք Հո՛ր [մարգարեներն] էին: [Հովհաննեսի] մասին նաև հրեշտակն ասաց. «Կգնա Նրա առջևից» (Ղուկ. Ա 17), իսկ [Հովհաննեսի հայր] Զաքարիան՝ «Դո՛ւ, մանո՛ւկ, Բարձրյալի մարգարե կկոչվես» (Ղուկ. Ա 76):

Այլ կերպ ևս [կարելի է բացատրել]: Ընդունված էր, որ նախ ուրիշները մեկի մասին խոսեին, և ապա՝ նա՛ իր: Որովհետև եթե Հովհաննեսի այդքան վկայություններից հետո հրեաները հանդգնում էին ասել. «Դու ես Քո մասին վկայում, և Քո վկայությունը ճշմարիտ չէ» (Հովհ. Ը 13), ի՞նչ կասեին, եթե Հովհաննեսը նախապես վկայած չլիներ: Այս պատճառով էլ [Հիսուսը] չքարոզեց մինչև [Հովհաննեսի] բանտարկությունը, որպեսզի ժողովուրդը չերկպառակտվեր: Նույն պատճառով էլ Հովհաննեսը հրաչքներ չգործեց, որովհետև [դրանք] գործելը պահվել էր Քրիստոսի համար: Քանի որ Հովհաննեսի մասին կարծում էին, թե Քրիստոսն է, ապա եթե [Հովհաննեսը] հրաչք գործեր, ավելի

կհամոզվեին իրենց կարծիքի մեջ: Այլև քանի որ Արեգակի լույսը երևաց, պետք էր, որ ձրագի լույսը մարեր: Նաև որպեսզի, ինչպես որ [Քրիստոսը] նախ ողջերի մեջ քարոզվեց, [քարոզվեք] նաև մեռելների մեջ, ինչպես [քարոզվեց] որովայնում²⁰⁹, որը դժոխքի խորհրդանիշն էր: Հետևաբար, Մատթեոսը [Հիսուսի] ոչ թե հրաշքների սկիզբն է ներկայացնում, այլ քարոզության՝ [ասելով], որ Հիսուսը սկսեց քարոզել այն ժամանակ, երբ Հովհաննեսը դադարեց քարոզելուց: [Հիսուսի] քարոզության խոսքն էլ ուրիշ չէր, այլ ինչ որ Հովհաննեսն էր սովորեցնում: Սակայն վերջինիս սպառնալից խոսքերը չէր ասում՝ տապարի մասին և այլն, այլ միայն մեղմականը. «Ապաշխարե՛ք, քանզի մոտեցել է արքայությունը»:

Իսկ ո՞ր արքայությունն է մոտեցել՝ ըստ Նրա խոսքի: Նախ՝ [հենց] Ինքը, որ երկնքի և երկրի Արքան էր, և մոտեցել էր Իր խաչելությամբ ու հարությամբ փրկելու և փրկվածներին երկնքի արքայությունը տալու: Նաև՝ սրանով նոր [ուխտը] հնից ավելի մեծ դարձրեց. այնտեղ չէր ասվում, թե որևէ մեկին բարի գործերի դիմաց տրվելու էր երկնքի արքա-

յություն, այլ միայն երկրային [վարձատրություն], իսկ այստեղ՝ երկինքն ու երկնքի թագավորությունը:

Եվ [Հիսուսն] Իր հայտնության սկզբում չէր մկրտում, որպեսզի կատարվեր ժողովրդին Հովհաննեսի ասած խոսքը. «Ես ձեզ ջրով եմ մկրտում, իսկ Նա՝ Սուրբ Հոգով»: Այլ նախ քարոզեց հավատալ և ապաշխարել, իսկ իբրև անմեղ գառ զոհաբերվելուց հետո ոչ թե Ինքն [էր մկրտում], այլ աշակերտների՛ն հրամայեց, որ մկրտեն²¹⁰:

Երբ Հիսուսը քալում էր գալիլեացիների ծովի եզերքով, տեսավ երկու եղբայրների՝ Պետրոս կոչված Սիմոնին և Գրա եղբայր Անդրեասին, ովքեր ուռկան էին գցել ծովը, քանի որ ձկնորս էին (Գ 18):

Ասաց Գրանց. «Եկե՛ք Իմ հետևից, և ձեզ մարդկանց որսորդ կդարձնեմ» (Գ 19):

[Եվ Գրանք, գործիքներն իսկույն թողնելով, գնացին Նրա հետևից] (Գ 20):

Հովհաննես [ավետարանիչը] սրանց կանչվելն այլ կերպ է ներկայացնում²¹¹, Մատթեոսը՝ այլ, ինչից պարզ է դառնում, որ սա երկրորդ կանչն է և ո՛չ թե առաջին: Որովհետև Հովհաննես [ավետարանիչը] կանչից հետո շատ բաներ է պատմում և ապա՝

ասում, որ դեռ Հովհաննես [Մկրտչին] չէին բանտարկել²¹², իսկ այստեղ [ասվում է], որ Հովհաննեսի մատնությունից հետո՝ [Հիսուսը] եկավ և կանչեց: Այնտեղ Պետրոսին Անդրեասն է կանչում, իսկ այստեղ երկուսին էլ՝ Հիսուսը: Այնտեղ [Հիսուսը] Սիմոն անունը փոխում է Պետրոսի, իսկ այստեղ [արդեն] իր դրած [անունով] է կանչում: Այնտեղ Հիսուսի հետ գնում են այն տունը, [ուր մնում էր Հիսուսը], և շատ բաներ լսում [Նրանից], իսկ այստեղ, իբրև Նրանից նախապես խրատվածներ, ամեն ինչ թողնում են և գնում Նրա հետևից: Ուստի պարզ է, որ այն ժամանակ միայն տեսան [Հիսուսին] ու լսեցին Նրա խոսքերը, բայց չհետևեցին Նրան, այլ վերադարձան Հովհաննես [Մկրտչի] մոտ: Իսկ երբ տեսան, որ վերջինիս բանտարկել են, իրենց ձկնորսության արհեստին վերադարձան, և Հիսուսն այս [վիճակում] նրանց գտավ և վերստին կանչեց: Սա նույնպես որսորդության նշան է, որ երբ սկզբում կամեցան հեռանալ [Նրանից], չարգելեց ստիպելով, այլ մի փոքր ժամանակով թույլ տվեց, որպեսզի երկրորդ կանչով դյուրավ ու հոժարությամբ դեպի Իրեն ձգի:

Իմացիր նաև կանչման կերպը: Ոչ իշխանություն է խոստանում տալ, ոչ հարստություն, ինչպես այս աշխարհում, այլ անսովոր բան՝ ձկների փոխարեն մարդկանց որսորդ դառնալ: Սակայն նրանք, թեպետ զբաղված էին ձկնորսության արհեստով, որը բոլորից առավել քաղցր ու գայթակղիչ է, բնավ չդանդաղեցին, չասացին՝ գնան տուն, նախ ընտանիքի հետ խոսեն, այլ ամեն ինչ թողեցին և Նրա հետևից գնացին, ինչպես և հետո ասաց [Պետրոսը]. «Ահա մենք ամեն ինչ թողեցինք և եկանք Քո հետևից», և [Տերը] խոստացավ, որ իր [երկրորդ] գալստյանը [Պետրոսն ու մյուս առաքյալները տասներկու] աթոռներին կնստեն²¹³:

Այստեղ [Տերը] գործին համապատասխան խոստում է տալիս. անբան ձկների փոխարեն հրամայում է բանական մարդկանց որսալ. ոչ թե կյանքից դեպի մահ, ինչպես ձկների դեպքում, այլ մահվանից կյանք, ոչ թե խոնավ ջրերից, այլ այս աշխարհի աղի մեղքերի ծովից՝ ասես կարթով բարձրացնելով խորագիտության խոսքով՝ ըստ [Տիրոջ] ասածի. «Եղե՛ք խորագետ» (Մատթ. Ժ 16): Այստեղ, [ինչպես] պատմում է Ղուկասը, նաև

հրաշք է գործվում Տիրոջ ձեռքով. ձկների մի բազմություն Նրա հրամանով որսացվում է Պետրոսի ուռկանների մեջ²¹⁴ խորհրդանշելով հեթանոսներին, ովքեր [առաքյալների] ավետարանման ուռկանով որսացվելու էին հավատքի համար:

Այդտեղից առաջ անցնելով՝ տեսավ երկու ուրիշ եղբայրների՝ Ջեբեդեոսի [որդի] Հակոբոսին և նրա եղբայր Հովհաննեսին, նավում, իրենց հայր Ջեբեդեոսի հետ, և իրենց ուռկանները նորոգելիս, և կանչեց նրանց (Դ 21):

Նրանք, իսկույն թողնելով նավն ու իրենց հորը, գնացին Նրա հետևից (Դ 22):

Սրանց [արարքն] առավել՝ զարմանալի էր: Որովհետև հայրն էլ էր նրանց մոտ, բայց նրա սերը ոչինչ համարեցին Կանչողի սիրո համեմատ, և սա՛ նախքան լսելը թե՛ «Ով սիրում է հորը կամ մորը [Ինձնից առավել], Ինձ արժանի չէ» (Մատթ. Ժ 37), և՛ «Ով [գալիս է Ինձ մոտ և] չի ատում հորը կամ մորը, չի կարող Իմ աշակերտը լինել» (Ղուկ. ԺԴ 26): Այլ Եղիսեի նման գնացին իրենց Ուսուցչի հետևից²¹⁵, որովհետև նույն Հոգին էր դեպի բարին շարժում թե՛ [Եղիսեին], թե՛ նրանց: Հավանաբար նրանց հայրն էլ, բարեբարո [մարդ]

լինելով, չարգելեց, այլ նույնիսկ քաջալերեց գնալու այդպիսի Կանչողի ձայնի հետևից:

Արժե քննել, թե [Տերն] ինչո՞ւ գլխավոր առաքյալներին ձկնորսներից ընտրեց, իսկ մարգարեներից չատերին՝ հովիվներից: Պատճառն այն է, որ հովիվներն արածեցնում են ընտանի և իրենց հոտերը, ինչպես մարգարեները՝ Իսրայելին, որն Օրենքի շնորհիվ ընտանի էր և ազգությամբ՝ իրենցը: Իսկ որսորդները որսում են օտար և վայրի [կենդանիներ], ինչպես որ առաքյալները [որսացին] հեթանոսներին, ովքեր մարմնի ցեղով օտար էին [առաքյալներին] և վայրենամիտ վարքի պատճառով՝ վայրի, և նրանց դարձրին սրբերին քաղաքակից և Աստծո համար ընտանի: Նաև ինչպես որ որսորդները որսը, մանավանդ ձկները, բռնելու համար բազմաթիվ միջոցների են դիմում, իսկ հովիվները՝ ոչ, այլ հովվողները նրանց ձեռքի տակ են, այդպես էլ առաքյալները [Սուրբ] Հոգու բազմատեսակ միջոցներով որսացին հեթանոսներին [Քրիստոսի] հավատքի համար, իսկ մարգարեները միայն որսացվածներին էին հովվում: Այլև՝ որպեսզի կատարվեր [առաքյալների] մասին մարգարեություն-

նը. «Ձեզ մոտ որսորդներ կուղարկեմ, և կորսան ձեզ» (Երեմ. ԺԶ 16): Որովհետև եթե [Տերը քարոզու[թյան] ուղարկեր իմաստունների, հակառակորդները կասեին, թե իմաստու[թյամբ խաբելով համոզեցին մարդկանց: Եթե հարուստներ ուղարկեր, կասեին՝ դրամով կաշառելով խաբեցին: Եթե զորեղներ [ուղարկեր], կասեին ուժով զարմացրին: Իսկ [առաքյալները] սրանցից ոչ մեկը չէին, այլ սրանց հակառակը: Տկար էին, բայց հզորներին ձգեցին իրենց վարդապետությունն ուսանելու. աղքատ էին, բայց հարուստներին սովորեցրին աղքատանալ. տգետ էին, բայց իմաստուններին ու խորագետներին աշակերտ դարձրին. որովհետև աշխարհի իմաստությունը տեղի տվեց [Սուրբ] Հոգու իմաստությանը, որն իմաստությունների իմաստությունն է:

Հիսուսը շրջում էր Գալիլեայի բոլոր կողմերում (Դ. 23):

Երբ որսաց ձկնորսներին, իր հետ առած շրջում էր, որպեսզի նրանց սովորեցնեք մարդկանց որսալու կերպերը:

Իսկ ինչո՞ւ էր աշխարհին իր հայտնվելու սկզբում

Գալիլեայի կողմերում շրջում և ոչ թե Հրեաստանում: Նախ՝ որպեսզի Եսայու այն մարգարեությունն իրականացնեք, որը վերևում այս ավետարանիչը բերեց: Ապա՝ որովհետև սկզբում հնարավոր չէր շրջել օրենսդետներին ու փարիսեցիներին մեջ և սովորեցնել. եթե հետո, երբ ժողովուրդը հրաշքների պատճառով Նրան պատվում էր իբրև մարգարեի, նրանք այդքան նախանձով լցվեցին, ի՞նչ չէին անի այն ժամանակ, երբ դեռ անծանոթ էր ժողովրդին:

Եվ ոչ թե հենց այնպես էր [Հիսուսը] շրջում, այլ մեծ օգուտ բերելով, ինչի մասին ասում է [ավետարանիչը]:

Սովորեցնում էր նրանց ժողովրդի մեջ և քարոզում արքայության ավետարանը:

Որտե՞ղ էր սովորեցնում: Երբեմն՝ տներում, երբեմն էլ՝ դրսում: Իսկ այստեղ, որ [ավետարանիչն] ասում է «նրանց ժողովրդի մեջ», նկատի ունի նրանց ժողովարանները, որտեղ սովոր էին շաբաթ օրերը հավաքվել և մարգարեների [գրքերն] ընթերցել: Այս մասին նաև Ղուկասն է պատմում՝ [Հիսուսի]՝ Նազարեթ գալը, ժողովարան մտնելն ու Եսայու գրքից ընթերցելը²¹⁶:

Եվ բժշկու՜մ էր, – ասում է [ավետարանի-
չը], – ժողովրդի մեջ եղած բոլոր հիվանդություն-
ներն ու բոլոր ցավերը:

Իր բժշկության պարգևը նախ հրեաներին
է տալիս, ինչպես ասաց քանանացի [կնոջը].
«[Թույլ տուր]՝ նախ մանուկները հագենան»
(Մարկ. Է 27), որպեսզի չկարողանային ամբաս-
տանել Նրան [հրեաները], որոնցից հավատ
չէր պահանջում բժշկելիս, ինչպես հետո՝ ու-
մանցից, այլ ձրի էր բժշկություն շնորհում,
որովհետև այդ ժամանակ Իր [աստվածային]
զորությունը դեռևս հայտնի չէր դարձրել:
Եվ հրեաների մեջ Նրա [գործած] հրաշքնե-
րի մասին լսելով՝ նաև հեթանոսներն էին
հավատով մոտենում Նրան, ինչպես հաջոր-
դիվ պատմում է [ավետարանիչը]:

Նրա համբավը տարածվեց Ասորիքի ամբողջ
երկրով, և Նրա սոտ բերեցին զանազան ցավերից
ու տանջանքներից տառապող բոլոր հիվանդնե-
րին, դիվահարներին, լուսնոտներին ու անդամա-
լույծներին, և բժշկեց նրանց (Դ 24):

Հեռավոր տեղերից գալը ցույց է տալիս
նրանց հավատի մեծությունը, ինչ պատճա-
ռով և ձրի էին բժշկություն ստանում: Տե՛ս

դու այս ավետարանչի անփառասեր միտքը,
մանավանդ նրա մեջ գտնվող [Սուրբ] Հո-
գու. բժշկվածներին ոչ թե մեկառմեկ է
թվարկում, այլ շատերին մեկ խոսքով նշում՝
«հիվանդություններ» ու «զանազան ցա-
վեր» կոչելով այն, ինչ մեր բնությունը սո-
վոր է կրել մարմնի կազմության անբարե-
խառնությունից, որից և [առաջանում են]
ցավեր ու նեղություններ՝ ըստ [մարմնի մեջ
նյութերի] առավելություն և նվազություն:
Իսկ նեղությունների մեջ ամենամեծերը [ա-
վետարանիչը] անունով է նշում. «հիվա-
հարներին, – ասում է, – լուսնոտներին ու
անդամալույծներին»: Դևերից պատճառվող
տանջանքները հայտնի են նրանց, ովքեր
տեսել են, և լուսնոտությունը ևս դրանց
[կարգից] է, բայց ո՛չ մշտական բռնվածու-
թյամբ, այլ ըստ նոր կամ հին լուսնի, որից և
անունն է ստացել: Իսկ անդամալույծը մեծ
նեղություն է թե՛ իր, թե՛ տեսնողների հա-
մար, քանի որ տանը մեռածի պես ընկած՝
ողջ [մարդու] պես ուտում ու խմում է:

[Հիսուսն այս] բոլոր եկածներին մեկ հրա-
մանով բժշկեց: Եվ որքան Նրա հրաշքների
համբավը տարածվում էր, այնքան ավելի ու

ավելի շատ էր ժողովուրդ գալիս ամեն կողմից, ինչպես և ասում է [ավետարանիչը]:

Նրա հետևից բազմաքանակ ժողովուրդ էր գնում Գալիլեայից, Գեկապոլսից, Երուսաղեմից, Հրեաստանից, Հորդանանի մյուս ափից, և բժշկում էր նրանց (Գ 25):

Թեպետ, ըստ նախապես նշածս պատճառի, Իր հայտնության սկզբում չգնաց Հրեաստան ու Երուսաղեմ, սակայն ուր և շրջում էր, Նրա հրաշքներն ու վարդապետությունն ինքնահոգար կամքով նրանց ձգում էին դեպի Նրան: Ոչ թե նախանձից բռնվածներին, այլ պարզամիտ ժողովուրդին՝ նրանց, ովքեր Հովհաննեսից կանխապես մկրտվել ու սովորել էին և լսել [Հիսուսի] մասին վկայությունները: Երբ տեսան, որ [Հովհաննեսը] մատնվել է և Հիսուսը՝ հրաշքներով հայտնի դարձել, հասկացան, որ Նա է այն մեկը, ում մասին [Հովհաննեսը] վկայում էր: Եվ ամենքը գնացին [Հիսուսի] մոտ, որով իրականություն դարձավ Հովհաննեսի ասածը թե՛ «Նա պիտի աճի, իսկ ես նվազեմ» (Հովհ. Գ 30): Եվ Նա առատապես բաշխում էր նրանց հոգու և մարմնի բժշկություն. նախ տեսանելին, ապա անտեսանելին, որպեսզի գործե-

րի միջոցով նաև Նրա խոսքերը հավաստվեին՝ ըստ գրվածի. «Հիսուսը սկսեց գործել և ուսուցանել» (Գործք Ա, 1): Որովհետև Աստված սովորություն ունի, որ երբ նոր օրենք է սահմանում մարդկանց համար, նախ մեծամեծ հրաշքներ է ցույց տալիս, որպեսզի Նրա խոսքերը հավաստվեն: Օրինակ՝ առաջին մարդու դեպքում նախ ոչնչից ստեղծեց արարածներին և հետո՝ նրան տվեց պտղի պատվիրանը: Նոյի համար էլ՝ համաշխարհային ջրհեղեղից և նրան ու ուրիշներին փրկելուց հետո՝ օրենք սահմանեց արյան փոխարեն արյուն հեղել և արյուն ու շունչ ունեցող միս չուտել²¹⁷: Աբրահամին էլ, և հանուն նրա՝ նաև ուրիշներին, թլփատության ուխտը տվեց²¹⁸ թագավորներին հաղթելուց ու փարավոնին հարված հասցնելուց հետո: Հրեաներին էլ գրավոր օրենքը տալուտակների վրա տվեց²¹⁹ ծառայությունից նրանց ազատելուց, ծովն անցկացնելուց և Եգիպտոսում ու անապատում գործած բազմաթիվ հրաշքներից հետո: Նույնպես էլ այստեղ, քանի որ պատրաստվում էր ավելի բարձր առաքինություններ ներմուծել աշխարհ, որոնց մասին ոչ ոք չէր լսել, հարկա-

վոր էր հրաշքների ցուցադրում, որպեսզի [Տերն] իր խոսքերը հրաշքներով հաստատեր: Եվ քանի որ պատվիրանները պահողներին խոստանալու էր երկնքի արքայությունը, որն այժմ [մարմնավոր] աչքերին տեսանելի չէ, ուստի տեսանելի նշաններով էր աներևույթ խոստումը հավաստում:

Հետևաբար մենք ևս հետևենք Նրան, ինչպես ժողովուրդը՝ այն ժամանակ, և Նրա հետ բարձրանանք աստվածային լեռը՝ հայցելով Նրանից ոչ թե մարմնավոր ցավերի բժշկություն, որը փոքր է և անցավոր, այլ հոգու առողջություն՝ մեղքերի ցավերից ապաքինում:



ԳԼՈՒԽ Ե

Եվ տեսնելով ժողովրդին՝ [Հիսուսը] բարձրացավ լեռը (Ե 1):

Տե՛ս Նրա անփառասիրությունը: Ո՛չ թե քաղաքներում ու գյուղերում էր նրանց հետ շրջում, այլ անապատում ու լեռներում, որպեսզի մեզ խրատի փախչել մարդկային բոլոր վայրաքարչ կրքերից և Նրա հետ հոգով բարձրանալ իմաստություն իմանալի լեռը, ինչպես աշակերտները՝ այնժամ, և այդ բարձրությունից նայել ներքև, տեսնել ստորին աշխարհում մեղքերով բռնվածներին և փախչել նրանցից: Նայել նաև իբրև դիտանոցից և այնտեղից տեսնել երկնքի արքայությունն ու դրախտի վայելչությունը և ցանկալ դրանք, որոնք Տերն ասես մատնացույց է անում [այս լեռան վրա իր նշած] երանությունների մասերով: Այլև այն նպատակով է նրանց տանում անապատ, որ բոլոր կողմերից ապահով լինելով՝ խոսքն ու շաղբուցումը ունենան, ինչպես որ ովքեր երեխաներին դաս են տալիս, անաղմուկ տե-

ղեր են տանում, որպեսզի [աշակերտներն] իրենց միտքն այլ բաներով չզբաղեցնեն և հեշտությամբ սովորեն: Այդպես էլ [Աստված] Իսրայելի ժողովրդին ոչ թե Եգիպտոսում տվեց կյանքի պատգամները, այլ անպատում. այնտեղ՝ խավարի և մեզի միջից, այստեղ՝ Իր մարմնի, որն իբրև մեզ ծածկել էր Նրա աստվածությունը. այնտեղ՝ սաստկությամբ՝ ըստ նրանց սրտի խստության, այստեղ՝ քաղցրությամբ ու վճիտ լույսով:

Եվ երբ նստեց, Նրա աշակերտները մոտեցան Նրան (Ե 1):

Եվ բերանը բացելով՝ սովորեցնում էր նրանց ու ասում (Ե 2):

Բազմեց կյանքը՝ բաշխելու կյանքի կերակուրն ընդդեմ այն մահաբեր ճաշակման, որն առաջին մարդն ընդունեց օձի բերանից²²⁰: Եվ բացելով բերանը՝ բխեցրեց կենդանի ջուրը՝ հանգցնելու այն կրակը, որը վառվեց Եվայից: Երբ լուռ էր, նրանց մարմինն էր բռնկում, իսկ երբ խոսում էր, առողջացնում էր նրանց հոգին, որպեսզի ցույց տար, որ Ինքն է հոգիների և մարմինների արարիչը, ով խնամք է տանում երկուսին էլ:

Բայց ինչո՞ւ է ընդհանուրի [համար նախատեսված] օրենքները աշակերտներին ուղղելով ասում: Քանի որ պատրաստվում էր երկնային օրենքներ սահմանել՝ մարմնով աղքատանալ և միշտ սգալ, հալածվել և այլն, ուստիև խոսքի սկիզբն ուղղում է ամեն ինչից հրաժարված աշակերտներին, որպեսզի այդ օրենքներն աշխարհասերների համար ծանրատաղտուկ չթվան, այլ [աշակերտներին] նախանձելով՝ [աշխարհասերները] ևս ցանկանան նրանց երանություններին հասնել: Ղուկասը պարզորոշաբար ասում է. «Աչքերը բարձրացրեց դեպի Իր աշակերտները» (Ղուկ. 9 20), իսկ [Մատթեոսն ասում է]. «Երբ նստեց, աշակերտները մոտեցան Նրան»: Քանի որ նրանք կատարյալ էին, նրանց չէր պատվիրում, ինչպես ապերախտ Իսրայելին, միայն հեռանալ չարիքներից, այլ երանություններով հորդորում էր դեպի բարի գործերը: Ինչպես Դավիթ [թագավորը] երանությունից է սկսում սաղմոսագիրքը²²¹՝ լսողներին հորդորելով հետևել երանական գործերին, այդպես էլ Դավիթ՝ ըստ մարմնի Որդին Իր վարդապետության սկզբում երանությունն է դնում, որպեսզի այս երանությունների ի-

նը աստիճաններով, որոնք նախապատկերել էր Հակոբի [տեսիլքի] սանդուղքը²²², մարդկանց բարձրացնի երկինք: Ուստի ասում է.

Երանի՛ հոգով աղքատներին, քանզի նրանցն է երկնքի արքայությունը (Ե 3):

Նախ պետք է պարզենք, թե ի՛նչ է նշանակում երանությունը, ինչից կարող ենք նաև մյուս բաներն էլ հասկանալ: Երանությունը բոլոր բարիքների հանրագումարն է, ինչպես թշվառությունը՝ բոլոր չարիքների, և սրանք [երկուսը] միմյանց [հատուկ] կրթերից ոչ մի մաս չունեն. ոչ երանությունը տրտմական [կրթերից մաս ունի], ոչ էլ թշվառությունը՝ ուրախաբեր [կրթերից]: Հետևաբար, պիտի իմանանք, որ բոլոր գոյությունների մեջ երանություններ առաջին իսկապես ընդունողն Աստվածությունն է՝ ըստ առաքյալի [խոսքի]. «Երանելին և միակ Հզորը» (Ա Տիմ. 2 15): Երկրորդը՝ Նրանից հետո և Նրանից ընդունելով՝ անմարմինները²²³ և հատկապես Նրա պատկերով ստեղծված մարմնավորներին²²⁴ բանական բնությունն է, այնքան, որքան պահեցինք Սկզբնատիպի²²⁵ գեղեցկությունը: Իսկ երբ մեղքերով

այն նսեմացրինք, կորցրինք նաև երանությունը: Ուստի նույն այդ Սկզբնատիպը եկավ փնտրելու մեզ՝ Իր կորսված պատկերը, և գտնելով ախտերի աղբի մեջ՝ լվաց խոսքի՝ դեպի հավիտենական կյանք հոսող ջրով, որպեսզի այդ [պատկերը] վերստին հաղորդակից դառնար [Սկզբնատիպի] երանությանը: Եվ ինչպես որ հմուտ նկարիչը մի անհմուտ մեկի, ում պատրաստվում է ուսուցանել, ասում է, թե այն պատկերն է գեղեցիկ, որն այսինչ չափերով և այսինչ ձևով է նկարված, այդպես էլ Քրիստոսը, Ով մեր հոգին կամենում էր փոխել ու աստվածանման դարձնել, այս երանություններով՝ որպես զանազան գույներով ու երանգներով, ցույց է տալիս, թե [ինչպես] նկարենք Իր գեղեցիկ պատկերը մեր մեջ: Եվ նախևառաջ ասում է. «Երանի՛ հոգով աղքատներին»:

Հարկ է քննել, թե ով է հոգով աղքատը: Երկու աղքատության մասին ենք սովորել [Սուրբ] Գրքից, որոնք հակառակ են երկու հարստությունների: [Այդ երկուսից] մեկը փափագելի է, մյուսը՝ արհամարհելի: Փափագելի է մեղքերից աղքատանալն ու առաքինություններով հարստանալը, և արհա-

մարհելի՝ արդարությունից ու իմաստությունից աղքատանալը և չարիքներով ու հիմարությամբ հարստանալը, որից Տերը հրաժարվել [է հրամայում]: Ուստի ով չարիքներից աղքատանում և առատ բարիքներ է գանձում հոգում, այդպիսին է արժանանում երանելի աղքատության խոսքին, և դրա պտուղն արքայությունն է:

Նաև քանի որ ասացինք, որ [բոլոր] գոյությունների մեջ երանության առաջին արժանավորն Աստված է, իսկ մարդկանց մեջ՝ Աստծուն առաքինությամբ նմանվողը, ապա եթե անհնար է ամեն ինչով նմանվել Աստծուն, ինչպե՞ս հաղորդակից կդառնանք նաև Նրա երանությանը: Ըստ [աստվածային] վեհագույն բնության՝ [սա հնարավոր չէ] երբեք, բայց ըստ [Նրա]՝ մեզ համար խոնարհեցման, կամեցողների համար հնարավոր է: Ուստի, ինձ թվում է, հոգու աղքատություն է կոչվում կամավոր խոնարհությունը, որի օրինակ է Քրիստոսի խոնարհությունը, որը ցույց է տալիս մեզ առաքյալը՝ [ասելով]. «Մեզ համար աղքատացավ Նա, Ով հարուստ էր» (Բ Կոր. Ը 9): Քանի որ մեր բնությամբ անկարելի էր հավել Նրա

բարձրությանը, իջավ դեպի մեր աղքատությունը, որպեսզի մենք, [մեզ համար] բնական Նրա աղքատությամբ նմանվելով Նրան, կարողանանք հասնել Նրա մեծությանը: Սակայն շատ մարդիկ կան, որ խոնարհությունն ակամա՝ ունեն՝ հզորների բռնությունից կամ այս կյանքի հանգամանքներից. նրանց չէ՛, որ երանի է տալիս, այլ կամավորապե՛ս [խոնարհներին] միայն, որոնց մասին [Տերը] Եսայու միջոցով ասում էր. «Ես ո՞ւմ մեջ կբնակվեմ, եթե ոչ՝ հեզերի [և խոնարհների և նրա մեջ, ով դողում է իմ խոսքերից]» (Ես. ԿԶ 2): Իսկ Դավիթն [ասում էր]. «Աստծուն [մատուցված] զոհը խոնարհ հոգին է» (Սաղմ. Ծ 19):

Սակայն թող ոչ ոք չհամարի, թե խոնարհության առաքինությունը դյուրավ և անաշխատ է [ձեռք բերվում], ընդհակառակը՝ բոլոր առաքինություններից առավել՝ դժվարությամբ: Որովհետև չարը մեզ հետ հպարտությամբ առավել է պատերազմում, քան մյուս ախտերով. ոմանց հետ՝ մարմնավոր հաջողությունների միջոցով, իսկ ոմանց հետ՝ հոգևոր, ինչպես որ առաջին մարդու հետ [պատերազմեց] աստվածանալու հույ-

սով և նրանից հետո՝ շատերի հետ՝ զանազան օրինակներով: Ինչով ինքը կործանվեց, նույն զենքով և մեզ հետ է մարտնչում և ջանում կորստյան մատնել: Սրանից զգուշանալ է խրատում առաքյալը՝ [ասելով]. «Թող չլինի մատաղատունկ, որպեսզի հպարտանալով՝ սատանայի դատապարտության տակ չընկնի» (Ա ՏԻՄ. Գ 6): Նաև՝ «Աստված հակառակ է ամբարտավաններին» (Առակ. Գ 34, Հակ. Գ 6):

Ուրեմն՝ քանի որ այս չարիքը մեր մեջ սկզբնաձին եղավ, այստեղից է Տերը երանության սկիզբը դնում՝ կամենալով մեր միջից արմատախիլ անել ամբարտավանության բույսն ու արմատացնել խոնարհությունը: Իսկ ուր խոնարհություն չկա, թեկուզ [մեկն] առաքինությանը երկինք ելնի, դա կնմանվի հիմարի՝ ավազի վրա կառուցած տանը²²⁶: Որովհետև ինչպես որ մեր մեջ բոլոր չարիքների սկիզբը հպարտությանը եղավ և միշտ է՝, այդպես էլ բոլոր բարիքների հիմքն այստեղ Տերը խոնարհությունն է դնում՝ սովորեցնելով, որ հպարտությունը ոչ այլ ինչ է, քան հոգու հիմարություն. ինչպե՞ս կարելի է հպարտանալ՝

հողից սկիզբ առնելով, հողով սնվելով և հողի վերածվելով:

Դարձյալ՝ [մարդու] գոյացություն սկիզբը որովայնում որդի է նման, և [վերջն] էլ գերեզմանում ապականությանը վերածվում է որդի: Ուստի եթե մեկն իրեն չի ճանաչում՝ նայելով իր երիտասարդությունը կամ գեղեցկությունը և այլ մարմնական բաների, թող նայի գերեզմաններին, տեսնի լոկ դատարկ ոսկրերը և իրեն էլ նրանց հետ պատկերացնելով՝ թող խոնարհվի հպարտությունից:

Ուրեմն՝ ով հպարտությունը կամ այս կյանքի որևէ այլ կապանք թողնի մեզ համար աղքատացած Քրիստոսի համար և հագնի Նրա խոնարհության կերպարանքը, այնպիսին արդարև՝ արժանի կլինի [երանություն]:

Սրան մասնակից է նաև մյուս աղքատությունը, որի մասին Տերն ասաց հարուստին. «Վաճառի՛ր ունեցվածքդ, տո՛ւր աղքատներին և ե՛կ Իմ հետևից» (Մատթ. ԺԹ 21): Եթե կամենում ես իսկապես իմանալ, այս խոսքի գլխավոր [իմաստն] այն է, որ ով մարմնի հաճույքն ու դյուրաշահությունը²²⁷ փոխանակում է հոգու հարստության հետ, ով երկրավոր հարստությունն իբրև ծանր բեռ թո-

Թափելով՝ հոգով թեթևանում է, կարող է օգուտ ամպերի վրա, թուչել Քրիստոսին ընդառաջ²²⁸:

Հետևաբար, բաշխելով ու տալով աղքատներին ու կարոտյալներին՝ աղքատանանք և մենք, որպեսզի վերին [ոլորտները] ելնենք:

Երանի՛ սգավորներին, քանզի նրանք կմխիթարվեն (Ե 4):

Գեղեցկապե՛ս է Տերն այս աստիճանի կարգը դնում՝ իբրև առաջինից հետո երկրորդը: Որովհետև նախ երանեց [հոգևոր] ախտերից աղքատացած հոգիներին և այժմ էլ՝ գործված մեղքերի համար սգացողներին: Սրանով սովորեցնում է, որ մեկը նախ պիտի մերկանա ախտերից և ապա՝ կարող է սգալ մեղքերի պատճառած չարչարանքների համար, որովհետև քանի դեռ մեկը մեղքի մեջ է, հեշտությամբ չի սգում իր վնասի համար:

Սուգը երկու տեսակ է: [Մեկը], որ մարմնականն է, տրամուլթյան առատուլթյունից մահ է առաջ բերում՝ ըստ առաքյալի²²⁹, իսկ [մյուսը]՝ հոգևորը՝ կյանք և խաղաղություն: [Վերջին սուգն ունեցողների՛ն] է երանի տալիս [Տիրոջ] այս խոսքը, ո՛չ նրանց, ովքեր

ըստ աշխարհի են տրամուլ, այլ ովքեր մեղքերի պատճառով են սգում, այսինքն՝ երբ զգում են անցյալ ժամանակում [իրենց կատարած] վատ գործերը և ողբում իրենց չար վարքը, ինչպես որ «սուգ» բառն է հայտնում ասածներիս իմաստը: «Սուգ» է ասվում պատահած բաները «զգալու» պատճառով, որոնք [մարդը], ինչ—որ ժամանակ անզգայության մեջ լինելով, չէր զգում: Ինչպես որ [մարմնի] անդամներից ինչ—որ մեկը, որևէ հիվանդությունից ընդարմանալով, ցավ չի զգում, եթե նույնիսկ սրով խոցեն, բայց երբ բժշկական դեղամիջոցներով կենդանանում է, դրանից հետո ցավը զգում է և արագ դիմում դեպի առողջացում, այդպես էլ, քանի դեռ [մարդը] մեղքերի մեջ է, հոգով մեռած է և առաքինության վարքի հանդեպ անզգա, բայց երբ կամովին հրաժարվում է դրանցից և հոգևոր կծվադեղեր ընդունում, այսինքն՝ յիշում [հավիտենական] տանջանքներն ու անչեջ գեհենը, հաճելի ախտերից ընդարմացած հոգին վերստանում է զգացողությունը և դեպի լավը փոփոխմամբ երանելի դառնում:

Սակայն նա, ով անասունի պես է նայում

այս աշխարհին և չի հավատում գալիք [հատուցումներին], ծիծաղում է և ծաղրում տերունական այս խոսքը: Եթե, ասում է, երանելի են նրանք, ովքեր զանազան թշվառությունների պատճառով սգում են, ըստ ամենայնի ողբի են արժանի նրանք, որոնց կյանքն անտրտում ու առանց նեղությունների է: Իսկ մենք կասենք այդ կուրացած մտքերին, որ Տերը, երանելով սգավորներին, երազի է նմանեցնում այս կյանքը, ո՛չ միայն երազի պես դյուրափոփոխ ու սնոտի լինելու պատճառով, այլև հակառակադեպ լինելու: Որովհետև ինչպես որ երազի սուգը, ասվում է, թե արթուն ժամանակ ուրախություն է նշանակում, և ուրախությունը՝ տրտմություն, այդպես էլ ովքեր այս երազային կյանքում սգում են մեղքերի համար, անքուն արթնության կյանքում լինելու են ուրախության ու ցնծության մեջ՝ ըստ Տիրոջ հրամանի, [որն ասում է], թե ովքեր այժմ լալիս են, ծիծաղելու են²³⁰: Իսկ ովքեր այս երազային կյանքում ուրախության մեջ են, ինչպես [Տիրոջ պատմած առակի] հարուստը²³¹, երբ արթնանան գերեզմանի քնից, կտրտմեն ու կսգան:

Բայց ինձ թվում է՝ այս խոսքը երանի է տալիս ոչ միայն մեղքերի համար սգացողներին, այլև անմեղներին ու արդարներին, հատկապես նրանց, ովքեր միշտ սգի մեջ են ոչ թե սեփական հանցանքների համար, այլ մեր [մարդկային] ընդհանուր բնության, ինչպես Եղիան ու Հովհաննես [Մկրտիչը], ովքեր սգո զգեստ էին կրում, և բոլոր սրբերը, ինչպես նաև Դավիթը, ով թեպետ մարդկային գերագույն [պատիվն] ուներ՝ թագավորություն, սակայն հառաչում էր՝ ասելով. «Վա՛յ ինձ, որովհետև պանդխտությունս երկարեց» (Սաղմ. ԾԺԹ 5): Իսկ թե ինչի համար է անմեղների սուգը, արժե ցույց տալ հետևյալ օրինակով:

Սակայն նախ քնենք այս աշխարհի սուգը, թե ինչից է առաջ գալիս, և հոգևոր [սուգը] նույնպես պարզ կդառնա: Սուգ է հոգու՝ տրտմությամբ համակվելը ցանկալի բաների պակասի հետևանքով: Որովհետև բոլոր նրանք, ովքեր հաճելի ցանկություններից [բխող] ուրախության մեջ են՝ [կապված] իրենց անձի, սիրելիների և [նյութական] առարկաների հետ, սգո պատճառ չունեն: Բայց երբ իրենց անձի կամ յուրային-

ների այս բարիքներից զրկվում են, ուրախությունը փոխվում է տրտմության, որն էլ «սուզ» ենք կոչում: Այսպես ենք հասկանում նաև հոգևորը, որն էլ ցույց տանք այս օրինակով: Երբ երկու մարդ՝ մեկը՝ ի ծնե կույր, մյուսը՝ աչյա, արգելափակված են խավար բանտում, նույն կերպ չեն սգում եղածի համար: Ի ծնե կույրն անտրտում է բանտում՝ խավարին սովոր լինելով, և անհոգ ծերանում է այդ [վիճակում]՝ եղածն իր համար բարիք համարելով: Իսկ նա, ով տեսել է այս լույսի գեղեցկությունը և գիտի ինչից է զրկվել, չափազանց սգում է խավար արգելարանում բնակվելու համար և շարունակ ցանկանում ու հնար է փնտրում՝ դարձյալ հասնելու այն լույսի վայելմանը, որից զրկվել է: Նույն կերպ էլ, ով ճշմարիտ բարին, որից մեր բնությունը զրկվել է, կարողանում է տեսնել և ապա մտածում է [մեր բնության] այժմյան [թշվառության մասին, շարունակ սգո և տրտմության մեջ է լինում: Ուստի այս խոսքը ոչ միայն [հոգևոր] տրտմության կիրքն է երանության արժանացնում, այլև մեր կորցրած բարու գիտության [փափագը]: Իսկ այդ բարին ո՛չ մտքին

է հասանելի և ո՛չ խոսքով՝ ճառելի: Եվ որքան ավելի ենք հասկանում մեր կորցրած բարու մեծությունը, այնքան ավելի ենք սգում, որովհետև [մարդկային] այժմյան [բնության] բազմաձևունդ չարիքներից՝ բազմադիմի [հոգևոր] ախտերից ու մարմնի հիվանդություններից, ոչ մեկին մեր մարդկային բնությունը ծանոթ չէր սկզբում:

Ուրեմն՝ ով մտքի աչքերով տեսնում է այդ անզղջական ուրախությունը, նայում նաև տրտմություններով լի մեր այժմյան կյանքին և սգում իր և մեր ընդհանուր բնության՝ աստվածային կյանքից զրկված լինելու համար, նա՛ է արդարև երանելի սգի մեջ, որի պտուղը Սուրբ Հոգու մխիթարությունն է: Իսկ ովքեր անզգա են այս ամենի հանդեպ՝ ոչ անցյալն են քննում, թե ինչ էինք, ոչ այժմյան տառապանքները և ոչ էլ ապագան, թե ինչ ենք լինելու, նման են ի ծնե կույրին՝ ըստ նախասացյալ օրինակի, և չեն տարբերվում անբան անասուններից, որոնք երբ [կերակրով] հագնում են, ուրախանում են, իսկ երբ կերակուրը պակասում է՝ թախծում: Ուստիև [Տերն] այստեղ հրամայում է տրտմել և այնտեղ ուրախ լինել,

այստեղ սգալ ոչ միայն սեփական հանցանքների համար, այլև այլոց, ինչպես սրբերի հոգիները՝ Մովսեսի, Դավթի, Պողոսի և մնացած բոլորի: Այս մտքով էր նաև Մովսեսն Իսրայելին հրամայում Ջատկի տոնին բաղարջը եղրդակի²³² հետ ուտել²³³, ինչից սովորում ենք, որ հնարավոր չէ մասնակցել երկնային տոներին այլ կերպ, եթե ոչ՝ մարմնի՝ դառնությունը [ձեռք բերվող] առաքինությունը և մաքուր ու անախտ վարքով: Այս մասին հստակորեն սովորեցնում է մեզ նաև հարուստի և Ղազարոսի պատմությունը. «Հիշի՛ր, – ասում է Աբրահամը հարուստին, – որ քո կյանքում դու բարիքը ստացար, իսկ Ղազարոսը՝ չարչարանքը: Ուստի հիմա նա այստեղ մխիթարվում է, և դու այդտեղ՝ պապակվում» (Ղուկ. ԺԶ 25): Իսկ մխիթարությունը Սուրբ Հոգուց է, և թող մենք էլ արժանանանք հասնելու դրան:

Երանի՛ հեզերին, քանզի նրանք երկիրը կծանազեն (Ե 5):

«Հեզություն» բառը մեկն է, բայց շատ նշանակություններ ունի, որովհետև հանդարտն էլ, ծանրաշարժն էլ, լուսերն էլ

«հեզ» են կոչվում: Բայց սրանց հակառակ՝ գիտենք նաև բարին խոսելը, պատերազմում արի, [կյանքի] ընթացքում առաքինի [լինելը], և եթե այսպես է, [Տերն] ինչո՞ւ է առաքինությունների շարքում երանի տալիս հեզերին: Ինձ թվում է՝ այստեղ ուրիշ հեզություն է նկատի առնված: Քանի որ մեր բնությունը դյուրամետ է դեպի վատ բաները՝ ծանր վեմի նմանությունը, որը դեպի վեր բոլորովին չի շարժվում, իսկ բարձրավանդակից ներքև գլորվում է խոսքից էլ արագ, և մարդկային կյանքը նույնպես ծանր ու վայրաբերվող է²³⁴, ուստի Տերը երանի է տալիս ոչ թե նրան, ով ամենևին չի բարկանում, քանի որ սա չի կարող կատարել նա, ով իր բնության մեջ սրտմտական²³⁵ [մաս] ունի, այլ նրան, ով առաքինությամբ սանձահարում է [հոգևոր] ախտերը՝ հակառակով հակառակը բժշկելով և ըստ այդմ նաև՝ հեզությամբ՝ անտեղի բարկությունը: Սրանով հեզը գովվում է ոչ միայն տերունական այս երանությամբ, այլև բոլոր մարդկանց կողմից, որովհետև երբ [բարկություն] ախտից [մարդու] մարմնի բոլոր շարժումները [մեր] բնությանը հակառակ դրսևորում են

ցուցաբերում, [մարդու բնությունը] փոխվում ու գազանների բնության կերպարանքն է առնում:

Անհրաժեշտ է, սակայն, ցույց տալ, թե որտեղից է ծնվում հեզությունը կամ սրան [հակադիր] բարկությունը, որպեսզի ովքեր կամենում են հեզերի երանությունը ստանալ, դյուրավ գործեն դրա առաքինությունը: Հեզություն ծնողը խոնարհությունն է, և բարկության արմատն ամբարտավանությունն է, որովհետև բարկության պատճառները թշնամանքն ու անարգանքն են, իսկ ուր կա խոնարհություն, անարգանքը տրտմություն չի ծնում: Ուր չկա սրտմտություն, կա հեզության առաքինությունը, որն [առաջ է բերում] երանություն և երկնային երկրի ժառանգություն:

Բայց թող ոչ ոք ամեն ինչում բարկությունը՝ չար, իսկ հեզությունը բարի չհամարի, որովհետև երկուսն էլ [պատշաճ] ժամանակին բարի են: Մովսեսի մասին վկայվում է, որ հեզ էր, բայց ժողովրդի չարագործության վրա այնքան բարկացավ, որ տախտակները կտորեց²³⁶: Փենեհես քահանան էլ մադիանացի [կնոջն ու իսրայելա-

ցուն] միանգամից ոչնչացրեց²³⁷: Չեմ խոսում և այլ [օրինակների] մասին:

Տերն [ասում է]. «Ինձնի՛ց սովորեք, որ հեզ եմ և խոնարհ» (Մատթ. ԺԱ 29): Բարի է նրա՛ հեզությունը, ով հանդիմանությունն ու խրատը հեզությամբ է ընդունում: Իսկ սրա փոխարեն ի՞նչ [պիտի ժառանգի]. «Քանզի նրանք երկիրը կժառանգեն»: Այսինքն՝ հեզն ու խաղաղարարը, ամենքի հանդեպ սեր ունենալով, առանց խռովության գրավում է երկիրը, իսկ խռովարարը սեփական հայրենիքից էլ է զրկվում:

Բայց ուրիշներ հարմար գտան Տիրոջ խոստումը համարել իմանալի երկիրը, որը ողջերի վայրն է, ինչպես որպես հեզ վկայված Դավիթն է ասում. «Հավատում եմ, որ կտեսնեմ Տիրոջ բարությունը Ողջերի երկրում» (Սաղմ. ԻԶ 13): Որովհետև երանության այս խոսքերն աստիճաններով վերելքի են նման. անհնար էր, որ առաջին երանությունամբ արդեն բարձրացածներին [Տերը] դարձյալ իջեցներ ներքև՝ երկիր: Իսկ [իմանալի] երկիրը [գտնվում] է երկնքից շատ ավելի բարձր և մեղքերով մեռածներին չի ընդունում: Բայց որ [Տերը] «երկիր» բառով է

այն կոչում, մի՛ զարմացիր, որովհետև մեր լսելիքի նվաստություն պատճառով է [մեր հասկացողության մակարդակին] իջնում խոսքը, Ով այն պատճառով իջավ մեզ մոտ, որ մենք չէինք կարող բարձրանալ Նրա մոտ: Նույն պատճառով էլ այս աստվածային խորհուրդն է մեզ ավանդում [մեզ] ավելի ծանոթ խոսքով ու բառով:

Երանի՛ արդարության քաղցն ու ծարավն ունեցողներին (Ե 6):

Քանի որ մենք կրկնակի բնություն ունենք, ապա դրանց կերակուրները տարբեր են. մարմնինը նյութական է՝ ըստ նրա գոյացության, իսկ հոգունը՝ աննյութ և իմանալի: Եվ ինչպես որ մարմինն առանց իր կերակրի չի կարող ապրել, այդպես էլ՝ հոգին, եթե իր [կերակուրը] չճաշակի միշտ: Եթե մարմնի [մաս կազմող] ստամոքսն ինչ—որ հիվանդության հետևանքով դառն մաղձով է լցված, հագեցած է թվում և երբեք ախորժեղի կերակուրների քաղց չի զգում, [և մարդն] ուտում է ասես առանց կարիքի, իսկ երբ բժիշկների ձեռքով հիվանդության պատճառներից ազատվում է, առողջարար

կերակուրների ցանկությունը վերստանում է: Նույնը կարելի է տեսնել մտքի պարագայում, որը մեր հոգու կերակուրների ընդունարանն է: Եթե մեղքերի ճաշակմամբ հիվանդանում է, քանի դեռ այդ [վիճակում] է, չի փափագում կենդանարար և աստվածային կերակուրները, որոնք իմաստության խոսքն ու գործն են: Բայց երբ փնտրում է հոգևոր բժիշկներ, առաքինության [գործերով] հոժարությամբ ընդունում ու խմում նրանց [տված] դեղերը և դուրս փսխում մեղքերի պատճառով հավաքված ժահահոտությունը, այդժամ հոժարությամբ փափագում է ուտել հոգևոր կերակուրը: Ահա սրա՛նք են այն քաղցածները, որոնց երանի է տալիս Տերը: Ուրեմն՝ ով կամենում է հոգևոր կերակուրներից զորություն ստանալ, նախ միտքը թող մաքրի եկամուտ ախտերից, որպեսզի [իր հոգու] բնական կերակուրների քաղցն ունենա:

Բայց արժե քննել, թե ի՛նչ է արդարությունը: Արտաքին²³⁸ [իմաստունները] արդարությունը սահմանում են [այսպես]: Եթե մեկը, [օրինակ], նյութական բաները հավասարապես է բաշխում՝ ըստ ստացողների կա-

րիքի չափի, ապա արդար է համարվում, ինչպես նաև այն դատավորը, ով ճշմարտությամբ է դատում. արդար են կոչվում նաև այն տանուտերը, քաղաքի իշխանը, ազգերի թագավորը, ովքեր անիրավությամբ չեն գործում, այլ իրենց հնազանդվողներին ուղիղ են դատում: Բայց ես այս արդարությունը չէ՛, որ Տիրոջ կողմից երանված եմ համարում: Որովհետև երանության այս խոսքը միայն մարդկանցից ոմանց չի [հասցեագրված], իսկ ոմանց՝ ոչ, այլ բոլոր նրանց, ովքեր կամենում են այն ընդունել: Ուրեմն ո՞րն է արդարության կերակուրը, որ նախատեսված է բոլորի համար և իբրև սեղան՝ բացված է բոլոր նրանց առաջ, ովքեր նրա քաղցն ունեն: Դա այն է, ինչի մասին Ինքը [Տերն] ասաց. «Իմ կերակուրն այն է, որ կատարեմ Իմ Հոր կամքը» (Հովհ. Գ. 34):

Եվ ոչ միայն պահանջում է արդարության քաղցն ունենալ, այլև ծարավը: Ծարավը հիշատակելով՝ այս խոսքն օրինադրում է բարու ծայրաստիճան փափագը, որովհետև ծարավը բնությանն ավելի է ստիպում հագուրդ ստանալու, քան քաղցը, այնպես, ինչպես Դավիթն էր Աստծուն փափագում²³⁹:

Այս խոսքը քաղցի և ծարավի հիշատակմամբ երանի է տալիս նաև երկու խոսքով և գործով, իմաստությունները փափագողին. քաղցը՝ իբրև ավելի թանձր առարկայի [փափագ], խորհրդանշում է գործնական իմաստությունը, իսկ ծարավը՝ իբրև ավելի անոսր նյութի [փափագ]՝ տեսականը:

Նաև արդարություն է պետք հասկանալ հենց Նրան՝ Աստծո խոսքին, Ում մասին Պողոսն ասում է. «Ով մեզ համար դարձավ արդարություն ու սրբություն» (Ա. Կոր. Ա. 30): Ազնիվ մարդիկ «արդար» են կոչվում, բայց ո՛չ՝ «արդարություն», ուստի սա միայն Աստծուն է [վերաբերում], Ով աղբյուրի պես բխում է արդարություն, ինչպես որ Ինքը Տերն էլ Իրեն երբեմն կոչում էր «երկնքից իջած Հաց», երբեմն՝ ջուր՝ ծարավյալների համար²⁴⁰:

Սակայն ինչո՞ւ է այս խոսքը միայն արդարության քաղցն ունեցողին երանի տալիս, երբ հոգու առաքինությունները չորսն են²⁴¹: Որովհետև [արդարությունն] իր մեջ ամփոփում է բոլորը: Նաև որովհետև ինչպես որ խոսքով ու գործով [կատարվող] բոլոր չարիքները [մեկ] անվամբ կոչվում են անիրավություն, այդպես

էլ բոլոր բարի [խոսքերի ու գործերի] անունն արդարությունն է, քանի որ դրանք արդարապես են խոսվում ու գործվում:

Հետևաբար, երանի՛ր աստվածային իմաստության քաղցն ունեցողին, որովհետև կհագենա նրա գիտությամբ: Երանի՛ր Աստծո սիրո քաղցն ունեցողին, որովհետև կխմի անճառ ուրախություններով գմայլումը՝ այստեղ՝ մասամբ, իսկ հանդերձալում [Տերը] նրան կպարգևի կատարյալ՝ ուրախությունը:

Երանի՛ր ողորմածներին, քանզի նրանք ողորմություն կգտնեն (Ե 7):

Առաքիչնությունների մեջ ոչ մեկը մեզ այնքան նման չի դարձնում Աստծուն, որքան ողորմածությունը՝ ըստ Տիրոջ խոսքի. «Նմանվե՛ք ձեր Հորը, Ով արեգակը ծագեցնում է թե՛ չարերի, թե՛ բարիների վրա և անձրև բերում թե՛ արդարների, թե՛ մեղավորների համար» (Մատթ. Ե 45, 48): Եվ [Սուրբ] Գիրքը շատ տեղերում է Աստծուն ողորմած կոչում: Դավիթն ասում է. «Ողորմած, [գթած] և արդար է Տերը» (Սաղմ. ԾԺԱ 4), նույնպես են [ասում] Մովսեսը և բոլոր մար-

գարենները: Ուրեմն՝ եթե Աստված Աստվածաշունչ գրքում ողորմած է կոչվում, պետք է հայտնապես հավատալ, որ մարդը նույնպես, եթե իր կարողության չափով ճշմարտապես ողորմած լինի, Աստծուն կնմանվի: Բայց պետք է ընտրել ճշմարիտ ողորմածությունը, որն Աստված կամենում է և որն էլ հատուցում: [Կա ողորմածություն, որն] ակնկալիքով է կատարվում, քանի որ ոմանք փոխհատուցում են ակնկալում ստանալ նրանցից, ում տալիս են, ինչպես մեղավորները՝ մեղավորներից: Ուրիշներ էլ [ողորմած են գտնվում] գովաբանողների հանդեպ, որպեսզի բարի անուն հանեն: Ուրիշներ էլ, թեպետ աղքատներին են տալիս, սակայն՝ փառքի հույսով: Այսպիսիներն արժանի չեն երանության և ողորմություն չեն գտնի, որովհետև իրենց վարձատրությունն արդեն առել են այստեղ:

Ուստի արժե քննել, թե ինչ է ողորմությունը, ինչից է ծնվում, ինչ պատճառով սահմանվեց, և ինչպես է երանելի նա, ով այն գործում է: Արդ՝ ողորմությունը սահմանվում է որպես կամավոր տրտմություն՝ ուրիշների նեղության պատճառով գոյա-

ցած, և ծնունդ է սիրո, ինչպես որ կարծ-
րասրտուկներն ու դաժանուկներն էլ իբրև
իրենց պատճառ ունեն ատելուկները: Իսկ
ողորմուկների պատվիրանը սահմանվել է, որ
մեր մեջ սեր շարժվի՝ միմյանց կարեկցելու:
Քանի որ այս կյանքի պարագաները ծառա-
յուկությամբ ու տերուկությամբ անհավասար են,
Աստված կամենում է, որ ավելաստացն ու
կարոտյալը հավասարվեն միմյանց: Հա-
րուստները ողորմուկների միջոցով Աստուծոց
բարիքների են արժանանում, ուստի [Տերը]
կարոտյալների հանդեպ ողորմածուկներն է
օրինադրում մարդկանց: Եվ քանի որ ողոր-
մուկները սիրուց է [բխում] և սիրո պտուղ
տալիս, ուստի [Տերն] իրավամբ է երանու-
կության արժանացնում նրան, ով պտղաբերում
է առաքինուկներին ամենամեծը՝ սերը:

Այլև՝ այս երանուկությամբ այն հույսն է
տալիս մեղավորներին, որ ովքեր կարողու-
կուն չունեն բազմապատիկ առաքինու-
կուններով հաճոյանալու Աստուծուն, կարող
են միայն ողորմուկությամբ արժանանալ Աստ-
ծո մեծ ողորմուկները, եթե կամենան: Որով-
հետև ինչպես որ ճշմարիտ ողորմածներն
աղքատների հանդեպ ողորմուկության համար

ոչ վարձ են ստանում գործի դիմաց, ոչ էլ ի-
րենց տվածի փոխհատուցումը, այլ [ողոր-
մում են] Աստծո հրամանի և [մարդկային]
թշվառացած բնուկության պատճառով, այդպես
էլ Տերն է Դատաստանի օրը ողորմուկուն
խոստանում ճշմարիտ ողորմածներին, ով-
քեր, եթե նույնիսկ իբրև վարձկաններ չեն
աշխատել պատվիրանապահուկության գոր-
ծում, որ խոստացված վարձը ստանան, և
Տիրոջը երկյուղով չեն ծառայել, որ լսեն.
«Բարի և հավատարի՛մ ծառա» (Մատթ. ԻԵ 21,
23), և ոչ էլ, որպես սիրելի որդի, սիրով կա-
տարել են Հոր կամքը, որ նմանվեն Նրան²⁴²,
սակայն միայն ողորմուկության համար, որը
գործեցին աղքատների հանդեպ, ողորմու-
կուն կգտնեն Նրանից:

Իսկ ի՞նչ է այն ողորմությունը, որը ողորմածները
գտնելու են Աստծուց: Աջակողմյան դասում
[կարգվելն] ու Հորից օրհնուկուն [ստանա-
լը]: Բայց թող ոչ ոք այս երանուկությանն ար-
ժանի չհամարի միայն [աղքատներին ողոր-
մուկուն տվողներին], քանի որ եթե այդ-
պես լիներ, ապա ամենքը չէ, որ կկարողա-
նային ողորմուկուն գտնել, այլ միայն
ունևորները: Ինձ թվում է՝ ով կամենում է

կարոտյալի համար բարիք գործել, սակայն [հնարավորութուն] չունենալու պատճառով չի կարողանում, պակաս չի արժանանում այս երանությանը, քան նա, ով իր կամեցողութունը գործով է իրականացնում: Նաև ողորմության այլ կերպեր կարելի է գտնել: Մարմնի [ողորմութունից] ավելի մեծ է այն, որ մեկը ցավակից է լինում ու ողորմում հիվանդացած ու բարուց աղքատացած հոգիներին: Ովքեր սա գործում են, նմանվում են Քրիստոսին, Ով երկնքից իջավ՝ մեզ ողորմելու: Բայց նախ հարկավոր է, որ յուրաքանչյուրն իր հոգուն ողորմի և լրացնի բարու [ի՛ր] պակասը: Որովհետև ինչպես որ աղքատը՝ աղքատի և հիվանդը հիվանդի կարիքները չեն կարող բավարարել, այդպես էլ ով մեղքերով հիվանդ է, չի կարող մեղանշածներին օգնել: Եվ հոգու ողորմութունը շատ ավելի դժվար է, քան մարմնինը, որովհետև որքան հոգին է մեծ մարմնից, այնքան հոգուն ողորմելը՝ մարմնին [ողորմելուց]: Երբ մեկը մարմնին է [ողորմութուն] տալիս, [թեպետ տվողի վարձը մնում է, սակայն տրվածը սպառվում է: Իսկ հոգու [ողորմութունը] համընթաց է հա-

վատքի ճշմարտությանը: Ով մտածում է այս թշվառ կյանքի մասին, այսպիսի հիգու-թյան²⁴³ մեջ ինչպե՞ս կլինի կարծրասիրտ ու դաժան: Տերը գովեց անիրավ տնտեսին, որ իմաստությամբ վարվեց մեկ ա՛յլ կերպ. շնորհեց իր տիրոջ պարտապաններից մեկի՝ [պարտքով վերցրած] ցորենի հինգերորդ մասը, մյուսի՝ պարտքով [վերցրած] ձեթի կեսը²⁴⁴: Ցորենը նշանակում է մարմնով աղքատների հանդեպ կարեկցանքը՝ [նրանց] անհրաժեշտ կարիքների [բավարարման համար], իսկ ձեթը առաքինութուններից աղքատացածի հանդեպ հոգու ողորմութունն է, որը խրատն ու հոգածութունն է՝ թյուրածին ուղղության բերելու նպատակով: Եվ սրանք երկուսն էլ²⁴⁵ պարտապան են իրենց տիրոջը. մեկը, այստեղ աղքատության չարչարանքով քավելով [իր] մեղքերը, այնտեղ կմխիթարվի, իսկ [մյուսին] (ով, անոսր ձեթի օրինակով, հոգով է պարտապան մեղքերով), եթե խոսքի որևէ սպասավոր ողորմի և փոխ տա՝ նրան հույս տալով, նրա մեղքերի կեսը կջնջվի [ողորմութուն գործողի միջոցով], իսկ մնացածը՝ [մեղավորի] ապաշխարությամբ: Ըստ այս երկու տեսակ ողորմու-

թյունների՝ [ողորմություն գործողն] ինքն էլ ողորմություն կգտնի, և նրան է [Տերն ասում]։ «Երանի՛ր ողորմածներին, քանզի նրանք ողորմություն կգտնեն»։ [Կգտնեն] ո՛չ նույն չափով, [որով ողորմություն են տվել]։ որովհետև իրենք իբրև մարդ են տվել, իսկ [Տերն] իբրև Աստված է հատուցելու նրանց։

Երանի՛ր սրտով մաքուրներին, քանզի նրանք Աստծուն կտեսնեն (Ե 8)։

Այս երանությունը գերազանցում է [մեր] մտքի ըմբռնմանը։ Ինչպես երբ ծովեզրին գտնվող մի բարձր վեմից նայում են անդունդի խորքը, խորքի հատակը չտեսնելով՝ լցվում են երկյուղով, այդպես և մենք, նայելով աստվածային խոսքի խորությանը, զարհուրանքով տարակուսում ենք, թե ինչպե՛ս է տերունական այս խոսքը երանում սրբերին։ Որովհետև Հովհաննես [ավետարանիչն] ասում է. «Աստծուն ոչ ոք չի տեսել» (Հովհ. Ա 18, Ա Հովհ. Գ 12), [և ըստ Պողոսի]՝ նաև «չի կարող տեսնել» (Ա Տիմ. 2 16)։ Եվ Մովսեսին էլ էր Աստված ասել. «Մարդկանցից ոչ ոք չի կարող Իմ երեսը տեսնել և կենդանի

մնալ» (Ելք ԼԳ 20)։ Ուրեմն ինչպե՞ս հասկանանք այս երկուսը։

Աստվածային բնությունն այնպիսին, ինչպիսին կա, անտեսանելի է և [մեր] ըմբռնումից չափազանց վեր։ Սակայն, թեպետ [Աստված] անքննելի է՝ ըստ առաքյալի²⁴⁶, Անտեսն ուրի՛շ կերպ է տեսանելի դառնում։ Նախ՝ ըստ առաքյալի²⁴⁷ Արարիչը ճանաչվում է արարածների միջոցով. [տեսանելի] է դառնում ոչ թե՛ Նրա բնությունը, այլ էությունն ու գորությունը՝ Նրա տեսանելի գործերով։ Այս տեսությամբ տեսնում են նաև աշխարհի իմաստունները, բայց արժանի չեն երանության, որովհետև Տերը երանության է արժանացնում ոչ թե՛ Աստծո մասին ինչ–որ բան գիտենալը, այլ նրանց, ովքեր իրենց մեջ Աստծուն են ընդունում. [նրանց մասին] է ասում. «Երանելի են սրտով մաքուրները», ինչպես որ այլուր ևս ասում է. «[Աստծո] արքայությունը ձեր ներսում է» (Ղուկ. ԺԷ 21)։ Սրանից սովորում ենք, որ ով սիրտը մաքրում է բոլոր ախտերից, իր հոգու գեղեցկությամբ է տեսնում աստվածային պատկերը։ Ինչպես որ ովքեր մաքուր հայելու մեջ տեսնում են արեգակը,

Թեև երկնքին չեն նայում, սակայն Հայելու ճառագայթներով նշմարում են բոլորաձև լույսը, այդպես էլ մենք, Թեպետ Աստծո անմերձենալի բնությանը նայել չենք կարող, բայց եթե Նրա պատկերը մեր մեջ մաքրենք ախտերից, հենց մեր մեջ կտեսնենք այն, ինչ փնտրում ենք:

Ուստի ասենք, թե ինչպե՛ս ձեռք բերենք այն, որով երանելի և Աստծուն տեսնելուն արժանի կդառնանք: Չարությունը երկուսի է բաժանվում՝ խորհուրդներով և գործերով, և երկուսի համար էլ Աստված օրենք է սահմանել: Առաջին օրենքով արգելում է գործերով անիրավությունը, իսկ այս երկրորդով²⁴⁸ չարության հարձակումը խորհուրդներով ու խոսքերով: Ուստի ամեն ոք, ով, ըստ այս երկու օրենքների, հեռանում է չար խոսքերից ու գործերից և չարի փոխարեն բարին գործում ու խորհում, նա՛ է սրտով մաքուր և արժանանում է աստվածային տեսության երանությանը: Եվ ինչպես որ սրտով մաքուրները երանելի են, [այդպես] աղտեղի միտք ունեցողներն էլ՝ ողորմելի: Որովհետև եթե սրտով մաքուրներն Աստծուն են տեսնելու, անմաքուրներն ու աղտեղասերները նայե-

լու են սատանայի դեմքին: Ուրեմն՝ քանի որ Աստված լույս և կյանք է կոչվում, իսկ սատանան՝ խավար և մահ, և մեր անձնիշխան կամքից է կախված այն, թե որ [կողմն] ենք կամենում դիմել, փախչե՛նք Բանսարկուհի խավարային կերպարանքից և դրոշմե՛նք մեր հոգում աստվածային լույսի պատկերը:

Երանի՛ խաղաղարարներին, քանզի նրանք Աստծո որդի կկոչվեն (Ե 9):

Քաղցր են խաղաղության պարագաները և հաճելի՝ հոգուն ու մարմնին: Առաջին և ծայրագույն խաղաղությունն այն է, որը գոյութուն ունի Սուրբ Երրորդության երեք Անձերի միջև՝ նրանով, որ ունեն միևնույն կամքն ու իշխանությունը, և [նրանց միջև] չկան ո՛չ խռովություն, ո՛չ պատերազմ, այլ միշտ խաղաղություն: Այնտեղից [խաղաղությունը փոխանցվում է] նաև հրեշտակային և երկնային զորություններին, քանի որ անխցելի են պահում սիրով միավորությունը Աստծո և միմյանց հետ, բացի [հրեշտակային] մեկ [դասակարգից]²⁴⁹: Այս խաղաղությունն ունեք նաև մարդու բնությունը

սկզբում, քանի դեռ պահում էր Սկզբնատիպի գեղեցկությունը: Բայց երբ անսաց Պատերազմասերի խրատին, խռովությունը լցվեց, մինչև գալուստն Աստծո Որդու՝ ճշմարիտ Խաղաղության, Ով խաղաղություն հաստատեց երկնքում ու երկրում, ինչպես որ Նրա ծննդյան ժամանակ հովիվները հրեշտակների հետ երգեցին. «Փա՛ռք Աստծուն բարձունքներում և երկրի վրա՝ խաղաղություն» (Ղուկ. Բ 14): Արդ՝ քանի որ Աստծո՝ բնությունը Որդին դարձավ միջնորդ և խաղաղություն հաստատեց [Աստծո և մարդկության միջև], այդ պատճառով էլ Տերը երանի է տալիս խաղաղարարին և իր անվանն արժանանալ խոստանում նրանց, ովքեր իր գործն են անում: Որովհետև ինչպես որ Տերը, ըստ իր ամենակարող գործության, խաղաղություն հաստատեց երկնքում ու երկրում, այդպես էլ սրանք, ըստ իրենց տկարության չափի, սակավաթիվ [անձանց] միջև են խաղաղություն հաստատում: Սակայն առաջին մեծ խաղաղությունն այն է, որ մեկն ինքն իր հանդեպ է հաստատում՝ ըստ Արարչի սահմանման ուղղելով հոգին ու մարմինը. հոգու տիրական կամքին իշ-

խել է տալիս մարմնի կամքի վրա և ծառայակցին [դրդում] հնազանդվելու հոգու կամքին: Ով այսպիսի խաղաղություն է հաստատում ինքն իր և ուրիշների հանդեպ՝ խրատելով և ուսուցանելով, նա՛ է առաջինն արժանի կոչվելու Աստծո որդի: Իսկ երկրորդը՝ նրանից հետո՝ [արժանի է] նա, ով խաղաղություն է հաստատում մարդկանց միջև: Բայց պետք է նախ սեփական անձի համար այն ձեռք բերել և ապա՝ այդպիսի ունեցվածքից բաժին հանել կարոտյալներին:

Ի՞նչ է արտաքին խաղաղությունը, որ բարի է: Ցեղակիցների²⁵⁰ հանդեպ սեր պահպանելը: Իսկ սիրուն հակառակ է ատելությունը, և ինչպես որ, երբ լույսը երևում է, խավարը մերժվում է, այդպես էլ, երբ երևում է խաղաղությունը, ոչնչանում է ամեն ընդդիմակաց ախտ: Խաղաղարարները բժշկի են նման. տալիս են ընդհանուրի համար [նախատեսված] աստվածային դեղը՝ խաղաղությունը, և բժշկում հիվանդացած հոգիները, որովհետև բարկության պահին բարկացողների սրտի շուրջ արյունը եռում է, և նրանք նմանվում են դիվահարների: Կամ էլ գաղտառու²⁵¹ շների նման թաքցնում են նենգությունը և [հար-

մար] ժամանակ գտնելով՝ այն հայտնի դարձնում նրանց հանդեպ, ում նախանձում են:

Հետևաբար, ով ջանում է այս ախտը հանել իր և ուրիշների միջից և խաղաղության կապով հաշտեցնում է մարդկանց, իսկապես աստվածային գործ է կատարում: Ուստի [Տերն] իրավացիորեն է խաղաղարարին «Աստծո որդի» կոչում, քանի որ Աստծո ճշմարիտ Որդուն նմանվեց: Եվ այս առաքինության հաղթանակն ավելի մեծ է, քան նախորդ երանությունները. նախորդներում [Տերը] պարգևներ է խոստանում, իսկ սրա [խոստումը] դառնում է պարգևներ Տվողն ինքը՝ Աստծո Որդին: Որովհետև այս յոթերորդ աստիճանով, խորհրդապաշտական թվով, անցկացնելով յոթ պարունակներ²⁵² միջով՝ [Տերն] այս առաքինությունը գործողին մերձեցնում է անեղ²⁵³ Բնությունը:

Բայց ինձ թվում է՝ մի երկրորդ պարգև է նույն ինքը գործը, որի դիմաց [տրվում է] այս [երանությունը]: Որովհետև մարդկային կյանքում ի՞նչն է ավելի քաղցր վայելք, քան խաղաղությունը, և [այն հաստատողը] նմանվում է երկնավոր Հորը, Ով բոլորի վրա է անձրև բերում և արև ծագեցնում²⁵⁴: [Խա-

ղաղարարը] գործերով նմանվում է Աստծուն, ուստիև Նրան որդեգրվելու վայելքին արժանանում:

Երանի՛ արդարության համար հալածվողներին, [քանզի Արանցն է երկնքի արքայությունը] (Ե 10):

Ինչպես Դավիթը «ութերորդի» մասին երկու սաղմոսներում²⁵⁵ ցույց է տալիս հարուստի օրը, և ութօրյա թլփատությունը [խորհրդանշում է] հոգու ձերբազատումը մեռելոտի գործերից, այդպես էլ ութ երանությունների միջոցով Տերը մարդկանց կբարձրացնի երկինք և ծառայությունից՝ դեպի արքայություն՝ վերստին կանչելով, որովհետև ասում է. «Երանելի են արդարություն համար հալածվողները, [քանզի նրանցն է երկնքի արքայությունը]»:

Բայց այս խոսքը տարակուսանք է հարուցում, թե ինչպե՛ս է [Տերը] զուգահավասար վարձատրություն՝ երկնքի արքայություն՝ խոստանում և՛ հոգով աղքատացածներին, որոնց համար ասաց, թե նրանցն է երկնքի արքայությունը, և՛ արդարություն համար հալածվողներին և թե՛ նրանց, ովքեր

քաղցածներին կերակրեցին, երբ նրանց գործերը տարբեր են:

Սակայն թեպետև [սրանց] ճանապարհները տարբեր են երևում, սակայն [նրանց վերջնական] օթևանները²⁵⁶ միատեղ են, քանի որ [բոլոր ճանապարհներն] էլ [երկնքի] արքայուկթյուն են տանում: Այլև նրանք բոլորն էլ մի նպատակի են ուղղված, միայն թե աղքատուկունը հալածանքի համեմատ ավելի դյուրըմբերելի²⁵⁷ է՝ առավել թեթև ընթացքի պատճառով:

Արդ՝ այս խոսքը նախ վերաբերում է [հավատքի] վկաներին, ովքեր հալածվեցին չարերից, և ապա՝ բոլոր բարեպաշտներին, ովքեր հալածվում են ամբարիշտների կողմից: Նախ Լույսն ինքը հալածվեց սկզբնաձին այն խավարից, որը չկարողացավ նրան հասնել²⁵⁸, նաև խավարասեր մարդկանցից, ինչպես ասում էր աշակերտներին. «Եթե ինձ հալածեցին, ձեզ էլ կհալածեն» (Հովհ. ԺԵ 20): Եվ հիրավի՝ երանելի են [այսպես հալածվողները], որովհետև չարից հալածվելով՝ հասան բարուն, ինչպես որ Հովսեփի հանդեպ [նրա եղբայրների] դավաճանուկթյունը [նրա] թագավորելու պատճառը դարձավ²⁵⁹: Այդպես

էլ վկաները, չնայած կրած առժամանակյա ցավերին, արքայուկթյան հույսով դյուրավ էին մարտնչում: Այդ պատճառով էլ ուրախանում էր մեծ Ստեփանոսը՝ ամեն կողմից քարկոծվելով²⁶⁰, առաքյալներն ուրախուկթյամբ էին վերադառնում ատյանից և բազմօրինակ տանջանքները խնդուկթյամբ էին ընդունում:

Ինչպես որ դառը դեղերը խմում ենք, որպեսզի մաղձերի ախտահարույց պատճառները հեռացնենք մեր մարմնից, այդպես էլ թշնամուց հալածվողը հարվածներն ընդունում է իբրև [աշխարհային] հաճույքի բոցը մարող [միջոց]: Ուրեմն չնեղվե՛նք, երբ երկրավոր բաներից զրկվում ենք, որովհետև եթե այստեղից հալածվում ենք, տեղափոխվելով՝ երկնքում ենք բնակվելու: Արքայուկթյան պտղի ծաղիկը նեղուկթյունն է. եթե կամենում ենք պտուղը քաղել, նախ ծաղիկը հավաքենք՝ այստեղ հալածվենք, որպեսզի հասնենք վերին կոչմանը:

Բայց թող ոչ ոք չհամարի, թե այս երանուկթյունը միայն հավատքի համար հալածվողներին է վերաբերում. թեպետ կատարյալը նրանցն է, սակայն այս երանուկթյանը

մասնակից են և նրանք, ովքեր [հալածվում են] ըստ [քրիստոնեական] օրենքի [մատուցված] հոգևոր խրատական խոսքի պատճառով, ինչպես Հովհաննես [Մկրտիչը]: Կամ էլ՝ երանելի կլինեն նաև նրանք, ովքեր զրպարտվում են որևէ այլ արդար գործի համար և գոհությամբ համբերում:

Երանի՛՜ ձեզ, երբ ձեզ նախատում ու հալածում են [և Իմ պատճառով ձեր մասին ամեն տեսակ չար խոսք ասում ստելով] (Ե 11):

Ուրիշ ի՞նչ նորընծա վարդապետություն կա, սրանից բացի, որ [Տերը] հրամայում է տենչալ այն, ինչ մարդկանց համար զարհուրելի է՝ աղքատանալը, սուգ մտնելը, հալածվելը, ի հավելումն՝ նաև նախատինք կրելն ու բամբասվելը: Եվ փոքր չէր [առաքյալներին ուղղված] նախատինքը. որովհետև [նրանց] անվանում էին կախարդներ, մոլորեցուցիչներ և չարագործներ: Եվ սա՛՛ այն դեպքում, որ առաքյալները հրաշքներ էին գործում, նաև նրանցից հետո՝ սրբերը, որովհետև [Տերը] խոսում է բոլո՛ր նրանց մասին, ովքեր չարերի կողմից բամբասվում են ճշմարտության խոսքի համար: Ասելով

«ամեն տեսակ չար խոսք»՝ նկատի ունի բոլոր տեսակի հայհոյանքները, որոնցով անդուռ բերանով բամբասում են աստվածային մարդկանց: Բայց որպեսզի չկարծվի, թե երանի է տալիս վայրապար²⁶¹ բամբասանքի դիմաց, ավելացնում է նաև՝ «Իմ պատճառով»–ն ու «ստելով»–ը: Երկու բանի մասին է խոսում. մեկն այն է, որ [Տիրոջ] պատճառով է բամբասանքը լինում, մյուսը՝ որ սուտ է լինում: Հիրավի թշվառ է այն բամբասվածը, ով տկարների համար գայթակղություն պատճառ է դարձել, և վայն է բաժինը նրա, ում ձեռքով գայթակղություն է գալիս²⁶²: Այդ պատճառով էլ [Տերը] չասաց. «Երանելի եք, եթե ձեզ չարախոսեն ցանկացած պատճառով», այլ՝ երանության արժանի կլինեք, երբ առաքիների լինելով՝ արդարություն պատճառով հալածվեք: Ուստի ասաց.

Յնծացե՛ք և ուրախ եղեք (Ե 12):

Ինչո՞ւ է միայն այս դեպքում ասում, որ ցնծան և ուրախանան: Քանի որ նախատինքը մեծ տրտմություն է առաջ բերում, ուստի տրտմության փոխարեն ուրախություն է սահմանում, որպեսզի նահատակն իր սխրա-

գործութեան մեջ մեծ տրամուխունից
չվհատվի:

Քանզի ձեր վարձը շատ է երկնքում:

«Շատ» ասելը մեծ փառքն է նշանակում՝
լուսատուների նմանութեամբ: Ինչպես որ ա-
ռաքինութիւններն են զանազան, այդպես
և՛ պսակները:

Իսկ ինչո՞ւ է մյուս երանիներում յորաքանչյոր ա-
ռաքինութեան դիմաց միայն դրան հատուկ վարձը տա-
լիս, իսկ այստեղ ասում, թե [այն] «շատ» է, այն էլ՝ ոչ թե
երկրի վրա, այլ «երկնքում»: Որովհետև չարախո-
սութիւնը շատ ավելի դաժանորեն է տան-
ջում, քան չարչարանքը. շատ առաքինի ան-
ձինք նեղութիւնները տանում են, բայց նա-
խատինքին չեն դիմանում, ինչպես Հոբը, ով
վեմի պես ամուր էր, բայց երբ բարեկամները
ընդհատում էին, զայրանում էր: Դավիթն
էլ, թողնելով բոլոր վշտերը, Սեմեիի նախա-
տինքի պատճառով Աստուծոյ վրեժխնդրու-
թեան էր կանչում²⁶³: Որովհետև Աստուծոյ հա-
մար չարչարվողները մեծապես մխիթար-
վում են, որով և համբերում են նեղութիւն-
ներին՝ պսակների [արժանանալու] հույսով,
[այդպիսով] անվանի դառնալով: Իսկ չարա-

խոսութեան դիմաց չկա մխիթարութիւն, ո-
րովհետև ավելի է ցավեցնում [հոգևոր] պա-
տերազմ մղողին՝ մինչև իսկ ինքնասպանու-
թեան մտքեր սերմանելով, ինչպես Հուդայի
պարագայում:

Որովհետև այդպես հալածեցին [ձեզնից առաջ
եղած] մարգարեներին:

Այս խոսքով [Տերն] ակնարկում է Իր
Ծնողի հետ Իր համապատվութեանը: Որով-
հետև ինչպես որ մարգարեները չարչար-
վում էին Հոր պատճառով, այդպես էլ դուք,
ասում է՝ Ի՛մ: Եվ ասելով «ձեզնից առաջ ե-
ղած»՝ ցույց է տալիս, որ երբ [Սուրբ] Հոգին
գար, [առաքյալները] նույնպես դառնալու
էին մարգարե և առավել՝ քան մարգարե:
Իսկ քանի որ արքայութեան հույսը վերաբե-
րում է ապագային, մարգարեների մասին
նշելով՝ [Տերը] մխիթարում է [առաքյալնե-
րին]: Մի՛ խռովվեք, [ասում է], երբ լուր
տարածեն, թե ձեր ուսմունքն Աստուծոյ հա-
կառակ է, որովհետև մարգարեների մասին
էլ էին այդպես ասում: [Տերը] նրանց տա-
րավ կանգնեցրեց Մովսեսի և Եղիայի մոտ²⁶⁴
և մարգարեներին հիշատակեց, որպեսզի

չկարծեին, թե եթե այստեղ Աստված վրեժխնդիր չի լինում, այնտեղ ինչպե՞ս կվարձատրի: Նաև եթե Օրենքի համաձայն վրեժխնդիր չեղավ, այլ սովորեցրեց [հույսը դնել] գալիք [կյանքի] վրա, ապա որքա՛ն առավել [այդ հույսով կմխիթարվեն] այժմ, երբ գալիք կյանքի լույսը փայլեց²⁶⁵:

Հենց սկզբից այս ճանապարհն է հարդարում՝ իբրև ոսկյա շարք ներկայացնելով պատվիրանները: Որովհետև երբ մեկը խոնարհ է, նաև սգում է մեղքերի համար, իսկ ով սգավոր է, նաև հեզ է, և հեզն արդար ու ողորմած է, իսկ արդարն ու մաքուրը՝ խաղաղարար, խաղաղարարն էլ հալածվելիս չի հակառակում, և հալածանքին համբերողը չի խռովվում, երբ բամբասանք է լսում: Եվ ուրեմն՝ քանի որ [Տերը] նրանց խրատեց այսպիսի բարձրագույն հրամաններով, որոնք [Հին ուխտում տրվածներից] մեծ էին, այնուհետև նրանց մխիթարում է գովեստով ու պատվով, որպեսզի չխռովվեն ու չասեն. «Ինչպե՞ս կարող ենք այսպիսի առաքինություն ցուցաբերել»: Եվ լսի՛ր, թե ինչ է ասում²⁶⁶:

Դո՛ւք եք երկրի աղը (Ե 13):

Աղը երկու բնական օգտակարություն ունի. կերակուրների անհամությունը վերացնում է և փտումից ու նեխումից փրկում: Այս պատճառով էլ [Տերը] հրամայում է [Իր աշակերտներին] աղ դառնալ մարդկանց հոգիների համար, որոնք անհամացել էին՝ [կորցնելով] առաքինությունների համը, և նեխել մեղքերի ապականությամբ, որպեսզի համեղանալով ու անուշանալով՝ կերակուր դառնան Աստվածության համար: Բայց ինչպես որ աղն [արդեն տեղի ունեցած] նեխումից ազատել չի կարող, այլ կարող է նյութի բնությունն առանց նեխման պահել, այդպես էլ [Տերն] աշակերտներից պահանջում է ոչ թե մեղքերի փտումից [ազատել] ու նորոգել, որը միայն Աստծո զորությանն է հատուկ և որը նա շնորհում է [Մկրտության] ավազանի միջոցով, այլ նորոգվածներին պահպանել, որպեսզի նախկին ապականությանը չվերադառնան:

Բայց ինչպե՞ս կարող էի՞նք արագ [աղ] լի՞նել և անհասանելի՞ն իրագործել: [Կարող էին]՝ կատարելով նախորդ երանինների օրենքները՝ լինելով խոնարհ ու հեզ, ողորմած, [սրտով] մաքուր

և այլն: Այդ ժամանակ նրանց աշակերտածները կջանային նմանվել իրենց ուսուցիչներին: Եվ ըստ աղի հատկություն՝ [ուսուցիչները] միշտ պիտի չհորդորեն, այլև կսկծեցնեն աշակերտներին, ինչպես և Պողոսը՝ կորնթացիներին՝ պոռնկացած [երիտասարդի] պատճառով²⁶⁷:

Իսկ «երկրի» ասելը ցույց է տալիս, որ [Քրիստոսի աշակերտներն] առավել պատվական էին, քան մարգարեները, քանի որ ոչ միայն Պաղեստինի ուսուցիչներն էին լինելու, այլև բովանդակ երկրի:

Այս համեմատությամբ [նրանց] պատվելուց հետո [Տերը] զգուշացնում է առաքինությունից համեղությունը պահպանել իրենց մեջ, որպեսզի իրենց և այլոց կորստյան պատճառ չդառնան: Այս մասին ասում է.

Եթե աղն անհամահա, ինչո՞վ կաղվի: Այլևս ոչ մի բանի վրա չի ազդի, այլ դուրս կթափվի և մարդկանցից կկոխտվի:

Ինչպես որ աղն է բոլոր համերն անուշացնում, այդպես էլ արդարությունը զարդարում է ամեն առաքինություն: Եվ ինչպես եթե աղն աղի համ չունենա, ոչ մի բա-

նի պիտանի չի լինի՝ «ո՛չ հողին, ո՛չ աղբին»՝ ըստ Ղուկասի (Ղուկ. ԺԳ 35), այդպես էլ դուք, ասում է [Տերը], որ «աղ» անվանվեցիք, եթե ձեր հոգում չունենաք արդարություն և ընդդեմ անաքուրների՝ կսկծեցնող բարք, ոչ արդարներին պիտանի կլինեք՝ բարի գործերի օրինակ դառնալով նրանց համար, ովքեր պտղաբեր առաքինություն մասն են հողի, ոչ էլ մեղավորներին, երբ մորմոքեցնող խոսքով չհանդիմանեք նրանց, ովքեր իրենց աղտեղի վարքի պատճառով նման են աղբի: Այլ Աստծո արքայությունից դուրս կնետվեք և ոտնակոխ կարվեք մարդկանցից ու դեկերից: Որովհետև եթե մի տգետ ընկնի, կարող է արժանանալ թողություն, բայց [հոգևոր] ուսուցիչը, եթե նույն խիտով հիվանդանա, կզրկվի որևէ պատասխան տալու [հնարավորությունից]: Իսկ եթե դուք ուղիղ վարք ունենաք և կսկծեցնելու համար չարերի կողմից նախատվեք, մի՛ վախեցեք, դա հոգու վնաս չէ՛, ընդհակառակը՝ շահ է: Բայց եթե մեղկ վարքով ապրեք և բամբասվելու վախից չհանդիմանեք չարերին, որ դարձի գան, այլև կեղծավորակիցներին գովեք, այդ ժամանակ կանհամանաք, ասում է

[Տերը], և ոտնակոխ կարվեք նրանցից: Որովհետև եթե [հոգևոր] ուսուցիչն ու առաջնորդն ինքը ճշմարտապես կատարում է Աստծո պատվիրանները և հանդիմանիչ խոսքերով մորմոքեցնում թուլացած հոգիներին, որքան նրանից հանդիմանվածները ստելով չարախոսեն նրան, այնքան մեծ վարձի առիթ կդառնան նրա համար՝ ըստ [Տիրոջ՝ վերն ասած] խոսքի. «Ձեր վարձը շատ է երկնքում» (Ե 12): Իսկ ով բամբասովելու վախից թույլ է տալիս, որ չարերն իրենց ուղածով շարժվեն, է՛լ ավելի մեծ արհամարհանքի կարժանանա նրանց կողմից, նաև կպատժվի Աստծուց, Ով նրանց արյունը նրա ձեռքից է պահանջելու²⁶⁸:

[Աշակերտներին] այսպես պատվելուց ու խրատելուց հետո [Տերն] առավել բարձր համեմատություն է անում նրանց համար: Ասում է.

Դուք եք աշխարհի լույսը (Ե 14):

Տե՛ս այս մեծ պատիվը. ըստ բնության Իր անունով կոչում է հողեղեն մարդկանց, որովհետև նա, Ով Իր մասին ասում էր. «Ես եմ աշխարհի լույսը» (Հովհ. Ը 12) և «Ես իբրև լույս

եկա աշխարհ» (Հովհ. ԺԲ 46), այժմ աշակերտներին է ասում. «Դուք եք աշխարհի լույսը»: Ինչպես որ Լույս Հոր Որդին իբրև լույս ծագեց աշխարհին, այդպես էլ սրանք, Լույս Որդու կողմից լույս դառնալով և կոչվելով, ուղարկվեցին աշխարհի լուսատուները լինելու: Լույս՝ ո՛չ զգալի, այլ իմանալի՝ և արեգակի ճառագայթներից էլ պայծառ: Եվ ոչ թե մեկ ազգի համար, այլ ամբողջ աշխարհի: Ինչպես որ ադն է հոգևոր, այդպես էլ՝ լույսը: Բայց նախ աղը, ապա՝ լույսը, որովհետև նախ պետք է կսկծեցնել և ապա՝ առողջացնել ու լուսավորել. որովհետև եթե աչքերի հիվանդությունը կսկծեցնող դեղերով չբուժվի, [աչքերը] չեն լուսավորվի: Եվ ինչպես որ մարմնի աչքը, երբ հաղորդակցվում է արևի լույսին, բոլոր երևացող բաները տեսնում է, այդպես էլ երբ հոգու աչքը՝ միտքը, մաքուր կյանքով ու ճշմարտությունմբ հաղորդակցվում է Աստվածություն իմանալի լույսին, [վերջինս] նրան հանում է բարձունքներ և ցույց տալիս Աստծո ծածկված իմաստությունը, իջեցնում նրան խորքերը և հայտնում Քրիստոսի աստվածային տնօրենություն գաղտնիքները: Այս պատճառով էլ

[Տերն] ասում է. «Դուք եք աշխարհի լույսը»՝ Ադամի փոխարեն, ով հաղորդակցվեց հպարտացած խավարին, և [վերջինս] խավարեցրեց նրան: Եվ «դուք եք երկրի աղբը»՝ նախաստեղծի փոխարեն, ով հող ու կերակուր դարձավ իրեն խաբողի համար: Ուստի դուք օձին կուրացնող ա՛ղ դարձեք և լո՛ւյս՝ լուսավորելու նրանից խավարածներին:

[Աշակերտներին] «լույս» անվամբ պատվելուց հետո [Տերը] խրատում է տեսանելի օրինակներով հայտնի և անշեջ պահել լույսը սեփական անձերում: Ասում է.

Ձի կարող թաքնվել այն քաղաքը, որը կանգնած է լեռան վրա (Ե 14):

Եվ ճրագը չեն վառում ու դնում ամանի տակ, [այլ աշտանակի վրա, և լույս է տալիս տանը բոլոր գտնվողներին] (Ե 15):

Քանի որ [Տերը] նեղությունից ու հալածանքից էր խոսել, որպեսզի չկարծեին, թե այդ պատճառով իրենք ստիպված են լինելու միշտ թաքնվել, քաջալերում է նրանց: Ոչ միայն չեք թաքնվելու, ասում է, այլև դրանով լուսավոր ու նշանավոր եք դառնալու ամբողջ աշխարհով. որովհետև ինչպես որ հնարավոր չէ, որ քաղաքը թաքնվի, այդպես

էլ անկարելի է, որ ձեր քարոզությունը լռի: Սրանով խրատում է նրանց նաև միշտ զգոն լինել, ասես ամենքի աչքի առաջ են: Մի՛ նայեք նրան, ասում է, որ այժմ մի անկյունում ենք նստած, որովհետև այնպես տեսանելի եք դառնալու, ինչպես լեռան վրա կառուցված քաղաքը և աշտանակի վրա դրված ճրագը: Տես ի՛նչ է խոստանում նրանց: Ովքեր իրենց երկրում [Իսկ] ճանաչված չէին ամենքի կողմից, ճանաչվեցին ծովում ու ցամաքում. ըստ Դավթի՝ «Նրանց ձայնն ամբողջ երկրով տարածվեց» (Սաղմ. ԺԸ 5). քանի որ արևի ճառագայթներից էլ առավել տարածեցին աստվածապաշտության լույսը աշխարհում:

Արդ՝ նրանով, որ ասում է, թե չի կարող քաղաքը թաքնվել, [Տերն] իր զորությունն է ցույց տալիս, որ շինեց իր Եկեղեցին երկնային լեռան՝ հավատքի հիմքի վրա: Իսկ հաջորդ [խոսքով] հայտնում է [Իր աշակերտների] համարձակությունը և հոգևոր զգաստությունը: Ասում է. «Եվ ճրագը չեն վառում ու դնում ամանի տակ»: Լույսը, ասում է, Ես եմ վառում որպես ճրագ ձեր մեջ, բայց այն անշեջ պահելը ձե՛ր գործն է՝ ոչ միայն ձեզ համար, այլև ուրիշների, ովքեր վայե-

լում են դրա լուսավորությունը: Դրանով նաև կարողություն էք ստանում այս աշխարհը ճշմարիտ հավատքին բերելու և Աստծո անվան փառավորման պատճառ էք դառնում: Իսկ եթե սրա հակառակը գործեք, մարդկանց կորստյան կմատնեք և Աստծո անունը հայհոյել կտաք:

Ասում է, որ ճրագն աշտանակի վրա դրվի: Ինչպես որ բարձր տեղում դրված ճրագը լուսավորում է բոլոր մերձակա առարկաները, և ամենքի աչքերը տեսնում են այն, այդպես էլ, երբ դուք ուղիղ առաջնորդեք, բարի օրինակ կդառնաք: Ուստիև ասում է.

Թող ձեր լույսն այնպես փայլի մարդկանց առաջ (Ե 16):

Ինչո՞ւ այլուր [Տերը] հրամայում է ծածուկ գործել բարին, իսկ այստեղ՝ մարդկանց առաջ: Երկուսն էլ ճիշտ են տարբեր ժամանակներում: Երբ մարդահաճության ախտը պատերազմում է առաքինի մարդու հետ, պետք է բարին ծածուկ գործել: Իսկ ով հաղթում է այս ախտին և ամեն ինչ անում Աստծո երկյուղից ու սիրուց, հայտնի դառնալուց ոչ միայն չի վնասվում, այլև ընդհակառակը՝ օգուտ է ստանում:

[Տերն] իրավացիորեն է [առաքինությունը] նմանեցնում լույսի. որովհետև ինչպես որ ոչ ոք չի կարող թաքցնել լույսը, այդպես էլ՝ առաքինությունը, և ոչինչ այնպես նշանավոր չի դարձնում մարդուն, ինչպես առաքինի վարքը. ո՛չ միայն կենդանության օրոք, այլև մահվան ժամանակ:

Որպեսզի տեսնեն ձեր բարի գործերը և փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է:

Ձի ասում՝ «Աստծուն», այլ՝ «ձեր Հորը, որ երկնքում է»: «Փառավորեն» ոչ թե երկրում ունեցած ձեր [հորը], այլ [ձեր]՝ ըստ շնորհի միակ [Հորը], որ երկնքում է՝ Անմահին ու Մշտնջենավորին: Սա ասելով [Տերը] ցույց է տալիս Հոր հետ Իր համապատվությունը: Մի՛ երկնչեք ձեր մասին սուտ բամբասանքներից, որովհետև շատերը ձեր բարի լինելու պատճառով կփառավորեն Աստծուն:

Իսկ խորհրդանշաբար լեռ է պետք հասկանալ Քրիստոսին՝ Նրա անդրդվելի գործության պատճառով, իբրև «Աստծո լեռ» և «պարարտ լեռ»՝ ընդդեմ «հպարտացած լեռների»²⁶⁹: Այդ լեռան վրա կառուցված քաղաքն էլ Եկեղեցին է. ըստ Եսայու՝ «Վերջին

օրերին հայտնի կդառնա Տիրոջ լեռը» (Ես. Բ 2): Այդ քաղաքի հիմքը առաքյալներն ու մարգարեներն են²⁷⁰, շինությունները՝ բոլոր արդարների դասերը: Նրանք են նաև բնակիչները: [Տերն] ասում է. մի՛ երկնչեք, որովհետև այս քաղաք Եկեղեցին, որ հաստատված է երկնային լեռան վրա, չի թաքնվում, և «դժոխքի դռները նրան չեն գրավի» (Մատթ. ԺԶ 18): Իսկ ճրագն առաքյալներն են, ինչպես մի ժամանակ՝ Հովհաննես [Մկրտիչը], և լույսը Սուրբ Հոգու շնորհն է: Եվ լույսը վառողը՝ Քրիստոսը, Ով նրանց մեջ փչեց Սուրբ Հոգին²⁷¹, հրամայում է, որ այդ [շնորհը] չծածկեն հաճույքների ու երկչոտության ամանի տակ, այլ դնեն քաջության ու ճշմարտության աշտանակի վրա: Ըստ մարգարեի՝ «Զորությա՛մբ բարձրացրու քո ձայնը, [ավետարանի՛չ դու Երուսաղեմի]» (Ես. Խ 9):

«Եվ լույս է տալիս տանը բոլոր գտնվողներին»: Տունն այս աշխարհն է, տանը գտնվողները՝ մարդկային ցեղը: Նաև՝ տունը մարմինն է, և բնակիչը՝ հոգին, լույսն էլ առաքյալների քարոզությունն է, որով լուսավորվեցին մարդկանց հոգիները Տիրոջ գիտությունը:

Մի՛ համարեք, թե եկա խափանելու Օրենքը [կամ Մարգարեներին. խափանելո՛ւ չեկա, այլ լրացնելո՛ւ²⁷²] (Ե 17):

Իր վարդապետություն սկզբում [Տերն] ի դեմս Իր աշակերտների խոսեց, [երբ ասաց]. «Երանի՛ հոգով աղքատներին», «Երանի՛ սգավորներին» և «Դուք եք աշխարհի լույսը», «Դուք եք երկրի աղը»: Իսկ այժմ, ասելով «Մի՛ համարեք, թե եկա խափանելու Օրենքը», հավանաբար օրենսդատներին ու փարիսեցիներին է դիմում, ովքեր ժողովրդի հետ այդ լեռան վրա էին գտնվում՝ լսելու, թե [Հիսուսն] ինչ է խոսում: Կամ էլ նրանց ընդհանուր կարծիքի դեմ է պատասխան տալիս, որ կարծում էին, թե Նա Աստծուն հակառակ է և [Մովսիսական] օրենքի խափանիչ: Բայց եթե մեկը համարի, թե սա էլ, ինչպես նախորդ խոսքերը, ուղղված է աշակերտներին, անպատշաճ չի լինի, որովհետև փոքր-ինչ հետո, խոսքը շարունակելով, [Տերն] ասում է. «Եթե ձեր արդարությունն ավելի չլինի, քան օրենսդատներինն ու փարիսեցիները, արքայություն չեք մտնի» (Ե 20): Քանի որ աշակերտները նախ այդ Օրենքով էին արդարություն գործում ու դրա

մեջ էին հաստատված, ուստի, որպեսզի չկարծեին, թե [Հիսուսը] դա վերացնում ու դրան հակառակ մի ուրիշ [օրենք] է Իրենից հաստատում, ասաց. «Մի՛ համարեք, թե եկա խափանելու Օրենքը»:

Հետևաբար, պետք է նախ քննել, թե ինչ է Օրենքը, որտեղից սկսվեց և ինչի համար սահմանվեց: Օրենքը սահմանում է և եզրակետ, ինչպես, [օրինակ, Աստծո օրենքը] ծովի համար. «Այդտե՛ղ կհասնես [և չանցնես]» (Հոբ ԼԸ 11): Եվ կան [օրենքներ], որ Հոգևոր են, կան էլ, որ մարմնավոր են: Հոգևորն Աստծուց է, իսկ մարմնավորը՝ մարդկանցից: Եվ ինչպես որ այս զգալի աշխարհում վայրերը՝ քաղաքներ, գյուղեր և թագավորների իշխանական [տարածքներ], միմյանցից բաժանվում են սահմանադրությամբ, և ովքեր ենթակա են թագավորության սահմանադրությանը, թագավորի իշխանության ներքո են գտնվում, իսկ ովքեր [այդ սահմանադրությանը] չեն ենթարկվում, [թագավորի դեմ] ապստամբներ են, այդպես էլ ովքեր ենթակա են Աստծո կամ մարդկանց օրենքին, [գտնվում են] օրինադրի հնազանդության ներքո, իսկ եթե նրա օրենքին չեն են-

թարկվում, նրան հակառակ են և ապստամբ:

Հոգևոր օրենսդրությունն Աստծուց սկսվեց մեր գոյության սկզբում և նախ տրվեց առաջին մարդուն պտղի [հրամանով]²⁷³, որը նա չպահեց: Այնուհետև՝ մինչև ջրհեղեղը, [տրվեց] Սեթի տանը, որպեսզի գատվեր ու տարբերվեր Կայենի տնից: Ջրհեղեղից հետո՝ մինչև Աբրահամ, [տրվեց] Նոյին՝ մարդու արյուն չհեղելու և շունչ ունեցող արյունոտ միս չուտելու [հրամաններով]²⁷⁴: Աբրահամի տանն էլ՝ մինչև Մովսես, [տրվեց] թլփատության ուխտով²⁷⁵: Մովսեսի միջոցով [տրվեց] Իսրայելի տասներկու ցեղերին տասնաբանյայի գրավոր տախտակներով՝ մինչև Քրիստոսի առաջին գալուստը: Իսկ Քրիստոսով, մինչև Նրա երկրորդ գալուստը, ո՛չ թե գրով, այլ [Սուրբ] Հոգով, [տրվեցին] նոր պատվիրաններ բոլո՛ր ազգերին, որոնք հնազանդվեցին ավետարանին:

Օրենքն այն պատճառով է սահմանվել, որ դաստիարակի մեր [մարդկային] բնությունը, ինչպես ասում է առաքյալը²⁷⁶: Որովհետև ինչպես որ դայակները մանուկներին մեղմուցյամբ են խրատում, բայց որքան [երե-

[խաներն] աճում են, [դայակները] խստու-
թյունը մեծացնում են, մինչև [երեխաները]
հասունանան, այդպես էլ օրինադիր Աստ-
ված, քանի դեռ մեր բնությունը մանուկ էր,
ավելի թեթև օրենքներով էր խրատում, և
որքան [մարդկային բնությունն] աճում էր
իմաստության մեջ, [Աստված այնքան] ավե-
լացնում էր նաև օրենքի ծանրությունը:
Մարդկության միտքը մանուկ էր մինչև Մով-
սես, ուստի չէր կարող գրել-կարդալ սովո-
րել. երեխա էր Մովսեսից հետո մինչև Քրիս-
տոս, ուստի ուսանեց քարե տախտակներով՝
որպես պնակիտներով, և զանազան ձեռքերով,
ինչպես երեխաները՝ ուսուցիչների ձեռքով.
և երիտասարդ է Քրիստոսից հետո, ուստի ձե-
ծով չի պատժվում, ինչպես երեխաները, այլ
ուսուցանվում է իմաստությամբ ու խրատով,
որոնք սովորեցնում է Քրիստոսի օրենքը:
Իսկ կատարյալ մարդ կղառնա հանդերձյա-
լում՝ ըստ առաքյալի. «...մինչև հասնենք, –
ասում է, – կատարյալ մարդուն՝ Քրիստոսի
կատարյալ հասակի չափով» (Եփես. Գ 13):

Եվ ինչպես որ հաջորդների համար Աստ-
ծո սահմանած օրենքը չէր խափանում նա-
խորդներին, այլ ցույց տալիս, որ պահում

էր թե՛ իրեն, թե՛ նախնիներին, ինչպես որ
Աբրահամի [օրենքը]՝ Նոյին, Մովսեսին՝
Աբրահամինն ու Նոյին, այդպես էլ Քրիս-
տոսի այս [օրենքը] չի խափանում Մովսեսի-
ն, այլ իր մեջ պարունակում է այն, ինչպես
մեծը՝ փոքրը: Այդպես լուսատուների ոլորտ-
ները [պարունակում են] միմյանց և երկիրը,
և նկարիչը թագավորի պատկերը նախ կա-
պարով է գծում տախտակի վրա և ապա՝ ծի-
րանափառ զարդարելով շքեղացնում, բայց
վերջին հորինվածքով չի վերացնում կապա-
րով [արված] առաջին գծագրությունը, այլ
ընկղմելով ծածկում է սևությունը զանազան
պայծառ [գույներով]: Այդպես էլ մեր բնու-
թյան նկարիչ Քրիստոսը չեկավ խափանելու
[Մովսեսական օրենքի] տխրատեսիլ ստվե-
րի²⁷⁷ թերությունը, այլ պայծառ ու կատար-
յալ օրենքով լրացնելու: Այդ պատճառով էլ
ասում է. «Չեկա խափանելու»:

Նաև քանի որ պատրաստվում էր հնից
ավելի մեծ օրենք սահմանել, նախապես ճա-
նապարհ է հարգարում: Որպեսզի չկարծեն,
թե առաջին [օրենքը] խափանում է և իրե-
նը հաստատում, ասում է՝ Իմը չի խափա-
նում նախկինը, այլ լրացնում նրա թերին:

Աղքատանալը, սգալը, հեզ լինելը և մնացած բոլորն ավելի բարձր չեն, քան նախկին [օրենքը]. [նոր օրենքը] գծագրված էր [հնում], իսկ [հինը] ծածկված է [նորում]: Որովհետև սպանությունը բարկությունից է ծնվում, շնությունը՝ ցանկասիրությունը նայելուց, իսկ ով սրանց արմատները հանում է մտքից, այդպիսին այլևս չի բռնադատվում հասնելու կատարելության, այլ դառնում է իբրև երեքպարսպյան աշտարակ, քանի որ [արդեն իսկ] դռների մոտ չի թողնում, որ թշնամին ծանր կռիվներ մղի:

[Այս խոսքն ասելու պատճառը] նաև այն է, որ թեպետ հրեաներն իրենք չէին պահում Օրենքը, սակայն Օրենքի խնամածուները լինելով՝ հակառակում էին Քրիստոսին, և քանի որ Նա քահանայական ցեղից չէր և չաբաթները չէր պահում, ուստի Աստծուն հակառակ էին Նրան համարում:

Բայց ամեն տեղ չէ՛, որ [Տերն] այսպես էր գործում: Որպեսզի չար պատճառ չթողնի [հրեաներին]՝ կարծելու, թե ինքը տկար է, մեղքեր ներելիս, դեեր հալածելիս, ծովը սանձելիս միայն խոսքով հրաման էր տալիս: Իսկ փոքր բաներում նայում էր երկինք և ա-

ղոթում Հորը, ինչպես հացը բազմացնելիս և այլն, և սա անում էր, որպեսզի Իրեն օտար չհամարեն Հորը: [Այսպես էր վարվում] նաև խոնարհություն սովորեցնելու համար, ինչպես որ նաև Իր ով լինելը չհայտնեց հրեաներին, քանի որ մարմին էր հագել: Սակայն, թեպետ խոսքով ծածկում էր, գործով՝ [ի ծնե] կույրի [աչքերը բանալու], ձուկը [բազմացնելու] և այլ շատ օրինակներով, ցույց էր տալիս, որ ինքն է արարել ամբողջ աշխարհն ու մարդուն:

Եվ ինչո՞ւ զարմանալ հրեաների վրա. եթե աշակերտները, որ այնքան զորություններ էին տեսնում, չէին կարողանում ամեն ինչին հասու դառնալ, ապա ովքեր ամեն իմաստություն հանդեպ կույր էին, ինչպե՞ս Նրան Աստծուն օտար չէին համարի: Այդ պատճառով էլ [Տերն] այստեղ ոչ թե մեկ անգամ է ասում խոսքը, այլ կրկնում՝ հաստատելու համար: «Մի՛ համարեք, թե եկա խափանելու Օրենքը. խափանելո՞ւ չեկա, այլ լրացնելո՞ւ»: Սրանով ոչ միայն հրեաների բերանն է փակում, այլև որոշ հերձվածողների, ովքեր ասում են, թե Հին Կտակարանը սատանայից է: Այսպիսիներին կա-

սենք. [եթե այդպես է, ապա] Քրիստոսը սատանայի բռնատիրությունը չվերացրեց, քանի որ նրա օրենքը չխափանեց, այլ նույնիսկ լրացրեց, ուստի այսպես ասողը նմանվում է [նրանց, ովքեր] Տիրոջ մասին [ասում էին], թե Բեեղզեբուդի միջոցով է դևերը հանում²⁷⁸: Բայց մենք, թողնելով այսպիսիների հիմարությունը, քննենք, թե Քրիստոսն ինչպե՛ս լրացրեց Օրենքը կամ մարգարեներին:

Օրենքը լրացրեց նրանով, որ ոչ մի բանով չխախտեց այն, ինչպես ասաց Հովհաննես [Մկրտչին]. «Այդպե՛ս է վայել, որ կատարենք ամբողջ արդարությունը» (Մատթ. Գ. 15), իսկ հրեաներին՝ «[Զեզնից] ո՞վ կհանդիմանի Ինձ մեղքի համար» (Հովհ. Ը 46): Օրենքը լրացրեց նաև Իր նո՛ր օրենքներով. չբարկանալու [օրենքով]՝ «մի սպանիր»-ը, ցանկասիրությամբ չնայելու [օրենքով]՝ «մի շնացիր»-ը, այտն ապտակման տալու [օրենքով]՝ [«աչքի դիմաց՝ աչք, ատամի դիմաց՝ ատամ»-ը]:

Իսկ մարգարեներին [լրացրեց] նրանով, որ իրականացրեց Իր մասին նրանց խոսքերը, ինչպես որ ավետարանիչներն են ասում. «...որպեսզի կատարվեր Նրա մասին գրված

ամեն ինչ»²⁷⁹: Որովհետև սկզբից՝ Իր ծննդից, մինչև հարությունն առնելը՝ գործով իրականացրեց բոլոր մարգարեների [խոսքերը]՝ ըստ այսմ. «Ահա ելնում ենք Երուսաղեմ, և կկատարվեն Իմ մասին [մարգարեների բոլոր] գրածները» (Ղուկ. ԺԸ 31):



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Ա, Հովհ. Դ 18
- 2 Այսինքն՝ Քրիստոսից (Եփես. Ա 22, Դ 15, Կող. Ա 18, Դ 10, 19 ևն):
- 3 Դյուրընկալ - դյուրավ՝ հեշտությամբ ընկալվող՝ հասկացվող
- 4 Իմանալի - հոգևոր, աննյութական, ոչ թե զգայարաններով ճանաչվող, այլ մտքով՝ իմացական կարողությամբ:
Զգալի - մարմնավոր, ֆիզիկական, նյութական:
- 5 Նկատի ունի ժամանակների վախճանին (Ա Պետ. Ա 20) Տեր Հիսուսի մարդանալը՝ աստվածային բնության՝ մարդկայինի հետ միավորվելը:
- 6 Ծննդ. ԺԸ 1-15
- 7 Ծննդ. ԻԸ 10-22
- 8 Մարկ. Դ 26-28
- 9 Եբր. Ժ 1
- 10 Մատթ. Դ 19
- 11 Ելք ԻԴ 12
- 12 Սաղմ. ԽԵ 5
- 13 Հոգու մասերը կամ «գորությունները», ըստ հին հունական իմաստասիրության և Եկեղեցու հայրերի որդեգրած տեսության, երեքն են՝ բանական, ցասմանկան և ցանկական: Այս մասին առավել հանգամանորեն բացատրված է Գրիգոր Վարդապետի «Խոսք ճշմարիտ հավատքի և առաքինասեր վարքի մասին»

- գործում (Երևան, 1992թ., էջ 22-32): Տես նաև Ս. Ստամբուլյան, Մեղայ Աստուծոյ, Սբ Էջմիածին, 2001թ., էջ 42-45:
- 14 լանջք - կրծքավանդակի մասը
 - 15 «Նվաստության ախտով» նկատի է առնված արիության հակադիր մոլորությունը՝ երկչոտությունը:
«Ախտ» եզրը կրոնական գրականության մեջ սովորաբար գործածվում է հոգևոր հիվանդության՝ մոլորության, մեղսածին կրքի իմաստով:
 - 16 Եզեկ. Ա
 - 17 զվարակ - երիտասարդ արջառ, փոքր եզ կամ ցուլ, հորթ
 - 18 Բ Օր. ԺԷ 6, ԺԹ 15
 - 19 Ծճճ. ԻԸ 10-22
 - 20 Հավանաբար նկատի է առնված Մատթեոսի Ավետարանի սկզբում «Քրիստոս» (նշանակում է «օծյալ») անվան գործածությունը (սակայն Մարկոսը նույնպես իր Ավետարանը սկսում է այս անվան գործածությամբ):
 - 21 տնօրենություն - այստեղ՝ Քրիստոսի մարդեղության խորհուրդը: Ընդհանրապես «տնօրենություն» են կոչվում երկրի վրա Տիրոջ կատարած այն գործերը կամ Նրա հետ տեղի ունեցած այն իրադարձությունները, որոնք իբրև նպատակ ունեն մարդկության փրկությունը, այսինքն՝ Տիրոջ տնօրինություններն էին փրկագործության համար: Այսպես՝ տնօրենություն են, օրինակ, Տիրոջ ծնունդը, մկրտությունը Հովհաննեսից, խաչելությունը, թաղումը, հարությունը և այլն: Թեև «տնօրենություն» գրաբարյան բառը նույն «տնօրինություն»-ն է, սակայն մեր թարգմանության մեջ, երբ խոսքը Տիրոջ փրկագործական տնօրինության կամ տնօրինությունների մասին է, պահպանել ենք գրա-

- բարյան ձևը (այսինքն՝ «ե»-ով և ոչ թե «ի»-ով)՝ պարզապես տարբերակում մտցնելու համար իմաստային երկու գործածություններն արտահայտող բառերի միջև:
- 22 Այս նշանավոր մտքի հեղինակը սբ Հովհան Ոսկեբերանն է: Հենց այս մտքով է նա սկսում Մատթեոսի Ավետարանի իր մեկնությունը: Սբ Ն. Շնորհալու գործածած զլխավոր աղբյուրներից մեկը հենց Ոսկեբերանի այս մեկնությունն է:
 - 23 Ելք ԺԹ
 - 24 Ես. Թ 2
 - 25 Այսինքն՝ մեր մարդկային բնությունն առած ու մարդացած Աստվածորդու համբարձումից հետո:
 - 26 Ա Պետ. Ե 13
 - 27 Նկատի ունի Սիմա լեռը (Ելք ԺԹ):
 - 28 «Հիսուս»-ն ու «Հեսու»-ն նույն անվան տարբերակներ են (եբրայերեն՝ Յեշու'ա-Յիշու'ա):
 - 29 Օրենագետները (գրաբարում՝ «դպիրք») Սուրբ Գրքի և Մովսիսական օրենքի գիտակներ էին, ովքեր նաև «ուսուցիչ» («ուսբբի») էին կոչվում, քանի որ բացատրում էին ժողովրդին Օրենքի պատվերները: Նրանք մեծ համբավ ունեին ժողովրդի մեջ իբրև գիտուն անձինք և Բաբելոնյան գերությունից (ն.թ. 538 թ.) հետո ժողովրդի մեջ նույն դերն էին կատարում, ինչ մարգարեները՝ նախքան գերությունը:
 - 30 Մատթ. Բ 5-6
 - 31 Ղուկ. Ա 32
 - 32 Մատթ. Թ 27
 - 33 Մատթ. ԻԲ 41-42
 - 34 Երեմ. Լ 9, Եզեկ. ԼԳ 23, ԼԷ 24, Օսեե Գ 5
 - 35 Իսրայելը Հակոբին Աստծուց տրված նոր անունն է: Տես Ծճճ. ԼԵ 10:

- 36 Ծճճդ. ԻԵ 21-23
- 37 Ծճճդ. ԻԵ 25-34
- 38 Ծճճդ. ԽԹ 4, ԼԴ 25
- 39 Փարիսեցիները (եբրայերեն՝ «պերուշիմ») բաժանվածներ) Ա.Ք. հավանաբար Բ դարում ծագած հրեական մի տարածված աղանդի հետևորդներ էին, ովքեր Հիմ Կտակարանի գրքերը մեկնում էին տառակերպորեն և շատ մեծ տեղ տալիս մարդկանց կողմից ստեղծված ավանդույթներին: Ունեին սրբակյաց մարդկանց համբավ, սակայն նրանց ամենից շատ բնորոշող հատկությունն էր, ինչ պատճառով և «փարիսեցի»-ն դարձել է «կեղծավոր» բառի հոմանիշ: Նրանց մեջ, սակայն, կային և իրասպես առաքիճի անձինք, ինչպես, օրինակ, Նիկողեմոսը (Հովհ. Գ, Է, ԺԹ): Փարիսեցիները հավատում էին հոգու անմահությանը, մեռելների հարությանը, դատաստանին, ինչպես նաև բախտին կամ ճակատագրին՝ ընդունելով հանդերձ մարդու կամքի ազատությունը:
- 40 Ծճճդ. ԼԸ, ԼԷ 26-27
- 41 Տե՛ս Ծճճդ. ԼԸ գլուխը Հուդայի և նրա հարս Թամարի մասին:
- 42 Բ Թագ. ԺԱ, 2-ԺԲ 24
- 43 Ելք 23
- 44 Ահարոնը, ինչպես հայտնի է, հրեա առաջին քահանայապետն էր: Իսկ Նաասոնը Թվեր Բ 3-ում կոչվում է «Հուդայի որդիների իշխան» և ներկայացվում բոլոր հրեա իշխանների մեջ պատվով առաջինը (տես նաև Թվեր Բ 13, Ժ 14): Ռաբինական գրականության մեջ Նաասոնը (Նախշոն) կոչվում է «թագավոր» (Sifre, Num. 47):

- 45 կամ՝ Ռախար
- 46 Հեսու Բ
- 47 Հեսու Բ 21, Զ 22-23
- 48 Ծճճդ. ԺԹ 37
- 49 Այսինքն՝ չէր պատկանում Իսրայելի ժողովրդին, այլ լինելով հեթանոս այլազգի՝ ընդունել էր հրեական կրոնը:
- 50 Ծճճդ. ԽԹ 10
- 51 Բ Թագ. ԺԱ-ԺԲ
- 52 Դ Թագ. Ը 16-27, Թ 27-29
- 53 Դ Թագ. ԺԱ-ԺԲ, Բ Մճ. ԻԴ: Հովասը սպանել է սովել ոչ թե Հովիդայե քահանային, այլ նրա որդուն՝ Զաքարիա քահանային (Բ Մճ. ԻԴ 15, 16, 20-22):
- 54 Բ Մճ. ԻԲ 11
- 55 Դ Թագ. ԺԴ, Բ Մճ. ԻԵ
- 56 Եզր Բ-Զ
- 57 Բ Օր. ԻԵ 5-10
- 58 Ծճճդ. ԽԹ 10-11
- 59 Դան. Թ 24-25
- 60 Աստվածաշնչում հատակ նշում չկա, թե Ղովտի փեսաները նրա տանն էին (Ծճճդ. ԺԹ 8, 12-14):
- 61 Միք. Ե 2, Մաղ. Գ 1, Օսեե ԺԱ, 1
- 62 Ես. ԺԱ, 1
- 63 Գաղ. Դ 4, Հովհ. Ա 14
- 64 Հովհ. Թ 35, 37, Ժ 36 նճ. Հովհ. Է 42
- 65 Բ Օր. ԻԲ 13-21, 23-24
- 66 Ղուկ. Ա 41
- 67 Հովհ. ԺԹ 26-27

- 68 Ծճ. Բ 19-20
- 69 Գրաբար բնագրում՝ Յետուայ փխ. Աւսեայ:
- 70 Այսինքն՝ Հետու:
- 71 Ես. Է 14
- 72 Բ Օր. ԻԲ 25-27
- 73 Խոսքը Եսայի մարգարեի նորածին որդու մասին է: Այն ասվում է Տիրոջ կողմից Եսայի մարգարեին:
- 74 Մատթ. ԺԲ 46 (Մարկ. Գ 31, Ղուկ. Ը 19), Մատթ. ԺԳ 55, Հովհ. Բ 12, Է 3, Գործք Ա 14
- 75 Հովհ. ԺԹ 25-27
- 76 Խոսքը Հովհաննես առաքյալի մասին է, և ակնարկվում է Հովհաննես առաքյալի ննջման պատմության մեջ եղած հետևյալ խոսքը՝ ասված առաքյալի կողմից Տիրոջն ուղղված աղոթքում. «Ո՛վ Դու, որ ինձ մինչև այժմ կանանց հետ խառնակությունից հեռու պահեցիր: Ո՛վ Դու, որ անգամ կնոջը նայելը ծանր համարեցիր ինձ համար» (հատված Ը):
- 77 Այսինքն՝ մարդու բնությանը հատուկ և այդ բնությունից պարտադրվող ու մեղսածին կրքերը, ինչպես բարկության, նախանձի և այլ կրքերը՝ իրենց մեղսածին գործածությամբ (մարդկային կրքերն ի բնե մեղանչական չեն, եթե գործածվում են իրենց ճիշտ նպատակով):
- 78 Ղուկ. Ա 31
- 79 Այսինքն՝ աստվածային բնության:
- 80 «Եփրաթա»-ն նույնպես եբրայերեն բառ է, Բեթղեհեմի սկզբնական անունն է (Ծճնդ. ԼԵ 16, 19) և նշանակում է պտղաբերություն:
- 81 Ծճնդ. Գ 16
- 82 Դսն. Թ 24-26

- 83 Ելք ԺԳ 21-22, ԺԴ 19
- 84 Մատթ. Բ 9
- 85 Այստեղ գրաբ. թարգմանության «հնդիկ»-ը գործածվում է հունարեն յոթանասնից թարգմանության «եթովպացու» փոխարեն: Այսու՝ «հնդիկ» բառը գրաբարում գործածվել է ավելի լայն իմաստով: Սբ Ն. Շնորհալին այն հասկանում է, ուրեմն, նաև «պարսիկ» իմաստով:
- 86 Գործք ԺԷ 23
- 87 Վկայակոչության աղբյուրը չգտանք:
- 88 Բաբելացիները ն.Ք. 586-538 թթ. իշխեցին Հրեաստանի վրա՝ բազմաթիվ հրեաների գերեվարելով Բաբելոն: 538 թ.-ին Բաբելոնը պարտվեց Պարսից Կյուրոս թագավորին և անցավ Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ: Հրեաստանը նույնպես 538-333 թթ. գտնվում էր պարսիկների տիրապետության տակ: Մեկնիչը Բաբելոնն ու բաբելացիներին շփոթում է պարսիկների և Պարսից երկրի հետ: Սակայն պարսիկները, ընդհակառակը, Բաբելոն գերեվարված հրեաներին թույլ տվեցին վերադառնալու իրենց հայրենիք:
- 89 Քահանաների և քահանայապետերի մասին տես Ելք ԻԸ-ԻԹ, Ղևտ. ԻԱ:
- 90 Միք. Ե 2
- 91 «Զորոբաբել» նշանակում է «Բաբելոնում ծնված»:
- 92 Այսինքն՝ Քրիստոսի ծննդից շուրջ երկու տարի առաջ:
- 93 «Անապատում կանչողի ձայնը...» (Ես. Խ 3, Մատթ. Գ 3):
- 94 Ղուկ. Բ 7
- 95 Ծճնդ. Գ
- 96 Օսեե ԺԱ 1

- 97 Ելք ԺԲ 35-36
- 98 Դան. Գ, ԺԴ
- 99 Նկատի է առնված եզրիպտացիների կողմից հրեաների արու գավակների ոչնչացումը ջրերի մեջ ընկղմամբ և աղջիկ գավակներին կենդանի թողնելը (Ելք Ա):
- 100 Ակնարկ այն բանի, որ առաջին կազմակերպված վանքերը՝ թե՛ միայնակեցական, թե՛ համայնակեցական, հիմնվեցին Եգիպտոսում, որով այն դարձավ վանական կյանքի օրրանը:
- 101 Այսինքն՝ առաջին ժողովուրդը, որն ընտրվեց Աստծուց Նրան պաշտելու համար՝ իբրև Նրա սեփական ժողովուրդ, մինչ մյուսները պաշտում էին այլևայլ կուռքերի:
- 102 Ելք ԼԲ
- 103 Սաղմ. ԾԵ 37-38, Երեմ. Է 31, ԺԹ 5, Եզեկ. ԺԶ 20 ևն
- 104 Հովհ. ԺԷ 1-5
- 105 Այսինքն՝ երկնքից «իջնելը»՝ մարդանալը, և երկրից երկինք ելնելը՝ համբարձումը:
- 106 Ա. Թագ. ԺԹ-ԻԶ
- 107 Ելք Ա, 22-Բ 10, ԺԴ 26-28
- 108 Քանի որ Հերովդեսը հռոմեացիների աջակցությամբ ու բռնությամբ էր տիրացել Հուդայի թագավորության գահին, ուստի շարունակ մտավախություն ուներ այն կորցնելու: Այս պատճառով էլ նա նույնիսկ սպանել է իր կին Մարիամնեին և նրանից ունեցած իր երկու որդիներին (ունեցել է ուրիշ կանայք և որդիներ ևս), իսկ մահվանից առաջ սպանել է տվել նաև իր որդիներից մի ուրիշին: Ինքն էլ վախճանվել է դաժան հիվանդությամբ (Հովսեփոս Փլավիոս, «Հրեական հնախոսություն», գիրք 17. Եսաբիոս Կեսարացի, «Եկեղեցական պատմություն», գիրք Ա, գլխ. 6, 8):

- 109 Ա. Թագ. ԻԲ 17-18
- 110 Ա. Թագ. ԻԲ 20
- 111 Մատթեոս ավետարանիչն ասում է, որ կոտորվել են Բեթղեհեմում և «նրա բոլոր սահմաններում» գտնվող մանուկները: Ուստի Ն. Շնորհալիմ կամ նրա գործածած աղբյուրը համարում է, որ մանուկների կոտորածը տարածվել է մինչև այն մասերը, ուր գտնվում էր Հովհաննես Մկրտչի ծննդավայրը՝ Հուդան (Ղուկ. Ա 39), որը, ըստ ավանդության, ներկայիս էլն Քերեմ բնակավայրն է և գտնվում է Երուսաղեմից արևմուտք՝ լեռնային մասում: Իսկ Բեթղեհեմը գտնվում է Երուսաղեմից շուրջ 7 կմ հարավ-արևմուտք:
- 112 Այդ այգին հրեա ժողովուրդն է (հմմտ. Մատթ. ԻԱ, 33-41):
- 113 Այսինքն՝ մանուկներին կոտորած Հերովդես Մեծի թոռ Հերովդես Ագրիպասի, ով սպանեց Հակոբոս Զեբեդյան առաքյալին (Գործք ԺԲ):
- 114 Գործք ԺԲ 1-19
- 115 Երեմ. ԼԱ 15
- 116 Ծննդ. ԼԵ 19
- 117 Թեև Բեհիամինը ծնվել է Բեթղեհեմում, սակայն Եգիպտոսից հրեաների վերադարձից հետո՝ Իսրայելի ցեղերի միջև երկրի բաժանման ժամանակ, այս քաղաքը բաժին ընկավ ոչ թե Բեհիամինի, այլ Հուդայի ցեղին (Հեսու ԺԵ 59). Բեհիամինին հատկացված բաժնում գտնվում էր Երուսաղեմ քաղաքը (Հեսու ԺԸ 28):
- 118 Լիան Հակոբի առաջին կինն է՝ Ռաբելի ավագ քույրը, ով ամենից շատ գավակներ ծնեց Հակոբից (Ծննդ. ԻԹ-Լ):
- 119 «Նոր Սիոն» է կոչվում Եկեղեցին:
- 120 Պողոս առաքյալը Բեհիամինի ցեղից էր (Հռոմ. ԺԱ 1), ուստիև Ռաբելը նրա նախամայրն էր:

- 121 Այսինքն՝ ի սեր «Քրիստոսի, Ով մեզ համար Իրեն մահվան մատնեց:
- 122 Այսինքն՝ ոտնատակ տալով՝ չտրորեմք:
- 123 Ա. Մճ. Թ 1, Բ Մճ. ԺԳ 22, ԺԶ 11 ևճ
- 124 Այս տեսակետի պատճառ կարող է լինել այն, որ Երեմիան մարգարեացել է Հուդայի Հովսիա և ապա հաջորդած մի քանի թագավորների օրոք, իսկ այդ թագավորների մասին պատմվում է Դ Թագ. գրքում (ԻԱ-ԻԴ): Երեմիայի մարգարեության և Հովսիայի թագավորության ժամանակամիջոցում էր, որ գտնվեց Մովսեսի Օրենքի գիրքը: Իսկ «Թագավորների» Դ գրքի այն մասերը, ուր խոսվում է Եսայի մարգարեի մասին (զվ. ԺԸ 17-ի 19), ենթադրվում է, թե գրել են Եսայու աշակերտները:
- 125 Դ Թագ. ԻԲ 8, Բ Մճ. ԼԴ 14
- 126 Նկատի է առնված Բաբելոնյան գերությունը, երբ բազմահազար հրեաներ, առաջին անգամ՝ Հովաքին թագավորի հետ (մ.թ. 597 թ.), երկրորդ անգամ՝ Երուսաղեմի գրավումից հետո (մ.թ. 587 թ.), գերեվարվեցին Բաբելոն:
- 127 Ղուկ. Բ 22-39
- 128 «Անապատ» բառն Ավետարանում և հայրաբանական գրականության մեջ գործածվում է ոչ թե այժմյան իմաստով, այլ անմարդաբնակ վայրի, որը կարող է լինել և լեռնային:
- 129 Ղուկ. Գ 21-23
- 130 Մատթ. ԻԴ 3-51
- 131 Մարկ. Ա 4, Ղուկ. Գ 3
- 132 Գրաբ. «բարբառ»-ը նշանակում է մարդկային ձայն, խոսք: Թարգմանության մեջ անհրաժեշտ նկատվեց պահել գրաբարյան բառը, քանի որ հետո Օնորհալին հենց այդ բառն է մեկնելու:

- 133 Ես. Խ 3
- 134 Այսինքն՝ սատանայի:
- 135 խառնակեցիկ - անկարգ, անօրեն
- 136 առապար - քարքարոտ, խորդուբորդ տեղանք
- 137 Ծճճ. Գ 17-19
- 138 Փիլիպ. Բ 7
- 139 Սաղմ. Լ Գ 21
- 140 Ղևտ. ԺԱ, 22
- 141 Նկատի ունի Երուսաղեմի տաճարի զոհասեղանը:
- 142 Սաղմ. ԺԸ 11
- 143 չնաշխարհիկ - ո՛չ այս աշխարհից, գերաշխարհիկ, նորահրաշ
- 144 Գործք Ը 9-24
- 145 Մատթ. ԻԱ 26-27
- 146 Ելք ԼԲ
- 147 Բ Օր. ԼԲ 32
- 148 Մատթ. ԻԳ 32
- 149 Մարկ. ԺԱ 12-20
- 150 Զաք. Ե 1
- 151 Սաղմ. ՀԹ 13
- 152 Ես. ԺԶ 8, Հովել Գ 13 ևճ
- 153 Հովհ. ԺԵ 1-2
- 154 Գրաբարյան «խրաց» բառը թարգմանության մեջ պահել ենք, քանի որ փոքր-ինչ հետո Օնորհալին մեկնելու է այն:
- 155 Մատթ. ԺԱ 9, Ղուկ. Է 28
- 156 Գործք Բ 1-4

- 157 Ելք Գ, ԺԹ, Եզեկ. Ժ
- 158 Ա, Տիմ. Բ 1-4
- 159 Ըստ Սուրբ Գրքի (Եփես. Դ 13)՝ մարդու կատարյալ հասակ է համարվում 30 տարեկանը, երբ Տերը մկրտվեց և սկսեց քարոզությունը (Ղուկ. Գ 23):
- 160 Մարկիոնականները հետևորդներն էին գնոստիկ աղանդավոր Մարկիոնի, ով ապրել և քարոզել է Բ դարում Հռոմում:
- 161 Սուրբ Հոգու յոթ շնորհներ են համարվում՝ Տիրոջ երկյուղը, աստվածաշնորհությունը, գիտությունը, զորությունը, խորհուրդը (կամ խրատը), իմացումը և իմաստությունը: Սրա հիմքը Ես. ԺԱ, 2 խոսքն է:
- 162 Փեսավեր - փեսայի բարեկամ
- 163 Մատթ. ԺԱ, 11, Ղուկ. Է 28
- 164 Կող. Ա, 15
- 165 Նկատի է առնված այն, որ խաչի վրա մահը ճաշակելուց հետո Տեր Հիսուսը հոգով իջավ դժոխք, ուր և այդ ժամանակ գտնվում էր նաև Հովհաննես Մկրտիչը, քանի որ մինչ այդ բոլոր հոգիները՝ թե՛ արդարների, թե՛ մեղավորների, մահվանից հետո իջնում էին դժոխք: Տեր Հիսուսը, մուսուլման իջնելով այնտեղ, դժոխքից ազատագրեց և դրախտ փոխադրեց բոլոր արդարների հոգիները՝ սկսած մեր նախածնողներից՝ Ադամից ու Եվայից, մինչև Հովհաննես Մկրտիչը: Տիրոջ՝ դժոխք իջնելու և հոգիներն ազատագրելու մասին Ավետարանները չեն խոսում: Այս մասին ուսուցանում է Եկեղեցու սրբազան Ավանդությունը, իսկ ակնարկներ կան Հռոմ. Ժ 6-7, Եփես. Դ 8-9, Ա Պետ. Գ 18-20 աստվածաշնչյան համարներում:
- 166 Այսիքն՝ Սիմեոն ծերունին (Ղուկ. Բ 25-32):
- 167 Արդարություն - առաքինի կյանքն ընդհանրապես,

- բոլոր առաքինությունները միասին: Ուստի Սուրբ Գրքում առաքինի, աստվածասեր, Աստծո պատվիրանները պահող անձինք սովորաբար կոչվում են «արդարներ»:
- 168 Հովհ. Ա, 29
- 169 Գրաբարում «զգոն» բառն ունի նաև «իմաստուն» իմաստը:
- 170 Ծանոթ. Ը 8-12
- 171 Այսիքն՝ մեռնով, որով են կատարվում Մկրտություն և Դորձմի խորհուրդները:
- 172 Հավիտյան - թե՛ ժամանակաշրջան, թե՛ աշխարհ:
- 173 Արիոսը Դ դարում ապրած հերետիկոս է՝ Ալեքսանդրիայի Եկեղեցուն պատկանած մի քահանա, ով չէր ընդունում Քրիստոսի աստվածությունը՝ համարելով Նրան արարած, ստեղծված: Արիոսի ուսմունքը դատապարտվեց 325թ.-ի Նիկիայի տիեզերական ժողովում:
- 174 «Օրենքում», այսինքն՝ Հնգամատյանի գրքերում, նման խոսք գտնել չկարողացանք: Այս խոսքը գործածվում է Սաղմ. Լ Դ 19, ԿԸ 5 համարներում:
- 175 Սաբել - Գ դարի հերետիկոս, Հռոմի Եկեղեցուն պատկանած հոգևորական, ով սովորեցնում էր, որ Երրորդությունը միևնույն ժամանակ Հայր, Որդի և Սուրբ Հոգի չէ, այլ միանձնյա է՝ միադեո, սակայն գործել է իրար հաջորդող երեք գործություններով՝ նախ՝ իբրև Հայր՝ արարիչն ամեն ինչի և օրենսդիրը, ապա՝ իբրև Որդի՝ Փրկիչը, Ով ծննդյամբ եկավ երկիր և Ում գործունեությունը Նրա համբարձմամբ ավարտվեց, իսկ այնուհետև՝ իբրև Սուրբ Հոգի, Ով Իր շնորհներով գործում է մինչ այսօր:
- 176 Հոգեմարտ - Սուրբ Հոգու դեմ մարտնչող, Սուրբ Հո-

- գու աստվածությունը կամ Հորն ու Որդուն հավասար ու համագո լինելը չընդունող անձ:
- 177 Նկատի է առնված կամ Եզեկ. Ա զլխում նկարագրված չորս կենդանիներից մեկը, որն արծվի կերպարանքով էր, կամ՝ ընդհանրապես այն, որ քերովբեները Սուրբ Գրքում թևավոր են ներկայացվում, ինչպես, օրինակ, արծիվը:
- 178 Այսինքն՝ Բրիտտոսի մկրտության ժամանակ:
- 179 Այսինքն՝ Եվային:
- 180 Մարկ. Ա 13
- 181 Առաչոք - երևութական, թվացյալ, ոչ իրական:
- 182 Մարկ. Գ 11, Ղուկ. Ը 28
- 183 Գործք ԺԶ 16-18
- 184 Մատթ. ԺԴ 17-21, ԺԵ 32-38. Հովհ. Բ 1-10
- 185 Ինչպես արդեն նշել ենք, «անապատ» բառն Ավետարանում և հայրաբանական գրականության մեջ գործածվում է ոչ թե այժմյան իմաստով, այլ ընդհանրապես անմարդաբնակ վայրի, ուստի այն կարող է լինել և լեռնային վայր:
- 186 Ղուկ. ԻԱ 5-6
- 187 Ծննդ. Գ 1-5
- 188 Մատթ. Զ 13, ԻԶ 41, Մարկ. ԺԴ 38, Ղուկ. ԻԲ 40
- 189 Ղուկ. Ժ 19
- 190 Ղուկ. Դ 29-30
- 191 Ղուկ. Դ 5
- 192 Ընդհանրապես մոտ՝ «իմ է» (այսինքն՝ «իմն է»), բայց շարունակությունը ցույց է տալիս, որ պիտի լինեք «իմն տուեալ է»:
- 193 Հովհ. Է 20, Ը 48, 52. Հովհ. Ը 44

- 194 Մատթ. ԺԲ 31-32
- 195 Ղուկ. Դ 13
- 196 Հաջորդող բառերը ցույց են տալիս, որ «մեզ»-ով Ընդհանրապես նկատի ունի ոչ թե առհասարակ մարդկությունը, այլ հոգևորականներին, մասնավորապես՝ աստվածային խոսքի ուսուցիչներին ու քարոզիչներին:
- 197 Սաղմ. Լ Գ 8
- 198 Ղուկ. ԺԶ 19-31
- 199 Հոբ Ա-Բ
- 200 Մարկ. Ա 13
- 201 Հակ. Ա 13
- 202 Հովհ. ԻԱ 25: Հովհաննես ավետարանիչն ասում է. «...այս աշխարհը չէր կարող տանել», ինչից երևում է, որ սբ Ներսեսն «այս աշխարհը» խոսքն այստեղ հասկանում է իբրև աշխարհային (բն.՝ «աշխարհական») միտքը, այսինքն՝ այս աշխարհին հակված մարդկային միտքը, որն անմաքուր լինելով՝ ընդունակ չէ հասու դառնալու հոգևոր բարձր իրողություններին:
- 203 Ղուկ. Դ 16-30
- 204 Ես. Թ 1-2
- 205 Արդի գիտնականները թարգմանում են «բնակություն» կամ «բարձրություն»:
- 206 Արդի գիտնականները թարգմանում են «իմ կոնիվ»:
- 207 Հովհ. Ը 12
- 208 Մատթ. Ե 14
- 209 Ղուկ. Ա 41-44
- 210 Մատթ. ԻԸ 19
- 211 Հովհ. Ա 38-42

- 212 Հովհ. Գ 24
- 213 Մատթ. ԺԹ 27-28
- 214 Ղուկ. Ե 4-11
- 215 Գ Թագ. ԺԹ 19-21
- 216 Ղուկ. Դ 16-17
- 217 Ծննդ. Թ 4-6
- 218 Ծննդ. ԺԷ 10-14
- 219 Ելք ԼԱ 18
- 220 Ծննդ. Գ 1-19
- 221 Սաղմ. Ա 1. «Երանելի է այն մարդը, ով չզնաց ամբար-
րիշտների խորհուրդներով...»:
- 222 Ծննդ. ԻԸ 10-16
- 223 Այսիհնքն՝ հրեշտակների:
- 224 Այսիհնքն՝ մեր՝ մարդկանց:
- 225 Այսիհնքն՝ Աստծո:
- 226 Մատթ. Է 26
- 227 Դյուրաշահություն - լավ վաստակ, հարստություն:
- 228 Ա Թես. Դ 17
- 229 Բ Կոր. Է 10
- 230 Ղուկ. Զ 21
- 231 Ղուկ. ԺԶ 19-31
- 232 Եղորդակը դառնահամ բույս է:
- 233 Ելք ԺԲ 8
- 234 Վայրաբերվող - վայր բերվող, գերքև իջնող՝ գլորվող:
- 235 «Սրտմտել» նշանակում է բարկանալ:
- 236 Ելք ԼԲ 15-20
- 237 Թվեր ԻԵ 6-8

- 238 Այսիհնքն՝ աշխարհական, աշխարհիկ, ո՛չ հոգևոր
- 239 Սաղմ. ԽԱ 3 («Հոգիս ծարավ է Քեզ, Աստված հզոր և
կենդանի»):
- 240 Հովհ. Զ 33, 35
- 241 Հոգու չորս առաքիհություններն են՝ արդարություն, խոհեմություն, արիություն, ողջախոհություն:
- 242 Ծնորհալին այստեղ վարձկանների, ծառաների և որդիների օրինակով խոսում է Աստծո պատվիրան-
ները պահողների երեք դասակարգերի մասին:
Վարձկանները պատվիրանները պահում են հանդեր-
ձյալ վարձատրության ակնկալիքով, ծառաները՝ Տի-
րոջ հանդեպ երկյուղից, իսկ որդիները՝ Հոր հանդեպ
սիրուց:
- 243 Հիգություն - թշվառություն:
- 244 Ղուկ. ԺԶ 1-9
- 245 Խոսքը ողորմություն ստացածների մասին է:
- 246 Հռոմ. ԺԱ 33-34
- 247 Հռոմ. Ա 20
- 248 Առաջին օրենքը Մովսիսական (Հին) օրենքն է, իսկ
երկրորդը՝ Ավետարանական (Նոր) օրենքը:
- 249 Սատանան և դևերը նույնպես հրեշտակալին զորու-
թյուններ են՝ «անկյալ» հրեշտակներ:
- 250 «Ցեղակիցներ» (բն.՝ «հոմացեղք») ասելով Ծնորհալին
նկատի ունի մարդկալի՛ն ցեղի ներկայացուցիչներին
և ոչ թե առանձին ցեղի կամ ազգի:
- 251 Գաղտառու- գաղտնի վերցնող, կծող:
- 252 Պարունակ - ոլորտ: Այստեղ նկատի են առնված յոթ
երկիհնքները, որոնցում բնակվում են հրեշտակալին
զորությունները: Այս մասին, իբրև առաջիններից մե-
կը, խոսում է, օրինակ, սբ Իրենեոսը («Ցոյցք առաքե-

լական քարոզութեանն», Լալպցիզ, 1907, էջ 8*, պարբ. 9):

- 253 Անեղ - անստեղծ:
- 254 Մատթ. Ե 45
- 255 Դրանք Զ և ԺԱ սաղմոսներն են: Ըստ Հայկազյան բառարանի՝ Աշված սաղմոսների վերնագրերում եղած «ութերորդ(ք)»-ը Աշանակում է կամ ությարանի Ավագարան, կամ ութերորդ ամսվա տոնին երգվող սաղմոս (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Բ, 1837թ., էջ 539):
- 256 Նկատի են առնված հետմահու օթևանները, ուր հոգիները բնակվում են մինչև համընդհանուր հարությունը:
- 257 Դյուրըմբերելի - հեշտությամբ՝ դյուրավ տանելի, դիմանալի:
- 258 Հովհ. Ա 4-11
- 259 Ծննդ. ԼԷ-ԽԱ
- 260 Գործք է 58
- 261 Վայրապար- իզուր, անտեղի:
- 262 Մատթ. ԺԸ 7
- 263 Բ Թագ. ԺԶ 5-14: Այստեղ Դավիթը ոչ թե ուղղակիորեն վրեժխնդրության է կանչում Աստծուն (Դավիթը թույլ է տալիս, որ Սեմեին իրեն հայհոյի, քանի որ խոնարհությամբ ընդունում է, որ Տիրոջ հրամանով է նա հայհոյում իրեն՝ Դավթին), այլ հույսը դնում է Աստծո վրա, որ Վերջինս կտեսնի և համապատասխանը կտնօրինի: Այս վերջին իմաստով է Օնորհալին գործածում «վրեժխնդրության կանչել» արտահայտությունը:
- 264 Խոսքը Պալծառակերպության ժամանակ Պետրոս, Հովհաննես ու Հակոբոս առաքյալների ներկայու-

թյամբ Մովսեսի և Եղիայի հետ Տիրոջ հանդիպման մասին է:

- 265 Խոսքը դարձյալ Պալծառակերպության մասին է, որի ժամանակ Տեր Հիսուսը, լուսավորվելով Իր աստվածության լույսով, ցույց տվեց հետհարութեան կանգալիք մեք կյանքում մեզ էլ սպասվելիք լույսը:
- 266 Այստեղ բնագրում (իմա 1825 թ. տպագրում) դրված է հետևյալ արտահայտությունը՝ «մեղաց թողութիւն», սակայն չթարգմանեցինք, քանի որ բնավ չի համաձայնում ո՛չ Աստուծո, ո՛չ էլ հաջորդ մտքին, ուստի անհասկանալի է նրա՝ այս հատվածում գոյությունը: Գուցե հետագա արտագրողների ձեռքով մտած ինչ-որ սխալի կամ թուրիմացության հետևանք է:
- 267 Ա Կոր. Ե
- 268 Եզեկ. Գ 18
- 269 Սաղմ. ԿԷ 16-17
- 270 Եփես. Բ 20
- 271 Հովհ. Ի 22
- 272 «Լրացնել» ենք թարգմանել գրաբարյան «լնուլ» բառը, որն ունի թե՛ լրացնելու, թե՛ կատարելու իմաստները: Այս երկու իմաստներով էլ Օնորհալին հասկանում ու մեկնում է այս բառը, սակայն բառափոխություն կատարած չլինելու համար մենք ամենուր պահել ենք «լրացնել» տարբերակը:
- 273 Ծննդ. Բ 16-17
- 274 Ծննդ. Թ 4-6
- 275 Ծննդ. ԺԷ 10-14
- 276 Գաղ. Գ 24
- 277 Եբր. Ժ 1
- 278 Մատթ. ԺԲ 24
- 279 Մատթ. Ա, 22, Բ 23 ևն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒԽՈՍՔ5
ՀԵՂԻՆԱԿԻ ՆԱԽԱԲԱՆԸ11
ԳԼՈՒԽ Ա27
ԳԼՈՒԽ Բ72
ԳԼՈՒԽ Գ111
ԳԼՈՒԽ Դ163
ԳԼՈՒԽ Ե215
ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ279

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Գ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ

Նրատարակչության

տնօրեն՝ Եզնիկ Արք. Պետրոսյան

Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա

Էջատրուսն՝ Լ. Սարգսյանի

Շապիկը՝ Ա. Օհանջանյանի

Ս. Էջմիածին - 2008